

242E

No. 1002

1041

1062

PORT SAID

IN TRANSIT

B~~X~~ 1/75

MADE IN JAPAN





7823

ՀԵՂԻՆԱԿ
ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

84

ԺՕԶԷՔ ՊԱԼՍԱՄՕ

ՀԱՏՈՐ ԱՌՍԶԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՔ
ՍՈՒՐԱՏ ՍԱՐԲԱՖԵԱՆ ԵՒ ԵՂՐԱՅՐԸ



Գ.Ա.ՀԻՐԷ
ՅՊԱԳՐՈՒՅԻՒՆ ԶԱՐԵՂ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1915

ԵԳԻՊՏԱԶԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Եւրոպայի՝ մանաւանդ Ֆրանսայի մեջ անքիւ վիպասանութիւններ հրատարակուած են, որոնցմէ շատերը՝ փոխանակ ժողովուրդը կրթելու եւ անոր բարոյականը ուղղելու՝ զայն կը բռնաւորեն:

Արդարեւ, ընտիր եւ բարոյայից վիպասանութիւնները օգտակար տպաւորութիւններ կրնան գործել ժողովուրդին զյացումներուն վրայ: Ո՞վ կրնայ անտարբեր մնալ ու չզգածուիլ Վիքտոր Զիւկոյի «ԹՇՈՒՍՈՒՆՆԵՐ» ը, Էօթեն-Միւի «ԹԱՓՍՈՒԱԿԱՆ ՀՐԵԱՅ» ն եւ «ԳԱՂՏՆԻՔ ԲԱՐԻՉՈՒ» ն կարդալով: Ճանչցած եմ հայ երիտասարդներ որոնք քեպէսեւ բարի՝ սակայն իրենց ստացած յոռի կամ քերի դաստիարակութեամբը մոլար շաւղի մը մեջ մտած՝ դեպի անդունդ կը գահավիժեն: Այսպիսիներ, վերոյիշեալ աննման հեղինակութիւնները կարդալով, իրենց ընթացքը բարւոտած են ի վերջոյ: Տարիներ անցնելէ վերջ իրենք ալ կը զարմանան այն փոփոխութեան վրայ՝ զոր կրած են անզգալար: Եթէ ըսենք թէ ընտիր վիպասանութիւնները նամանաւանդ ազգիս չափահասներուն համար տեսակ մը կըրարաններ են՝ չենք սխալիր:

Ֆրանսայի երեսելի վիպասաններուն առաջիններէն մին է Աղեքանդր Տիւմա, որ իր հոշակաւոր գործերովը տիեզերական համբաւ ստացած է: Տաղանդաւոր վարպետին գլուխ գործոցներէն մին է «ԺՕՁԷՅ ՊԱԼՍԱՄՈ»ն, հեղինակութիւն՝ որ մեծ ընդունելութիւն գտած է համայն Եւրոպայի մեջ:

ԱՐ



11-7823 աեկ

Ասոնցմէ ամենէն բարձրը, այն որ իր կրօնիթէ ճակտին վրայ աւերակներէ պոսակ մը բուրբած դէպի երկինք կը խիզախէ՝ Որոտման Լեռն է:

Երբ իրիկունը կաղնիններուն շուքը կը թանձրանայ և արեւին վերջին ճառագայթները հորիզոնէն վար կը կախուին անդունդն ի վար գահավիժող երիտասարդ հոգիներու պէս և այս հսկաներու սերունդին բարձր ու սուր գագաթները կը լուսաւորեն, այն ատեն կարծես թէ լուսթիւնը երկնքի գերագոյն աստիճաններէն դաշտավայրը կ'իջնէ, աներևոյթ և զօրաւոր ձեռք մը՝ կը բանայ և ազմուկէ ու աշխատութենէ յոգնած աշխարհքին վրայ կը տարածէ այն կապուտակ և ընդարձակ քողը՝ որուն մէջ աստղերը կը ցօլան, այն ատեն ամէն բան զարթնումէ ի քուն կը փոխանցուի: Ամենայն ինչ կը ննջէ երկրիս վրայ և օդին մէջ: Բնութիւնը կը ներհէ:

Այս լուսթեան մէջ միայն Սէլցպախ գետակը գետեգրքի ուռիներուն տակէն իր խորհրդաւոր վազքը ասանց կանգ տանելու կը շարունակէ գիշեր ու ցերեկ, որովհետեւ Ռէն գետը՝ ուր խոխոջելով կը թափի ան՝ իր յաւիտենականութիւնն է: Յատակի աւազը այնքան թարմ է, եղեգները այնքան գիւրակոր են, ժայռերը թաւիշի նման մամուռներով և քարբեկներով այնպէ՛ս մը պատած են որ՝ իր ալիքները անշուշտ կը սահին ու յաւիտենականութեան ծոցը կը թափին:

Այս գետակին աղբիւրէն քիչ մը վեր, Ալպիսայմի և Գրիխայմ-Քօլանտի մէջտեղը, երկու առապար միջնորաներու մէջ, կառքերու անիւներէն սկօսացած ճամբայ մը կայ որ Տանէնֆէլս կը տանի:

Տանէնֆէլսէն անգին ճամբան շաւիղ մը կ'ըլլայ, յետոյ շաւիղն ալ կը նեղնայ, կ'անհետանայ, կը կորսուի և ա՛յ Որոտման լեռան զառիվայրէն ուրիշ բան չերևիր, որուն խորհրդաւոր գագաթը՝ ուր Տիրոջ

Հուրը յաճախ կ'այցելէ, որմէն առած է իր անունը, խիտ ու կանաչազարդ ծառերու անթափանց դօտիլ մը ետեւ կը ծածկուի:

Յիրաւի, նախնի Տօտօնի կաղնիններուն նման այս թանձրախիտ ծառերուն մէջ եթէ ճամբորդ մը մտնէ, լոյս աչքով ասանց դաշտավայրէն տեսնուելու կ'ընայ ընդամենը շարունակել և եթէ իր ձին սպանիական ջուրիէ մը աւելի բոժոժներով ծածկուած ալ ըլլայ՝ անոնց ձայնը ամենեւին չլսուիր, կամ եթէ կայսրի մը ձիուն պէս թաւազարդ և ոսկեհուռ ալ ըլլայ՝ ոսկիին կամ ծիրանիին փայլը տերեւներէն անդին չանցնիր, որովհետեւ շուքը հոն այնչափ թանձր է որ գոյները կը նսեմացնէ:

Տակաւին այսօր որ ամենէն բարձրաբերձ լեռները պարզ դիտարաններ եղած են, տակաւին այսօր որ բանաստեղծօրէն ահաւոր երեցող սրբոց վարքերը ճամբորդին շրթունքներէն կասկածի ժպիտ մը կը խլեն, տակաւին այսօր որ մենութիւնը սարսափ կ'աղխլեն, տակաւին այսօր որ մասը պատկառելի կը դառնայ, ուր գէ, երկրին այս մասը պատկառելի կը դառնայ, ուր միայն քանի մը անշուք տուներ՝ որոնք կարծես թէ մերձակայ գիւղերուն կորսուած պահակներն են, այս մոգական գօտիին հեռուները կը տեսնուին, հոն բնակութեանց գոյութիւնը գիտցնելու համար:

Այս մենութեան մէջ կորսուած տուներուն բնակիչները ջաղացպան են, որոնք ուրախութեամբ կը թողուն գետակին որ իրենց ջաղացքը դարձնէ և ալիւրը Ռօքէնհաուզըն և Ալզէյ կը տանին: Կամ հովիւ են, որոնք իրենց հօտը լեռը տարած ատենին, երբեմն իրենք ու իրենց շունները կը սարսուռան՝ ծերութենէն խորտակուելով անտառին անձանօթ գահավէժներուն մէջ գլորուող հարիւրամեայ կաղնիի մը ճարձատիւնէնը լսելով:

Եւ որովհետեւ, ինչպէս որ արդէն ըսինք, այս երկրին յիշատակները ազօտ են, և ամենէն քաջասիրտ-

ներն անգամ կ'ըսեն թէ լերան մացառներուն մէջ՝ Տանէնֆէլտէն անդին կորսուող շաւիղը՝ բարեպաշտ քրիստոնեաները երբէք իրենց փրկութեան նաւահանգիստը առաջնորդած չէ, գուցէ նոյն երկրին հիմակուան բնակիչներէն մին իր հօրմէն կամ պապէն լսած ըլլայ ինչ որ մենք այսօր պիտի ջանանք պատմել:

1770 մայիսի 6ին, օրուան այն ժամուն երբ մեծ գետին ջուրերը ծիրանեզոյն ցոլացում մը կը ստանան, այսինքն՝ երբ բոլոր Ռէնկօի բնակչաց համար արեւը Սթրազպուրկի մայր եկեղեցւոյն դմբէթին սլաքին հտեւէն վար իջնելով երկու հրեղէն կիսագունդերու կը բաժնուի, մարդ մը որ Մայանսէն կուգար, Ալզէյը և Քիրխհայմ-ֆօլանտը անցնելով՝ Տանէնֆէլտի գիւղէն անդին երեւցաւ և երեւցածին չափ շաւիղին հետեւեցաւ. յետոյ, երբ ճամբու ամէն հետք կորսուեցաւ, ձիէն վար իջաւ և սանձէն բռնելով ահագին անտառին դափնիներէն միոյն կապեց զայն առանց վարանու մի:

Կենդանին անձկութեան վրնջիւն մը արձակեց և անտառը այս անսովոր ձայնէն կարծես սարսուեցաւ:

— Լա՛ւ, լա՛ւ, մըմնջեց ճամբորդը, հանգարտէ՛, ազնի՛ւ ձիբիտս, տասներկու փարսախս ճամբայ քալեցինք և վերջապէս արշաւանքիդ վախճանին հասար:

Եւ ճամբորդը ջանաց նայուածքը տերեւներուն մէջ թափանցել, բայց արդէն մութը այնչափ թանձր էր որ ուրիշ բան չէր տեսնուեր այլ միայն սեւ զանգուածներ՝ որոնք՝ մին միւսէն սեւ զանգուածներու վրայ իրար կը կտրէին, կը խաչաձեւէին:

Այս ապարդիւն քննութիւնէն վերջ ճամբորդը անասունին դարձաւ, որուն ցեղն ու արագութիւնը իր արարական անունէն ալ կը հասկցուի, և անոր գլխուն ստորին մասը ձեռքերուն մէջ առնելով՝ բերանը հրաշունչ ոնգունքին մօտեցուց:

— Մնաս բարով, իմ քաջ ձիս, ըսաւ, մնաս բարով եթէ քեզ վերստին չգտնեմ:

Ձին իր մետաքսանման բաշերը թօթվեց, ստքը գետինը գարկաւ և այնպիսի վրնջիւն մը արձակեց որ կարծես անապատին մէջ առիւծին մօտենալը կը նախագգար:

Ճամբորդը այս անգամ ժպտելով գլուխը երեքուց, կարծես թէ ըսել ուզէր.

— Ձեռ սխալիր, ձիբիտ, վտանգը ճիշդ հոս է:

Բայց նոյն միջոցին, յանդուգն անձանթը, որ անշուշտ որոշած էր վտանգին չգիմագրաւել, զինապատեանէն երկու գեղեցիկ ատրճանակներ հանեց, որոնց փողը քանդակուած և բունը ոսկեզօծուած էր, խցցահանով երկուքն ալ պարպեց, նախ խցուցն ու գնդակը հանեց, ետքն ալ վառօղը մարգագետնին վրայ ցանեց:

Այս գործողութիւնը աւարտելէն վերջը, հրացանակները թամբերուն քովի զինապատեաններուն մէջ դրաւ:

Բայց ամէնը այս չէր:

Ճամբորդին մէջքէն երախակալով պողպատեայ սուր մը կախուած էր: Սուսերագօտին քակեց սուրին վրայ փաթթեց, թամբին տակը դրաւ և զայն ասպազէնին այնպէս մը պնդեց որ՝ սուրին բունը ձիուն երաննբուն և ծայրը ուսերուն կողմը եկաւ:

Վերջապէս, ճամբորդը այս տարօրինակ ձեւակերպութիւնները կատարելէ ետքը, փոշոտ կօշիկները թօթվեց, ձեռնոցները հանեց և գրպանները խուզարկելով զոյգ մը պղտիկ սղոց և խցցապատ զմելի մը գտաւ, զանոնք ալ հտեւը նետեց առանց նայելու թէ ուր կ'իյնան:

Յետոյ վերջին անգամ ձեռքը ձիբիտի գլխուն վըրայ դրաւ, իրաթոք շունչ առաւ. չորս կողմը նայելով ի զուր շաւիղ մը փնտաւեց, բայց չգտնելով՝ ըստ գիպաց անտառը մտաւ:

Կը կարծենք թէ ժամանակն է մեր ընթերցողներուն ճիշդ գաղափար մը տալու այն ճամբորդին վրայ զոր իրենց աչաց առջեւ գրինք, որովհետեւ այս պատմութեան ընթացքին կարեւոր դեր մը պիտի կատարէ:

Այն որ ձիէն իջնելով այսպէս յանդգնութեամբ անտառին մէջ նետուած էր, երեսուն երեսուներկու տարեկան մարդ մը կ'երեւար, միջահասակէն աւելի բարձր: Բայց այնպիսի զարմանալի կազմ մը ունէր որ իր դիւրաշարժ և ջղուտ անգամները զօրութիւն և ճարտարութիւն կ'արտայայտէին: Ոսկիէ օղակներով սեւ թաւիչէ տեսակ մը ճամբու վերարկու մը հագած էր, վերարկուին վարի կոճակներուն տակէն՝ հիւսուած բաճկոնակի մը երկու ծայրերը կ'երեւային, և մորթէ նեղ տափատ մը այնպիսի սրունքներ կը գծագրէր որ արձանագործի մը օրինակ կրնային ըլլալ, որոնց ձուարութիւնը փայլուն կօշիկներուն ներքեւէն կը գուշակուէր:

Իսկ իր դէմքը, որ հարաւացիի մը ամէն շարժումով թիւնն ունէր, զօրութեան և նրբութեան եզակի խառնուրդ մըն էր. նայուածքը՝ որ ամէն զգացում կրնար արտայայտել, երբ մէկու մը վրայ կասէր, կարծես թէ երկու լուսեղէն ճառագայթներու պէս անոր հոգւոյն խորը կը սուղէր: Մէկ նայուածքով կը հասկցուէր թէ իր թխադոյն այտերը մերինէն աւելի կիզիչ արեւէ մը այրած էին: Վերջապէս դէմքին վրայ մեծ բայց նուր բերան մը կը բացուէր և գեղեցիկ ակունքներու կրկին շարք մը ցոյց կուտար, որոնք իր թխութեան քով աւելի ճերմակ կ'երեւէին: Ոտքերը երկայն բայց նուրբ էին, ձեռքերը փոքր բայց ջղուտ:

Այն մարդը, որուն նկարագրութիւնը ըրինք վերը, հազիւ թէ տասը քայլ առած էր սեւ եղեւիներուն մէջ, ձին թողած տեղէն արագ արփիւններ լսեց: Շարժում մը ըրաւ, շարժում մը որ ինչ գիտաւորու-

թեամբ եղած ըլլալը յայտնի է, ետ դառնալու շարժում մըն էր, բայց ինքզինքը բռնեց:

Սակայն ձիրիտին ինչ ըլլալը գիտնալու փափաքին չկարենալով դիմանալ, ոտքին մատներուն վրայ կանգնեցաւ և լուսաւոր ծակի մը տնկեց աչքերը, բայց անիրեւոյթ ձեռք մը ձիրիտը քաշեր, սանձը քակեր և ձին անհետացեր էր:

Անձանօթին ճակատը թեթեւ մը խորշոմեցաւ, իր գիրդ այտերուն և սրածայր ակունքներով շրջանակուած շրթունքին վրայ ժպիտի պէս բան մը երեւցաւ:

Յետոյ իր ճամբան շարունակեց դէպի անտառին կեդրոնը:

Քանի մը քայլ եւս կրցաւ յառաջանալ ծառերուն մէջէն թափանցող վերջալոյսին ցոլքերովը, բայց շուտ մը այս նշոյլն ալ նուազելով՝ այնպիսի թանձր-մութի մը մէջ մնաց որ, կոխած տեղը այլեւս ստիպուեցաւ կենալ:

— Մինչեւ Տանէնֆէլս աղէկ եկայ, ըսաւ բարձր ձայնով, վասն զի Մայեանսէն Տանէնֆէլս ուղի մը կայ, Տանէնֆէլսէն ալ Պրիւյէր-Նուար աղէկ եկայ, որովհետեւ Տանէնֆէլսէն Պրիւյէր-Նուար շաւիղ մը կայ, Պրիւյէր-Նուարէն ալ մինչեւ հոս աղէկ եկայ, թէպէտ ոչ ճամբայ և ոչ շաւիղ կայ, բայց անտառը կը նշմարէի. սակայն հոս ստիպուած եմ կենալու, ալ բան մը չեմ տեսներ:

Հազիւ թէ այս խօսքերը ըսուած էին կէս մը գաղղիական և կէս մը սիկիլիական արտասանութեամբ, յանկարծ լոյս մը ցոլաց ճամբորդէն գրեթէ յիսուն քայլ անդին:

— Ծնորհակալ եմ, ըսաւ, հիմայ որ այս լոյսը կը յառաջանայ, ես ալ անոր պիտի հետեւիմ:

Նոյն միջոցին լոյսը սկսաւ միօրինակ քալել առանց բեկբեկումի և ցնցումի, ինչպէս մեր թատրոններուն

վրայ կը սահին այն երեւակայական բոցերը, որոնց կանոնաւոր ընթացք մը կուտան մեքենան և տեսարանապետը:

Ճամբորդը հարիւր քայլ եւս առած էր գրեթէ երբ շունչի պէս բան մը դպաւ ականջին:

— Ետեւդ մի՛ դառնար, սպառնաց ձայն մը աջ կողմէն, ապա թէ ոչ մեռած ես:

— Լա՛ւ, պատասխանեց ճամբորդը անտարբերութեամբ առանց յօնքերն իսկ պուստելու:

— Մի՛ խօսիր, ըսաւ ձայն մը ձախ կողմէն, ապա թէ ոչ մեռած ես:

Ճամբորդը խոնարհեցաւ առանց խօսելու:

— Բայց եթէ կը վախնաս, ըսաւ երրորդ ձայն մը, որ Համլէթի ձայնին նման կարծես երկրիս ընդերքէն դուրս կ'ելնէր, եթէ կը վախնաս՝ նորէն դաշտին ճամբան բռնէ, ասով կ'իմացուի թէ դուն ետ կենալ կ'ուզես և քեզ թոյլ պիտի տրուի եկած տեղդ վերադառնալ:

Ճամբորդը բաւական սեպեց ձեռքով շարժում մը ընել և ճամբան շարունակեց:

Գիշերը այնքա՛ն մութ էր և անտառը այնքա՛ն խիտ որ՝ հակառակ զինքը առաջնորդող լոյս մը ունենալուն՝ միշտ քայթելով կը յառաջանար: Գրեթէ ժամու մը չափ լոյսը քալեց և ճամբորդը անոր հետեւեցաւ առանց տրանջալու կամ վախ մը արտայայտելու. յանկարծ այս լոյսը անյայտացաւ: Ճամբորդը անտառէն դուրս ելած էր. աչքը վեցուց, երկնքին մթին կապոյտին վրայ քանի մը աստղեր կը ցոլային:

Լոյսին անյայտացած ուղղութեամբը սկաւ յառաջանալ, բայց քիչ մը ետքը գիմացը աւերակ մը ելաւ. հին բերդի մը ուրուականն էր ասիկայ:

Յանկարծ ոտքերը փլատակներու զարնուեցան:

Իսկոյն պաղ բան մը զգաց քունքերուն վրայ և

աչքերուն պատ մը քաշուեցաւ: Անկէ ետք աղջամուզն ալ չտեսաւ: Աչքերը կապուած էին:


Թաց կտաւէ պատանի մը մէջ առնուած էր գլուխը: Հարկաւ առաջուրնէ որոշուած բան մը ըլլալու էր, կամ առաջուրնէ գիտնալու էր, ինչու որ պատանը վերցնելու ճիգ մը իսկ չըրաւ: Միայն թէ լուեկայն ձեռքը երկնցուց առաջնորդ խնդրող կոյրի մը պէս:

Այս շարժումը հասկցուեցաւ, որովհետեւ նոյն վայրկեանին պաղ, չոր և ոսկրուտ ձեռքի մը մէջ ճամբորդին մատները շղթայուեցան:

Ճամբորդը զգաց որ կմախքի մը մտազուրկ ձեռքն էր ան. եթէ այդ ձեռքին զգացում մը տրուած ըլլար՝ պիտի զգար որ ճամբորդին ձեռքն ալ չէր դողար:

Ճամբորդը զգաց նաեւ թէ հարիւր օտնաչափ միջոց մը՝ արագօրէն քաշքուելով յառաջացած էր:

Յանկարծ անձանօթ ձեռքը թող տուաւ ճամբորդին ձեռքը, ճակտին վրայէն պատանը թռաւ, և անձանօթը կանգ առնելով տեսաւ որ Որոտման Լերան գագաթը հասած էր:



F.

ՈՐԷՆ

Հինաւուրց կաղնիներու մէջտեղը կառուցուած էր այն բերդերուն մէկուն ստորնայարկը, որ նախնի աւատական իշխանները Եւրոպայի զանազան կողմերը թողուցին խաչակիրներու վերադարձին:

Այն նրբաքանդակ կամարասրահները, որոնց անկիւնները փոխանակ արձաններ դրուած ըլլալու՝ վե-

րէն դէպի վար ներս քաշուած ձեռով մը վայրի փու-
շերու կամ ծաղիկներու փունջ մը գողունի ցոյց կու-
տային, գանձանամ քանդակներու կատարներով շրջա-
նակուած՝ դեղնագոյն ձեղունի մը կը հասնէին :

Ճամբորդը աչքերը բանալով՝ ինքզինքը նախագա-
ւիթին խոնաւ և մառապատ սանդուխին առջեւ գը-
տաւ. զինքը հոն առաջնորդող ոսկրուտ ձեռքով ուր-
ուականը առաջին աստիճանին վրայ ոտքի կեցեր էր :

Ոտքէն մինչեւ գլուխը ծածկոյթով մը ծածկուած
էր. ծածկոյթին ծալքերուն ներքեւէն բերերը կը շո-
ղային առանց նայելու. մտադուրկ ձեռքը աւերակնե-
րուն դէպի ներքին կողմը երկնցուցած էր, կարծես իբ-
րեւ վախճան՝ ճամբորդին ցուցնելու սրահ մը որ գետ-
նէն բարձր ըլլալով ստորին մասը չէր երեւար, բայց
փլփլած կամարներուն վրայ լին և խորհրդաւոր լոյսի
մը թրթռալը կը տեսնուէր :

Ճամբորդը հաւանութիւն ցոյց տալու ձեռով մը խո-
նարհեցաւ :

Ուրուականը ծանր, մի առ մի և առանց ոտքե-
րուն ձայնը հանելու՝ աստիճաններէն ելաւ և աւերակ-
ներուն մէջ մտաւ. անծանօթը անոր հետեւեցաւ այն
հանդարտ և հանդիսաւոր քայլով՝ որուն յարմարցու-
ցած էր միշտ իր ընթացքը. ինքն ալ մի առ մի ուր-
ուականին անցած աստիճաններէն վեր ելնելով ներս
մտաւ :

Ետեւէն նախասրահին դուռը գոցուեցաւ արոյրէ
հնչուն պատի մը աղմուկով :

Կլոր և պարապ սրահի մը դրան առջեւ, որ սեւե-
րով պատած և կանաչագոյն ցոլքեր թափթփող երեք
կանխեղներով լուսաւորուած էր, ուրուականը կեցեր էր :

Ճամբորդը անկէ տասը քայլ հեռու կեցեր էր :

— Աչքերդ բաց, ըսաւ ուրուականը :

— Կը տեսնեմ, պատասխանեց անծանօթը :

Այն ատեն ուրուականը արագ և հպարտ շարժու-
մով մը իր պատեհանէն երկսայրի սուր մը քաշելով՝
անագապղինձէ սլունի մը զարկաւ, որ մետաղեայ շա-
ռաչիւնով մը պատասխանեց այս հարուածին :

Իսկոյն սրահին շուրջը քարէ դարակներ դուրս ելան
և առաջինին նման անթիւ ուրուաններ երեւցան,
որոնց իւրաքանչիւրը երկսայրի սուր մը կը կրէր, և
եկան սրահին երկայնքին դուռած նստարաններուն վրայ
նստան : Սրահին մէջ երեք կանթեղներուն կանաչագոյն
լոյսը կը ցոլար : Վերահաս ուրուականները իրենց պա-
ղութեամբ և անշարժութեամբը քարէն տարբերու-
թիւն մը չունենալով՝ կարծես թէ իրաքանչիւրը մէյ
մէկ արձաններ էին իրենց պատուանդաններուն վրայ
կեցած :

Այս մարդկային ուրուականները գրեթէ աննշմարե-
լի կը դառնային պատերը ծածկող սեւաթոյր ասուիին
առջեւ :

Եօթը աթու դուռած էր առաջին աստիճանին յա-
ռաջակողմը, այս աթուներուն վրայ վեց ուրուական-
ներ նստած էին, որոնք գլխաւորներ ըլլալ կը կար-
ծուէին. այս աթուներէն մին պարապ էր :

Մէջտեղի աթուը նստողը ոտքի ելաւ :

— Քանի՞ հողի ենք, եղբայրներ, հարցուց ժողովին
կողմը դառնալով :

— Երեք հարիւր, պատասխանեցին ուրուականնե-
րը միօրինակ ձայնով մը որ սրահին մէջ որոտաց և
գնաց պատերը ծածկող սեւաթոյր օթոցին վրայ խոր-
տակուեցաւ :

— Երեք հարիւր, կրկնեց նախագահը, որոնց իւրա-
քանչիւրը տասը հազար ընկեր կը ներկայացնէ, երեք
հարիւր սուր՝ որ երեք միլիոն գաղտնի կ'արժէ :

Յետոյ ճամբորդին դառնալով :

— Ի՞նչ կը բաղձաս, հարցուց անոր :

— Լոյսը տեսնել, պատասխանեց :

— Հրոյ լեռը առաջնորդող շաւիղները դերբուկ և քարուտ են. չե՞ս վախնար մէջը մտնելու :

— Ես բանէ մը չեմ վախնար :

— Անգամ մը որ դէպի առաջ քայլ մը առնես, քեզ թոյլ չտրուիր ետ դառնալ, խորհէ՛ ասոր վրայ :

— Ես չեմ կասիր մինչեւ որ նպատակիս չհասնիմ :

— Պատրաստ ես երգում ընելու :

— Դուք ըսէք երգումը, ես ալ կը կրկնեմ :

Նախագահը ձեռքը վերցուց և ծանր ու հանդիսաւոր ձայնով մը հետեւեալ խօսքերը արտասանեց .

— « Ծանուն որդւոյն խաչելոյ երգումընցիր ջախջախել այն աշխարհային կապերը որոնցմով կապուած ես տակաւին հօրդ, մօրդ, եղբայներուդ, քոյրերուդ, կնոջդ, ազգականներուդ, բարեկամներուդ, տարփուհիիդ, թագաւորիդ, բարերարներուդ, և ո եւ է մէկու մը հետ՝ որուն հաւատարմութիւն, հնազանդութիւն և ծառայութիւն խոտացած ըլլաս » :

Ճամբորդը հաստատուն ձայնով մը, նախագահին խօսքերը կրկնեց և նախագահը երգման երկրորդ հատուածին անցնելով՝ միեւնոյն ծանրութեամբ և հանդիսաւորութեամբ սկսաւ սապէս .

— « Այս վայրկեանէս սկսեալ ազատ ես հայրենիքին և օրէնքին ըրած կարծեցեալ երգումէդ, ուստի երգումընցիր որ ճանչցած նոր գլխաւորիդ պիտի յայտնես տեսածդ կամ ըրածդ, կարգացածդ կամ լսածդ և մինչեւ անգամ պիտի խուզարկես և լրտեսես չգիտցածներդ :

Նախագահը լռեց և անծանօթը լսած խօսքերը կրկնեց :

— « Պատուէ և յարգէ առուս բօժանան (*), ըսաւ

(*) «Առուս բօժանան»ն տեսակ մը բոյն է, զոր միջին դարու մեջ Թօժանա անուն կիւն մը հնարած էւ մեծ

Նախագահը առանց ձայնին եղանակը փոխելու, իբրեւ արագ, ապահով և կարեւոր միջոց մը՝ ճշմարտութիւնը արհամարհող կամ մեր ձեռքէն խլել ուզողները մահուամբ կամ ապշութեամբ տիեզերքէս մաքրելու համար » :

Արձագանք մը չպիտի կրնար այնչափ նայնօրէն կրկնել այս խօսքերը, որչափ որ ըրաւ անծանօթը : Նախագահը նորէն սկսաւ .

— « Հեռացիր Սպանիայէն, Նաբօլիէն և ամէն անիծեալ երկիրներէն, զգուշացիր տեսնելիքներէդ և լսելիքներէդ ոչինչ յայտնել մէկու մը, որովհետեւ քեզ սպաննելու սահմանուած աներեւոյթ և անխուսափելի գաշոյնը՝ ո՛ւր որ ալ ըլլաս՝ կածակէ արագ պիտի գայ քեզ գտնէ :

« Ապրէ՛ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ » :

Հակառակ այս վերջին տողերուն սպառնական հանգամանքին՝ անկարելի եղաւ անծանօթին դէմքին վրայ ո եւ է յուզման նշան մը նշմարել. երգման վերջաւորութիւնը և մաղթանքը նոյն հանդարտութեամբ արտասանեց՝ ինչպէս որ սկսեր էր :

— Ուրեմն, շարունակեց նախագահը, հիմայ նորընծային ճակատը բոլորեցէք նուիրական ապարօը (սարբ) :

Երկու ուրուականներ անծանօթին յօտեցան, իսկ այս վերջինը գլուխը ծռեց. ուրուականներէն մին անոր ճակատին վրայ դրաւ ծիրանեգոյն ժապաւէն մը որուն վրայ Նօթրը Տամ տը Լօրէթի պատկերը ներկայացնող արծաթեայ տառեր կային, միւսն ալ ետեւէն, պարա-

չարիքներ հասցուցած է անոր միջոցաւ : Այն ատենուսկ սարալոյժները յեիկ հանչցած այս բոյնիկ ազդեցութիւնը :
Մ. Հ.

ժօզ. Պալս., քիւ 1—2. Բ.հր.Ն.Բ.

11-7823աէ



նոցին վերի կողմէն, ապարօշին երկու ծայրերը կապեց:

Ապա հեռացան անձանօթը վերստին առանձին ձգելով:

— Ի՞նչ կը բաղձաս, հարցուց նախագահը:

— Երեք բան, պատասխանեց նորընծան:

— Որո՞նք են:

— Երկաթեայ ձեռքը, հրեղէն սուրը և ադամանդեայ կշիռը:

— Ինչո՞ւ համար կ'ուզես երկաթեայ ձեռքը:

— Բռնակալութիւնը խեղդելու համար:

— Ինչո՞ւ համար կ'ուզես հրեղէն սուրը:

— Պիղծը երկրէս վանելու համար:

— Ինչո՞ւ համար կ'ուզես ադամանդեայ կշիռը:

— Մարդկութեան ճակատագիրը կշռելու համար:

— Պատրաստ ես փորձերուն:

— Զօրաւորը ամէն բանի պատրաստ է:

— Ետի՞դ դարձիր ըսաւ նախագահը:

Անձանօթը հնազանդեցաւ, և մեռելի մը նման դեղնած, պրկուած ու բերանը գալլուած մարդու մը դէմը գտնուեցաւ:

— Ի՞նչ կը տեսնես, հարցուց նախագահը:

— Յանցաւոր մը կամ զոհ մը:

— Մատնիչ մըն է ան՝ որ քեզի պէս երգում ընելէ վերջը միաբանութեան գաղտնիքը երեւան հանած է:

— Ուրեմն յանցաւոր մըն է:

— Այո՛, ի՞նչ է ասոր պատիժը:

— Մա՛ն:

Երեք հարիւր ուրուականները միաբերան կըրկնեցին:

— Մա՛ն:

Նոյն վայրկեանին, մահապարտը սրահին խորը քաշքշեցին, հակառակ անոր թափած գերմարդկային

ճիգերուն: Ծամբորդը տեսաւ դահիճներուն ձեռքին տակ անոր տապալակիլն ու գալարիլը, լսեց գայլին մէջտեղէն անոր խեղդուկ այլ սրտածմլիկ ճիչերը: Դաշոյն մը կանթեղներուն լոյսը կայծակի պէս բեկբեկելով շողաց, յետոյ անորոջ հարուածի մը զարնուիլը լսուեցաւ և ծանր մարմնոյ մը տապալելուն ձայնը խուլ: Խիսուր և հոգեսարսուռ արծագանք մը տուաւ սրահին մէջ:

— Արդարութիւնը կատարուեցաւ, ըսաւ անձանօթը՝ ահաբեկութեան մատնուած ակումբին դառնալով, որուն իւրաքանչիւր շնչաւոր կոտորակը իր ծածկոյթին տակէն անյազ հետաքրքրութեամբ մը այս տեսարանը կը դիտէր:

— Ուրեմն այս սպաննութիւնը իրաւացի կը գըտնե՞ս գուն, հարցուց նախագահը:

— Այո՛, եթէ սպաննուողը իրօք յանցաւոր մըն է:

— Այս սպաննուողին նման՝ եթէ ո եւ է մէկը սուրբ ուխտին գաղտնիքները մատնէ, անոր մահուանը համար կը խմե՞ս:

— Կը խմե՛մ:

— Ի՞նչ որ ալ ըլլայ ըմպելին:

— Ի՞նչ որ ալ ըլլայ:

— Բաժակը բերէ՛ք, հրամայեց նախագահը:

Երկու դահիճներէն մին նորընծային մօտեցաւ և անագապղինձէ պատուանդանի մը վրայ դրուած մարդու գանկով մը կարմիր ու գաղջ ըմպելիք մը ներկայացուց անոր:

Նորընծան գաւաթը դահիճին ձեռքէն առնելով գլխէն վեր բարձրացուց:

— Սուրբ ուխտին գաղտնիքները մատնողը ո՛վ որ ալ ըլլայ, անոր մահուանը համար կը խմեմ, ըսաւ:

Յետոյ բաժակը բերնին մօտեցնելով՝ մինչեւ յետին կաթիլը պարպեց և անտարբերօրէն բաժակը իրեն տուողին վերադարձուց:

Ջարմացական փսփսուք մը լսուեցաւ ակուճրին մէջ և ուրուականները կարծես իրարու երես նայեցան իրենց ծածկոյթներուն տակէն :

— Լա՛ւ, ըսաւ նախագահը : Ատրճանա՛կը :

Ուրուական մը մօտեցաւ նախագահին, մէկ ձեռքը ատրճանակ մը և միւս ձեռքը կապար գնդակ մը և չափ մը վառօդ բռնած :

Նորընծան հազիւ աչքերը անոր կողմը դարձուց :

— Ուրեմն սուրբ ուխտին կրաւոր հնազանդութիւն կը խոստանա՞ս, հարցուց նախագահը :

— Այո՛ :

— Մինչեւ անգամ եթէ այդ հնազանդութիւնը քու վրա՞դ ալ փորձուէր :

— Հոս մտնողը իր անձին չվերաբերիր, այլ ամենուն :

— Արդ, քեզի ի՛նչ հրաման որ ընեմ կը հնազանդի՞ս :

— Կը հնազանդի՞մ :

— Առա՞նց վարանելու :

— Առա՛նց վարանելու :

— Ա՛ն սա ատրճանակը և լեցո՛ւր

Անծանօթը ատրճանակը առաւ ու վառօգը փողն ի վար սահեցուց, խցուցով մը պնդեց, յետոյ գնդակը դրաւ զոր երկրորդ խցուցով մը հաստատեց և խանձ դրաւ զէնքին :

Այս տարօրինակ բնակարանին բոլոր լռակեաց ուրուականները անոր կը նայէին թախծալի լռութեամբ մը՝ որ խորտակուած կամարներուն անկիւնները դարձնող հովին ձայնէն միայն կ'ընդհատուէր :

— Ատրճակը լեցուեցաւ, ըսաւ անծանօթը անտարբերօրէն :

— Ապահո՞վ ես, ըսաւ նախագահը

Ժպիտ մը երեւցաւ նորընծային շրթունքներուն վրայ, հանեց գաւազանիկը և զինափողին մէջ ձգեց : Երկաթէ ձողիկը երկու մատ դուրս մնաց փողէն :

Նախագահը խոնարհեցաւ համոզուած ըլլալը ցուցնելու համար :

— Այո՛, արդարեւ լեցուած և աղէկ լեցուած է :

— Ի՛նչ պիտի ընեմ ասիկայ, հարցուց անծանօթը :

— Կայծհանը բա՛ց :

Անծանօթը կայծհանը բացաւ և խօսակցութեանց միջոցներուն հետեւող խօրին լռութեան մէջ կայծհանին շաշիւնը լուեցաւ :

— Հիմայ ատրճանակին բերանը ճակտի՞դ դիր, ըսաւ նախագահը :

Նորընծան անանց վարանումի հնազանդեցաւ :

Ակուճրին լռութիւնը կրկնապատկուեցաւ, կանթեղները կարծես թէ դեղնեցան, ուրուականները տեսական ուրուականներու պէս շունչերնին բռնեցին :

— Կրակէ՛, ըսաւ նախագահը :

Բլթակը գոցուեցաւ, քարը հարոցին վրայ կայծ մը հանեց, բայց սկահակի վառօգը միայն կրակ առաւ և աննշան ու անձայն բոց մը արձակուեցաւ :

Ջարմացական միաբերան աղաղակ մը թռաւ գրեթէ բոլոր սրտերէն, և նախագահը բնագոյն շարժումով մը ձեռքը անծանօթին երկնցուց :

— Բայց երկու փորձ չբաւեր, աւելի դժուարներուն նայինք :

Քանի մը ձայներ ալ գոչեցին :

— Դաշո՛յնը, դաշո՛յնը :

— Կը պահանջէ՞ք, հարցուց նախագահը :

— Այո՛, դաշո՛յնը, դաշո՛յնը, կրկնեցին նոյն ձայները :

— Դաշոյնը բերէ՛ք, ըսաւ նախագահը :

— Անօգուտ է, ըսաւ անծանօթը արհամարհանքով :

— Ի՞նչ, անօգուտ մի, գոչեցին բոլոր ժողովականները :

— Այո՛, անօգուտ է, կրկնեց նորընծան բացարձակ և տիրապետական ձայնով մը, որովհետեւ թանկագին ժամանակ մը կը կորսնցնէք :

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց նախագահը:

— Կ'ըսեմ թէ ես ձեր բոլոր գաղտնիքները գիտեմ, թէ ինձ ընել տուած փորձերնիդ աղայական խաղեր են և արժանի չեն լուրջ մարդիկները վայրկեան մը իսկ զբաղեցնելու: Կ'ըսեմ թէ խմած արիւնս, սպաննուող եղբոր զգեստներուն տակ ծածկուած և կուրծքին վրայ տափակուած տիկի մը մէջի գինին էր, կ'ըսեմ թէ այս ատրճանակին վառօդը և գնդակը հրացանաբունին մէջ ինկան երբ ես կայծհանը զինելով կոխեցի, բլթակին որ բացուելով զանոնք կլլեց: Ձեզի ըլլայ ձեր անզոր զէնքը որ միայն վատերը կրնայ վախցնել: Ե՛լ, ոտքի՛ ել, սուտ գիտակ, զօրաւորները չեն վախնար քենէ: Սոսկալի աղաղակ մը որոտաց կամարներուն մէջ:

— Դուն մեր գաղտնիքները գիտե՞ս. դուն կամ գուշակ ես կամ մատնիչ մը:

— Ո՞վ ես դուն, հարցուցին միաբերան երեք հարիւր ձայներ, և նոյն վայրկեանին մօտակայ ուրուականներուն ձեռքը քսան սուր սկսան շողալ և կարծես կրթուած գումարտակի մը շարժամբ, եկան անձանօթին վրայ իջնելով միացան: Բայց ան՝ ժպտերես և հանդարտ՝ գլուխը վերցուց և ճակտին շուրջը կապուած ժապաւէնով միայն բռնուած անփոշի մազերը թօթվեց:

— Ես եմ Որէն, ըսաւ:

Յետոյ զինքը շրջապատող իրարու վրայ դիզուած մարդկային պատին վրայ դարձուց իր նայուածքը, որուն տիրապետական զօրութեան առջեւ սուրերը խառնակ շարժումով մը խոնարհեցան, սա համեմատութեամբ որ անձանօթին նայուածքէն խորտակուողներէն ոմանք շուտ մը կը յաղթահարուէին անոր ազդեցութենէն և ոմանք ալ դիմադրելու ճիգեր կը թափէին:

— Անխոհեմ խօսք մը արտասանեցիր, ըսաւ նախագահը, և այդ խօսքը արտասանելուդ պատճառն ալ անշուշտ անոր զօրութիւնը չգիտնալէ է:

Օտարականը ժպտելով գլուխը շարժեց:

— Ես պատասխանեցի ի՞նչ որ պարտաւոր էի պատասխանել:

— Ուրեմն ո՞ւրկէ կուգաս դուն:

— Ես այն երկրէն կուգամ, ուրկէ լոյս կուգայ:

— Սակայն մեզի տրուած տեղեկութիւնները կ'իմացնեն մեզ թէ դուն Շուէտէն կուգաս:

— Շուէտէն եկողը Արեւելքէն ալ կրնայ գալ, կրկնեց անձանօթը:

— Կը կրկնեմ, քեզ չենք ճանչնար, ո՞վ ես դուն:

— Իմ ո՞վ ըլլալս հասկնա՞լ կ'ուզէք... լաւ, ըսաւ անձանօթը, հիմայ ձեզի պիտի ըսեմ թէ ո՞վ եմ. գուք ըսածներս չհասկնալ կը ձեւացնէք, բայց առաջ ես ձեզի պիտի ըսեմ թէ դուք ո՞վ էք:

Ուրուականները սարսուցան և իրենց սուրերը իրար դարնելով ձախ ձեռքերնուն աջը անցուցին և անձանօթին սրտին ուղութեանը բարձրացուցին:

— Նախ, ըսաւ օտարականը ձեռքը նախագահին երկնցնելով, դուն որ ինքզինքդ Աստուած մը կը կարծես, ուրիշ բան մը չես՝ այլ կարապետ մը. դո՛ւն՝ Շուէտական ժողովարաններուն ներկայացուցիչը, ես քու անունդ պիտի ըսեմ որպէս զի ուրիշներունը ըսելու չստիպուիմ: Սվէտէնպօրկ, հրեշտակները, որ քեզ հետ մտերմօրէն կը խօսակցին, քեզ չյայտնեցի՞ն թէ այն, որուն կը սպասէիր, ճամբայ ելած էր:

— Իրօք ըսին ինձ, ըսաւ նախագահը ծածկոյթը բանալով, որպէս զի խօսողը լաւ մը տեսնէ:

Ընկերութեան ծէսերուն բոլոր սովորութեանց հակառակ իր երեսը բացողը պատկառելի դէմքով ութսուն տարեկան ալեհեր ձերուների մըն էր:

— Լա՛ւ, ըսաւ օտարականը, հիմայ քու ձախ կողմը ալ անգլիական ժողովարանի ներկայացուցիչն է, որ Քալէտօնիայի օթեակին (Ֆրան-մասօնական լօճա) կը

նախագահէ: Ողջոյն, միւրտ, թէ որ հաւելդ արիւնը երակներուդ մէջ կ'եռայ, Անգլիա կրնայ յուսալ թէ մարած լոյսը կրնայ վերստին արծարծուիլ:

Սուրերը խոնարհեցան, բարկութեան զարմանքը կը յաջորդէր:

— Է՛հ, դո՛ւն ես, շարայարեց անծանօթը: Նախագահին ձախակողմեան ծայրի գլխաւորին ուղղելով խօսքը. ո՞ր նաւահանգիտը թողուցիր գեղեցիկ նաւդ զոր թագուհւոյ մը պէս կը սիրես. լաւ Ֆրէկաթ մըն է «Նախախնամութիւն»ը, այնպէս չէ՞. անուսն մը՝ որ Ամերիկայի երանութիւն պիտի տայ:

— Դո՛ւն ալ, Յուրիխի մարգարէն, ըսաւ, երե՛ստ նայէ, դուն որ դիմագիտութիւնը մինչեւ հմայութեան հասցուցած ես, բացարձակապէս ըսէ թէ դիմագիծերէս չե՞ս ճանչնար պաշտօնիս կոչումը:

Ան՝ որուն ուղղուած էր այս խօսքը, քայլ մը ետ քաշուեցաւ:

— Է՛, Բէլաժի զաւակը, շարունակեց օտարականը քովինին դառնալով. Մաւրիտանացիները երկրորդ անգամ մըն ալ Սպանիայէն արտաքսելու է: Ասիկայ դիւրին բան մըն է եթէ Քասթիլացիք՝ Սիտի սուրը իսպառ կորուսած չեն:

Հինգերորդ գլխաւորը համր ու անշարժ մնաց, կարծես թէ անծանօթին ձայնը քարի փոխեց զայն:

— Է՛, ինձի ըսելիք մը չունի՞ս, ըսաւ վեցերորդ գլխաւորը անծանօթին խօսքը ընդմիջելով:

— Հապ՛, քեզի ալ պիտի ըսեմ, ինչ որ Յիսուս Յուդային ըսաւ, այն քեզի պիտի ըսեմ, ըսաւ անծանօթը սրտերը խուզարկող թափանցիկ նայուածքով մը աչքերը անոր վրայ սեւեռելով:

Ան՝ որուն ուղղուած էր այս խօսքը, իր ծածկոյթէն աւելի գունատեցաւ և ժողովականներուն մէջ փրսփրսուք մը սկսաւ շրջիլ, կարծես թէ այս տարօրինակ

զրպարտութեան համար նորընծայէն հաշիւ պահանջել ուզէին:

— Գաղիոյ ներկայացուցիչը մոռցար, ըսաւ նախագահը:

— Դո՛ւն ալ գիտես որ ան մեր մէջը չէ, ըսաւ անծանօթը հպարտութեամբ: Չե՞ս տեսներ որ անոր աթոռը պարապ է: Արդ մտի՛կ ըրէ, այն մարդը որ աղջամուղջին մէջէն կը նայի և կը տեսնէ՝ լարուած ծուղակները կը ծաղրէ, տարերաց հակառակ կը գործէ և փոխանակ մեռնելու՝ կ'ապրի:

— Դուն տակաւին երիտասարդ ես բայց Աստուծոյ մը իշխողութեամբ կը խօսիս, ըսաւ նախագահը, հիմայ դուն ալ լաւ մտածէ, երկմիտ կամ անմիտ մարդիկը միայն կը շուարին յանդգնութենէ:

Արհամարհանքի վեհագոյն ժպիտ մը ծրագրուեցաւ անծանօթին շրթունքներուն վրայ:

— Դուք ամէնքնիդ ալ երկմիտ էք, ըսաւ օտարականը, հետեւաբար չէք կրնար իմ վրաս ազդեցութիւն բանեցնել, դուք ամէնքնիդ ալ տղէտ էք, որովհետեւ չէք գիտեր թէ ես ո՛վ եմ, ընդհակառակը ես գիտեմ թէ դուք ո՛վ էք, ուստի ես ձեր քով ամէն բանի մէջ պիտի յաջողիմ միայն յանդգնութեամբ. բայց ինչի՞ կը ծառայէ յանդգնութիւնը անոր որ ամենակարող է:

— Այդ կարողութիւնը փաստացի կերպով ապացուցանէ մեզ, ըսաւ նախագահը:

— Քեզ ո՞վ ժողովի հրաւիրեց, հարցուց անծանօթը, հարցուողի կրաւորական դերէն հարցնողի ներգործական դերին անցնելով:

— Գերագոյն ժողովը:
— Անշուշտ առանց նպատակի չէ, ըսաւ օտարականը նախագահին և հինգ գլխաւորներուն դառնալով, որ դուք Շուէտէն, դուք Լօնտօնէն, դուք Նիւ-

Եօրքէն, դուք Յուրիսէն, դուք Մատրիտէն, դուք Վարչաւիայէն. վերջապէս դուք ամէնքդ, շարունակեց խօսքը ամբոխին ուղղելով, աշխարհիս չորս հողմերէն եկած էք անագին հաւատոյ սրբավայրը գուժարուելու համար:

— Հարկաւ ո՛չ, պատասխանեց նախագահը, մենք Արեւելքի մէջ երկու միակարծիք կիսագունդերը իրար կցող և մարդկային ազգի եղբայրական ձեռքերը միացնող գաղտնի տէրութիւն մը հաստատողը գիմաւորելու կ'երթանք:

— Զինքը ճանչնալու համար մտնաւոր նշան մը ունի՞ք:

— Այո՛, ըսաւ նախագահը, Աստուած հաճեցաւ իր հրեշտակներուն միջոցաւ ինձի յայտնել այդ նշանը:

— Ուրեմն դ՞ուք միայն գիտէք այդ նշանը:

— Ես միայն գիտեմ:

— Բացայայտ կերպով ըսէք այդ նշանը:

Նախագահը վարանեցաւ:

— Ըսէ՛ք, կրկնեց անձանօթը հրամայական շեշտով մը, ըսէ՛ք, որովհետեւ յայտնութեան ժամը հասած է:

— Սրտին վրայ ագամանդեայ տախտակ մը պիտի ըլլայ, ըսաւ նագահը, և այն տախտակին վրայ իրմէ միայն գիտցուած խորհրդաւոր խօսքի մը երեք սկզբնատառերը պիտի ցօլան:

— Որո՞նք են այդ սկզբնատառերը:

— Լ. . Բ. . Տ. . :

Անձանօթը արագ շարժումով մը բաճկոնին լօղիկը մէկդի ընելով իր նուրբ ջանջիլէ շապիկին վրայ բոցեղէն աստղի մը նման շողշողուն ագամանդեայ տախտակը ցօլցուց, որուն վրայ կարկենանէ երեք տառեր կը բոցավառէին:

— Ա՛ն է, գոչեց նախագահը ահաբեկած, միթէ իրա՞ւ ան է:

— Ան է որուն աշխարհ կը սպասէ, ըսին գլխաւորները անձկութեամբ:

— Աւագ Գօֆթն է, մրմնջեցին երեք հարիւր ձայն միարեւան:

— Է՛հ, գոչեց անձանօթը յողթական ձայնով մը, հիմայ կը հաւատա՞ք երբ երկրորդ անգամ ձեզի կըրկնեմ՝ ես եմ Որէն:

— Այո՛, ըսին ուրուականները՝ գետնամած խոնարհելով:

— Խօսեցէ՛ք, տէ՛ր, ըսին նախագահն ու հինգ գլխաւորները գլխիկոր, խօսեցէք դուք և մենք կը հնազանդինք:

Գ.

L. . Բ. . Տ. . :

Քանի մը վայրկեան լուսթիւն տիրեց. այս միջոցին կարծես անձանօթը իր բոլոր գաղափարները կ'ամփոփէր: Պահ մը վերջ ըսաւ.

— Տեա՛րք, կրնաք վար դնել ձեր սուրբը՝ որոնք պարապ տեղը ձեր բազուկները յոգնեցնելու կը ծառայեն միայն, և ուշադրութեամբ զիս մտիկ ընել, որովհետեւ ձեզ ըսելիք համառօտ և քիչ խօսքերէս պէտք է շատ բան հասկնաք:

Ներկաներուն ուշադրութիւնը կրկնապատկուեցաւ:

— Մեծ գետերուն աղբիւրը գրեթէ միշտ անձա-

նօթ մնացած է աստուածային ըլլալուն համար: Նեղոսին, Գանգէսին, Ամազոնին պէս ես ալ գիտեմ թէ ուր կ'երթամ, բայց չեմ գիտեր թէ ո՛ւր կէ կուգամ: Սաչափ միայն միտքս կուգայ որ երբ հոգւոյս աչքերը բացուեցան արտաքին իրերը ճանչնալու, Մէտի-նէի սուրբ քաղաքին մէջ կը գտնուէի, հոն Միւֆթի Սալայի մի պարտէզներուն մէջ կը վազվզէի:

« Յարգելի ձեր մըն էր Միւֆթին, զոր հօրս պէս կը սիրէի. խանդադատանօք երեսս կը նայէր, բայց պատկառանօք կը խօսէր հետս, օրը երեք անգամ քովէս կը հեռանար և ուրիշ ձեր մը կուգար քովս, որուն անունը սոսկմախտուն շնորհապարտութեամբ կարտասանեմ: Այս յարգելի ձերը, մարդկային բոլոր գիտութեանց այդ վեհագոյն ընդունարանը՝ որ գերագոյն ոգիներէն ուսած է ինչ որ հրեշտակները կը սորվին զԱստուած ճանչնալու համար, Ալթօթաս կը կոչուի. ան իմ խնամակալս եղաւ, իսկ այժմ իմ բարեկամս է, իմ յարգելի բարեկամս, անոր համար որ ձեռնէ ամենէն ձերագունին կրկին տարիքն ունի:

Այս հանդիսաւոր խօսքերը, վեհ շարժումները, եռանդուն և խիստ հնչումը ժողովին վրայ տագնապելի տարսուռի մը ազդեցութիւնը գործեց:

Ճամբորդը շարունակեց.

— Երբ տասնը հինգ տարեկան եղայ, բնութեան գլխաւոր գաղտնիքներուն ընտելացած էի: Տնկարանութիւն սորվեցայ, ոչ թէ այն անձուկ գիտութիւնը որ իւրաքանչիւր գիտուն իր բնական երկրին մէկ անկիւնը մէջ կը սահմանափակէ, այլ սորվեցայ համայն տիեզերքի մէջ աճող տունկերուն վաթսուն հազար ընտանիքը:

« Երբ վարժապետս զիս կը ստիպէր ձեռքերս ճակտիս ղնելով գոց աչքերուս մէջ երկնային լուսոյ ճառագայթ մը իջեցնել, կրնայի նայուածքս ծովերուն

խորերը սուզել, գոգցես գերբնական հայեցողութեամբ մը դասակարգելու համար այն այլանդակ և աննկարագրելի բոյսերը, որոնք տղմուտ ջուրերու կրկնաշարքին մէջ կը տատանին ու կը ծածանին և իրենց վիթխարի ոստերովը կը ծածկեն այն տձեւ ու ժանտատեսիլ ճիւղաղներուն սրբանը՝ զոր երբէք մարդու աչք տեսած չէ և զոր Աստուած ալ մոռցած ըլլալու է՝ ապստամբ հրեշտակներու կողմէ իր զօրութեան պահ մը յաղթահարուիլը տեսնելով զայն ստեղծած օրուընէն ի վեր:

« Նաեւ մեռեալ և կենդանի լեզուները կը սորվէի: Տարտանէլի նեղուցէն մինչեւ Մակէլլանի նեղուցը խօսուած բոլոր տոհմային լեզուները գիտէի: Բուրգերուն կրանիթէ գիրքերուն վրայ գրուած բոլոր խորհրդաւոր նշանագրերը կը կարդայի: Բոլոր մարդկային գիտութեանց տեղեակ էի՝ Սանթօնիաթօնէն մինչեւ Ակրիբա:

« Բժշկութիւնը ուսած էի ոչ միայն Հիրօկրատի, Կալիէնի և Ավէրօէօի մէջ, այլ և այն մեծ դասատուէն որ բնութիւն կը կոչուի:

« Գօֆթերուն և Տիւրզիւներուն գաղտնիքներուն թափանցեր էի: Աղետարեր և երջանկարեր հունտերը հաւաքած էի: Երբ փոթորկալից հողմեր գլխուս վրայէն կ'անցնէին, կրնայի անոնց հետ խառնել այնպիսի հունտեր՝ որոնք մահ կը տանէին այն երկիները՝ որոնց զայրագին դէմքով կը նայէի, և կեանք անոնց՝ որոնց ժպտուն դէմքով կը նայէի:

« Այս ուսմանց, աշխատութեանց և ճամբորդութեանց մէջ քսան տարեկան հասակը մտայ:

« Օր մը վարժապետս եկաւ զիս գտաւ մարմարիօնէ այրին մէջ, ուր կ'ապաստանէի ցերեկուան սաստիկ տաքուն: Դէմքը խիստ և միանգակայն ժպտուն էր: Ձեռքը շիշ մը ունէր:

« — Աշարա՛, ըսաւ ինձ, շատ անգամ քեզի ըսած եմ թէ աշխարհիս մէջ բան մը չծնիր և բան մը չմեռնիր, թէ օրօրանն ու գագազը եղբայր են, թէ մարդ իր անցեալ գոյութիւնները նշմարելու համար չունի այն լուսաւորութիւնը, որ գայն Աստուծոյ կը հաւասարեցնէ, որովհետեւ երբոր մարդ այս լուսաւորութիւնը ունենայ, ինքզինքը Աստուծոյ պէս անմահ պիտի գտնէ: Արդ խաւարը փարատող ըմպելին գտայ, հիմայ ալ անմահութեան ըմպելին կը գտնեմ: Աշարա՛, այս շիշին պակաս մասը երէկ ես խմեցի, մնացծն ալ այսօր դուն խմէ: »

« Վստահութիւնս մեծ էր արժանաւոր վարպետիս վրայ և գայն կը յարգէի, սակայն Ալթօթասի ինձ մատուցած շիշին հպելու ատեն ձեռքս սկսաւ զողալ, ինչպէս Ադամինը՝ Եւային ձեռքէն խնձորը առած ատեն: »

« — Խմէ՛, ըսաւ ինձ ժպտելով, և ձեռքերը ճակատիս վրայ դրաւ, ինչպէս որ սովորաբար կ'ընէր երբոր առժամանակեայ կերպով իմացականութիւնս կրկնապատկել ուզէր: »

« — Քնացի՛ր, ըսաւ ինձ, և յիշէ՛: Իսկոյն քնացայ: Երազիս մէջ տեսայ թէ ճանդանի և հալուէի խարոյկի մը վրայ պառկեր էի. հրեշտակ մը կ'անցնէր Աստուծոյ կամքը Արեւելքէն Արեւմուտք տանելու, թեւին ծայրովը խարոյկիս դպաւ ու խարոյկիս կրակ առաւ. բայց, տարօրինակ բան, փոխանակ վախնալու, փոխանակ ահաբեկելու, կիզուն լեզուներուն մէջ հեշտօրէն տարածուեցայ, փիւնիկ թռչունին պէս՝ որ ամէն կենաց սկիզբէն նոր կենսող մը կը քաղէ: »

« Այն ատեն բոլոր իմ նիւթականս անհետացաւ, հոգիս միայն մնաց մարմնոյս ձեւովը, բայց թափանցիկ, անշօշափելի և մեր չնշած օդէն աւելի թեթեւ ըլլալուն՝ եթերն ի վեր սլացաւ: Այն ատեն Պիւթագորի պէս, որ Տրոյիոյ պաշարման երթալը կը յիշէր, ես ալ յիշեցի այն երեսուն երկուգոյութիւնները ուր ապրած էի: »

« Տեսայ դարերը, որոնք հինաւուրց ծերերու շարքի մը պէս անցան: Առաջին ծննդեանս օրէն մինչեւ վերջին մահուանս օրը կրած զանազան անուններուս ներքեւ ինքզինքս ճանչցայ, որովհետեւ, ինչպէս որ գուք ալ գիտէք, եղբա՛ւրք, և որ մեր հաւատոյ հանգամանաց զլխաւոր կէտերէն մէկն է, հոգիները, աստուածութեան այս անթիւ բղխումները, որ Աստուծոյ սըրտէն կ'իլլին շնչառութեան իւրաքանչիւր տուրեալին և օդը կը լեցնեն, վեհագոյն հոգիներէն սկսելով մինչեւ ստորնագոյն հոգիները՝ անթիւ դասակարգերու կը բաժնուին: Եւ մարդ՝ որ ծնելու ատեն թերեւս դիպուածով մը այս նախագոյ հոգիներէն մին կը ներշնչէ, մահուանը միջոցին, նոր ասպարէզի մը և յաջորդական այլափոխութեանց կ'ենթարկուի: »

Ասոնք խօսողը աչքերը վեհօրէն դէպի երկինք վերցուցած՝ այնպիսի համոզեալ ձայնով մը կը խօսէր որ, իր հաւատքին բովանդակութիւնն եզոզ գաղափարները այս պարբերութեան հասած միջոցին, սքաչացման շըշուկի մը հարկադրական ընդմիջումին ենթարկուեցաւ. զարմանքը սքանչացման տեղի կուտար, ինչպէս որ զայրոյթը զարմանքին տեղի տուած էր: »

« — Երբ արթնցայ, շարայարեց հոգետեսը, զգացի որ մարդէ աւելի բան մըն եմ, հասկցայ որ գրեթէ Աստուած մըն էի: »

« Այն ատեն միտքս դրի ոչ միայն ներկայ կեանքս՝ այլև ապագաս անգամ մարդկութեան բարօրութեանը նուիրել: »

« Երկրորդ օրը՝ Ալթօթաս, կարծես դիտաւորութիւնս գուշակելով՝ ինձ եկաւ և ըսաւ. »

« — Որդեա՛կ, քսան տարի է որ մայրդ մեռաւ քեզ ծնած ատենը. քսան տարիէ ի վեր անյաղթելի խոչընդոտ մը հայրդ անձանօթ պահեց քեզ. հիմայ մեր ճամբորդութիւնը պիտի սկսինք. ճամբան պա-

տահած մարդոցը մէջ պիտի գտնուի հայրդ, ան քեզի հետ պիտի գիրկընդխառնուի, բայց դուն զայն չպիտի ճանչնաս » :

« Այսպէս, ամէն բան՝ անցեալ, ներկայ և ապագայ, պէտք էր որ գաղտնի մնար իմ մէջս, ինչպէս որ կը մնայ Աստուծոյ ընտրեալներուն մէջ :

« Մնաս բարով, ըսի Միւֆթի Սալայիմին՝ որ օրհնեց զիս և բազում ընծաներ տուաւ. յետոյ Սուէզ գացող կարաւանի մը խառնուեցանք :

« Ներեցէք, տեա՛րք, եթէ այս յիշատակը զիս կը յուզէ : Օր մը յարգելի անձի մը հետ ողջագուրուեցայ. չեմ գիտեր ի՛նչ տարօրինակ գողով մը ամբողջ մարմինս սարսուռաց, երբ անոր սրտին բաշխուէնը զգացի :

« Այս մարդը Մէքքէի Շէրիֆն էր, խիստ փառաւոր եւ համբաւաւոր իշխան մը : Պատերազմներու մէջ մտած ելած էր, և իր բաղուկին մէկ շարժումովը երեք միլիոննոց մարդկային ահագին բանակի մը գլուխը կը խոնարհեցնէր : Ալթօթաս անդին դարձաւ չի յուզուելու և գուցէ չյայտնուելու համար, ու ճամբանիս շարունակեցինք :

« Ասիոյ խորերը գացինք, Տիգրիսէն վեր ելանք, Բալմիր, Դամասկոս, Չմիւռնիա, Կ. Պոլիս, Վիէննա, Պերլին, Թրիէսթէ, Մօսքուա, Սթօքհօլմ, Սէն-Քեդերսպուրկ, Նիւ-Եօրք, Պուէնոս-Այրէս, Բարեյուսոյ Գլուխ, Ատէն շրջեցանք. յետոյ գրեթէ ելած կէտերնիս հասած ըլլալով՝ Եթովպիա գացինք, Նեղոսէն իջանք, նաւերնիս առաջ Ռօտոսթօ հանդիպեցաւ ու ետքը Մալթա, ծովու՝ վրայ մեր նաւէն քսան փարսախ հեռու ուրիշ նաւ մը եկեր էր մեր առջեւ և նոյն կարգէն երկու ասպետներ զիս բարեւելով և Ալթօթասը ողջագուրելով՝ մեզ Բէնթօ անունով աւագ իշխանին պալատը տարին յազթանակով :

« Հարկաւ դուք հիմայ ինձի պիտի հարցնէք թէ

մահմետական Աշարան ի՞նչպէս այդչափ պատուով ընդունուած էր անոնցմէ իսկ՝ որոնք իրենց ուխտերուն մէջ կ'երդնուն անհաւատները բնաջինջ ընել : Պատճառը սա է որ Ալթօթաս կաթողիկ և Մալթայի ասպետ ըլլալով՝ ինձ խօսած էր ամենակարող և ընդհանրական միակ Աստուծոյ մը վրայ՝ որ իր պաշտօնեաներուն, այսինքն հրեշտակներուն օգնութեամբը տիեզերքին ներգաշնակութիւնը հաստատած և այս ներգաշնակ ամբողջութեան « Գօզմոս » անունը տուած է : Վերջապէս աստուածիմաց մը եղած էի :

« Ճամբորդութիւններս աւարտած էին, բայց իրարմէ տարբեր անուններ կրող և իրարու հակառակ բարքեր ունեցող վերոյիշեալ քաղաքները տեսնելով ամենեւին զարմացած չէի, որովհետեւ ոչինչ նոր էր ինձի համար, որովհետեւ արդէն ապրած՝ երեսուներկու գոյութեանցս մէջ այս քաղաքները պտըտած էի, միայն թէ նոյն քաղաքաց բնակիչներուն մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները ուշագրութիւնս գրաւեցին :

« Այն ատեն կարող եղայ հոգւոյս աչքովը նայիլ կատարուած եղելութեանց և մարդկութեան քայլերուն հետեւիլ : Տեսայ որ բոլոր միտքերը գէպի յառաջդիմութիւն կը ձգտէին և յառաջդիմութիւնն ալ ազատութիւն կ'առաջնորդէր :

« Տեսայ որ յաջորդաբար երեւցող մարդարէները Աստուած առաքած էր՝ մարդութեան դողդոջուն քայլերը զօրացնելու համար, մարդկութեան՝ որ իւրաքանչիւր դարու մէջ մէյմէկ քալ կ'առնէ գէպի լոյս. եղբայրներ, դարերը ժողովուրդներուն օրերերն են :

« Այն ատեն, իւրովի ըսի թէ այսչափ վեհագոյն բաները իմ մէջս մեռնիլ, թաղուելու համար չէր որ ինձի կը յայտնուէին, թէ ի դուր լեռը իր ոսկիի ե-

ժօզ. Պալս., քիւ 1—3. Բ.հր.Ն.Ք.

բակները թաքուն կը պահէ և ովկէանոսը իր մարգարիաները, որովհետեւ յամառ հանքահանը լերան մինչեւ խորը պիտի թափանցէ և յանդուգն լուրորդը ովկէանոսին մինչեւ յատակը պիտի սուզի օր մը, և թէ, փոխանակ լերան և ովկէանոսին պէս ընելու, արեւին պէս ընելը լաւ է, այսինքն՝ լոյսը երկրիս վրայ սփռել:

«Արդ հասկցաք անշուշտ թէ ես պարզ մասօնական ձէսեր կատարելու համար եկած չեմ Արեւելքէն: Ես եկայ ձեզի ըսելու, եղբար՛ք, թէ արծիւն թիւերն ու աչքերը փոխ առէք, աշխարհիս վրայ սաւառնեցէք, հետս եկէք այն լերան գագաթը՝ ուր Յիսուս սատանայէն տարուեցաւ, և դարձուցէ՛ք աչքերնիդ երկրիս թագաւորութիւններուն վրայ:

«Ժողովուրդները անթիւ փաղանգ մը կը կազմեն՝ որոնք զանազան ժամանակներու և իրարմէ տարբեր վիճակներու մէջ ծնած և իրենց կարգը մտած են. օր մը, իւրաքանչիւր ոք իր կարգին, պիտի հասնի այն նպատակին՝ որուն համար ծնած է: Անոնք անդադար կը յոռաջգիմեն՝ եթէ նոյն իսկ հանգչիլ ալ ձեւացնեն, և եթէ զիպուածով մը զէպի հտ քայլ մը առնեն, նահանջում մը չկրնար համարուիլ այն՝ այլ ճիգ մը՝ խոչընդոտ մը ցատկելու կամ դժուարութիւն մը առաթուր ընելու, ջախջախելու համար:

«Գաղիա ազգերու յոռաջապահն է, ջահ մը տանք անոր ձեռքը: Եթէ մինչև իսկ այս ջահը պլպլացող լապտեր ըն ալ ըլլայ՝ զայն վառող բոցը աշխարհը լուսաւորող փրկարար հրդեհ մը պիտի ըլլայ:

«Ահա ասոր համար է որ Գաղիոյ ներկայացուցիչը հոս չէ... գուցէ պաշտօնին առջեւ ընկրկած ըլլայ... ես Գաղիա կ'երթամ:

— Դուք Գաղիա՞ պիտի երթաք, հարցուց նախագահը:

— Այո՛. ան ամենէն կարեւոր կեդրոնն է... զայն ինձ կ'առնեմ. ամենէն վտանգաւոր գործը հոն է... ես վրաս կ'առնեմ զայն:

— Ուրեմն գիտէ՞ք Գաղիոյ մէջ անցած դարձածները, հարցուց նախագահը:

Հոգեատեղ ժպտեցաւ:

— Գիտեմ և ըստ այնմ ամէն բան կարգին դրած եմ: Մեր, երկիւղած, յուրի, իր ներկայացուցած միապետութենէն նուազ յուսահատ թագաւոր մը կը բազմի Գաղիոյ գահին վրայ: Հաղիւ քանի մը տարի ունի ապրելու: Պէտք է որ մենք ապագան պատշաճօրէն յարգարենք անոր մահուան օրին համար: Գաղիա չէնքի կամարին բանալին է. գերագոյն ժողովին մէկ նշանովը բարձրացող վեց միլիոն ձեռքերը թող այս քարը հիմէն խախտեն, ահա այն տտեն միապետութեան չէնքը կը կործանի: Եւ այն օրը որ իմացուի թէ Գաղիոյ մէջ ա'լ թագաւոր չիկայ՝ Եւրոպայի վեհապետները, ամենէն ժպիրհ գահակալները, թալուկը իրենց ճակտին վրայ պիտի զգան և պիտի նետուին այն անդունդին մէջ՝ որ պիտի բացուի սուրբ Լուիի գահուն այս նշանաւոր կործանումովը:

— Ներեցէք, ամենապատիւ տէր, ձեր իմաստութիւնը անշուշտ ամէն բան նկատի առած և հաշուած է, ընդմիջեց նախագահին աջ կողմը կեցող գլխաւորը, որուն լեռնային գերմաներէնի հնչումէն զուլցերըացի մը ըլլալը կը հասկցուէր:

— Ամէն բան, պատասխանեց աւագ Գօֆթը լակոնարաբար:

— Եւ սակայն, ամենապատիւ տէր, ներեցէ՛ք ինձ այսպէս խօսելուս, բայց մեր լեռներուն գագաթներուն վրայ, մեր դաշտավայրերուն մէջ, մեր լիճհրուն եզերքներուն վրայ սորված ենք այնպէս ազատ խօսիլ՝ ինչպէս որ կը խօսին հողմերն ու ջուրերը իրենց սու-

լուսնովն ու խոխոջիւնովը, սակայն անգամ մըն ալ կ'ըսեմ թէ ժամանակը անդէպ է, որովհետեւ անս յետ եղելութիւն մը կը պատրաստուի, որուն պիտի պարտի Գաղիա իր միապետութեան վերածնունդը: Ես որ, ամենապատիւ տէր, պատիւը ունիմ ձեզի հետ խօսելու, տեսայ Մարի-Թէրէզի աղջկան դէպի Գաղիա ուղեւորելը տասնը հոթը կեսարներու արիւնը վաթսուներմէկ թագաւորներուն յաջորդին պլլկելու համար: Եւ ժողովուրդները կ'ուրօրէն կը հրճուէին՝ ինչպէս որ կ'ընեն ընդհանրապէս երբ անոնց շղթան կը թուլցնեն կամ կ'ոսկեղօծեն: Ուստի, իմ և իմ եղբայրներուս կողմէ կը կրկնեմ թէ տակաւին ժամանակը չէ եկած: Իւրաքանչիւր ոք միտքը ամփոփելով՝ դարձաւ այն մարդուն որ այնչափ հանդարտութեամբ և համարձակութեամբ կ'ընդդիմախօսէր նորին ամենապատուութեան:

— Խօսէ՛, եղբայր, ըսաւ աւագ Գօֆթը առանց յուզմունք մը արտայայտելու, քու կարծիքներուդ պիտի հետեւինք եթէ լաւ են: Մենք, Աստուծոյ ընտրեալներս, ոչ զոք կը մերժենք և ժողովուրդին շահերը մեր անձնասիրութիւնը շոշափող իրին չենք զոհեր: Զուիցերիոյ պատգամաւորը խորին լուսթեան մէջ շարունակեց:

— Ես իմ ուսածներուս մէջ, ամենապատիւ տէր, ճշմարտութեան մը համոզուեցայ, այսինքն թէ մարդոց դիմադրիծերը կարգալու կարողութիւն ունեցողը կրնայ գուշակել անոնց մոլութիւնը կամ առաքինութիւնը: Մարդս՝ դէմքը կը յարդարէ, նայուածքը կը քաղցրացնէ, շրթունքներուն վրայ ժպիտ կը գետեղէ, բոլոր զնգերային շարժումները կրնայ ընել, բայց իր բնաւորութեան գլխաւոր տիպարը դուրսը կը մնայ, իբրեւ անոր սրտէն անցածներուն մէկ յայտնի և անսրանալի հաստատութիւնը: Այսպէս, վագրն ալ յանկուցիչ ժը-

պիտներ և փայփայուն նայուածքներ ունի, բայց իր ցած ճակատէն, ցցուած այտերէն, խոշոր ծոծրակէն, արիւնարբու ճիրաններէն վագր ըլլալը կը ճանչցուի: Իսկ շունը յօնքը կը պոստէ, ակոսները կը ցուցնէ և կատաղութիւն կը կեղծէ՝ բայց անոր քաղցրահայեաց և համարձակ աչքերէն, մտացի դէմքէն, ողքիչ կերպէն կը ճանչնաս որ կամահաճ և բարեկամ կենդանի մըն է: Աստուած ամէն արարածներուն երեսը դրած է անոնց անունը և յատկութիւնը: Արդ, Գաղիոյ ապագայ թագուհի դեռատի աղջկան ճակտին վրայ՝ հպարտութիւն, արիւթիւն և Գերմանիոյ աղջկանց յատուկ գորովալիր ողորմածսիրութիւն տեսայ ես: Իսկ անոր խօսեցեալ երիտասարդին դէմքին վրայ՝ հանգարտ անտարբերութիւն, քրիստոնէական հեղութիւն և դիտողի մը մանրախոյզ միտքը կարգացի: Ուստի, ժողովուրդ մը, և մանաւանդ այս գաղիական ժողովուրդը՝ որ չարիքներու յիշատակը չպահէր և բարեբարութիւն մը երբէք չի մոռնար, Շարլըմանեըն, սուրբ Լուին և Հանրի Չորրորդը ունեցած ըլլալուն համար քսան վատ և անգութ թագաւորներ պահած է, ժողովուրդ մը՝ որ միշտ կը յուսայ և երբէք չյուսահատիր, միթէ չի՞ սիրեր, զեղանի և բարեսիրտ թագուհի մը ու մեղմ, գթասիրտ, լաւ կառավարող թագաւոր մը, Լուի Ժե. ի աղետաւոր և շոայլ անձէն, անոր հրապարակային շուայտութիւններէն, ծածկամիտ վրէժխնդրութիւններէն և Բօմբատուրներու ու Տիւպարիններու իշխանութեանէն վերջը: Գաղիա չի՞ պիտի օրհնէ այնպիսի իշխաններ՝ որոնք նոյն առաքինի յատկութեանց տիպարը պիտի ըլլան և Եւրոպայի խաղաղութիւնը օժիտ պիտի բերեն: Ահա արքայադուստրը՝ Մարի-Անթուանէթ քիչ օրէն սահմանագլուխէն պիտի անցնի. հարսանեկան սեղանն ու առագաստը վերսայլի մէջ կը պատրաստուին. արդեօք այժմ ձեր այդ վերակազմութեան գործին սկսելու

ժամանակն է Գաղիոյ մէջ՝ Գաղիոյ համար: Կրկին ներողութիւն կը խնդրեմ ձեռնէ, ամենապատիւ տէր, ես ստիպուեցայ ըսել ինչ որ հոգւոյս խորէն կը խորհէի, զոր պարտաւորութիւն կը համարեմ ձեր անվրէպ իմաստութեան հակակշռին ենթարկել:

Այս խօսքերուն վրայ, խօսողը՝ զոր անձանօթը Յուրիսի առաքեալ անուանած էր, խոնարհեցաւ և շուրջը եղողներէն միահաղոյն հաւանութեան փաղաքըշական մրմունջներ քաղելով՝ աւագ Գօֆթին պատասխանին սպասեց:

Պատասխանը չուշացաւ. աւագ Գօֆթը այսպէս ըսկըսաւ խօսիլ.

— Իթէ դուք դիմագիծերը կը կարգաք, քաջանունն եղբայր, ես ապագան կը կարգամ: Մարի-Անթուանէթ հպարտ է, կռիւին մէջ պիտի յամառի և մեր յարձակումներէն կորնչի: Լուի Օկիւսդ արքայորդին բարի և գթասիրտ է, կռիւին մէջ պիտի տկարանայ և իր կնկանը պէս պիտի կորնչի անոր հետ. միայն թէ իւրաքանչիւրը առաքինութեամբ կամ մուրթեամբ պիտի կորնչի: Այս վայրկեանիս զիրար կը յարգեն, մենք անոնց ժամանակ չենք թողուր զիրար սիրելու. և ահա տարիէ մը վերջ զիրար պիտի առնն: Սակայն ի՞նչ հարկ կայ խորհրդակցելու, եղբարք, գիտնալու համար թէ լոյսը ո՞ր կողմէն կուգայ, քանի որ այդ լոյսն ինձ յայտնուած է, քանի որ ես Արեւելքէն կուգամ, հովիւներուն պէս երկրորդ վերածնունդ մը աւետող աստղէ մը առաջնորդուած: Վաղը ես գործի կը սկսիմ և ձեր ձեռնառութեամբը քսան տարի կ'ուզեմ ձեռնէ մեր այս գործը ի գլուխ հանելու համար. քսան տարի կը բաւէ եթէ միութեամբ և զօրութեամբ դէպի միեւնոյն նպատակը քալենք:

— Քսան տարի՞, մրմնջեցին ուրուականներէն շատերը, շատ է:

Աւագ Գօֆթը այս անհամբերներուն դարձաւ:

— Այո՛, անշուշտ, ըսաւ, երկայն ատեն մըն է անոնց համար որ կը կարծեն թէ սկզբունք մը մեռցնել այնչափ դիւրին բան մը է՝ որչափ դիւրին է մարդ մը մեռցնել ժաք Գլէմանի գանակովը կամ Տամիէնսի զմեղիովը: Անմիանե՛ր... դանակը մարդ կը մեռցնէ, ճշմարիտ է, բայց վերածնիչ պողպատին պէս ոստ մը կը կտրէ՝ ուրիշ տասը ոստեր արմատէն դուրս տալու համար, և դամբանին մէջ հանգչող արքայական դիակին տեղ Լուի ԺԳ՝ ապուշ բռնակալ մը, Լուի ԺԳ՝ խելացի միապետ մը, Լուի ԺԵ՝ կուռք մը կը յարուցանէ, որ իր երկրպագուները արտասունքով և արիւնով կ'ողողէ այն այլանդակ աստուածներուն պէս՝ զոր ես Հնդկաստանի մէջ տեսայ, որոնք իրենց սայլին անխնեւուն ներքեւ ծաղկեպսակներ նետող կրններն ու տղաքը միակերպ ժպտով մը կը ջախջախեն: Ի՛հ, քսան տարին ձեզի շատ կը թուի թագաւորի մը տնունը երեսուն միլիոն մարդոց սրտէն ջնջելու համար, որոնք երբեմն իրենց զաւակներուն կեանքը Աստուծոյ կը նուիրէին, Պզտիկ Լուի ԺԵի կեանքը վերագնելու համար: Ի՛հ, դուք կը կարծէք որ դիւրին գործ մըն է Գաղիոյ ատելի ընել այն շուշանագրողները՝ որոնք երկնքի աստղերուն պէս լուսափայլ համանուն ծաղիկին հօտին պէս փաղաքուչ, աշխարհիս ամէն կողմը այս, աստուածասիրութիւն և յաղթանակ տարին հազար տարի շարունակ, Դուք փորձեցէք, եղբարք, փորձեցէք, ես ձեզի քսան տարի չեմ տար՝ այլ դար մը:

« Դուք ամենքդ ցրուած, դողդոջուն և իրարմէ անգէտ էք. ե՛ս միայն ձեր ամէնուն անունը գիտեմ, ե՛ս միայն գիտէի ձեր իւրաքանչիւրին արժէքը՝ անոնցմով ամբողջ մը կազմելու համար, ե՛ս եմ միայն այն շըղթան՝ որ ձեզ եղբայրական մեծ հանգոյցով մը իրար կը կապէ: Արդ, ձեզի կ'ըսեմ, փիլիսոփաներ, տնտեսա-

գէտներ, գաղափարականներ, ես կ'ուզեմ որ քսան տարուան մէջ այս սկզբունքները, զոր դուք ձեր տան մէջ ցած ձայնով կը փսփսաք, և ձեր հինաւուրց աշտարակներուն ստուերին մէջ անհանգիստ աչքով մը կը գրէք և դաշոյն ի ձեռին իրարու կը հաղորդէք՝ որպէս զի ձեր խօսքերը ձենէ աւելի բարձր կրկնող մատնիչը կամ անխոհեմը գաշունամահ սպաննէք, ես կ'ուզեմ որ այս սկզբունքները փողոցին մէջ բարձրաձայն հռչակէք, յայտնի հրապարակէք, բոլոր Եւրոպայի մէջ տարածէք խաղաղասէր լրատարներու միջոցաւ, կամ հինգ հարիւր հազար սուլիններուն ծայրովը՝ որոնք իբրեւ ազատութեան պաշտպան զինուորներ, ոտք պիտի ելլան այս սկզբունքները իրենց դրօշակներուն վրայ գրուած. վերջապէս ես կ'ուզեմ որ դուք որ Լօնտօնի անունէն կը վախնաք, ինչպէս նաեւ հաւատաքննութեան մթին բանտերէն, ես ալ Պասթիլլէն՝ որուն պիտի դիմագրաւեմ, կ'ուզեմ որ արգահատանօք խնդանք այն ահարկու բանտերուն աւերակներուն վրայ կոխկռտելով՝ ուր ձեր կիներն ու զաւակները պիտի պարհն: Արգ, այս ամէնը կրնայ ըլլալ ոչ թէ ինքնակալին՝ այլ ինքնակալութեան մահուընէն, կրօնական իշխանութեանց արհամարհուելէն, ազնուագիտական ցեղերու ջնջումէն և հողատէրներու ոտացուածքներուն բաժանումէն վերջը: Ես քսան տարի կը պահանջեմ հին աշխարհ մը փլցնելու և անոր տեղը նորը շինելու համար. քսան տարի, այսինքն յաւիտենականութենէն քսան երկվայրկեան, և դուք կ'ըսէք թէ շա՛տ է »:

Սքանչացման և հաւանութեան մրմունջ մը յաջորդեց փիլիսոփային այս թախծալից խօսքերուն: Յայտնի էր թէ իմաստասէր հոգետեսը Եւրոպայի գաղափարներուն այս գաղտնի գործիչներուն բոլորին ալ համակրութիւնը գրուած էր:

Աւագ Գօֆթը վայրկեան մը իր յաղթանակը վայելեց. յետոյ, տեսնելով որ ալ չափը լեցած է, սկսաւ խօսիլ:

— Հիմայ որ ես առիւծին վրայ պիտի յարձակիմ իր որջին մէջ, հիմայ որ ես կեանքս աշխարհի ազատութեանը պիտի նուիրեմ, եղբայրներ, տեսնե՞ք թէ դուք ի՞նչ պիտի ընէք այն դատին յաջողութեանը մասին որուն նուիրած ենք մենք մեր կեանքը, մեր ինչքը և մեր ազատութիւնը. ի՞նչ պիտի ընէք, ըսէ՛ք: Ահա ասիկայ ձեզի հարցնելու համար եկայ հոս:

Այս խօսքերուն այնպիսի հանդիսաւոր լռութիւն մը յաջորդեց որ սոսկալի էր:

Աղօտ սրահին մէջ անշարժ ուրուականներէ ուրիշ բան չիկար՝ որոնք քսան գահ սասանող այս ահարկու գաղափարներով տոգորուած էին:

Վեց զլխաւորները խումբերէն բաժնուեցան և քանի մը վայրկեան խորհրդակցելէ ետքը աւագ Գըլխաւորին մօտեցան:

Առաջ նախագահը խօսեցաւ.
— Ես Շուէտը կը ներկայացնեմ: Շուէտի կողմանէ հարիւր հազար արծաթ սկուտէ աւելի կը խոստանամ Ուազայի գահը կործանելու և զայն կանգնողները ջախջախելու համար:

Աւագ Գօֆթը յուշատետրը գրպանէն հանեց և այս խոստումը արձանագրեց:

Նախագահին ձախ կողմը եզոզը սապէս խօսեցաւ.

— Ես Իրլանտիոյ և Սկովտիոյ ժողովներուն կողմէն եկած ըլլալով՝ բան մը չեմ կրնար խոստանալ Անգլիոյ կողմանէ՝ որ եռանդով մեր հետը պիտի կռուի, բայց եղկելի Իրլանտիոյ և Սկովտիոյ կողմէն, երեք հազար մարդ և տարին երեք հազար քուրօնի նպաստ մը կը խոստանամ:

Աւագ Գօֆթը այս խոստումն ալ նախընթացին քով գրեց:

— Գո՞ւք, ըսաւ երրորդ գլխաւորին:

— Ես, պատասխանեց երրորդը՝ որուն զօրութիւնը և կորովի գործունէութիւնը զաղտնագէտի նեղ զգեստին ներքեւէն կը յայտնուէր, ես Ասիերիկան կը ներկայացնեմ, որուն իւրաքանչիւր քարը, ծառը, ջուրի կաթիլը, արեան կաթիլը ապտտամբութիւն կը բուրէ. որչափ ոսկի որ ունինք կուտանք, որչափ արիւն որ ունինք կը թափենք, բայց գործելու համար պէտք է որ ազատ ըլլանք: Մենք որ բաժնուած, փակուած, թուագրուած ենք՝ ուրոյն ուրոյն օղակներով անհեթեթ շղթայ մը կը կազմենք: Պէտք է որ զօրաւոր ձեռք մը առջի երկու օղակները իրար միացնէ, միւսները ինքնին կը միանան: Ուստի մենէ սկսելու է նախ, ամենապատիւ տէր: Եթէ դուք Գաղիացիները թագաւորութենէ ազատել կ'ուզէք, նախ մեզ օտար իշխանութենէ ազատեցէք:

— Այնպէ՞ս թող ըլլայ, ըսաւ աւագ Գօֆթը, նախ դուք ազատ պիտի ըլլաք և Գաղիա ձեզ պիտի օգնէ: Աստուած ամէն լեզուներով ըսաւ, « օգնեցէք միմեանց ». սպասեցէ՛ք, եղբայր, գոնէ դուք շատ չպիտի սպասէք, ես կ'երաշխաւորեմ:

Յետոյ Զուիցերիայի պատգամաւորին դարձաւ:

— Ես, ըսաւ, իմ անձնական օգնութենէս զատ բան մը չեմ կրնար խոստանալ: Մեր հանրապետութեան որդիները շատոնց ի վեր Գաղիոյ ինքնակալութեան դաշնակից են. իրենց արիւնը անոր կը ծախեն Մարինիանէ՛ և Բավիէն սկսելով, հաւատարիմ պատապաններ են. ծախսածնին պիտի յանձնեն: Առաջին անգամն ըլլալով՝ սովորապատիւ տէր, մեր անկեղծութեան վրայ կը կարժրիմ:

— Այնպէս թող ըլլայ, ըսաւ աւագ Գօֆթը, առանց անոնց և ի հեճուելս անոնց մենք պիտի յաղթանակինք: Գո՞ւն՝ Սպանիոյ պատգամաւոր:

— Ես, ըսաւ Սպանիոյ պատգամաւորը, ես երեք հազար եղբայր միայն կրնամ տալ, բայց իւրաքանչիւրը տարին հազար ուէալով պիտի նպաստէ: Սպանիա ծոյլ երկիր մըն է ուր մարդիկ դատարկ մահճակալի վրայ ալ կը պառկին, կը բաւէ որ քնանան:

— Լաւ, ըսաւ աւագ Գօֆթը, է՞, դո՞ւք:

— Ես, ըսաւ ան որուն որ ուղղուած էր խօսքը, ես ուսիական և բօլօնիական ժողովները կը ներկայացընեմ: Մեր եղբայրները դժգոհ հարուստներ են կամ անընդհատ աշխատութեան և վաղահաս մահուան դատապարտուած եզկելի ստրուկներ: Ստրուկներուն կողմէն բան մը չեմ կարող խոստանալ, որովհետեւ անոնք բանի մը, մինչեւ տնգամ իրենց կեանքին տէրը չեն, բայց երեք հազար հարուստի համար տարին ամէն մէկէն քսան լուի կը խոստանամ:

Միւս պատգամաւորներն ալ կարգաւ եկան. իւրաքանչիւրը թագաւորութիւն մը, մեծ իշխանութիւն մը կամ ազգատիկ երկիր մը կը ներկայացնէր. իւրաքանչիւրը աւագ Գօֆթին յուշատետրին վրայ իր նուէրը արձանագրել տուաւ և երգմամբ ուխտեց խոստացածը կատարել:

— Հիմայ, ըսաւ աւագ Գօֆթը, երեք սկզբնատառերով ցուցուած նշանաբանը, որով զիս կը ճանչնաք՝ արդէն տիեզերքին մէկ մասին տրուած ըլլալով՝ միւս մասին մէջն ալ պիտի տարածուի: Թող իւրաքանչիւր զաղտնագէտ այս երեք սկզբնատառերը ոչ միայն իր սրտին վրայ՝ այլ մէջը կրէ, ինչու որ մենք Արեւելքի և Արեւմուտքի օթեակներուն վեհագոյն տէրն ըլլալով՝ շուշաններու խորտակումը կը հրամայենք: Քեզ կը հրամայեմ, Ծուէտի եղբայր, քեզ Սկովտիայի եղբայր, քեզ Ամերիկայի եղբայր, քեզ Զուիցերիայի եղբայր, քեզ Սպանիոյ եղբայր և քեզ Ռուսիոյ եղբայր, Լիլիա Բասիլյոս Տեպրուէ՛ շուշանները ոտքերով խորտակեցէ՛ք:

Ծովուն մոնչող ձայնին նման ուժգին ծափահարու-
թիւն մը քարայրին խորէն ելաւ և տխրագին աճում-
ներով և նուազումներով լերան խոռոչներուն մէջ մտաւ :

— Արդ, յանուն հօբ և տեսնն մեկնեցէք, ըսաւ
աւագ գլխաւորը երբ փսփսուքը դադարեցաւ : Որոտ-
ման լերան շաւղները առաջնորդող գետնափորները
մտէք կարգաւ . որմէկերնիդ գետէն, միւսներնիդ ան-
տառէն, մնացածնիդ ալ ձորէն, այս կերպով արշալոյ-
սէն առաջ ցրուեցէք : Զիս անգամ մըն ալ պիտի տես-
նէք, և այն օրը մեր յաղթանակը պիտի տօնենք : Գա-
ցէ՛ք խաղաղութեամբ :

Յետոյ խօսքը աւարտեց մասօնական ձեւով մը՝ զոր
վեց գլխաւորները միայն հասկցան և ստորին կարգի
զաղտնագէտներուն մեկնելէն վերջ աւագ Գօֆթին
չուրջը հաւաքուեցան :

Այն ատեն աւագ Գօֆթը մէկգլխի առաւ շուէտացին :

— Սվէտէնպօրկ, ըսաւ անոր, դուն իրաւ ազնուա-
սիրտ մարդ մըն ես, և իմ ձայնովս Աստուած է որ
քեզ շնորհակալ կ'ըլլայ : Դրամը Գաղիա զրկէ այն հաս-
ցէին՝ զոր քեզ պիտի գիտցնեմ :

Նախագահը խոնարհութեամբ բարեւեց և հեռացաւ՝
ապշեղով այս երկրորդ տեսակցութեան վրայ՝ որով ա-
ւագ Գօֆթը իր անունը յայտնած էր :

— Ողջո՛յն, քաջդ Ֆէրֆաքս, շարսյարեց, դուն
քու պապիդ արժանի դաւակն ես : Զիս վաշինկթընի
յիշեցուր առջի անգամ որ իրեն գրես :

Ֆէրֆաքս ալ խոնարհեցաւ և մեկնեցաւ Սվէտէն-
պօրկի քայլերուն հետեւելով :

— Եկո՛ւր, Բօլ ձօն, ըսաւ Գօֆթը ամերիկացիին,
եկո՛ւր, ինչու որ աղէկ խօսեցար, ես քեռնէ կը սպա-
սէի ատիկայ : Դուն Ամերիկայի զիւցագուններէն մէկը
պիտի ըլլաս : Ամերիկա և դուն պատրաստ գտնուե-
ցէք տրուելիք առաջին նշանին :

Ամերիկացին ալ, կարծես Աստուծոյ մը շունչին
ներքեւ դողալով՝ մեկնեցաւ :

— Դուն ալ՝ Լավագէր, շարսյարեց ընտրեալը,
տեսականէն ալ ետ կեցիր, որովհետեւ ալ ժամանակն
է գործնականին անցնելու . ալ մի՛ ուսանիր թէ ի՞նչ
է մարդս, այլ թէ ի՞նչ կրնայ ըլլալ մարդս : Գնա՛, և
վա՛յ քու եղբայներէդ անոնց որ մեզ դէմ պիտի ելնեն,
որովհետեւ ժողովուրդին բարկութիւնը Աստուծոյ բար-
կութեան պէս արագ և սպառիչ պիտի ըլլայ :

Զուիցերիացի պատգամաւորը դողդալով խոնար-
հեցաւ և անյայտ եղաւ :

— Ի՛նձ մտիկ ըրէ, Գսիմէնէս, ըսաւ Գօֆթը, խօս-
քը անոր ուղղելով՝ որ յանուն Սպանիոյ խօսած էր :
Դուն եռանդոտ ես՝ բայց կը կասկածիս . քու երկիրդ
կը քնանայ կ'ըսես, բայց պատճառը այն է որ զայն
չեն արթնցներ : Գնա՛, Գասթիլը միշտ Սիտի հայրե-
նիքն է :

Կարգը վերջինին եկած ըլլալով՝ առաջ եկաւ, բայց
երեք քայլ չառած՝ Գօֆթը զայն շարժումով մը կեցուց :

— Դուն՝ Ռուսիոյ Սիէֆօրը, դուն ամիսէ մը առաջ
քու դատդ պիտի մատնես, բայց մէկ ամիսէն մեռած
պիտի ըլլաս :

Ռուսական պատգամաւորը ծունր դրաւ, բայց ա-
ւագ Գօֆթը սպառնական շարժումով մը զայն ոտքի
կեցուց, և ապագայի դատապարտեալը դողդոջուն
քայլերով դուրս ելաւ :

Յ.յն ատեն այս տարօրինակ մարդը՝ զոր թատերա-
խաղիս մէջ մտցուցինք դերասանապետն ընելու հա-
մար, իր շուրջը նայեցաւ և ընդունելութեան սրահը
պարապ ու լռին տեսնելով՝ նկարակիտուած օղակնե-
րով սեւ թաւիչէ լօգիկը գոցեց, գլխարկը գլուխը ան-
ցուց, անագապղինձէ դրան զսպանակը մղեց, դուռը
իր ետեւէն գոցուեցաւ . լերան կիրճերուն մէջ մտաւ,

այնպէս որ կարծես թէ անոնք առաջուրնէ իրեն ծա-
նօթ ըլլային. յետոյ, առանց առաջնորդի և առանց
լոյսի անտառին մէջ մտնելով անտեսանելի ձեռքէ մը
առաջնորդուածի պէս անվտանգ անցաւ հոնկէ:

Երբոր անտառին միւս կողմը հասաւ, աչքովը իր
ձին փնտռեց, բայց զայն չտեսնելով ականջ դրաւ,
հեռուէն վրնջիւն մը լսել կարծեց: Այն ատեն ճամ-
բորդը մասնաւոր եղանակաւ մը սուլեց. վայրկեան մը
վերջ ձիւրիտ, մութին մէջէն վազելով հաւատարիմ և
հլու զուարթ շան մը պէս եկաւ: Ծամբորդը ոստու մով
մը անոր վրան ցատկեց և երկուքն ալ արագօրէն ար-
շաւելով՝ Տանէնֆէլսէն մինչեւ Որոտման լերան զագա-
թը տարածուող թաւուաներուն մէջ իսկոյն աներեւոյթ
եղան:



Ա.

ՄՐՐԻԿ

ՄԵՐ պտտմամբ եղելութիւններէն ութը օր
եռօքը, երեկոյեան ժամը հինգին ատեն-
ները, քառածի և երկու կառապաններէ
առաջնորդուած կառք մը Բօնդամուսօնէն դուրս կ'ել-
նէր, որ Նանսիի և Մէցի մէջտեղը փոքրիկ քաղաք
մըն է: Կառքին ձիերը տակաւին նոր փոխուէր էին
կոյարանին մէջ, և հակառակ բարի պանդոկապետու-
հիի մը ապարդիւն թախանձանքներուն, որ իր տան
սեփին վրայէն յապաղած ճամբորդները կը դիտէր,
կառքը զէպի Բարիզ շարունակեց իր ճամբան:

Կառքը քաշող չորս ձիերը հազիւ թէ փողոցին ան-
կիւնէն անյայտացած էին դանդաղօրէն մեքենային հետ,
ահա քսան տղաք և կարգ մը շատախօս կիներ, որոնք
ձիերուն փոփոխութեան պահուն այս ուղեկառքին
քով կեցեր էին, իրենց տուները վերադարձան այնպի-
սի շարժումներով և աղաղակներով որ՝ ոմանց չափա-
զանց սերախութիւնը և ուրիշներուն անլուր սքան-
չացումը կը յայտնէր:

Պատճառն այն է որ այս կառքին նման բան մը
անցած չէր՝ Սթանիլլաո բարի թագաւորին Մօզէլի
վրայ յիսուն տարի առաջ իր փոքրիկ թագաւորութեան
և Գաղիոյ մէջ եղած հաղորդակցութիւնները աւելի

գիւրացնելու համար շինել տուած կամուրջին վրայէն :
 Բացը չձգենք նաև Ալզասի այն նորանշան սայլիկ-
 ները՝ որոնք տօնավաճառի օրերուն Յալցպուրկէն կը
 բերէին երկկուրս այլանդակութիւններ, պարող արջեր
 և նոյն քաղաքին ձեռնածուներու վաչկատուն ցեղե-
 րը՝ որոնք քաղաքակրթեալ երկիրներու գնչուներն են,
 Արդարեւ, առանց յողգողդ և զուարթախօս տղայ
 մը, չարախօս և հետաքրքիր պառաւ մը ըլլալու,
 մարդ զարմանքով կը կենար այս կառքը անսնելով՝ որ
 հաւասար տրամագիծ ունեցող չորս անիւներու վրայ
 բեռցուած և ամուր զօպանակներով հաստատուած,
 այնպիսի արագութեամբ մը կը յառաջանար որ՝ գի-
 տողներուն աղաղակները կրնային արգարանալ :
 Ահաւասիկ եզական ձեպընթաց կառք մը :
 Մեր ընթերցողները, որոնք բարեբաղդաբար այս
 կառքին անցնելը չեն տեսած, թող մեզ ներեն անոր
 նկարագրութիւնը ընել :
 Նախ՝ կառքին գլխաւոր բազմարանը (գլխաւոր
 բազմարան ըսինք, որովհետեւ այս բազմարանը ուղե-
 կառքի ձեւով յառաջակողմը դրուած էր) փայլուն կա-
 պուտագոյն ներկուած էր, և սեպուհի գեղաշուք խոյր
 մը կը կրէր, որուն վրայ ճարտարօրէն քանդակուած
 էր Ժ և Պ սկզբնատառերը :
 Երկու պատուհաններ ճերմակ մուսլինէ վարագոյրով
 կառքը կը լուսաւորէին . միայն թէ այս պատուհան-
 ները, որոնք պիղծ խաժամուժին գրեթէ անտեսանելի
 էին՝ բազմարանին յառաջակողմը բացուած էին և
 կառքէն մէջ կը նայէին : Վանդակապատ մը կար՝ որ-
 մէ մարդ կրնար խօսիլ այս բազմարանին մէջ բնակո-
 զին հետ, առանց այս վանդակապատին կասկածելի
 պիտի ըլլար վարագուրապատ ապակիին կրթնիլ :

Այս յետասկողմեան բազմարանը՝ որ այդ տարօրի-
 նակ կառքին կարեւոր մէկ մասը կը կազմէր . և ութը
 օտք երկայնութիւն ու վեց օտք լայնութիւն ունէր,
 լոյսը միայն վերոյիշեալ երկու պատուհաններէն կ'առ-
 նէր, իսկ օդը՝ ձեղունին վրայ բացուող ապակեւոր պա-
 տուհանիկէ մը . վերջապէս՝ կարծես թէ պարզապէս
 անցորդներուն ներկայացուած այլանդակութեանց շար-
 քը ամբողջացնելու համար, այս կառքին ձեղունէն թի-
 թեղէ խողովակի ձեւով փոքր ու նեղ ծխնելոյց մը
 դուրս ելած, կապտագոյն գարգամակներով ծուխ մը
 կ'արձակէր՝ որ հետզհետէ սիւնակներու փոխուելով կը
 ճերմկէր և տարածուելով՝ սրընթաց կառքին օդային
 հոսանքին մէջ ալիքներ կը կազմէր :

Մեր օրերուն այսպիսի մասնական նորութիւն մը
 ուրիշ արգիւնք չպիտի ունենար՝ այլ կարծել պիտի
 տար թէ նոր և յառաջդիմական գիւտ մըն էր, ուր
 մեքենագործը շոգիին զօրութիւնը ձիերու ոյժին հետ
 յարմարցուցած էր հանձարեղ գիտակցութեամբ մը :

Աւելի հաւանական կ'ըլլար ասիկայ, որովհետեւ,
 ինչպէս որ ըսինք, կառքին առջեւէն չորս ձի և եր-
 կու կառապան կ'երթային, ետեւէն ալ ձի մը միայն
 կուգար որ փոկով մը կառքին ետեւը կապուած էր :
 Այս ձին՝ որ փոքր և ուղղաբերձ գլխովը, նրբաձեւ
 սրունքներովը, նեղ կուրծքովը, խիտ բաշերովը և
 ծփուն պոչովը արարացի ցեղին ասոմային նշաններն
 ունէր՝ թամբուած էր : Այսպէս՝ կ'երեւար թէ այս նոյն
 տապանին մէջ փակուած խորհրդաւոր ճամբորդներուն
 մէկը ձիուն վրայ հեծնելով կը զուարճանար և սրար-
 շաւ կ'ընթանար կառքին քովէն, բայց այժմ կարծես
 այսպիսի գնացք մը արգիլուած էր անոր :

Երբ Բօնդամուսօն հասան՝ նախորդ կայարանի կա-
 ռապանը իր վարձքէն զատ երկու ուղեհանգոյցի գին
 Ժ.օգ. Պալս., քիւ 2—4. Բ.հր.Ն.Ք.

եւս ընդունած էր ճերմակ և ջղուտ ձեռքէ մը՝ որ դուրս ելած էր կաշիէ կրկին վարագոյրներուն տակէն, որոնք երկամիւլին առջեւի կողմը գրեթէ այնպէս լաւ կը գոցէին՝ ինչպէս որ մուսլինէ վարագոյրները բազմարանին առջեւի կողմը:

Կառապանը շլանալով՝ գլխարկը հանած ու ըսած էր, շնորհակալ եմ, բարձրապատիւ տէր: Եւ քաղցրահնչիւն ձայն մը պատասխանած էր գերմաներէն, զոր նանսիի շրջակաները տակաւին կը հասկնան՝ թէպէտ ա՛լ չեն խօսիր:

— Շնէ՛լ, շնէ՛լ էր:

Որուն հայերէն թարգմանութիւնն է.

— Արա՛գ, աւելի՛ արագ:

Կառապանները գրեթէ ամէն լիզուէ կը հասկնան երբ իրենց ուղղուած խօսքին հետ մետաղեայ տեսակ մը նուագածութիւն ալ ըլլայ, որուն այս ցեղը շատ սիրահարուած է. այս ըսածնիս ճամբորդները լաւ գիտեն, ուստի, երկու նոր կառապանները ամէն ջանք ի գործ գրին սրարշաւ ընթանալու համար, և շատ մը ճիգերէ վերջ, որ աւելի իրենց բազուկներուն քան թէ ձիերուն ձունկերուն ուժին պատիւ կը բերէին, կարող եղան պատշաճ ընթացքով մը յառաջանալ՝ մէկ ժամուան մէջ երկու քուկէս կամ երեք փարսախ առնելով:

Ժամը եօթնին տոնները Սէն-Միհիէլի կայարանին մէջ ձիերը կը փոխուէին, նոյն ձեռքը վարագոյրներուն մէջէն անցնելով ճամբուն վարձքը կը վճարէր և նոյն ձայնը առաջինին նման պատուէր մը կուտար:

Անտարակոյս այս եզակի կառքը նոյն ազդեցութիւնը չընէր հոս ալ՝ ինչպէս որ Բօնդամուսօն, նամանաւանդ գիշերն ալ մօտենալուն՝ աւելի տուապելական երեսոյթ մը կը ստանար:

Սէն-Միհիէլէն անգին լիւր կը սկսի:

Երբ հան հասուն՝ ճամբորդները ստիպուեցան քայլ

առ քայլ երթալով բաւականանալ, գրեթէ կէս ժամուան մէջ հազիւ կրցան քառորդ փարսախ ճամբայ առնել:

Լերան գագաթին վրայ կառապանները կանգ առին՝ որպէս զի ձիերը վայրկեան մը շունչ առնեն, և կառքին մէջի ճամբորդները կաշիէ վարագոյրները մէկգի ընելով՝ շուրջերնին տեսան բաւական ընդարձակ հօրիզոն մը, զոր երեկոյեան առաջին շոգիները կը սկսէին քողարկել:

Օգը, որ մինչեւ իրիկուան ժամը երեքը պայծառ ու տաք էր, իրիկուան դէմ հեղձուցիչ դարձած էր: Հարաւէն եկող թանձր ու ճերմակ ամպ մը, որ կարծես կանխամտածութեամբ մը կառքին կը հետեւէր, անկէ առաջ Պարլը-Տիւք հասնել կը սպառնար, ուր կառապանները կ'առաջարկէին գիշերը անցընել՝ ինչ որ ալ պատահէր:

Ճամբան՝ մէկ կողմէն լեռնէն և միւս կողմէն Մէօզ գետին օձապտոյտ սողոսկումովը կտրատուած ձոր մը իջնող սեպածեւ զառիթափէ մը նեղնալով՝ կէս փարսախի չափ հակուն զառիվայր մը կը ձեւացնէր, ուրկէ քայլ առ քայլ չիջնելը շատ վտանգաւոր պիտի ըլլար, ուստի, երբ ճամբայ ելան՝ կառապանները այս խոհեմ ընթացքը բռնեցին:

Ամպը միշտ կը յառաջանար: Մեծատարած թաթառի մը պէս հողին քսուելով անցնելուն համար՝ գետնէն ելնող շոգիները կուտակելով կը տարածուէր իր ճերմակութեամբը ժանտատեսիլ կերպարանք մը ստանալով և վանելով կապտագոյն ամպերը՝ որոնք հովին տակ կ'ենալ կ'ուզէին, ինչպէս որ կ'ընեն նաւատորմիղները պատերազմելու տոնն:

Իսկոյն՝ այս ամպը, որ մակընթացիկ կոհակներու արագութեամբ երկնքին վրայ կը տարածուէր, արեւին վերջին ճառագայթները աննշմարելի ըրաւ. գորշ

և անգոր լոյս մը հազիւ սփռուեցաւ երկրիս վրայ, և գողգոջուն տերեւները, հակառակ հով չըլլալուն, սեւ գոյն մը ստացան, զոր կ'ունենան՝ մայրամուտքի մթութեան առաջին վայրկեաններուն մէջ:

Յանկարծ փայլակ մը ամպը սկսեց, երկինքը հրեղէն շեղանկիւններով ճեղքուեցաւ, և անհարկ աչքը կարող եղաւ սուզիլ երկնքի անհաշուելի անդունդներուն մէջ՝ որոնք գեհեհի անդունդներուն նման հուր կը բորբոքէին:

Նոյն միջոցին կայծակ մը՝ մինչև ճամբուն քովի անտառին ծայրը ծառէ ծառ ոտոտտելով՝ երկիրը ցնցեց և մեծ ամպը կատղած ձիւ մը պէս սկսաւ վազել:

Կառքն ալ ծխնելոյղէն դուրս մուխ արձակելով միշտ կը թաւալէր. միայն թէ առաջուան սեւ ծուխը այժմ անօրացած և արեւակնի գոյն առած էր:

Նոյն պահուն երկինք գողցես ցնցումով մը մթագնեցաւ և կառածեղունին պատուհանիկը պայծառ ցուումով մը կարմրելով լուսաւոր մնաց: Յայտնի էր որ այս թաւալուն հիւղիկին բնակիչները արտաքին գէպքերէն բոլորովին անտեղեակ՝ գիշերուան դէմ պէտք եղած զգուշութիւնները ձեռք առած էին, սկսուած գործը չընդմիջելու համար:

Կառքը տակաւին հարթ լերան վրայ էր և դառիթափէն վար իջնելու սկսած չէր, երբ երկրորդ կայծակ մը առաջինէն աւելի բուռն և մեծաղեայ թընդլէններով անձրեւը ամպերէն ժայթթեցուց, նախ ցանուցիւր կաթիլներով և յետոյ խիտ ու ձիգ՝ երկինքն ի վար սետուող երկայն նետերու պէս:

Կառապանները կարծես իրարու խորհուրդ հարցուցին՝ և կառքը կեցաւ:

— Է՛, լ'նչ կ'ընէք, հարցուց ձայնը, այս անգամ սքանչելի գաղիերէնով մը:

— Իրարու կը հարցնենք թէ արդեօք աւելի յա-

առջ պիտի երթանք, պատասխանեցին կառապանները:

— Կարծեմ առիկայ առաջ ինծի հարցնելու էիք և ոչ թէ իրարու, կրկնեց ձայնը՝ Քչեցէ՛ք:

Այս ձայնին մէջ հզօր և իրական հրամանի այնպիսի հնչիւն մը կար որ կառապանները հնազանդեցուց և կառքը սկսաւ թաւալիլ լերան զառիվայրին վրայ:

— Այսպէ՛ս, կրկնեց ձայնը:

Եւ կաշիէ վարագոյրները, որոնք վայրկեան մը կիսովին բացուէր էին, նորէն վար իջան ճամբորդներուն և կառքին յառաջամասին մէջտեղը:

Քայց ճամբան ի բնէ կաւուտ, խոնաւ և երկնքէն յորդող անձրեւին հեղեղներէն կակուղցած ըլլալով՝ յանկած այնպիսի սահուն եղաւ որ ձիերը ա՛լ մերժեցին յառաջանալ:

— Պարո՛ն, անկարելի է աւելի առաջ երթալ, ըսաւ ձիւն վրայ նստող կառապանը:

— Ինչո՞ւ, հարցուց վերոյիջեալ ձայնը:

— Ինչու որ ձիերը ա՛լ չեն քալեր, այլ կը սահին:

— Ո՞րչափ հեռի ենք կայարանէն:

— Է՛հ, բաւական հեռի ենք, պարոն, չորս փարսախ հեռի ենք:

— Ուրեմն, կառապան, արծաթէ պայտեր դիր ձիերուդ ու անոնք պիտի քալեն, ըսաւ օտարականը վարագոյրը բանալով և վեց լիվրնոց չորս սկուտ երկնցնելով անոր:

— Շատ բարեսիրտ էք, ըսաւ կառապանը լայն ձեռքովը սկուտները առնելով և իր ընդարձակ կօշիկին մէջ սահեցնելով:

— Պարոնը կարծեմ քեզի հետ կը խօսի, ըսաւ երկրորդ կառապանը որ ինող սկուտներուն ձայնը լսելով կը բաղձար դուրսը չմնալ այնպիսի խօսակցութենէ մը՝ որ հետզհետէ այնչափ կարեւորութիւն կը ստանար իրեն համար:

— Այո՛, այնպէս կ'ըսէ որ քաղինք:

— Դուն այդ փափաքին դէ՛մ ես, բարեկամս, հարցուց ճամբորդը գորովալի այլ հաստատուն ձայնով մը, որմէ կ'երեւէր թէ այս կէտին վրայ ընդդիմախօսութեան չպիտի համբերէր:

— Ո՛չ, պարոն, ո՛չ, չէ թէ ես՝ այլ ձիերը՝ որոնք չեն ուզիր այլեւս առաջ երթալ:

— Ուրեմն ինչի՞ կը ծառայեն խթանները, ըսաւ ճամբորդը:

— Ա՛, խթանը անոնց փորը այնպէս կը մխէի որ քայլ մը անգամ չէին առներ. երկինք թող զիս ստակեցնէ, եթէ...

Կառապանը չկրցաւ այս հայհոյանքը լրացնել. սարսափելի կայծակ մը իր ձայնովն ու բացովը անոր խօսքը կտրեց:

— Ատիկայ քրիստոնեայի օգ չէ, ըսաւ բարեմիտ մարդը: Է՛հ, պարոն, նայեցէք... կառքը ա՛լ ինքնիւրենը կ'երթայ. հինգ վայրկեանէն մեր ուղածէն աւելի շուտ պիտի երթանք: Տէ՛ր Յիսուս, տես, ակամայօրէն կը թաւալինք:

Արդարեւ, ծանր կառքը ձիերուն գաւակին վրայ անգիմադրելիօրէն ծանրանալով՝ աստիճանաբար կըրկնապատկուող այնպիսի արագութեամբ մը արշաւել սկսաւ որ՝ առաջքը առնելը անհնարին էր:

Ձիերը ցաւէն կատրեցան և մթին զառիվայրին վրայէն նետի մը պէս սլացան՝ զգալի կերպով գահավէժին մօտենալով:

Հիմայ ճամբորդին ոչ միայն ձայնը այլևս զլուխն ալ շառքէն դուրս ելած էր:

— Անպիտան, հիմայ ամէնքս ալ պիտի մեռցնես, գոչեց: Սանձերը դէպի ձա՛խ քաշեցէք, դէպի ձա՛խ:

— Է՛հ, պարոն, ես ալ կը բաղձամ ձեզ այդ կողմը տեսնել, պատասխանեց կառապանը սարսափահար՝ ի

զուր ճգնելով սանձերը ժողվել և ձիերը կառավարելու համար կորսնցուցած իշխանութիւնը վերստին ձեռք ձգել:

— Ժօղէ՛Ք, գոչեց այս անգամ կնկան ձայն մը որ առաջին անգամ կը լսուէր, Ժօղէ՛Ք, հասի՛ր, հասի՛ր: Ա՛խ, Աստուածամայր:

Անխուսափելի վտանգը իրօք սոսկալի և մեծ էր, որով ներելի կ'ըլլար Աստուածամայրը օգնութեան կոչել: Կառքը միշտ իր ծանրութենէն քշուելով և ապահով ձեռքէ մըն ալ կառավարուած չըլլալուն՝ միշտ դէպի անդունդը կը յառաջանար, որուն վրայ կարծես ձիերէն մէկը արդէն կախուած էր. եթէ անիւները երեք անգամ եւս դառնային՝ ամէն բան գահավիժած, փշրուած և ոչնչացած պիտի ըլլար: Ծամբորդը կայծակի արագութեամբ կառքին մէջէն առջելի ձիուն վրայ խոյանալով՝ կառապանին օձիքէն և տափատին գօտիէն բռնեց, տղու մը պէս վերցուց զայն և տասը քայլ անդին նետեց, յետոյ թամբին վրայ ցատկելով սանձերը ժողվեց և խօսքը երկրորդ կառապանին ուղղելով սոսկալի ձայնով մը գոչեց:

— Ձա՛խ կողմը, ապա թէ ոչ ուղեղդ կը պայթեցընեմ, ստամբա՛կ:

Հրամանը դիւթական արդիւնք մը ունեցաւ. առջելի երկու ձիերը վարող կառապանը իր տարաբաղդ ընկերոջ ազդակներէն սիրտը թունդ ելած՝ գերմարդկային ճիգ մը ըրաւ և ճամբորդին հզօր օգնութեամբ կառքը մղելով՝ քարայտակին մէջտեղը բերաւ, ուր սկսաւ թաւալիլ կայծակի արագութեամբ և որոտուով ազմուկ հանելով:

— Աւելի՛ արագ, գոչեց ճամբորդը, աւելի՛ սրընթաց, եթէ թուշնաս՝ քե՛զ ալ, ձիերդ ալ ստքիս տակ կը ճգմեմ:

Կառապանը հասկնալով որ սնտի սպառնալիք մը

չէր անոր քրածը, արագութիւնը կրկնապատկեց և կառքը առանց կանգ առնելու իջաւ սարսափելի սաստկութեամբ մը: Այս կառքին տհաճին գոռիւնով, բոցավառ ծխնելոյզով, խեղդուկ ձայներով՝ գիշերուան մէջ անցնիլը տեսնող մը պիտի կարծէր թէ առասպելական ձիերէ քաշուող և փոթորիկէ մը հալածուող դժոխային բան մըն էր ան:

Բայց ճամբորդները մէկ վտանգէն ազատելով ուրիշ վտանգի մը մէջ ինկեր էին: Ելեկտրական ամպը որ ձորին վրայ կը շրջէր, ձիերուն պէս յախուռն յառաջ կը վազէր: Երբեմն ճամբորդը գլուխը վեր կը վերցնէր: Երբ կայծակ մը ամպերը պատուելով կ'անցնէր ու իր լոյսովը անոր դէմքին վրայ վրդովանքի զգացում մը կը թափանցկացնէր, նշմարելի կ'ըլլար թէ յանդուգն ճամբորդը այդ զգացումը պահելու ջանք մը էր րնէր, որովհետեւ Աստուծոյ զատ զինքը տեսնող մէկը չիկար հոն:

Յանկարծ, այն միջոցին երբ կառքը զառիվայրին ստորոտը հասաւ և սաստկութենէն մղուելով հարթ գետնին վրայ թաւալիլ սկսաւ, օդին յանկարծական տեղափոխութենէն երկու ելեկտրականութիւնները իրար խառնուեցան, ամպը տհաճին շառաչիւնով մը պատուեցաւ, երկինք որոտաց և փայլակն վաղանցիկ հրդեհովը բրնկեցաւ: Նախ մտնիչակագոյն, յետոյ կանաչ, վերջը ճերմակ բոց մը ձիերը ծածկեց. ետեւի ձիերը կանգնեցան ծծմբալի օդը ծծելով, առջեւի ձիերը գետին փռուեցան՝ կարծես թէ կոխած տեղերնին պարտապ ըլլար, բայց կառապանին հեծած ձին գրեթէ շուտ մը ոտքի ելաւ և ցնցումէն կառածիգ փոկեթուն կարուած ըլլալը զգալով՝ տէրը վրան՝ մոլեգին սլացաւ և մութին մէջ անյայտացաւ, մինչդեռ կառքը տասը քայլ եւս թաւալելէ վերջ՝ շանթահար ձիուն դիակին զարնուելով կը կենար:

Բոլոր այս դէպքերը կատարուած միջոցին կառքին մէջի կինը կսկծալի աղաղակներ կ'արձակէր:

Պահ մը այնպիսի տարօրինակ շփոթութիւն մը տիրեց որ՝ ոչ ոք գիտցաւ մեռած կամ ողջ ըլլալը: Ճամբորդն անգամ բազկերակը գննեց՝ հասկնալու համար թէ վիճակը փոփոխութիւն մը կրած էր:

Ինքը ողջ առողջ էր բայց կինը մարած:

Թէպէտ ճամբորդը բոլոր այս իրողութիւնները բանի մը տեղ չէր դնէր, որովհետեւ կառքէն ելլող աղաղակներուն յանկարծ խորին լուռութիւն մը յաջորդած էր, բայց իր առաջին գործը լաւահառաչ կնոջ օգնութեանը հասնիլ չեղաւ:

Այլ, ընդհակառակը, սոքը գետին դնելուն պէս՝ կառքին ետեւը վազեց:

Արարական գեղեցիկ երիվայրը՝ որուն վրայ ասկէ առաջ խօսեցանք՝ կենդանի բաշերը տնկած, պիրկ և ցից, սարսափահար կեցեր պախուցքը կը քաշէր և դուռը տեղէն հանելու աստիճան կը շարժէր՝ որուն խնձորին կապուած էր:

Վերջապէս խրոխտ կենդանին ակնապիշ, բերանը փրփրած, կապերը քակելու համար անգոր ձիգեր թափելէ վերջ փոթորիկին սոսկումէն ապուշ կրթեր մնացեր էր: Իր տէրը սովորութեանը համեմատ սուլելով ձեռքը անոր գլխուն դրաւ շոյելու համար, ձին ստիւն մը ըրաւ և այնպիսի վրնջիւն մը արձակեց որ կարծես չէր ճանչցեր զայն:

— Չա՛ր սատանայ, այս ձին ալ կատղեցաւ, մըռմըռաց խեղդուկ ձայն մը կառքին մէջէն, անխժեալ ըլլայ սա կենդանին որ պատս կը քերէ:


Յետոյ ձայնը բարձրանալով՝ անհամբեր և սպառնալի արարերէն հնչումով մը գոչեց.

— Անա ուլաք թօւտ սա՛քէթ, աֆրի՛թ:

Որուն հայերէն թարգմանութիւնն է. « Հանդարտ կեցիր կ'ըսեմ քեզի, սատանայ »:

— Ճիրբիտի դէմ մի՛ բարկանաք, վարժապետ, ըսաւ ճամբորդը ձիուն սանձը քակելով և կառքին ետեւի անիւնն կապելով, միայն վախցեր է, ուրիշ բան չիկայ, իրա՛ւ ալ պարապ տեղը մարդուս վրայ վախ կուգար պահ մը առաջ:

Այս ըսելով, ճամբորդը կառքին դուռը բացաւ, քայլարկը վար առաւ և ներս մտնելով դուռը վրայէն գոցեց:



Բ.

ԱԼՔՕՅԱՍ

Ճամբորդը գորշ աչքով, արծուաքիթ, գողգոջուն բայց գործօն ձեռքերով ձերուների մը դէմը գտնուեցաւ որ մեծ թիկնաթուռի մը մէջ թաղուած Խորհրդաբանի Դիւանագրութիւնք մակագրով մագաղաթեայ ձեռագիր հաստըկեկ գիրք մը կը քննէր աջ ձեռքովը, իսկ ձախ ձեռքին մէջ արծաթէ պտրղուտ մը բռնած էր:

Այս գիրքը, այս զբաղմունքը, անջինջ խորշումներով ծածկուած այս դէմքը՝ որուն աչքերն ու բերանը միայն գոգցես կենդանի էին, վերջապէս այս ամբողջութիւնը՝ որ անշուշտ ընթերցողին տարօրինակ պիտի երեւայ, անձանթին ընտանի ըլլալու էին որ իր շուրջն անգամ չնայեցաւ, թէպէտ կառքին այս մասին կահ կարասին նայուելու արժանի էր:

Երեք տախտակորմներ, որոնք ծածկուած էին գիրքերով լեցուն խորշերով, այս այլանդակ մարդուն բազմօցը եղող սովորական այլ տարօրինակ թիկնաթուռ կը չըջապատէին: Դիւրութեան համար այս գիրքերուն վրայ դարակներ շինուած էին, ուր կրնար դուրիշ շատ մը շիշեր, թորակներ և փայտէ պատեաններու մէջ ագուցուած տուփեր, ինչպէս որ կ'ընեն սեղանի սպասներն ու ապակեղէնները նաւու մը մէջ:

Ծերունին՝ որ կ'երեւի թէ ինքնիր գործը կատարելու սովորութիւնը ունէր, այս խորշերէն կամ պատեաններէն իւրաքանչիւրին կրնար հասնիլ թիկնաթուռ թաւալելով, և դայն պէտք եղած տեղը քշելով՝ աթուռին կողին գամուած լծակի մը միջոցաւ ուզածին չափ կը բարձրացնէր կամ կը ցածցնէր:

Սինեակը ութը ոտք երկայնութիւն, վեց ոտք լայնութիւն և վեց ոտք բարձրութիւն ունէր: Դուռին դիմացը՝ շիշերէ և մզիչներէ զատ՝ անցուդարձի համար բաց մնացած չորրորդ մասին մօտ փոքրիկ փուռ մը կը բարձրանար քիւով, դարբնօցի փուքով և երկաթէ կասկարաններով: Այս փուռին մէջ նոյն միջոցին հրաչէկ հալոց մը կը տաքնար և խառնածոյ հեղուկ մը կ'եռար: Կառքին այս մասին ձեղունէն դուրս ելնող խողովակէն էր որ կ'արձակուէր այն խորհրդաւոր ծուխը որ ամէն երկրի, հասակի և տեսակի մարդոց զարմանքը և հետաքրքրութիւնը կը գրգռէր:

Նաեւ այլանդակ անկարգութեամբ մը հոն հասնուցիր շիշերու, տուփերու, գիրքերու և խուռքարտերու մէջ կը տեսնուէին պղինձէ ունելիներ, գանազան խառնուրդներու մէջ մխուած ածուխներ, ձեղունէն թելերով կախուած կիսովին լեցուն աման մը, խոտի խուրձեր՝ որոնցմէ ոմանք քանի մը օր առաջ և ոմանք ալ հարիւր տարիէ ի վեր հաւաքուած ըլլալ կը կարծուէին:

Այս սենեակին մէջ թափանցիկ և բարկ հոտ մը կար՝ որ անուշահոտութիւն մը կրնար սեպուել նուազ այլանգակ գործանուցի մը մէջ:

Ճամբորդը ներս մտնելու միջոցին, ծերը զարմա- նալի ճարպիկութեամբ մը՝ արագօրէն իր թիկնաթուր թաւալելով փուռին մօտեցաւ և սկսաւ իր խառնածոյ հեղուկին փրփուրը ժողվել այնպիսի ուշադրութեամբ մը որ յարգանքի կը հասնէր. յետոյ՝ դէմը ելլողը տես- նելով միտքը ցրուելուն համար՝ աջ ձեռքովը հին սեւ գգալը գլխուն վրայ կոխեց և մինչև ականջներուն իջեցուց, որմէ միայն արծաթի պէս փայլուն քանի մը մազի թելեր դուրս կը մնային, և նշանաւոր յաջողա- կութեամբ մը թիկնաթուրն անիւրն ներքեւէն քաշեց իր բամբակախառն մետաքսէ զգեստին քղանցքը, որ տասը տարի գործածուելով գունաթափուեր, տձեւ և մանաւանդ կտոր կտոր ցնցատի մը փոխուեր էր:

Ծերը չափազանց նեղոցած կ'երեւէր. խառնածոյ հեղուկին փրփուրը առնելով և զգեստը վեր վերցնե- լով կը մռմռար.

— Անիծեալ կենդանին ինչէ՞ն կը վախնայ, չըսե՞ս: Գուռս երերցուց, փուռս դողացուց և ցքիս քառորդ մասը կրակին մէջ թափեց, Աշարա՛, Աստուծոյ սիրուն, այդ անասունը իմ ձեռքս աուր առաջին անգամ որ անապատէ մը անցնինք:

— Նախ, վարժապետ, ըսաւ ճամբորդը ժպտելով, ա՛լ անապատէ չպիտի անցնինք, որովհետեւ Գազիա հասած ենք, ապա՝ Ալ-Պորախի ցեղէն հազար ոսկի արժող ազնիւ և աննման ձի մը քու ձեռքդ տալու որոշումը չեմ կրնար տալ:

— Հազա՛ր ոսկի, հազա՛ր ոսկի, ուզած ատենդ այդ հազար ոսկին կամ անոր համարժէքը քեզի կու- տամ. մէկ միլիոնէն աւելի վնաս տուաւ ինձի քու ձիդ, առանց հաշուելու կեանքէս խլած օրերը:

— Ուրեմն ի՞նչ ըրաւ ձեզի դարձեալ սա խեղճ ձի- րիտը, տեսնե՞ք:

— Ըրա՞ծը մի, ըրածը այն է որ քանի մը վայր- կեանէն ցքիս պիտի եռար առանց կաթիլ մը անգամ կորսուելու. իրա՛ւ, ոչ Զօրօսագրը և ոչ ալ Բարասէլը ատանկ բան մը կ'ըսեն, բայց Պօրի դրապէս կը պատ- ուերէ զայս:

— Է՛հ, սիրելի վարժապետս, քանի մը վայրկեանէն ցքին պիտի եռայ դարձեալ:

— Ա՛հ, այո՛, պիտի եռայ, նայէ Աշարա՛, կարծեա անէժք մը կայ, կրակը կը մարի, չեմ գիտեր թէ ծխնելոյզէն ներս ի՞նչ կ'իյնայ:

— Ծխնելոյզէն ինկածը ջուր է, ըսաւ աշակերտը խնդալով:

— Ի՞նչ, ջուր մի, ջուր ըսիր, Է՛հ, ուրեմն ցքիս փճացաւ. նորէն սկսելու է այդ գործողութիւնը, կար- ձեա թէ ես կորսնցնելու ժամանակ ունիմ: Աստուած իմ, Աստուած իմ, գոչեց ծեր գիտունը, ձեռքերը յուսահատութեամբ երկինք բարձրացնելով, ջուր, և ինչի՞ ջուր է, Աշարա՛:

— Երկնքին պարզ ջուրը, վարժապետ. տեղատա- րափ կ'անձրեւէ, չտեսա՞ք:

— Ես բան մը կը տեսնե՞մ գործի եղած ժամանակս, ջուր... ջուր է հա՞... կը տեսնես, Աշտրա, հոգւոյս վրայ կ'երդնում որ ասիկայ անհանդուրժելի է: Աս ե- դա՞ծ բան է. վեց ամիս է ծխնելոյզիս համար ծածկ մը կ'ուզեմ քենէ, վեց ամիս... ի՛նչ կ'ըսեմ, տարի մըն է: Է՛հ, դուն զայն մտքէդ անգամ չես անցըներ, մինչդեռ միայն անոր վրայ խորհելու էիր, քանի որ երիտասարդ ես տակաւին: Տես ինչե՛ր կը պատահին քու անհոգութեանդ պատճառաւ. այսօր անձրեւը, վաղը հովը իմ բոլոր հաշիւներս ջուրը կը ձգեն և գործողութիւններս կ'աւրեն. սակայն Աստուած վկայ

պէտք է որ փութամ, դուն աղէկ գիտես, օրս մօտեցաւ, և եթէ այն օրուան համար պատրաստ չըլլամ, եթէ կենսատու ցքին չգտնեմ, երթայ բարո՞վ իմաստունը, երթայ բարո՞վ գիտուն Ալթօթարը. իմ հարիւրերորդ տարին յուլիս 13ին, ժամը երեկոյեան ճիշդ տասնըմէկին կը սկսի, և այս օրուընէ մինչեւ այն օրը պէտք է որ իմ ցքիս իր կատարելութեանը հասնի:

— Բայց կարծեմ սքանչելի կերպով կը պատրաստուի, սիրելի վարժապետ, ըսաւ Աշարա:

— Անշուշտ, ես արգէն առաջին փորձերը կատարեցի անկէ խմելով, ձախ թեւս որ գրեթէ անդամալոյծ էր, բոլոր իր առաձգութիւնը վերստացաւ, ճաշի համար վատնած ժամերս ալ կը շահիմ, ինչու որ երկու երեք օրը անգամ մը ուտելու պէտք ունիմ, և այս միջոցին ցքիէս դգալ մը առնելով կը կշտանամ, թէպէտեւ տակաւին անկատար ալ է: Ո՛հ, երբ կը խորհիմ թէ իմ ցքիս կատարելութեանը համար տունկ մը, տունկին մէկ տերիւր կը բաւէ, որուն քովէն գուցէ հարիւր. հինգ հարիւր, հազար անգամ անցած ենք և զոր գուցէ մեր ձիերուն ոտքերը կամ կառքին անիւները կոխկրտած են, Աշարա, այս տունկը, որմէ թլին խօսած է և զոր գիտունները անգամ մըն ալ չի կրցան գտնել կամ չկրցան ճանչնալ, կորսուած, անհետացած բան մը չէ: Տե՛ս, Աշարա՛, այդ տունկին անունը Լօրէնցային հարցնելու ես մտային յափշտակութեանց մէկ միջոցին, չը՞լլար:

— Այո՛, վարժապետ, անհո՞գ եղիր, կը հարցնեմ:

— Իսկ հիմայ, ըսաւ գիտունը խորին հառաչանք մը արձակելով, ահա այս անգամ ալ ցքիս ի դերեւ ելաւ, և ինձ՝ որեք անգամ տասնըհինգ օր պէտք է այս օրուան աստիճանին հասնելու համար, դուն աղէկ գիտես: Զգուշացի՛ր, Աշարա՛, դուն ինձի չափ պիտի կորսնցնես այն օրը՝ երբ ես մեռնիմ... բայց այդ աղմուկը ի՞նչ է, կառքը կը քուէ՛ կոր:

— Ո՛չ, վարժապետ, որոտուսին ձայնն է,

— Որոտուսին ձայնը:

— Այո՛, պահ մը առաջ կայծակը ամէնքս ալ սպաննել կը սպառնար բաց ի ինձմէ՛ որովհետեւ մետաքսեզէն հագած էի:

— Է՛հ, տե՛ս, ըսաւ ծերը ծունկին զարնելով որ գատարկ սկզբի մը ձայնը տուաւ, տե՛ս, քու տղայութիւններդ ուր տեղուանքը կը հասնին և զիս ի՛նչ վտանգներու կ'ենթարկեն, Աշարա՛, անասունի մը պէս մեռնիլ ելեկտրական բոցէ մը, զոր եթէ ժամանակ ունենայի՝ կը բռնադատէի իմ փուռիս մէջ իջնել սանս եռացնելու համար. զիս մարդոց անպիտանութենէն կամ չարասրտութենէն յառաջ եկած արկածներուն ենթարկելդ չի բաւեր, մէյ մըն ալ ելեր երկինքէն եկողներու՞ն ալ ենթարկել կ'ուզես, որոնց առաջքը առնելը աւելի պիտի դիւրանայ օր մը, հէ՛:

— Ներեցէ՛ք, վարժապետ, բայց դուք տակաւին ինձ բացատրած չէք...

— Ի՛նչ, միթէ քեզ չպարզեցի՞ սլաքներու դրութիւնը, առաջնորդ թուցիկը: Երբ ցքիս գտնեմ, վերջստին անոր վրայ կը խօսիմ քեզի. բայց հիմայ ժամանակ չունիմ, կը հասկնաս:

— Ուստի կը կարծէ՞ք որ շանթին իշխել կարելի ըլլայ:

— Ոչ միայն կարելի է շանթին իշխել՝ այլ և ուզուած տեղը տանել: Օր մը, օր մը, երբ իմ երկրորդ յիմնակս անցնի, երբ ալ հանգիստ սրտով երրորդին սպասեմ, պողպատէ սանձ մը պիտի դնեմ կայծակին և հեշտիւ ուզած տեղս պիտի տանիմ գայն, ինչպէս որ դուն շիրիտը կը տանիս: Բայց հիմայ, ծխնելոյղիս վրայ ծածկ մը դնել տուր, Աշարա, խնդրեմ:

— Պիտի ընեմ, հանգի՛ստ եղէք:

— Պիտի ընեմ, պիտի ընեմ, մի՛շտ ապագայ,

կարծես թէ ապագան մեր երկուքին տուեր են: Ո՛հ, երբէք ըսածս չպիտի հասկնաս, ըսաւ գիտունը թիկնաթուռին վրայէն՝ յուզուելով և յուսահատութիւնէն բազուկները գալարելով: Հանգիստ եղէք... Ինձ հանգիստ եղէք, կ'ըսէ, մինչդեռ եթէ երեք ամիսէն ցքիս չըրացնեմ՝ ամէն բան պիտի վերջանայ ինձ համար: Բայց թող երկրորդ յիսնեակս անցընեմ, երիտասարդութիւնս, անդամներուս առածգութիւնը, շարժելու կարողութիւնս վերստանամ, այն ատեն ա՛լ մէկու մը պէտք չպիտի ունենամ, ա՛լ «պիտի ընեմ» չպիտի ըսեն ինձի, այլ ես պիտի ըսեմ, «ըրի»:

— Վերջապէս մեր փիլիսոփայական քարին նկատմամբ ալ այդպէս կրնա՞ք ըսել, անոր վրայ ալ խորհեցա՞ք:

— Ո՛հ, Աստուած իմ, այո՛, և եթէ ազամանքը գտնելու չափ ցքիս գտնելու ապահով ըլլայի՛...:

— Ուրեմն իրօ՞ք ապահով էք անոր վրայ, վարժապետ:

— Անշո՛ւշտ, քանի որ արդէն շինեցի:

— Շինեցի՞ք:

— Տե՛ս:

— Ո՞ւր է:

— Հո՛ն, աջ կողմդ, ապակիէ անօթին մէջ, ճիշդ ձեռքդ դրած տեղդ:

Ճամբորդը անյազութեամբ մատնանշուած անօթը առաւ. շատ նուրբ բիւրեղէ փոքրիկ գաւաթ մըն էր ասիկայ որուն տակը ծածկուած էր գրեթէ անշոշափելի և բաժակին երեսը փակող փոշիով մը:

— Աղամանդի փոշի՛, բացազանչեց երիտասարդը:

— Անշո՛ւշտ, աղամանդի փոշի. մէջտեղը լաւ մը խուզարկէ՛:

— Այո՛, այո՛, կորեկահատի մեծութեամբ աղամանդ մը:

— Մեծութիւնը բան մը ըսել չէ, մենք հետզհե-

տէ այս փոշին իրար պիտի միացնենք, կորեկահատը կանեփհատի և կանեփհատն ալ սիսեռի մը պիտի վերածենք. բայց, Աստուծո՛յ սիրուն, սիրելի՛ Աշարաս, քեզի տուած խոստումիս փոխարէն ծածկ մը գնել տուր ծխնելոյզիս վրայ և առաջնորդ մը կառքիդ առջեւ, որպէս զի ջուրը ծխնելոյզիս մէջ չթափի և կայծակն ալ ուրիշ տեղ երթայ:

— Այո՛, հանգիստ եղէք:

— Դարձեա՛լ իր անհատնում «հանգիստ եղէք» ովը զիս սատանին կը յանձնէ: Երիտասարդութիւն, յիմա՛ր երիտասարդութիւն, անձնապատասան երիտասարդութիւն, գոչեց ծերունին տրամաբեկ խնդումով մը իր ատամնաթափ բերանը ցուցնելով, և կարծես իր աչքերուն խորասոյզ բիբերը աւելի խորունկցան:

— Վարժապետ, ըսաւ Աշարաս, կրակս կը մարի, հալոցս կը պաղի, կ'ըսէք, բայց ի՞նչ կայ այդ հալոցին մէջ:

— Մէ՛ջը նայէ:

Երիտասարդը հնազանդեցաւ, հալոցը բացաւ և փոքրիկ կաղինի մը մեծութեամբ ապակինման ամուխի կտոր մը գտաւ:

— Աղամանդ մը, գոչեց:

— Տարակոյս չիկայ:

— Այո՛, բայց բժոտ. թերի և անարժէք:

— Որովհետեւ կրակը մարեցաւ, Աշարաս, որովհետեւ ծխնելոյզս ծածկոց մը չունէր, կը լսե՞ս:

— Ո՛հ, ներեցէ՛ք, վարժապետ, ըսաւ երիտասարդը աղամանդը ասդին անդին դարձնելով՝ որ երբեմն փայլիլուն ցուքեր կ'արձակէր և երբեմն աղօտ: Քիչ մը սնունդ առէք:

— Անօգուտ է, երկու ժամ առաջ ցքիէս դգալ մը խմեցի:

Ժօզ. Պալս., քիւ 2—5. Բ.հր.Ն.Ք.

— Կը սխալիք, վարժապետ, այս առտու ժամը վեցին խմեցիք:

— Ուրեմն ժամը քանին է:

— Երեկոյեան ժամը երեքուկէսն է հիմայ:

— Յիսուս Բրիտոսս, գոչեց գիտնականը ձեռքերը իրար կցելով, որ մըն ա՛լ անցաւ, թռա՛ւ, կորսուեցա՛ւ: Բայց օրերը կը կարճընա՞ն ի՛նչ կ'ըլլան, ա՛լ օրը քսանը չօրս ժամ չէ՛:

— Եթէ բան մը առնել չէք ուզեր, գոնէ քանի մը վայրկեան քնացէք, վարժապետ:

— Է՛հ, այո՛, երկու ժամ պիտի քնանամ. բայց երկու ժամէն ժամացոյցդ նայէ, երկու ժամէն պիտի գաս զիս արթնցնելու:

— Կը խոտտանամ:

— Կը տեսնե՞ս, Աշարա, ըսաւ ծերունին փաղաքշահան եղանակաւ, միշտ կը վախնամ որ յաւիտենական քունը չքնանամ: Զիս արթնցնելու պիտի գաս, այնպէս չէ՞, խօսք մի՛ տար այլ երգո՛ւմ ըրէ:

— Կ'երգնում, վարժապետ:

— Երկու ժամէն:

— Երկու ժամէն:

Խոտակցութեան այս կէտին, ձիւս մը արշաւանքին պէս բան մը լսուեցաւ ճամբուն վրայ: Այս ձայնին յաջորդեց ձիւ մը որ վրդովանք և միանգամայն գարմանք կը յայտնէր:

— Բայց ստիկայ ի՞նչ կը նշանակէ, գոչեց ճամբորդը ուժգն կի գուրը բանալով և առանց քայլարկին օգնութեան մեծ ճամբուն վրայ ցատկելով:

Գ.

ԼՈՐԷՆՑԱ ՖԷԼԻՉԻԱՆԻ

Մինչդեռ ներսը ճամբորդն ու զիտունը կը խօսակցէին, կառքին գուրսի կողմը հետեւեալ եղելութիւնը կը պատահէր:

Կայծակը իջնելու ատեն, որմէ առջեւի ձիերը տապալեր և ետեւի ձիերը կանգներ էին, ըսինք արդէն որ երկանիւրին մէջի կինը մարեր էր:

Քանի մը վայրկեան զգայազիրկ մնաց, յետոյ տակաւ առ տակաւ խելքը գլուխը գալով, վախը փարատեր և ինքզինքը գտեր էր:

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ կինը, բոլորովին անօգնական լքուած եմ հոս, մարդկային արարած մը չկա՞յ որ վրաս գթայ:

— Ես կամ, տիկին, եթէ ձեզի օգտակար կրնամ ըլլալ, ըսաւ երկչոտ ձայն մը:

Այս ձայնէն՝ որ գրեթէ անոր ականջին ներքեւ կը հնչէր՝ դեռատի կինը ոտքի ելաւ և գլուխն ու թեւերը երկանիւրին կաշիէ վարագոյրներուն մէջէն անցընելով՝ երիտասարդի մը դէմը գտնուեցաւ՝ որ կառքին քայլարկին վրայ ոտքի կեցած էր:

— Դ՞ուք էք ինձի խօսողը, պարոն, ըսաւ:

— Այո՛, տիկին, պատասխանեց երիտասարդը:

— Եւ ինձի օգնե՞լ կը խոտանաք:

— Այո՛:

— Նախ ըսէք թէ ի՞նչ պատահեցաւ:

— Պատահածը սա է որ, տիկին, քիչ մը առաջ կայծակը գրեթէ ձեր վրայ իջաւ, և առջեւի ձիերուն

կապերը կոտրածեց որոնք կառապանը առնելով փախան: կինը չափազանց վրդովալի կերպարանքով մը իր շուրջը նայեցաւ:

— Իսկ ետեւի ձիերը առաջնորդողը ուր է, հարցուց:

— Հիմայ կառքէն ներս մտաւ, տիկին:

— Բան մը չպատահեցա՞ւ անոր:

— Ոչինչ:

— Ապահով էք:

— Գէթ ողջ առողջ մարդու մը պէս ձիէն վար ցատկեց:

— Ո՛հ, փա՛ռք Աստուծոյ:

Եւ դեռատի կինը մեծ շունչ մը առաւ:

— Բայց դուք ո՞ւր էիք որ ճիշդ ատենին ինձ օգնութեան կը հասնիք, պա՛րոն:

— Տիկին, փոթորիկէն բռնուելով պատսպարուելու համար սա քարահանքին մթին խորշերէն միոյն մէջ մտած էի, երբ ճամբուն վրայէն սանձարձակ կառքի մը գալը տեսայ: Նախ կարծեցի թէ ձիերը կատղած էին, բայց իսկոյն տեսայ որ ընդհակառակը զօրաւոր ձեռքէ մը առաջնորդուած էին. յանկարծ կայծակը սոսկալի շաշիւնով մը իջնելով ինքզինքս շանթահարուած կարծեցի և վայրկեան մը անշարժ մնացի: Բոլոր պատմածներս կարծես երազի մը մէջ տեսայ:

— Ուրեմն ապահով չէք որ ետեւի ձիերը առաջնորդողը կառքին մէջն է:

— Ո՛հ, այո՛, տիկին, խեղքս գլուխս եկեր էր, և անոր ներս մտնելը կատարելապէս տեսայ:

— Ստուգե՞լք թէ տակաւին հո՞ն է, կ'ազաչեմ:

— Ի՞նչպէս:

— Մտիկ ընելով: Եթէ կառքին մէջն է՝ երկու ձայն պիտի լսէք:

Երիտապարզը քայլ արկէնցատկեց, կառքին արտքին տախտակոր մին մօտցաւ և աւմետիկ ըրաւ:

— Այո՛, տիկին, հոն է, ըսաւ վերագառնալով:

Դեռատի կինը գլխովը գոհունակութեան նշան մը ըրաւ. բայց գլուխը ձեռքին դրած, գոգցես խորին մտախոհութեան մը մէջ թաղուած մնաց:

Այս միջոցին՝ երիտասարդը ատեն ունեցաւ զայն գիտելու:

Քսանըչորս տարիկան թխամորթ վարդագոյն այտերով գեղեցիկ կին մըն էր: Երկինք ուղղուած ծաւի աչքերը, որոնք անեղրութիւնը գոգցես կը հարցափորձէին, զոյգ մը աստղերու պէս կը ցոլային, և իր անփայլ մազերուն սաթի կտոր խոպպիկները՝ արեւակնի նման գունագեղ պարանոցին վըրայ կ'իյնային, որոնց վրայ, հակառակ նոյն ատենուան նորաձեւութեան, փոշի չէր ցանուած:

Յանկարծ՝ կարծես որոշում մը տալով ըսաւ.

— Պարո՛ն, հոս ո՞ւր ենք:

— Սթրագպուրկէն Բարիզի ճամբուն վրայ, տիկին:

— Ճամբուն ո՞ր կէտին վրայ:

— Բիէրֆիթէն երկու փարսախ հեռու:

— Ի՞նչ է Բիէրֆիթ:

— Աւան մըն է:

— Բիէրֆիթէն ետքը ի՞նչ կուգայ:

— Պար-լը-Տիւզ:

— Քաղա՞ք է:

— Այո՛, տիկին:

— Բազմամարդ:

— Կարծեմ չորս հինգ հազար բնակիչով:

— Հոսկէ կողմնակի ճամբայ մը կա՞յ, ուրկէ կարելի ըլլայ մեծ ճամբայէն շուտ Պար-լը-Տիւզ հասնիլ:

— Ո՛չ, տիկին, կամ գէթ ես չեմ գիտեր:

— Աւա՛ղ, մրմնջեց կինը երկանիւէն ներս քաշուելով:

Երիտասարդը պահ մը սպասեց տեսնելու համար թէ

գեռատի կինը տակաւին զինքը պիտի հարցափորձէ՞ր, բայց տեսնելով որ լուռ կը կենար, քանի մը քայլ առաւ հեռանալու համար:

Այս շարժումը կ'երեւի թէ զայն իր մտախոհութենէն սթափեցուց: Կինը աշխուժիւ կառքին յառաջակողմը նետուեցաւ:

— Պարոն, ըսաւ:

Երիտասարդը վերադարձաւ:

— Եթէ կը հաճիք, հարցում մը եւս պիտի ընեմ:

— Ըրէք:

— Կառքին ետեւը կապուած ձի մը կա՞ր:

— Այո՛, տիկին:

— Հո՞ն է միշտ:

— Ո՛չ, տիկին, բազմաբանը մտնող անձը զայն քակեց և կառքին անիւկն կապեց:

— Ձիուն բան մը չէ՞ եղեր:

— Չեմ կարծեր:

— Մեծարժէք ձի մըն է, շատ կը սիրեմ զայն, ես ինքս կ'ուզեմ ստուգել թէ սղջ առողջ է, բայց այս ցեխին մէջէն ի՞նչպէս մինչեւ անոր երթալու է:

— Ձին հոս կրնամ բերել, ըսաւ երիտասարդը:

— Ա՛հ, այո՛, գոչեց կինը, ձեզի շատ երախտապարտ պիտի մնամ:

Երիտասարդը ձիուն մօտեցաւ, կենդանին գլուխը վերցուց և վրնջեց:

— Բնաւ մի՛ վախնաք, կրկնեց կինը երկանիւին մէջէն, գառնուկի մը պէս խելօք է:

— Ճիւ՛րտ, ճիւ՛րտ. շարունակեց կինը: Կենդանին անշուշտ ճանչնալով իր տիրուհւոյն ձայնը, գլուխը երկանիւին կողմը երկնցուց:

Նոյն միջոցին երիտասարդը զայն կը քակէր:

Բայց, հազիւ թէ իր սանձը բռնող անվարժ ձեռքերու մէջ զգաց ինքզինքը, ուժգին ցնցումով մը գը-

լուխը ազատեց և մէկ ոտսուժով կառքէն քսան քայլ անդին նետուեցաւ:

— Ճիւրի՛տ, կրկնեց կինը իր քողցր ձայնով, հո՛ս, Ճիւրի՛տ, հո՛ս:

Արարական կենդանին իր գեղեցիկ գլուխը թօթվեց, շուկով մը օդը շնչեց և երաժշտական շափի մը հետեւելու պէս ոտստեղծով երկանիւին մօտեցաւ:

Կինը կաշիէ վարագոյրներէն կիսովին դուրս ելաւ:

— Հո՛ս եկուր, Ճիւրի՛տ, եկո՛ւր, ըսաւ:

Եւ կենդանին հնազանդելով՝ զինքը շայելու համար երկնցող ձեռքին մօտեցուց գլուխը:

Կինը մէկ ձեռքովը ձիուն բաշերը բռնելով և միւսովը երկանիւին կաշիէ վարագոյրին կրթնելով՝ թամբին վրայ ցատկեց, գերմանական քերթուածներու մէջ պատկերացուած ուրուականներու յատուկ թեթեւութեամբ մը, որոնք ձիերուն գանկին վրայ կը նետուին կամ ճամբորդներու գօտիներէն կը կոխուէին:

Երիտասարդը գէպի կինը խոյացաւ, բայց այս վերջինը ձեռքովը խրոխտ շարժում մը ընելով զայն կեցուց:

— Մտի՛կ ըրէք, ըսաւ երիտասարդին, դուք գեռատի ըլլալնուդ համար մարգասիրական զգացումներ ունենալու էք: Իմ փախուստիս արգելք մի՛ ըլլաք. ես խոյս կուտամ մարդէ մը զոր կը սիրեմ, բայց ամէն ետեւէ անուամբ հոսովայեցի և բարեպաշտ կաթոլիկ բանէ առաջ ես հոսովայեցի և բարեպաշտ կաթոլիկ եմ: Արդ, այս մարդը իմ հոգիս կորուստի պիտի մատնէր՝ եթէ աւելի երկայն ժամանակ իր քովը կենայի: այդ մարդը անասուած և մեռելահարցուկ մըն է որուն Աստուած քիչ մը առաջ իր որոտումի ձայնովը ազգարարութիւն ըրաւ: Երանի՛ թէ այս ազգարարութիւնէն օգուտ մը քաղէր: Իմացուցէք իրեն ձեզի ըսածներս և ինձի մատուցած ծառայութիւններնուդ փոխարէն օրհնեալ եղէք: Մնաք բարով:

Այս խօսքերը ըսելով՝ ճահիճներուն վրայ ծփացող շողիներուն պէս թեթեւ հեռացաւ և ձիրիտի արշաւանքէն առեւանգուած՝ աներեւութացաւ :

Երիտասարդը չկրցաւ ապշութեան և զարմացման ճիչ մը զօպել :

Պահ մը առաջ ճամբորդին լսածը այս ձայնն էր :



Դ.

ԺԻԼՊԷՐ

Ճամբորդը յախուռն կերպով բազմարանէն դուրս ելաւ, դուռը խնամով գոցեց և վրդովալի ակնարկ մը նետեց իր շուրջը :

Առաջին անգամ դիմացը ելլողը ապուշ կրթած երիտասարդը եղաւ : Նոյն միջոցին երեւցող փայլակի մը լոյսովը ոտքէն մինչեւ գլուխը քննեց զայն. քըննութիւն մը որ գոգցեա սովորական էր ճամբորդին նոր անձ մը կամ իր մը տեսնելու տանն :

Այս երիտասարդը հազիւ տասնըվեց տասնըեօթը տարեկան կարճահասակ, վտիտ և շղուտ աղայ մըն էր. սեւ աչքերը՝ զոր իր ուշագրութիւնը գրաւող առարկային վրայ կը սեւեռէր, եթէ ոչ քաղցրութիւն՝ գոնէ հրապոյր ունէին. փոքր և կոր քիթը, նրբին շրթուքը և ցցուած այտերը խորամանկութիւն և զգուշաւորութիւն կը յայտնէին, մինչդեռ ձիւք, կորովի և կլոր կզակ մը անոր հաստատամտութիւնը երեւան կը հանէր :

— Դո՞ւք էիք պուացողը, հարցուց ճամբորդը :

— Այո՛, պարոն, ես էի :

— Է՛ ինչո՞ւ համար պուացիք :

— Որովհետեւ...

Երիտասարդը վարանելով կեցաւ :

— Որովհետեւ ի՞նչ, կրկնեց ճամբորդը :

— Պարոն, շարունակեց երիտասարդը, երկանիւին մէջ կին մը կար :

— Այո՛ :

Եւ Պալսամօ աչքերը բազմարանին գարձուց՝ գոգցեա կառքին թանձր տախտակորմներէն ներս թափանցել ուզեր ակնարկը :

— Կառքին զսպանակներուն կապուած ձի մը կար :

— Այո՛, բայց ո՞ւր կորսուեր է :

— Պարոն, երկանիւին տիկինը զսպանակներուն կապուած ձիուն վրայ նստելով գնաց :

Ճամբորդը բռն մը անգամ չարտասանեց, դէպի երկանիւը ցատկեց, կաշիէ վարագոյրները քաշեց և նոյն պահուն երկինքը հրդեհող փայլակի մը միջոցաւ տեսաւ որ երկանիւը պարապ էր :

— Անէ՛ծք, գոչեց իրեն ձայնակցող որոտումին մոնչիւնին նմանող ձայնով մը :

Յետոյ իր շուրջը նայեցաւ, կարծես անոր ետեւէն իյնալու միջոց մը գտնելու համար, բայց անհնարին ըլլալը հասկցաւ :

— Այո՛, այս ձիերէն մէկուն հետ ձիրիտին հասնելու փորձ մը ընելը, կրիային եղջերու հալածելուն պիտի նմանի, մուտաց քիթին տակէն գլուխը օրելով : Բայց, ամէն պարագայի մէջ պիտի գիտնամ անոր ուր ըլլալը, եթէ...

Սրտնեղած՝ անմիջապէս ձեռքը բաճկոնակին գըրպանը տարաւ, փոքրիկ թղթակալ մը հանեց և բացաւ : Այս թղթակալին խորշերէն մէկուն մէջ ծալուած թուղթ մը կար և անոր մէջ սեւ մազերու խոպոպիկ մը :

Ճամբորդը այս մտադերը տեսնելով դէմքը զուարթացաւ, դոնէ արտաքինէն հանդարտ կ'երեւէր:

— Է՛հ, լաւ, ըսաւ ձեռքովը քրտնաթոր ճակատը սրբելով, երթալու ատենը ձեզի բան մը չըսա՞ւ:

— Ըսաւ, պարոն:

— Ի՞նչ ըսաւ:

— Ըսաւ որ ձեզ ըսեմ թէ ինքը չէ թէ ձեզ ատելուն՝ այլ ձեռնէ վախնալուն համար ձեռնէ կը բաժնուի, թէ ինքը բարեպաշտ քրիստոնեայ մըն է, մինչգեռ դուք, ընդհակառակը...

Երիտասարդը վարանմամբ խօսքը կտրեց:

— Մինչգեռ ես, ընդհակառակը... Ի՞նչ, կրկնեց ճամբորդը:

— Չեմ գիտեր թէ անոր ըսածը ձեզի ըսել պէ՞տք է, ըսաւ երիտասարդը:

— Ըտէք, հապա՛:

— Մինչգեռ դուք ընդհակառակը անաստուած մը և անհաւատ մըն էք եղեր որուն Աստուած բարեհաճեր է վերջին ազգարարութիւն մը ընել այս իրիկուն, տիկինը հասկցեր է եղեր այս բանը և ձեզ կը հրաւիրէ եղեր այդ ազգարարութիւնը իմանալու:

— Ասկէ ուրիշ բան մը չըսա՞ւ ձեզի, հարցուց:

— Ոչ:

— Լաւ, ուրեմն ուրիշ բանի վրայ խօսի՛նք:

Անհանգստութեան և դժգոհութեան վերջին հետքերն ալ կարծես խոյս տուին ճամբորդին ճակատէն:

Ճամբորդին դէմքին վրայ արտափայլող բոլոր սըրտայուզութիւնները երիտասարդը այնպիսի հետաքըրքըրութեամբ մը կը դիտէր որ՝ բացարձապէս կ'երեւէր թէ ինքն ալ քիչ մը քիչ քննասիրութիւն չունէր:

— Տեսնենք, անուննիդ ի՞նչ է, դեռատի բարեկամս, ըսաւ ճամբորդը:

— Ժիլպէ՛ր, պարոն:

— Ժիլպէ՛ր, ամէնը ա՛յսչափ: Կարծեմ մկրտուածեան անուն մըն է:

— Ասիկայ իմ ընտանեկան անունն է:

— Ուրեմն, սիրելի ժիլպէրս, նախախնամութիւնը ձեզ իմ դէմս կը հանէ՝ զիս չփոթելէ ազատելու համար:

— Ձեր հրամաններուն կը սպասեմ, պարոն, և ինչ որ կընամ ընել...

— Պիտի ընէք, ամբողջացուց ճամբորդը, շնորհակալ եմ: Այո՛, ձեր տարիքը ունեցողները երախտիք կ'ընեն՝ երախտիք ըրած ըլլալու հաճոյքն ունենալու համար, ատիկայ գիտեմ. ատկէ զատ, ձեզի հարցնելիքս դժուարին բան մըն չէ, ըսելիքս պարզապէս սա է որ այս գիշերուան համար պատասպարան մը ցուցնէք ինծի:

— Նախ սա ժայռը կայ որուն տակ փոթորիկէն պատասպարուեցայ, ըսաւ ժիլպէր:

— Այո՛, ըսաւ ճամբորդը, բայց ես աւելի պիտի ուզէի տան պէս բան մը գտնել, ուր լաւ ընթրիք մը և հանգիստ անկողին մը կարելի ըլլար ճարել:

— Ատիկայ շատ դժուար պիտի ըլլայ:

— Շա՞տ հեռու ենք առաջին գիւղէն:

— Բիէրֆիթէ՛ն:

— Բիէրֆիթ կ'ըսեն այդ գիւղին:

— Այո՛, պարոն, մէկուկէս փարսախ հեռու ենք:

— Այս մութին, այս օդին, միայն այս երկու ձիերով՝ երկու ժամ պէտք է մէկուկէս փարսախ առնելու համար: Տեսնենք, բարեկամս, լաւ փնտռեցէք, հոս չըջակաները ամենեւին բնակարան չիկա՞յ:

— Թալէրնէյի գղեակը կայ, որ առառուելն երեք հարիւր քայլ հեռու է հոսկէ:

— Է՛հ ուրեմն... ըսաւ ճամբորդը:

— Ի՞նչ, պարոն, հարցուց երիտասարդը աչքերը բանալով:

— Ինչո՞ւ քիչ մը առաջ չըսիք ատիկայ:

- Բայց Թավէրնէյի գղեակը պանդուկ մը չէ :
- Մէջը մարդ կը բնակի՞ :
- Անշուշտ :
- Ո՞վ :
- Թավէրնէյ սեպուհը :
- Ո՞վ է այդ Թավէրնէյ սեպուհը :
- Օրիորդ Անտրէին հայրն է, պարոն :
- Ատիկայ գիտնալը ինծի համար մեծ հաճոյք մըն է, ըսաւ ճամբորդը ժպտելով, բայց ես ձեզի կը հարցընէի թէ ի՞նչ տեսակ մարդ է սեպուհը :
- Վաթսուենէն վաթսունը հինգ տարեկան ծեր հոգատէր մըն է որ ժամանակին հարուստ է եղեր, կ'ըսեն, պարոն :
- Այո՛, և հիմայ աղքատ է, անոնց ամէնուն ալ պատմութիւնը տտանկ է : Բարեկամս, կ'աղաչեմ, զիս Թավէրնէյի տունը առաջնորդեցէք :
- Թավէրնէյի տո՞ւնը, գոչեց երիտասարդը գրեթէ ահարեկ :
- Է՛հ, կը մերժէ՞ք այդ ծառայութիւնը ընելու :
- Ո՛չ, պարոն, բայց անոր համար որ...
- Ե՛տքը :
- Անոր համար որ ձեզ չպիտի ընդունի :
- Իրմէ հիւրընկալութիւն խնդրող՝ ճամբան կորսընցուցած ազնուական մը չպիտի ընդունի՞ : Ուրեմն արջ մըն է ձեր սեպուհը :
- Բա՛, ըսաւ երիտասարդը այնպիսի հնչումով մը որ կը նշանակէր՝ չա՛տ կը նմանի անոր, պարոն :
- Վնաս չունի, ըսաւ ճամբորդը, պիտի փորձեմ :
- Այդ խրատը չեմ տար ձեզ, պատասխանեց ժիւպէր :
- Վա՛յ, բայց որչափ արջ ալ ըլլայ ձեր սեպուհը՝ զիս ողջ ողջ չպիտի ուտէ հարկաւ :
- Ո՛չ, բայց գուցէ դուռը ձեր երեսին գոցէ :

- Այն ատեն ես ալ դուռը կը խորտակեմ, եթէ դուք չմերժէք զիս առաջնորդել :
- Չեմ մերժեր, պարոն :
- Ուրեմն ճամբան ցուցուցէք :
- Ամենայն սիրով :
- Ճամբորդը երկանիւր մտաւ և փոքրիկ լապտեր մը առաւ հոնկէ :
- Երիտասարդը պահ մը յուսաց որ լապտերը մարած ըլլալով, օտարականը կառքէն ներս մտած ատենը ինքը կիսաբաց դուռնէն պիտի կրնար ներքնակողմը տեսնել :
- Բայց ճամբորդը բազմարանին գրան անգամ չմտեցաւ :
- Լապտերը ժիւպէրին ձեռքը տուաւ :
- Տղան լապտերը առնելով ձեռքին մէջ դարձուց կեցաւ :
- Այս լապտերը ի՞նչ կ'ուզէք որ ընեմ, պարոն, ըսաւ :
- Անով ճամբան կը լուսաւորէք՝ մինչ ես ձիերը կ'առաջնորդեմ :
- Բայց մարած է ձեր լապտերը :
- Հիմայ կը վառենք :
- Ո՛հ, այո՛, ըսաւ ժիւպէր, կառքին մէջ կրակ ունիք :
- Գրպանիս մէջն ալ կայ, պատասխանեց ճամբորդը :
- Այս անձրեւին դժուար կ'ըլլայ լուցկի վառել :
- Ճամբորդը ժպտեցաւ :
- Լապտերը բացէք, ըսաւ :
- Ժիւպէր հնազանդեցաւ :
- Գլխարկնիդ ձեռքերուս վրայ բռնեցէք :
- Ժիւպէր գարձեալ հնազանդեցաւ. վերջին ծայր հետաքրքրութեամբ մը բոլոր այս պատրաստութիւններ

բը կը գիտէր: Կրակ հայթայթելու համար հրահանը
զարնելէն զատ միջոց չէր գիտեր ժիւլպէր:

Ճամբորդը արծաթէ աման մը հանեց գրպանէն և
անոր մէջէն ծծմբառ մը առաւ, յետոյ ամանին վարի
կողմը բացաւ և ծծմբառը զիւրավառ խմորի մը մէջ
խօթեց, և իսկոյն ծծմբառը բրնկեցաւ տկար ճարձա-
տիւնով մը:

Այս գործողութիւնը այնչափ վայրկենական և ա-
նակնկալ եղած էր որ ժիւլպէր սարսուեցաւ:

Ճամբորդը ժպտեցաւ անոր զարմանլուն՝ որ շատ
բնական էր այնպիսի ժամանակի մը մէջ՝ ուր քանի մը
տարրալոյծներ միայն կը ճանչնային բորակը, և այս
գաղտնիքը իրենց անձնական փորձառութեանց համար
կը պահէին:

Ճամբորդը մոգական բոցը մովին պատրոյգին հա-
զորդելէ յետոյ ամանը գոցեց ու գրպանը գրաւ:

Երիտասարդը անյագ աչքերով անգին աճանին կը
նայէր: Յայտնի էր որ այնպիսի գանձ մը ստանալու
համար շատ բան կուտար:

— Հիմայ որ լոյս ունինք, կ'ուզէ՞ք զիս առաջնոր-
դել, հարցուց ճամբորդը:

— Եկէ՛ք, պարոն, ըսաւ ժիւլպէր:

Եւ երիտասարդը առաջ անցաւ, մինչդեռ իր ըն-
կերը ձիուն սանձէն բռնած կենդանին բռնի առաջ կը
քաշէր:

Օդը աւելի լաւացեր, անձրեւը գրեթէ դադրեր էր
և մրրիկը գոռալով կը հեռանար:

Եւ ճամբորդը զգաց խօսակցութիւնը վերստին
սկսելու պէտքը:

— Կ'երեւի թէ Թավէրնէյ սեպուհը աղէկ կը ճանչ-
նաք, բարեկամս, ըսաւ:

— Այո՛, պարոն, և շատ պարզ բան մըն է այս,
որովհետեւ աղայութենէս ի վեր անոր տունն եմ:

— Արդեօք ձեր ազգականն է:

— Ո՛չ, պարոն:

— Ձեր խնամակալը:

— Ո՛չ:

— Ձեր տէ՞րն է:

Երիտասարդը այս տէր բառին վրայ սարսուեցաւ և
սովորաբար գունատ եղող այտերը սաստիկ կարմրու-
թիւն մը պատեց:

— Ես սպասաւոր չեմ, պարոն:

— Բայց վերջապէս բան մըն էք, կրկնեց ճամբորդը:

— Սեպուհին վաղեմի վարձակալներէն մէկուն տը-
զան եմ. մայրս օրիորդ Անտրէին կաթ տուած է:

Հիմայ հասկցայ, յիշեալ գեռափ աղջկան հետ
կաթնկեր եղբայր կը սեպուիք այդ տանը մէջ. կ'երե-
ւի թէ սեպուհին աղջիկը գեռահաս ըլլալու է:

— Տասնըվեց տարեկան է, պարոն:

Ինչպէս որ կը տեսնուի, ժիւլպէր այս երկու հար-
ցումներուն մէկէն գողունի խոյս կուտար: Այս հար-
ցումը իր անձնականին վերաբերած էր:

Մեր ըրած խորհրդածութիւնը կարծես թէ ճամ-
բորդն ալ ըրաւ. սակայն իր հարցումը դէպի ուրիշ
կէտի մը դարձուց:

— Ի՞նչ զիպուածով ճամբուն վրայ գտնուեցաք
այսպիսի օդի մը:

— Ճամբուն վրայ չէի, պարոն, ճամբուն երկայ-
նութեանը տարածուող ժայռին տակն էի:

— Եւ ի՞նչ կ'ընէիք այդ ժայռին տակը:

— Կը կարգայի:

— Կը կարգայի՞ք:

— Այո՛:

— Է՛ ի՞նչ կը կարգայիք:

— Պարոն Ժ. Ժ. Ռուսոյի Ընկերային Դատիքը:

Ճամբորդը մասնաւոր զարմանքով մը այս երիտա- սարգին նայեցաւ :

— Սեպուհին գրատունէ՞ն առիք այդ գիրքը, հար- ցուց :

— Ո՛չ, պարոն, գնեցի :

— Ո՞ւրիկէ . . . , Պար-լը-Տիւզէ՞ն :

— Ո՛չ, պարոն, հասկէ անցնող սապատաւորէ մը առի. ժամանակէ մը ի վեր շատ մը սապատաւորներ աղէկ գիրքերով գիւղէն կ'անցնին :

— Զեղի ո՞վ ըսաւ թէ Ընկերային Դաւիթը աղէկ գիրք մըն է :

— Կարդացի ու տեսայ, պարոն :

— Ուրեմն գէշ գիրքեր ալ չարդացած էք որ այդ տարբերութիւնը կը դնէք :

— Այո՛ :

— Է՛ որո՞նք են այդ գէշ գիրքերը :

— Սօփա, Թանգի և Նասարմ, և ասոնց նման ու- բիշ գիրքեր :

— Ո՞ր ստանին ծակէն գտաք այդ գիրքերը :

— Սեպուհին մատենադարանին մէջէն :

— Այդ մարդը իր բնակած ծակին մէջ ի՞նչպէս կրնայ ձեռք ձգել այս նոր բաները :

— Բարիդէն կ'ուղարկեն զանոնք իրեն :

— Եթէ սեպուհը ըսածնուդ պէս աղքատ է, բարե- կամա, ի՞նչպէս իր ստակը ասանկ չնչին բաներու կը վատնէ :

— Զանոնք չգներ այլ իրեն կուտան :

— Ա՛յ իրեն կուտա՞ն ըսիք :

— Այո՛, պարոն :

— Ո՞վ :

— Իր բարեկամներէն մէկը, իշխան մը :

— Անունը գիտէ՞ք այդ իշխանին :

— Տը Ռիշլիէօ դուքս է անունը :

— Ի՞նչ, ձեր մարաջա՞խտը :

— Այո՛, մարջախտը :

— Կ'երեւի թէ այդպիսի գիրքեր չթողուը օրիորդ Անտրէի աչքին առջեւ :

— Ընդհակառակը, պարոն, ամէն տեղ կը թողու :

— Օրիորդ Անտրէն ձեր կարծիքէ՞ն է թէ այդ գիրքերը գէշ գիրքեր են, հարցուց ճամբորդը խորա- մանկ ժպտով մը :

— Օրիորդ Անտրէն զանոնք չկարգար, պարոն, պատասխանեց ժիլպէր ցամաք կերպով :

Ճամբորդը պահ մը լռեց : Յայտնի էր որ ակամա- յօրէն ներկայացող այսպիսի եզակիան նկարագիր մը իրեն համար համեմատական կարեւորութիւն մը կը ստանար, բարւոյ և չարի, պատկառանքի և յանդրդ- նութեան տարօրինակ խառնուրդ մը ըլլալուն համար :

— Է ինչո՞ւ կարդացիք այդ գիրքերը քանի որ գիտէիք թէ գէշ էին, շարայարեց այն մարդը որոնք Աշարա անունը տուած էր ձեր գիտունը :

— Որովհետեւ զանոնք բացած ատենս անոնց իրա- կան արժէքը չէի գիտեր :

— Սակայն չուտով անոնց ի՞նչ ըլլալը հասկցաք, այնպէս չէ՞ :

— Այո՛, պարոն :

— Եւ դարձեալ զանոնք կարդա՞լ շարունակեցիք :

— Շարունակեցի :

— Ի՞նչ նպատակաւ :

— Զգիտցած բաներս կը սորվէի անոնցմէ :

— Իսկ Ընկերային Դաւիթը :

— Գուշակած բաներս կ'ուսանէի անկէ :

— Ի՞նչ :

— Թէ բոլոր մարդիկ եղբայր են, թէ ընկերու- թիւնները յօռի կազմուած են՝ ուր ստրուկներ և գե- ժօգ. Պալս., քիւ 2—6. Բ.հր.Ն.Բ.

բիներ կը գտնուին, թէ օր մը բոլոր անհատները իրարու հաւասար պիտի ըլլան:

— Ա՛հ, իրա՛ւ, ըսաւ ճամբորդը:

Պահ մը լուսթիւն տիրեց. այս միջոցին ժիւլպէր և իր խօսակիցը կը շարունակէին քալել, ճամբորդը ձիուն սանձէն քաշելով, իսկ ժիւլպէր լապտերը ձեռքին:

— Ուրեմն ուսանելու չափազանց փափաք ունի՞ք, բարեկամս, ըսաւ ճամբորդը ցած ձայնով մը:

— Այո՛, պարոն, իմ ամենէն մեծ փափաքս՝ ատիկայ է:

— Է՛ ի՞նչ կ'ուզէիք ուսանիլ, տեսնենք:

— Ամէն բան, պատասխանեց երիտասարդը:

— Ինչո՞ւ համար կ'ուզէք ուսանիլ:

— Բարձրանալու համար:

— Մինչեւ ո՞ւր:

Ժիւլպէր վարանեցաւ. յայտնի էր որ մտքին մէջ նպատակ մը ունէր, բայց այդ նպատակը իր դաղտնիքն էր, զոր չէր ուզեր ըսել:

— Մինչեւ հոն՝ ուր կարող է մարդ հասնիլ, պատասխանեց:

— Բայց գոնէ բան մը ուսած ես:

— Ոչինչ. ի՞նչպէս կրնամ բան մը ուսանիլ, քանի որ հարուստ չեմ և թափէրնէյ կը բնակիմ:

— Ի՞նչ, քիչ մը չափագիտութիւն չե՞ս գիտեր:

— Ո՛չ:

— Բնագիտութի՞ւն:

— Ո՛չ:

— Տարրալուծութի՞ւն:

— Ո՛չ. կարդալ գրել գիտեմ, բոլոր գիտցածս այս է. բայց բոլոր ձեր ըսածներն ալ պիտի սորվիմ:

— Ե՞րբ:

— Օր մը:

— Ի՞նչ միջոցաւ:

— Չեմ գիտեր, բայց պիտի սորվիմ:

— Տարօրինակ տղայ մը, մրմնջեց ճամբորդը:

— Եւ այն ատեն... մրմնջեց ժիւլպէր ինքնիրեն խօսելով:

— Այն ատեն ի՞նչ:

— Ոչինչ, պարոն:

Սակայն ժիւլպէր և իր ուղեկիցը քառորդ ժամէ ի վեր կը քալէին. անձրեւը բոլորովին դադրեր էր և հողը կը սկսէր բուրել այն հողը՝ որ գարնանային փոթորկախառն տեղատարափներուն կը յաջորդէ:

Ժիւլպէրի միաքը սեւեռախոկուսի մը մէջ ընկղմած էր:

— Պարո՛ն, ըսաւ յանկարծ երիտասարդը, գիտէ՞ք թէ ի՛նչ է փոթորիկը:

— Անշո՛ւշտ:

— Դո՞ւք:

— Այո՛, ես:

— Դուք գիտէ՞ք ի՛նչ է փոթորիկը, դուք գիտէ՞ք թէ ո՛ւրկէ ծնունդ կ'առնէ կայծակը:

Ճամբորդը ժպտեցաւ:

— Երկու ելեկտրականութեանց միաւորութիւնն է, այսինքն ամպին և հողին ելեկտրականութեան:

Ժիւլպէր հառաչք մը արձակեց:

— Չեմ հասկնար, ըսաւ:

Գուցէ ճամբորդը աւելի դիւրահասկնալի բացատրութիւն մը պիտի տար երիտասարդին, բայց նոյն պահուն լոյս մը շողաց տերեւներուն մէջէն:

— Ա՛հ ա՛հ, ըսաւ ճամբորդը, ի՛նչ է սըւրիկայ:

— Թափէրնէյի դղեակն է:

— Եկա՞նք ուրեմն:

— Ահա՛ մեծ դուռը:

— Բացէ՛ք:

— Ո՛հ, պարո՛ն, Թավէրնէյի դուռը այդպէս չի բացուիր:

— Բայց միթէ ձեր դղեակը պատերազմական բե՞րդ մըն է, ի՞նչ է: Զարկէ՛ք նայինք:

Ժիւլպէր դրան մօտեցաւ և երկչոտ վարանուժով մը անգամ մը զարկաւ:

— Օ՛հ, ըսաւ ճամբորդը, բնաւ չպիտի իմանան, բարեկամս, աւելի՛ ուժով զարկէք:

Արգարեւ, ոչինչ չէր հաստատեր թէ ժիւլպէրին տուած ձայնը լուած ըլլայ: Ամէն բան լուսթեան մէջ էր:

— Գործը ձեր վրայ կ'առնէ՞ք, ըսաւ ժիւլպէր:

— Մի՛ վախնաք:

Ժիւլպէր ա՛լ չվարանեցաւ. դռնահարը ձգեց և զանգակն ի վար կախուեցաւ, որ աղմկալի ձայն մը հանեց զոր փարսախս մը հեռուէն լսել կարելի կ'ըլլար:

— Իրա՛ւ որ, եթէ քու սեպուհդ այս անգամ ալ չլսէ՛ խուլ ըլլալու է, ըսաւ ճամբորդը:

— Ահա Մահօն կը հաչէ, ըսաւ երիտասարդը:

— Մահօն, կրկնեց ճամբորդը, ատիկայ անշուշտ սեպուհին մեծագործութիւններէն մին է ի շնորհս իր բարեկամին Ռիչլիէօ դուքսին:

— Չեմ հասկնար, ի՞նչ ըսել կ'ուզէք, պարոն:

— Մահօն՝ մարաջախտ Ռիչլիէօի վերջին յաղթութիւնն է:

Ժիւլպէր երկրորդ հառաչանք մըն ալ արձակեց:

— Աւա՛ղ, պարոն, արդէն ըսի թէ բան մը չեմ գիտեր:

Այս երկու բառերուն մէջ օտարականը կը տեսնէր գոզուր վիշտերու և եթէ ոչ խոնարհած՝ գոնէ զըսպուած փառասիրութիւններու շարք մը:

Այս միջոցին ստքի ձայն մը լսուեցաւ:

— Վերջապէս լսեցին, ըսաւ ճամբորդը:

— Բարեւոյտ Լա Պրիին է, ըսաւ ժիւլպէր:

Դուռը բացուեցաւ. բայց Լա Պրի անակնկալ կերպով օտարական մը և անոր տարօրինակ կառքը տեսնելով, ուզեց դուռը վերստին գոցել, քանի որ կը կարծէր թէ դուռը միայն ժիւլպէրին կը բանար:

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք, բարեկամ, ըսաւ ճամբորդը, մենք ալ ճիշդ հոս կուգանք, պէտք չէ որ դուռը մեր քիթին զարնէք այսպէս:

— Սակայն, պարոն, պէտք է Պ. սեպուհին իմաց տամ թէ անակնկալ այցելու մը...

— Հաւատացէք որ իմացնելիդ անգամ չարժեր: Անոր ցասկոտ դէմքը տեսնել կ'ուզեմ, և եթէ զիս հոսիէ վճռատէ ալ, գիտցած եղէք որ տաքնալէս, չորնալէս և կշտանալէս վերջը կրնայ ըլլալ, ձեզի ըսեմ: Ես լսեցի որ հոստեղի գինին ընտիր է եղեր, հարկաւ դուք ալ գիտնալու էք, հէ՞:

Լա Պրի փոխանակ հարցումին պատասխանելու ջանաց դիմադրել, բայց ճամբորդը արդէն իր ընելիքը որոշած ըլլալուն՝ երկու ձիերը և կառքը ծառուղիին մէջ քշեց, մինչդեռ ժիւլպէր դուռը կը գոցէր: Այս բաները ակնթարթի մը մէջ կատարուեցան: Լա Պրի այն ատեն զինքը յաղթահարուած տեսնելով՝ որոշեց ինքը երթալ իր պարտութիւնը իմացնել տիրոջը, և իր յոգնարեկ սրունքները ուսը առնելով տանը կողմը խոյացաւ, իր թոքերուն բոլոր ուժովը գոչելով:

— Նիգօլ Լըկէ՛յ:

— Ո՞վ է այդ Նիգօլ Լըկէյը, հարցուց օտարականը միեւնոյն հանգարտութեամբ դէպի դղեակը յառաջանալով:

— Նիգօլը, պարոն, կրկնեց ժիւլպէր թեթեւ դուրով մը:

— Այո՛, Նիգօլ, Լա Պրի վարպետին կանչած կինը:

— Օրիորդ Անտրէին սենեկապանուհին է, պարոն:

Սակայն Լա Պրիին ձայնէն լոյս մը երեւցաւ ծառե-

րուն տակ, որ դեռատի աղջկան մը չքնաղ դէմքը կը լուսաւորէր:

— Ի՞նչ կ'ուզես Լա Պրի, հարցուց աղջիկը, ի՞նչ է այդ աղմուկը:

— Շո՛ւտ, Նիգօլ, շո՛ւտ, գոչեց ծերունին այծանման ձայնով մը, պարոնին իմաց տուր որ օտարական մը փոթորիկէն բռնուելով այս գիշերուան համար սուպնջականութիւն կը խնդրէ իրմէ:

Նիգօլ այս խօսքը կրկնել չտուաւ, թեթեւակի դէպի գոհակը սրանալով վայրկեանի մը մէջ աչքէ կորուեցաւ:

Իսկ Լա Պրի հիմայ ա՛լ վստահ ըլլալով որ սեպուհը յանկարծակիի չպիտի գար, շունչ մը առաւ:

Իսկոյն լուրը իր արգիւնքը ունեցաւ, կծու և հրամայական ձայն մը լսուեցաւ դրան սեմէն և սանդուխին վերեւէն որ աքսիաներուն մէջէն նուազ հիւրասէր եղանակաւ մը կը կրկնէր:

— Օտարական մը... ո՞վ է: Երբ մարդ մէկուն տունը կ'երթայ՝ գոնէ իր անունը կանխաւ կ'իմացնէ:

— Սեպուհը ա՞յս է, հարցուց բոլոր այս անհանգըստութիւններուն պատճառ եղող մարդը Լա Պրիին:

— Այո՛, պարոն, պատասխանեց խեղճ մարդը թախծութեամբ, ըսածը իմացա՞ք:

— Անունս կը հարցնէ... այնպէս չէ՞:

— Այո՛, ևս ալ մոռցայ ձեզի հարցնելու:


— Ժօզէֆ տը Պալսամօ սեպուհն եմ ըսէք իրեն, ըսաւ ճամբորդը. մեր տիտղոսներուն նմանութիւնը գուցէ տիրոջ գայրոյթը իջեցնէ:

Լա Պրի իր տիրոջը իմացուց անծանօթին ըսածը, այդ տիտղոսէն քիչ մը քաջալերուելով:

— Լա՛ւ, մոմօաց ձայնը, թո՛ղ մտնայ, քանի որ արդէն հոս է... Մտէք, պարոն, եթէ կը հաճիք, հո՛ն... լա՛ւ, հո՛սկէ...:

Օտարականը արագաքայլ ներս մտաւ, բայց սանգուխին առաջին ոտքը հասնելուն պէս ետ դառնալու շարժում մը ըրաւ տեսնելու համար թէ ժիլպէր ևս ունէն կուգա՞ր:

Ժիլպէր աներեւութացեր էր:



Ե.

ԹԱՎԷՐՆԷՅ ՍԵՊՈՒՅԸ

Ժօզէֆ տը Պալսամօ սեպուհ անունով ծանուցուող անձը, Թավէրնէյ սեպուհին հարուստ չըլլալը ժիլպէրէն իմացած ըլլալով հանդերձ գարմացաւ տեսնելով այս միջակ բնակարանը՝ զոր ժիլպէր դղեակ անունով մկրտած էր սեթեւեթով:

Սակայն տունը միայն մէկ յարկ ունէր որ երկայն քառակուսի մը կը կազմէր, որուն երկու ծայրերը փոքրիկ աշտարակներու ձեւով երկու շէնքեր կը բարձրանային: Այս անկարգ ամբողջութիւնը, փոթորիկէն հերձուած ամպերուն մէջէն սահող լուսնի մը ազօտ ճառագայթէն լուսաւորուելով՝ նկարչային գեղեցկութիւն մը կը ստանար:

Վարէն վեց պատուհան, մէն մի աշտարակին վրայ երկու պատուհան, այսինքն իւրաքանչիւր յարկի մէկ պատուհան, բուսական լայն սանդուխ մը, որուն խարխուլ աստիճանները փոքրիկ դարաւանդներ կը կազմէին ամէն մէկ կցուածին, ահա ասոնք եղան նորեկին

աչքին զարնող բաները մինչեւ սեմը չելած, ուր, ինչպէս որ ըսինք, սեպուհը կը սպասէր գիշերագգեստով և կոթաւոր աշտանակ մը բռնած:

Թավէրնէյ սեպուհը վաթսուէն վաթսունըհինգ տարեկան կարճահասակ ծեր մըն էր, փայլուն աչքերով, բարձր ու խուսափուն ճակատով: Գլուխը կեղծամ մը գրած էր, որմէ մուկերուն խնայածը կրակաբանին ճրագը այրած էր: Զերմակ անձեռոց մը բռնած էր ձեռքը, որմէ կը հասկցուէր թէ ընթրելու միջոցին սոքի ելած էր:

Իր խորամանկ դէմքը, որ քիչ մը վշտէրի դէմքին կը նմանէր, այս միջոցին թիւրըմբոնելի արտայայտութեամբ մը կը յուզուէր. քաղաքավարութիւնը կը պահանջէր որ իր անձանոթ հիւրին ժպտի, անհամբերութիւնը այնպիսի թիւր դէմքի մը կը փոխէր այս տրամադրութիւնը որ սեւամողձ և անհամ կրնար կարծուիլ: Աշտանակէն արձակուած գողգողուն ճառագայթներուն աղօտ նշոյլներովը երբ սեպուհին գրոմագրութեան գլխաւոր գիծերը կը քողարկուէին, ամենատգեղ երեւոյթ մը կը ստանար այդ ազնուականը:

— Պարոն, խօսք առաւ Թավէրնէյ սեպուհը, արգեօք կրնամ գիտնալ թէ ի՞նչ երջանիկ գիպուածով ձեզ տեսնելու հաճոյքը ունիմ:

— Բայց, պարոն, փոթորիկին պատճառաւ՝ որ ձիերը խրտչեցուց, որոնք կատղելով քիչ մնաց որ կառքս պիտի շախջախէին: Հոն, մեծ ճամբուն վրայ առանց կռուպանի մնացի. մին ձիէն ինկեր էր, միւսն ալ ձիովը մէկտեղ դուխը առեր գացեր էր, երբ երկտասարդի մը հանգիպեցայ որ ձեր գղեակին ճամբան ինձ յուցուց՝ ձեր հանրածանոթ հիրասիրութեան վրայ զիս ապահովելով:

Սեպուհը աշտանակը վեր վերցուց աւելի հեռուն լուսաւորելու և տեսնելու համար թէ հո՞ն էր այն ան-

պիտանը որուն պարտաւոր էր քիչ մը առաջուան երջանիկ գիպուածը:

Ճամբորդն ալ իր շուրջը նայեցաւ տեսնելու համար թէ իր գեռահաս առաջնորդը իրօք մեկնե՞ր էր:

— Է՛, զգեակս ցուցնողին անունը գիտէ՞ք, պարոն, հարցուց Թավէրնէյ սեպուհը այնպիսի մարդու մը պէս որ կը փափաքի գիտնալ թէ որո՞ւ կը պարտի յայտնել իր երախտագիտութիւնը:

— Կարծեմ ժիւլպէր անունով իրիտասարդ մըն է:

— Ա՛հ, ա՛հ, ժիւլպէ՛ր, չէի կարծեր որ բանի մը օգտակար կրնար ըլլալ տա դատարկապորտը, փիլիսոփայ ժիւլպէրը, վա՛յ:

Սպասնալից կերպով մը արտասանուած այս վերագիրներու յորդուքն, այցելուն հասկցաւ որ տիրոջ և ծառային մէջ քիչ համակրութիւն կար:

— Ի՛նչ որ է, հաճեցէք մտնել, պարոն. ըսաւ սեպուհը պահ մը լսելէ վերջ:

— Պարոն, ըսաւ ճամբորդը, ներեցէք որ նախ կառքս կայանը տանիմ, որովհետեւ ձանրագին բաներ կան մէջը:

— Լա Պրի՛, գօչեց սեպուհը, Լա Պրի՛, պարոն սեպուհին կառքը սայլարանին տակը տար, հոն գաւիթէն աւելի ապահով պիտի ըլլայ, որովհետեւ հոն տեղ տեղ տակաւին տախտակորմներ կան. իսկ գալով ձիերուն, անոնք ուրիշ բան, անոնց համար չեմ կրնար երաշխաւորել որ ընթրիք պիտի գտնեն, բայց որովհետեւ ձերը չեն այլ սուրհանդակինը, ձեզի համար նոյն բանն է:

— Սակայն, պարոն, ըսաւ ճամբորդը անհամբեր, եթէ ձեզ շատ կը նեղեմ, ինչպէս որ կը սկսիմ այնպէս կարծել...

— Ո՛հ, ամենեւին, պարոն, ընդմիջեց սեպուհը քա-

զաքաւարութեամբ, ամենեւին չէք նեղեր, միայն թէ դուք պիտի նեղուիք, առաջուընէ իմացնեմ:

— Պարոն, հաւատացէք որ միշտ ձեզի երախտապարտ պիտի ըլլամ...

— Ո՞հ, չեմ սխալիր, պարոն, ըսաւ սեպուհը աշտանակը բարձրացնելով լուսոյ շրջանը ընդարձակելու համար դէպի ժողէֆ Պալսամո՝ որ Լա Պրիին օգնութեամբը կառքը կը տանէր և ձայնը աւելցնելով՝ քանի իր հիւրը կը հեռանար, ո՞հ, չեմ սխալիր, Թավէրնէյի դղեակը տխուր բնակարան մըն է, մանաւանդ ազքատ բնակարան մը:

Ճամբորդը զբաղմունքէն պատասխանելու ժամանակ չգտաւ, Թավէրնէյ սեպուհին հրաւերին համեմատ սալլարանին ամենէն նուազ աւերուն կողմը ընտրեց իր կառքը պատսպարելու համար և երբ կառքը գրեթէ ապահով տեղ մը տեղաւորուեցաւ՝ Լա Պրիին ձեռքին մէջ ոսկի մը սահեցուց և սեպուհին քով վերադարձաւ:

Լա Պրի ոսկին գրպանը դրաւ՝ համոզուած ըլլալով որ քսանըչորս սունոց մըն է և շնորհակալ եղաւ Աստուծոյ զրկած այս անակնկալ շահուն համար:

— Աստուած չընէ որ ձեր ըսած ծուռ գաղափարն ունենամ ձեր զղեակին վրայ, պարոն, պատասխանեց Պալսամո խոնարհութիւն մը ընելով սեպուհին, մինչ այս վերջինը՝ կարծես իր ըսածին ճշմարիտ ըլլալը հաստատելու մտք՝ գլուխը օրելով ընդարձակ ու խոնաւ նախաստենեակ մը առաջնորդեց իր հիւրը մոմուսով:

— Լա՛ւ, լա՛ւ, ես ըսածս գիտեմ. դժբաղդարար իմ եկամուտն՝ ըսաւ աղբիւրները խիստ սահմանափակ են, եթէ դուք գաղիացի էք, պարոն սեպուհ, բայց ձեր գերմանական հնչուածէն կ'երեւի թէ գաղիացի չէք, թէպէտ ձեր խաւրական անունը... բայց ասոնք իրերը չեն փոխեր. եթէ դուք գաղիացի էք, կ'ըսէի,

Թավէրնէյ անունը պերճութեան յիշատակներ պիտի յիշեցնէ ձեզ. երբեմն կ'ըսէին՝ ձոխն Թավէրնէյ:

Պալսամո կը կարծէր թէ հառաչանքով մը պիտի վերջանար այս պարբերութիւնը բայց այնպէս չեղաւ:

— Իմաստասիրութիւն, ըսաւ իւրովի Պալսամո:

— Հոսկէ՛, պարոն սեպուհ, հոսկէ՛, շարայարեց սեպուհը սեղանատան դուռը բանալով: Ինծի՛ նայէ, Լա Պրի վարպետ, դուն հարիւր պայիկի պէս մեզ ըսպատաւորէ:

Լա Պրի թաւալազլոր վագեց տիրոջը հնգանգելու համար:

— Միայն այս պայիկը ունիմ, պարոն, ըսաւ Թավէրնէյ. սպասարկութիւնը յոռի է, բայց ուրիշ մը ունեւու միջոցը չունիմ, այս անմիտը գրեթէ քսան տարիէ ի վեր քովս է առանց սու մը վարձք առնելու, իսկ ես գայն գրեթէ այնպէս կը կերակրեմ... Ինչպէս որ անիկայ ինծի կը սպասուորէ... Ապուշին մէկն է, հիմայ պիտի տեսնէք:

Պալսամո իր քննութիւններուն ընթացքը շարունակեց:

— Անսի՛րտ, ըսաւ իւրովի, բայց գուցէ պարզապէս նենգամտութիւն ըլլայ:

Սեպուհը սեղանատան դուռը գոցեց, և այն ատեն միայն գլխէն վեր բռնած աշտանակին շնորհիւր ճամբորդը կարող եղաւ սրահը տեսնել իր բոլոր տարածութեամբը:

Մեծ ու ցած սրահ մըն էր ասիկայ, որ երբեմն փոքրիկ ագարակի մը գլխաւոր մասը եղած էր, որուն տէրն գայն դղեակի կարգը հանած էր: Այս սրահը այնչափ կծծութեամբ կարաւորուած էր որ առաջին անգամ նայողի մը պարապ կ'երեւէր: Թիկունքները քանդակուած յարդէ աթոռներ, շնարակաւոր սեւ փայտէ շրջանակներուն մէջ, Շէպրէօնի ճակամարտներուն հա-

մեծատ փորագրութիւններ, ահա այս էր սենեակին բոլոր զարդը: Մէջտեղը փոքր ու կլոր սեղան մը կար, որուն վրայ կաքաւիկներով ու կաղամբով լեցուն շոգարձակ պնակ մը կը գտնուէր: Գինին խեցեղէն լայնփոր շիշի մը մէջ գրուած էր, արծաթեղէնը՝ մաշած, սեւցած, ծամուկած երեք սպասէ, մէկ սկահէ և մէկ աղամանէ կը բաղկանար: Այս վերջինը ընտիր արուեստով մը յօրինուած և խիստ ծանր ըլլալուն, կարծես թէ անփայլ և անարժէք կոպիճներու մէջ թողուած մեծագին աղամանդ մըն էր:

— Հրամանեցէ՛ք, պարոն, հրամանեցէ՛ք, ըսաւ սեպուհը իր հիւրին աթոռ մը տալով և անոր խուզարկող ակնարկին հետեւելով: Ա՛հ, նայուածքնիդ աղամանիս վրայ կը կեդրոնանայ. կը զարմանաք անոր վրայ, լաւ ճաշակի տէր էք, քաղաքավարութիւն մըն է: Ինչու որ ներկայանալի նիւթին միայն կը նայիք: Պարոն, ի բոլոր սրտէ շնորհակալ եմ ձեռնէ, բայց ոչ, կը սխալիմ, իրաւ որ տակաւին անգին բան մըն ալ ունիմ, և անիկայ աղջիկս է:

— Օրիորդ Անտրէ՛ն, ըսաւ Պալսամօ:

— Այո՛, օրիորդ Անտրէն, ըսաւ սեպուհը զարմանալով որ իր հիւրը այնքան լաւ տեղեկութիւն ստացած էր. կ'ուզեմ ձեզ աղջկանս ներկայացնել: Անտրէ՛, Անտրէ՛, եկո՛ւր աղջիկս, մի՛ վախնար:

— Չեմ վախնար, հայր իմ, պատասխանեց քաղցր և հնչուն ձայնով մը յաղթ ու գեղանի աղջիկ մը՝ որ դրան մէջ կեցած էր առանց շփոթելու, բայց առանց համարձակութեան:

Ժօզէֆ Պալսամօ թէպէտեւ բոլորովին իր անձին տէրը, ինչպէս որ արգէն տեսնուեցաւ, չկրցաւ ինքզինքը զսպել և այս գերագոյն գեղեցկութեան առջեւ խոնարհեցաւ:

Արդարեւ, օրիորդ Թավէրնէյ որ գողցես իր շուրջը

գտնուածները ոսկեզօծելու և ճոխացնելու համար երեւան կուգար, խարտեշանման կասկեգոյն մագեր ունէր, որոնք քունքերուն և պարանոցին վրայ աւելի փայլուն կ'երեւէին. սեւ, պայծառ և մեծ աչքեր արծիւի աչքերու պէս պիշ պիշ կը նայէին: Սակայն նայուածքին քաղցրութիւնը անբացատրելի էր: Իր կեռասագոյն շրթունքները քմածին աղեղի մը ձեւն ու խոնաւ և փայլուն բուստի մը գոյնն ունէին: Սքանչելի, սպետակ, նրբին, հին նկարներու մէջ գտնուած ձեռքեր գեղահրաշ բազուկներու կը կցուէին: Ինքը թեթեւանդամ և միանգամայն սեղմ՝ հեթանոսական գեղանի արձանի մը կը նմանէր, որ հրաշքով մը կեանք առած էր: Ոտքը՝ որուն աղեղնակերպ ձեւը Տիան որսորդուհոյն ոտքէն աւելի նշանաւոր բարեձեւութիւն մը ունէր՝ կարծես թէ հաւասարակուսութեան սքանչելիքով մը մարմնոյն ծանրութիւնը կը կրէր. վերջապէս իր հագուստը թէպէտ ամենապարզ բայց այնպիսի կատարեալ ճաշակով մը իր անձին յարմարած էր որ՝ թագուհիին զգեստարանէն ելած զգեստ մը գուցէ առաջին անգամուն այնչափ շքեղ ու ճոխ չպիտի երեւէր:

Բոլոր այս սքանչելի մանրամասնութիւնները մէկ ակնարկով տեսաւ Պալսամօ: Օրիորդ Թավէրնէյի սեղանատուն մտնելէն մինչեւ զայն ողջունած ատենը զայն մանրազնին կերպով դիտեր և ամէն բան տեսնուէր. իսկ սեպուհը իր աղջկան կատարելութիւններուն այդ եզական միաւորութեան իր հիւրին վրայ ըրած ազդեցութիւններէն և ոչ մէկը աչքէ չէր կորսընցուցեր:

— Իրաւունք ունիք, ըսաւ Պալսամօ ցած ձայնով մը իր ասպնջականին դառնալով, օրիորդը անստգիւտ գեղեցկութիւն մը ունի:

— Շատ մի՛ գովէք սա խեղճ Անտրէն, պարոն,

ըսաւ սեպուհը անփութօրէն, վանքէն դեռ նոր ելած ըլլուն՝ ձեր ըսածին պիտի հաւատայ: Ձէ թէ իր պըզ-
րանքէն կը վախնամ, յարեց ծերունին, այլ ընդհակա-
ռակը հէզ աղջիկը պէտք եղածին չափ պըջող չէ, պա-
րոն, և ես իբրև բարեխնամ հայր՝ կը ջանամ զար-
գացնել անոր վրայ այս յատկութիւնը որ կնոջ առաջին
գօրութիւնը կը կազմէ:

Անտրէ աչքերը խոնարհեցուց և կարմրեցաւ: Որքան
ձիգ ալ թափէր, հարկադրուած էր հօրը այս տարօրի-
նակ վարդապետութիւնը մտիկ ընել:

— Արդեօք օրիորդը վանքը եղած միջոցին ձեր
ըսածը իրեն կ'ըսէի՞ն, հարցուց Ժօզէֆ Պալսամօ խըն-
գալով սեպուհին, այդ պատուէրը կրօնաւորուհիներ-
րուն աւանդած գիտութեանց մէջ կը գտնուէ՞ր,

— Պարոն, կրկնեց սեպուհը, ես իմ կարծիքներս
ունիմ, ինչպէս որ գուցէ արդէն կարող եղաք տեսնել:

Պալսամօ խոնարհութիւն մը ըրաւ սեպուհին պա-
հանջումներուն հաւանութիւն տալու կերպով մը:

— Ո՛հ, շարայարեց, ես չեմ ուզեր նմանիլ այն
հայրերուն՝ որոնք իրենց աղջկանց կ'ըսեն՝ « համեստ,
անողոք և կույր եղիր, պատուոյ փափկութեան և ան-
չահախնդրութեան մէջ ապրէ »: Անմիտները, անոնց
մէջ կարծես թէ կը տեսնեմ այնպիսի պաշտպաններ՝
որոնք իրենց սաները զինաթափ ասպարէզ կ'առաջ-
նորդեն՝ սպառազէն ախոյեանի մը հետ կռուելու համար:
Ո՛հ, Աստուած չընէ, Անտրէ աղջիկս այնպէս չպիտի
ըլլայ, թէպէտ գաւառին մէկ ծակին մէջ, Թավէրնէյի
դղեակի մէջ մեծցած ալ ըլլայ:

Ժօզէֆ Պալսամօ խորհեցաւ թէ պէտք էր քա-
ղաքավար խօսքերով սեպուհին իր դղեակին վրայ ը-
րած դիտողութիւններուն հակառակը պնդել: Բայց
ծերունին ժամանակ չտուաւ անոր:

— Լա՛ւ, Լա՛ւ, կրկնեց՝ Պալսամօի դիմագիտական

խաղին իբր պատասխան: Լա՛ւ, ես Թավէրնէյը կը
ճանչնամ ըսի ձեզի, բայց ինչ որ ալ ըլլայ և որչափ
որ հեռու ալ ըլլանք այն ճառագայթափայլ արեւէն որ
Վէրսայը կը կոչուի, աղջիկս պիտի ճանչնայ այն ընկե-
րութիւնները զոր ես երբեմն շատ մօտէն ճանչցայ, և
անոնց մէջ պիտի մտնէ... անթերի զէնքերով՝ զոր ես
իրեն համար կը դարձնեմ փորձառութեանս և յիշա-
տակացս օգնութեամբը...: Բայց, պարոն, պարտաւոր
եմ ձեզ խոստովանելու թէ վանքը այս ամէնը քան-
դեց...: Աղջիկս աշակերտուէի մը եղած է որ գի-
տութեանց աղէկ կողմը կ'ուսանի և Աւետարանին ի-
մաստին կը հետեւի: Աւա՛ղ, սեպուհ, դուք եւս ինձ
միացէք ըսելու թէ դժբաղդութիւն մըն է ասիկայ:

— Օրիորդը հրեշտակ մըն է, պատասխանեց Պալ-
սամօ, և արդարեւ, պարոն, ձեր ըսածները զիս չեն
զարմացներ:

Անտրէ սեպուհին խոնարհութիւն ըրաւ շնորհակա-
լութեան և համակրութեան ցոյցով մը, յետոյ հօրը
ակնարկին հնազանդելով նստեցաւ:

— Նստեցէ՛ք, սեպուհ, ըսաւ Թավէրնէյ և եթէ
անօթի էք կերէք: Սա անբան Լա Պրիին տապկածն
ալ գարշելի համադամ մըն է:

— Կաքաւիկներ, դուք գարշելի համադամ կ'ըսէք
ասոնց, ըսաւ սեպուհին հիւրը ժպտելով, բայց դուք
ձեր սեղանը կը զրպարտէք: Մայիսի մէջ կաքաւիկ-
ներ: Ձեր հողերէ՞ն են:

— Իմ հողերէ՞ս, շատոնց արդէն հօրս թողած հողե-
րը ծախուեցան, կերուեցան և մարսուեցան: Ո՛հ,
Աստուած իմ, փա՛ռք քեզ, ո՛չ, ա՛լ մատ մը հող ան-
գամ չունիմ: Տա դատարկապորտ Ժիլպէրը՝ որ կար-
դալէն և երազելէն զատ ուրիշ բանի ամենեւին յար-
մարութիւն չունի, իր անգործ ժամերուն մէջ ո՞վ գի-
տէ ո՛ւրիկէ հրացան, գնտակ և վառօդ գողնալով կ'եր-

Թայ այս թռչունները դրացիներու հողերուն վրայէն կը զարնէ և կը գողնայ: Թիարան պիտի երթայ և ես զայն պիտի թողում որ երթայ, ասանկով անոր ձեռքէն կ'ազատիմ: Բայց Անտրէ որսը սիրելուն՝ մեր պարոն ժիւլպէրին աչք կը գոցեմ:

Պալսամօ Անտրէին գեղանի գէմքը դիտեց, ո՛չ ծալք մը, ո՛չ սարսուռ մը և ո՛չ ալ կամրութեան ստուեր մը գտաւ հոն:

Սեղանը նստաւ օրիորդին և սեպուհին մէջտեղը. օրիորդը սեղանին աղքատութենէն առանց ամենեւին չփոթելու, ժիւլպէրին հայթայթած, Լա Պրիին հաւեմած և սեպուհին վար զարկած կերակուրէն հրամցուց Պալսամօին:

Այս միջոցին հէզ Լա Պրի, որ Պալսամօին իրեն և ժիւլպէրին համար տուած գովեստներէն բառ մը անգամ չէր կորսնցուցած, տխուր գէմքով մը պնակները կը բամփէր և հետզհետէ յաղթական կերպարանք մը կը ստանար, սեպուհին համեմունքներուն համար շըռայլած գովեստներէն:

— Այս գարշելի համազամին մէջ ա՛ղ անգամ չէ դրեր, գօչեց սեպուհը կաքաւիկի երկու թեւ ուտելէն ետքը, զոր աղջիկը անոր պնակին մէջ կաղամբի իւզալից տերեւներուն մէջտեղը դրեր էր: Անտրէ՛, ազամանը պարոն սեպուհին տուր:

Անտրէ հնազանդեցաւ անթերի վայելչութեամբ մը ազամանը երկնցնելով:

— Դարձեալ կը տեսնեմ որ իմ ազամանիս վրայ կը հիանաք, սեպուհ, ըսաւ Թավէրնէյ:

— Այս անգամ կը սխալիք, պարոն, կրկնեց Պալսամօ, օրիորդին ձեռքերուն վրայ կը հիանայի:

— Ա՛հ, անթերի է, Ռիչլիէօի բուն ցեղէն է, բայց, սեպուհ, քանի որ այդ աղամանը ձեռքերնիդ է հիմայ որուն ինչ ըլլալը քիչ մը առաջ ձանչցաք, լու մը դիտեցէք. արքունի խնամակալը զայն Ղուկաս ոսկերիչին շինել տուած է: Իգամոններու և հեշտասէր կանանց տափական նկարներն են. քիչ մը սանձարձակ նկարուած է, բայց գեղեցիկ է:

Պալսամօ այն ատեն միայն նկատեց թէ ազամանին վրայի խմբանկարը որ թէպէտ սքանչելի աշխատութիւն մը և թանկագին գործ մըն էր, ոչ միայն սանձարձակ այլ լկտի էր: Այս տեսնելով՝ Անտրէին հանդարտութեան և անտարբերութեան վրայ զարմացաւ, որ հօրը հրամանին համեմատ ազամանը իրեն տալով՝ առանց յօնքերը պուստելու կամ կարմրելու՝ կերակուրը ուտել կը շարունակէր:

Բայց սեպուհը՝ գոգցես բան գործ ըրած ըլլար քերիլ անմեղութեան այս ջնարակը՝ որ գիրքին խօսած հանգերձին նման իր աղջկան բոլոր անձը կը քողարկէր, շարունակեց մանրամասնօրէն նկարագրել իր արծաթեղէնին գեղեցկութիւնները՝ հակառակ Պալսամօի ջանքերուն որ կ'ուզէր խօսքը ուրիշ նիւթի վրայ դարձնել:

— Օ՛ն, կերէք, սեպուհ, ըսաւ Թավէրնէյ, որովհետեւ ուրիշ կերակուր չկայ, առաջուրնէ ձեզի իմացընեմ: Գուցէ դուք կ'երեւակայէք թէ հիմայ խորովածը պիտի բերին և միջախորտիկներն ալ գուրսը կը սպասեն, մի՛ խաբուիք, վերջին պատրանքը սոսկաւ կ'ըլլայ:

— Ներեցէք, պարոն, ըսաւ Անտրէ իր սովորական անտարբերութեամբը, եթէ Նիգօլ ըսածս աղէկ հասկըցած է, կարկանդակ մը եփելու վրայ է, զոր պատրաստելու կերպը իրեն ես սովորեցուցած եմ:

— Կերակուր պատրաստելու կերպը, Նիգօլ Լըկէ-
յի՞ն, քու սենեկապանուհիիդ կերակուր պատրաստելու
կերպը սովորեցուցեր ես, քու սենեկապանուհիդ կե-
րակուր կ'եփէ. բան մը միայն կը պակասի, այն է որ
դուն ալ ելլես կերակուր եփես: Շագորու գքսուհին
կամ Բօմբատուր մարքիզուհին թագաւորին կերակուր
կ'եփէին, ընդհակառակը թագաւորը անոնց «ձուազեղ
կ'եփէր... Անէ՛ծք, կը տեսնեմ որ կիները կերակուր
կ'եփեն իմ տանս մէջ: Ներողամիտ եղէք աղջկանս,
սեպուհ, կ'աղաչեմ:

— Բայց հայր իմ, ուտել պէտք է, ըսաւ Անտրէ
հանդարտօրէն: Լըկէ՛յ, յարեց աւելի բարձր ձայնով
խօսքը սենեկապանուհիին ուղղելով, տեսնե՛ք եղա՞ւ:

— Այո՛, օրիորդ, պատասխանեց գեռատի աղջիկը,
ախորժաբոյր կերակուրով լեցուն պնակ մը բերելով:

— Ես աղէկ գիտեմ թէ ոչ ոք պիտի ուտէ այդ կե-
րակուրէն, ըսաւ Թավէրնէյ բարկաճայթ իր սկաւառակը
ջախջախելով:

— Պարոնը գուցէ անկէ կ'ուտէ, ըսաւ Անտրէ ցըր-
տութեամբ, յետոյ հօրը դառնալով աւելցուց.

— Դուք գիտէք, պարոն, որ մօրմէս մնացած այդ
տեսակ պնակներէն տասնընթեղ հատ միայն մնացին:

Այս ըսելով՝ Նիգօլ Լըկէյի՛ գեղանի սենեկապանու-
հիին սեղանին վրայ դրած շոգարձակ կարկանդակը
կտրտել սկսաւ:



ԱՆՏՐԷ ՏԸ ԹԱՎԷՐՆԷՅ

Ժօզէֆ Պալսամօի զննող միտքը առատ պաշար կը
գտնէր Լօրէնի մէկ անկիւնը լքուած այս տարօրինակ
և առանձնասէր էակին մէջ ամէն անգամ որ մանրա-
մասնօրէն քննութեան կ'ենթարկէր զայն:

Միայն աղամանը կը յայտնէր արդէն Թավէրնէյ սե-
պուհին ընաւորութեան ամբողջական մէկ երեսը, կամ
մինչեւ իսկ ամէն երեսը:

Ուստի ամենաքնքոյշ սրամտութեամբ մը Անտրէի
դիմագիծերը զննել սկսաւ այն պահուն՝ երբ գեղանի
աղջիկը դանակին ծայրովը արծաթեայ նկարներուն
դպաւ, որոնք գոգցես արքունի խնամակալին գիշե-
րային խնճոյքներուն մէկէն փախած էին՝ որոնցմէ
ետքը Գանիլագագ ճրագները մարելու պաշտօն ունէր:

Պալսամօ գուցէ հետաքրքրութեամբ և կամ ուրիշ
զգացումէ դրդեալ շարունակ Անտրէն կը դիտէր:
Այսպէս, գրեթէ տասը վայրկեանի մէջ, այս վերջինին
աչքերը երկու երեք անգամ Պալսամօի հանդիպեցան:
Ի սկզբան՝ այս անմեղ ու ամբիժ էակը առանց շփոթե-
լու զէմ գրաւ այդ նայուածքին, բայց սեպուհը՝ Նի-
գօլին հրաշակերտը դանակին ծայրովը կտոր կտոր ը-
րած միջոցին՝ այնպիսի սաստկութիւն մը դրաւ իր
նայուածքին մէջ որ՝ ջերմաբեր անհամբերութիւն մը
տիրելով անոր բոլոր անձին վրայ, այտերը կարմրեցան:

Անտրէ՛ գրեթէ անոր գերմարդկային նայուածքէն
խռովուած՝ ջանած զայն արհամարհել և սկսաւ ինքը
իր ջինջ ու պիշ նայուածքը սեպուհին վրայ սեւեռել:

Բայց այս անգամ ալ չյաջողեցաւ և հիւրին հրացայտ աչքերէն ելնող մագնիսական հոսանուտէն ողողուելով՝ արտեւանունքը դանդաղորէն ու երկչոտաբար վար առաւ և ա՛լ չբարձրացուց առանց վարանուտի:

Սակայն այն միջոցին երբ այս համր օդակը գեռատի օրիորդին և խորհրդաւոր ճամբորդին մէջ կը հաստատուէր, սեպուհը կը գոռար, կը խնդար և կը հայհոյէր, ճշմարիտ գեղջուկ կալուածատէրի մը պէս կ'երգնուր և Լա Պրիին թեւը կը կսմթտէր՝ որ իր անբաղդութենէն միշտ սեպուհին մօտը կ'իյնար այն պահուն՝ երբ այս վերջինը ջղային գրգիռով մը բան մը կսմթտելու պէտքը կը զգար:

Սեպուհը անշուշտ Նիգօլին ալ այդպէս ըրած էր, գեռատի սենեկապանուհիին ձեռքերը առաջին անգամ տեսած ատենը:

Սեպուհը գեղեցիկ ձեռքերը կը պաշտէր, գեղեցիկ ձեռքերու համար կատարած էր բոլոր իր երիտասարդական ցոփութիւնները:

— Նայեցէք, ըսաւ, ի՞նչ գեղեցիկ մատներ ունի սա անպիտանը, ի՞նչ նուրբ եղունգներ, ինչպէ՞ս ալ մորթին վրայ կը կտրանան. ասիկայ սքանչելի գեղեցկութիւն մըն է եթէ փայտ կտտրելով, շիշերը ցօղուելով, սաները շփելով եղջիւրներդ սոսկալի կերպով չմաշեցնես, որովհետեւ մատներուդ ծայրը եղջիւր ունիս, օրիորդ Նիգօլ:

Նիգօլ սեպուհին գովեստներուն վարժուած չըլլալուն՝ հէս ժպիտով մը անոր կը նայէր աւելի զարմանօք քան թէ հպարտութեամբ:

— Այո՛, այո՛, ըսաւ սեպուհը պէրասէր աղջկան սիրտէն անցածը հասկնալով, ես խրատ կուտամ քեզի, ուռեցի՛ր. ո՛հ, ձեզի պիտի ըսեմ, սիրելի հիւրս, որ օրիորդ Նիգօլ Լըկէյ, որ հոս կը տեսնէք այժմ, իր տիրուհիին պէս համեստ չէ և գովեստէ չվախնար:

Պալսամօ՝ սեպուհին աղջկան վրայ դարձուց աչքերը աշխուժիւ և Անտրէի գեղանի դէմքին վրայ գերագոյն արհամարհանքի փայլակ մը տեսնելով՝ պատշաճ դատեց իր դէմքը վէս աղջկան դէմքին յարմարցնել. այս վերջինը այս բանը տեսաւ և տարակոյս չիկայ որ շնորհակալ եղաւ, որովհետեւ առաջուրնէ նուազ խստութեամբ և վրդովումով նայիլ սկսաւ անոր:

— Կը հաւատա՞ք, պարոն, շարայարեց սեպուհը ձեռքին ետեւովը Նիգօլին կզակին դպելով՝ զոր կարծես այն իրիկուն գեղեցիկ կը տեսնէր. կը հաւատա՞ք որ սա պատուտածն ալ աղջկանս պէս վանքէն ելած և քիչ թէ շատ դաստիարակութիւն առած է: Օրիորդ Նիգօլ վայրկեան մը իսկ չբաժնուիր իր տիրուհիէն: Ասիկայ այնպիսի անձնուիրութիւն մըն է՝ որուն վրայ ուրախութեամբ պիտի խնդային այն պարոն փիլիսոփաները, որոնք կը պնդեն թէ այս ցեղն ալ հոգի ունի:

— Պարոն, ըսաւ Անտրէ զժգոհութեամբ, անձնուիրութեան համար չէ որ Նիգօլ ինէ չբաժնուիր՝ այլ ես անոր կը հրամայեմ ինէ չբաժնուիլ:

Պալսամօ աչքերը Նիգօլի դարձուց, անոր դէմքին վրայ իր տիրուհիին անմեղութեամբ ըսած խրոխտ խօսքերուն արդիւնքը տեսնելու համար, և անոր շրթունքներուն կարկամութէն հասկցաւ որ գեռատի աղջիկը անտարբեր չէր ծառայական վէճակէն առաջ եկած այս նուաստացումին առջեւ:

Սակայն այս արտայայտութիւնը սենեկապանուհիին երեսէն փայլակի մը պէս անցաւ, որովհետեւ, անշուշտ արցունքի կաթիլ մը ներկաներուն աչքերէն ծածկելու համար անդին դարձած ատենը՝ գաւիթին վրայ նայող սեղանատան պատուհանին վրայ մնաց աչքը: Ամէն բան արժէք մը ունէր Պալսամօի համար, ինքն ալ

կարծես բան մը կը փնտռէր այն մարդոց մէջ ուր մտած էր. ուստի, Նիգօլի նայուածքին հետեւելով, անոր ուշադրութիւնը գրաւող պատուհանին ետեւէն մարդու մը դէմքը տեսնել կարծեց:

— Արդարեւ, ըսաւ մտքէն, այս տան մէջ ամէն բան մարդուն հետաքրքրութիւնը կը գրգռէ, հոս իւրաքանչիւր ոք իր գաղտնիքն ունի, և կը յուսամ թէ ժամէ մը առաջ օրիորդ Անտրէի գաղտնիքն ալ կ'իմանամ: Ար դէն սեպուհինը գիտեմ, իսկ՝ Նիգօլինն ալ կը գուշակեմ:

Սորհրդաւոր ճամբորդը կարճատեւ մտախոհութենէ մը վերջ գլուխը վերցուց, շարժում մը որ սեպուհին աննշմարելի չէր մնացած:

— Դ՞ուք ալ կը մտածէք, ըսաւ սեպուհը, լաւ ըրեր էք այս գիշերուան սպասելով, սիրելի՛ հիւրս: Մտախոհութիւնը տարափոխիկ հիւանդութիւն մըն է որ հոս կը տարածուի, ինծի անանկ կուգայ: Թուենք ուրեմն մտախոհները՝ նախ՝ օրիորդ Անտրէ որ կը մտախոհէ, յետոյ՝ օրիորդ Նիգօլը որ նոյնը կ'ընէ, ապա՝ այս կաքաւիկները սպաննող դատարկապորտը՝ որ թերեւս սա թռչնիկները սպաննած միջոցին ալ կը մտախոհէր:

— Ժիլպէ՞րը, հարցուց Պալսամօ:

— Այո՛, Պ. Լա Պրիին պէս փիլիսոփայ մը. փիլիսոփայ ըսի տէ՛ միտքս ինկաւ, չըլլա՞յ որ դուք ալ անոնց բարեկամներէն ըլլաք, առաջուրնէ իմացնեմ ձեզի որ կամ իմ կամ անոնց բարեկամը կրնաք ըլլալ. անոնց բարեկամ եղողը իմ թշնամիս պիտի ըլլայ պարզապէս:

— Ո՛չ, պարոն, անոնց հետ ո՛չ աղէկ և ոչ ալ գէշ եմ, ես փիլիսոփայ չեմ ճանչնար, պատասխանեց Պալսամօ:

— Աւելի աղէկ, իրենց տգեղութենէն աւելի թու նաւոր նզովի՛ց արմատ գարշելի կենդանիներ են ա-

նոնք: Իրենց առածներովը միապետութիւնը կը ջընջեն: Ա՛լ Գաղիոյ մէջ չին խնդար՝ այլ կը կարգան, և ի՞նչ, սըւոր նման պարբերութիւններ՝ Միապետական կառավարութեան մը սակ խիստ դժուարին է որ ժողովուրդը առաքինի ըլլայ*, կամ՝ ձեւարիս միապետութիւնը ժողովուրդներուն բարբեր ապականելու եւ զանոնք սրկացնելու համար հնարուած սահմանադրութիւն մըն է**, կամ թէ՛ նրբ բազաւորներու իշխանութիւնը Ասուծմէ կուգայ, այն ալ մարդկային սեռին սքրուած հիւանդութիւններէն եւ պատուհասներէն մին է***. ի՞նչ ալ զրօսեցուցիչ է այս բոլորը: Երջանիկ ժողովուրդ մը ինչի՞ կը ծառայէ, կը հարցնեմ ձեզի: Ա՛խ, կը տեսնէ՞ք, ամէն բան դէշ վիճակի մէջ է, և այսպէս եղաւ այն ատենէն ի վեր որ նորին վեհափառութիւնը Պ. Վօլթէռին հետ խօսեցաւ և Պ. Տիտրօլի գիրքերը կարդաց:

Նոյն միջոցին Պալսամօ կարծեց թէ ապակիներուն ետեւէն գարձեալ կ'երևէր քիչ մը առաջուան գունատ դէմքը, բայց երբ իր աչքերը հոն սեւեռեց՝ գլուխը իսկոյն աներեւութացաւ:

— Չըլլա՞յ որ օրիորդն ալ փիլիսոփայ ըլլայ, հարցուց Պալսամօ ժպտելով:

— Չեմ գիտեր թէ փիլիսոփայութիւնը ինչ է, պատասխանեց Անտրէ, սա միայն գիտեմ որ ես կը սիրեմ ինչ որ լուրջ է:

— Է՛հ, օրիորդ, գոչեց սեպուհը, իմ կարծիքովս աղէկ և հանգիստ ապրելէն աւելի լուրջ բան չիկայ, ուրեմն պէտք է զայն սիրես:

— Բայց օրիորդը կեանքը չատեր կարծեմ, այնպէս չէ՞, հարցուց Պալսամօ:

* Մօնթքիփէո : ** Հելվէտիա : *** Ժան-ժաֆ Ռուսօ :

— Ատիկայ պարագաներէն կախում ունի, պարոն, կրկնեց Անտրէ:

— Ա՛ն քեզի զրարանութիւն մըն ալ, ըսաւ թավէրնէյ: Ա՛ս աղէկ. կը հաւատա՞ք, պարոն, որ որդիս ալ ճիշդ այս պատասխանը տուած է ինծի:

— Որդի՞ մըն ալ ունիք, սիրելի ասպնջականս, հարցուց Պալսամօ:

— Ո՛հ, այո՛, Աստուած իմ, այդ դժբաղդութիւնն ալ ունիմ, թավէրնէյ դերկոմսը, արքայորդւոյն թիկնապահներուն տեղակալը, պատուական հպատակ մը:

Սեպուհը այս վերջին երեք բառերը այնպէս մը ակռաները սեղմելով արտասանեց որ կարծես թէ անոնց ամէն մէկ գիրը լափել կ'ուզէր:

— Կը խնդակցիմ, պարոն:

— Այո՛, պատասխանեց ծերունին, փիլիսոփայ մըն ալ. իրաւ որ մարդուն կարեկցութիւնը կը շարժի: Անցած օր ելաւ ըսաւ որ սեւերուն ազատութիւն տալու է. « Ես չաքար դրի՞. սուրճը շատ չաքարով կը սիրեմ, Լուի Ժե թագաւորն ալ այնպէս էր », ըսի երբ կը սրճէինք: Գիտէ՞ք թէ ինչ պատասխանեց. « Պարոն, ըսաւ, նախընտրելի է չաքարէն հրաժարիլ՝ քան թէ թշուառութեան մէջ տեսնել ցեղ մը... » « Կապիկներու ցեղ մը » ըսի, բայց դարձեալ մեծ պատիւ մը ըրած եղայ անոնց: Գիտէ՞ք թէ ինչ բանի վրայ պընդեց այս անգամ, ազնուականութեանս վրայ կ'երդնում. օգին մէջ բան մը ըլլալու է որ արեւոյց գլուխը կը դարձնէ. պնդեց թէ բոլոր մարդիկ եղբայր են, ես մօզամպիկցիի մը եղբայրն ըլլամ:

— Ո՛հ, շատ հեռուները կ'երթաք, ըսաւ Պալսամօ:

— Հէ՞, դուք ի՞նչ կ'ըսէք, բաղդաւոր եմ այնպէս չէ՞, այս երկու տղաքներովս, շիտակը ինծի համար չպիտի ըսեն որ իմ սերունդիս մէջ կ'ապրիմ: Քոյրը

հրեշտակ մըն է և եղբայրը առաքեալ մը: Խմեցէք ուրեմն, պարոն... գարշելի է գինիս:

— Շատ պատուական է, ըսաւ Պալսամօ Անտրէին նայելով:

— Ուրեմն դուք ալ փիլիսոփայ էք, գո՛ւք... Ա՛հ, զգուշացէք, կ'ենեմ աղջկանս կ'ըսեմ որ ձեզի քարոզ մը տայ: Բայց ո՛չ, փիլիսոփաները կրօնք չունին: Սակայն խիստ դիւրին բան է կրօնք ունենալը, Աստուծոյ և թագաւորին կը հաւատան, ամէն բան ասոր մէջն է: Այսօր ոչ միոյն և ոչ միւսին չհաւատալու համար խել մը բաներ սորվելու և շատ մը գիրքեր կարդալու հարկ կայ. ես կը նախընտրեմ երբէք չկտակածիլ: Իմ ժամանակս գտնէ զուարճալի բաներ կը սորվէի. փարաւօն, դիպուածախաղ կամ եռաքուեայ խաղալ կ'ուսանէին. հակառակ արքունական հրամանին՝ սուրով կը կռուէին հեշտօրէն. դքսուհիներ կը կործանէին և պարուհիներէ կը կործանուէին: Ահա իմ պատմութիւնս: Թավէրնէյ բոլոր իր ժամանակը Օրերայի մէջ անցուցած է, և միայն բանի մը վրայ կը ցաւիմ, ինչու որ աղքատացած մարդ մը մարդ չէ: Ինչպէս որ կը տեսնէք՝ ես ձեր կ'երեւիմ, այնպէս չէ: Պատճառն այն է որ աղքատացած եմ ու որջի մը մէջ կ'ապրիմ, կեղծամներս մաշած են և զգեստս ալ գոթացիներէն մնացած է. մարաջախտ բարեկամիս նայեցէք, որ նոր զգեստներ և խոպոպաւոր կեղծամներ ունի, Բարիզ կը բնակի և երկու հարիւր հազար ոսկի եկամուտ ունի: Է՛հ, ան տակաւին երիտասարդ է, տակաւին թարմ, կայտառ և յանդուգն է, ինձմէ տասը տարու աւելի մեծ է, սիրելի պարոնս, տասը տարու:

— Պ. ար Ռիչլիէօի համար չէ՞ք ըսեր:

— Անշուշտ:

— Դո՞ւքսը:

— Է՛հ, անշուշտ կարտինալին համար չպիտի ըլլայ:

տակաւին մինչեւ հոն չեւայ: Անիկայ իր եղբորորդւոյն ըրածն ալ չըրաւ, շատ չգիմացաւ:

— Կը զարմանամ, պարոն, որ երեւցածին նայելով այնչափ զօրաւոր բարեկամներ ունիք և արքունիքէն հեռի կը մնաք:

— Ո՛հ, ասիկայ վայրկենական հանգիստ մըն է և ուրիշ ոչինչ. օր մը հոն պիտի մտնեմ վերստին, ըսաւ ծեր սեպուհը տարօրինակ ակնարկ մը արձակելով իր ազնկան վրայ:

Պալսամօ այս ակնարկը կէս ճամբուն մէջ իսկ տեսաւ:

— Բայց դո՞նէ Պ. մարաշախտը տղադ յառաջ կը տանի՞, հարցուց Պալսամօ:

— Տղա՞ն. մարաշախտը սաստիկ կ'ատէ տղաս:

— Իր բարեկամին տղա՞ն:

— Եւ իրաւունք ալ ունի:

— Ի՞նչ, դո՞ւք էք ըսողը:

— Է՛հ, փիլիսոփայ է. ա՛ն ալ փիլիսոփայէն կը գարշի:

— Փիլիպ ալ փոխարէնը անոր կը հատուցանէ, ըսաւ Անտրէ կատարեալ հանդարտութեամբ մը: Լըկէյ, սպասները վերցո՛ւր:

Դեռատի աղջիկը ակնարկը պատուհանին սեւեռող մտախոհիչ զննութենէն ուշաբերելով վազեց:

— Ա՛հ, ըսաւ սեպուհը հառաչելով, երբեմն առաւօտեան մինչեւ ժամը երկուքը սեղանին շուրջը կը մնային, որովհետեւ ուտելու բան կար, որովհետեւ ուտելէ դադրելէ վերջ խմելը կը շարունակէին: Լըկէյ, շիշ մը բալօղի՛ տուր... եթէ մնացեր է:

— Տո՛ւր, ըսաւ Անտրէ Լըկէյին՝ որ կարծես իր տիրուհւոյն հրամաններուն կը սպասէր սեպուհին հրամանը կատարելու համար:

Սեպուհը թիկնաթոռին մէջ կռնակի վրայ ինկած ու աչքերը դոց այլանդակ հառաչներ կ'արձակէր:

— Ռիչլիէօ մարաշախտին վրայ կը խօսէիք ինձ, կրկնեց Պալսամօ՝ որ գողցես որոշած էր այս խօսքը չգողել:

— Այո՛, ըսաւ Թավէրնէյ, անոր վրայ կը խօսէի ձեզ, ճիշդ է:

Եւ սկսաւ եղանակ մը երգել իր հառաչներէն ոչ նուազ այլանդակ:

— Եթէ ձեր զուկէն կը գարշի, և եթէ իրաւունք ալ ունի այնպէս ընելու փիլիսոփայ ըլլալուն համար, շարայարեց Պալսամօ, ձեզի համար ունեցած բարեկամութիւնը հարկաւ պահած է, քանի որ դուք փիլիսոփայ չէք:

— Ե՛ս փիլիսոփայ ըլլամ, քա՛ւ լիցի:

— Կարծեմ ձեզի տիտղոս ալ չպակսիր. դուք Թագաւորին ծառայած էք:

— Տասնըհինգ տարի: Մարաշախտին բանակի օգնական եղայ: Մահօնի պատերազմին մէջ մէկտեղ էինք, և մեր բարեկամութիւնը կը սկսի... իրաւ որ, կեցէք... Փիլիպսպուրկի հռչակաւոր պաշարումէն, այսինքն 1742էն մինչեւ 1743:

— Վա՛յ, շատ աղէկ, Փիլիպսպուրկի պաշարման միջոցին հո՞ն էիք... ես ալ հոն էի, ըսաւ Պալսամօ: Ծերունին թիկնաթոռին վրայ կանգնեցաւ և աչքերը բանալով Պալսամօին նայեցաւ:

— Ներեցէք, բայց քանի՞ տարու էք, սիրելի հիւրս:

— Ո՛հ, ես տարիք չունիմ, ըսաւ Պալսամօ գաւաթը երկնցնելով՝ որպէս զի Անտրէին գեղանի ձեռքը բալօղին իր բաժակին մէջ լեցնէ:

Սեպուհը ուզած կերպովը մեկնեց իր հիւրին պատասխանը և կարծեց թէ Պալսամօ պատճառ մը ունէր իր տարիքը ծածկելու:

— Պարոն, ներեցէք ինձ ըսել թէ դուք Փիլիպս-

պուրկեան զինուորականի մը տարիքն ունենալու երեւոյթը չունիք բնաւ, այդ պաշարուսէն մինչև այսօր քսանը ութը տարի անցած է, և եթէ չեմ սխալիր, դուք առառաւելն երեսուն տարու կ'երեւիք:

— Է՛հ, Աստուած իմ, ո՞վ երեսուն տարու չէ, ըսաւ ճամբորդը անտարբերութեամբ:

— Ե՛ս, գոչեց սեպուհը, երեսուն տարի է որ երեսուն տարու չեմ:

Անտրէ պիշ պիշ օտարականին նայելով անդիմադրելի ձգտումով մը հետաքրքրութեան կը մղուէր: Արդարեւ, ամէն վայրկեան նոր հնարքով մը կը ներկայանար իրեն այս տարօրինակ մարդը:

— Վերջապէս զիս կը շուարեցնէք, պարոն, ըսաւ սեպուհը, կամ կը սխալիք և կամ Փիլիպսպուրկը ուրիշ քաղաք մը կը կարծէք: Ես ձեզ առառաւելն երեսուն տարու կը կարծեմ, այնպէս չէ՞, Անտրէ:

— Իրաւ է, պատասխանեց Անտրէ՝ անգամ մըն ալ հիւրին հզօր նայուածքին դիմադրել փորձելով և չյաջողելով:

— Ո՛չ, ոչ, յարեց Պալսամօ, ես ըսածս գիտեմ և եղածը կ'ըսեմ: Փիլիպսպուրկի հռչակաւոր պաշարուսին վրայ կը խօսիմ, ուր Պ. Ռիչլիէօ դուքսը իր հօրեղբորօրդին՝ Լիքսանի իշխանը մենամարտի մը մէջ սպաննեց: Խրամէն վերադառնալու ատեն կատարուեցաւ այս եղելութիւնը, մեծ ճամբուն վրայ, այո՛, ճամբուն ծայրը, ձախ կողմը, մարմնոյն ճիշդ մէջտեղը միեց իր սուրը: Ես հոնկէ կ'անցնէի երբ Տէօ-Թօն իշխանը շայն իր բազուկներուն մէջ կը բռնէր հոգեվարք վիճակի մէջ: Փոսին մէջ նստէր էր իշխանը, մինչդեռ Պ. Ռիչլիէօ հանդարտօրէն իր սուրը կը սրէր:

— Պարոն, գոչեց սեպուհը, պատուոյս վրայ կ'երդնում որ զիս կը սարսափեցնէք: Ասոնց ամէնքն ալ ձեր ըսածին պէս եղաւ:

— Մէ՛կը պատմեց ձեզի այս եղելութիւնը, հարցուց Պալսամօ հանդարտօրէն:

— Հո՛ն էի և Պ. Մարաջախտին վկան ըլլալու պատիւն ունէի, թէպէտ այն ատեն մարաջախտ չէր, բայց ի՞նչ վնաս ունի:

— Կեցէ՛ք ուրեմն, ըսաւ Պալսամօ ուշի ուշով սեպուհին նայելով:

— Ի՞նչ կայ:

— Այն ատեն դուք զօրապետի միազգեստ չէի՞ք հագներ:

— Ճի՛շդ է:

— Ֆօնթընուայէն փախչող՝ թագուհիին թեթեւ հեծելազօրաց գունդին մէջն էիք:

— Դուք ալ Ֆօնթընուա՞ էիք, հարցուց սեպուհը ծաղրական ժպիտը շրթունքին:

— Ո՛չ, պատասխանեց Պալսամօ հանդարտօրէն, Ֆօնթընուայի մէջ մեռած էի:

Սեպուհը աչքերը բացաւ, Անտրէ սարսուցաւ, Նիգօլ երեսը խաչակնքեց:

— Ուստի, ըսածիս դառնալով, շարայարեց Պալսամօ, թեթեւ հեծելազօրաց միազգեստը կը հագնէիք, շատ լաւ կը յիշեմ: Հոնկէ անցած ատենս ձեզ տեսայ, դուք՝ ձեր և մարաջախտին ձիերը բռնած էիք երբ Պ. Ռիչլիէօ կը կռուէր: Զեզի մօտեցայ և մանրամասն հարցումներ ուղղեցի ձեզի, դուք ալ պատասխանեցիք:

— Ե՛ս:

— Է՛հ, դուք, հապա ո՞վ պիտի ըլլայ. հիմայ ձեզ կը յիշեմ, ասպետի տիտղոսն ունէիք այն ատենը, և ձեզ « փօքրիկ ասպետ » կը կոչէին:

— Նզովից արմատ, գոչեց թավէրնէյ ասպուհ կրթած:

— Ներեցէք որ առաջ ձեզ չճանչցայ. բայց երեսուն

տարուան մարդ մը կը փոխուի: Ռիչլիէօ մարաջախտին կենացը:

Եւ Պալսամօ գաւաթը վեր առնելով՝ մինչեւ յետին կաթիլը պարպեց:

— Դուք այն ատեն զիս տեսա՞ք, կրկնեց սեպուհը, անկարելի՛ է:

— Ձեզ տեսայ, ըսաւ Պալսամօ:

— Մեծ ճամբո՞ւն վրայ:

— Մեծ ճամբուն վրայ:

— Ձիե՞րը բռնած:

— Ձիերը բռնած:

— Մենամարտի՞ միջոցին:

— Երբ իշխանը վերջին շունչը կ'աւանդէր, ինչպէս որ ըսի:

— Բայց ուրեմն դուք յիսուն տարեկա՞ն էք:

— Ձեզ տեսած ըլլալու համար պէտք եղած տարիքը ունիմ:

Այս անգամ սեպուհը այնպիսի զայրագին շարժումով մը թրկնաթողին մէջ ինկաւ որ՝ Նիգօլ չկրցաւ խնդուքը զսպել, բայց Անտրէ, փոխանակ Նիգօլին պէս խնդալու, մտախոհութեան մէջ ինկաւ աչքերը Պալսամօին յառած:

Այս վերջինը կարծես այս առիթին կը սպասէր եւ առաջուրնէ գուշակեր էր:

Յանկարծ ոտքի ելնելով իր բոցավառ աչքերէն երկու երեք փայլակ արձակեց դեռատի աղջկան վրայ որ գոգցես ելեկտրական ցնցումէ մը զարնուածի պէս սարսուռաւ:

Բագուկները կարկամեցան, պարանոցը ծռեցաւ, կարծես թէ ակամայ ժպտեցաւ օտարականին, յետոյ աչքերը գոցեց:

Պալսամօ, միշտ ոտքի վրայ, անոր բագուկներուն դպաւ, դեռատի աղջիկը անգամ մըն ալ սարսուռաց:

— Է՛ դ՞ուք, օրի՛որդ, դուք ալ կը կարծէ՞ք որ ստախօս եմ երբ կը պնդեմ թէ Փիլիպպուրկի պաշարման ներկայ էի:

— Ո՛չ, պարոն, ձեզի կը հաւատամ, յայտարարեց Անտրէ գերմարդկային ճիգ մը ընելով:

— Ուրեմն ես կը զառանցեմ, ըսաւ ծեր սեպուհը: Ա՛հ, ներեցէք, միայն թէ պարոնը ոգի մը կամ ստուեր մը չըլլա՞յ արդեօք:

Նիգօլ սոսկումով աչքերը խոշոր խոշոր բացաւ:

— Ո՞վ գիտէ, ըսաւ Պալսամօ ստուար ձայնով մը, որմէ բոլորովին կապուեցաւ մնաց դեռատի աղջիկը:

— Կատակը մէկդի՛, պարոն սեպուհ, կրկնեց ծերունին խնդիրը լուսարանել որոշելով, արդեօք երեսուն տարեկանէ աւելի՞ էք, այնչափ չէք ցուցներ:

— Պարոն, ըսաւ Պալսամօ, ինձ կը հաւատա՞ք, եթէ անհաւատալի բան մը ըսեմ ձեզի:

— Խօսք չեմ տար, ըսաւ սեպուհը խորամանկ շարժումով մը գլուխը երերցնելով, մինչդեռ Անտրէ ընդհակառակը իր բոլոր զօրութեամբը մտիկ կ'ընէր զայն: Ես շատ դժուարահաւան եմ, գիտցած ըլլաք:

— Ուրեմն ինչո՞ւ զիս կը հարցափոճէք, քանի որ պատասխանը մտիկ չպիտի ընէք:

— Լա՛ւ, եթէ ձեզի հաւտամ գոհ կը մնա՞ք:

— Այն ատեն պիտի կրկնեմ ինչ որ արդէն ձեզի ըսի, պարոն, ոչ միայն ձեզ տեսայ, այլև ձեզ հետ ծանօթացայ Փիլիպպուրկի պաշարման ատեն:

— Տղա՞յ էիք այն ատեն:

— Անշո՛ւշտ:

— Չորս հինգ տարեկան առառուելն:

— Ո՛չ, քառասունըմէկ տարու էի:

— Սեպուհը բարձրաձայն քրքրիչ մը արձակեց, որուն Նիգօլ արձագանք կ'ըլլար:

— Ձեզի ըսի որ չպիտի հաւատաք, պարոն, ըսաւ Պալսամօ ծանր կերպարանքով մը:

— Բայց լրջօրէն ի՞նչպէս կարելի է հաւատալ, ապացոյց մը տուէք տեսնենք:

— Սակայն շատ բացայայտ է, կրկնեց Պալսամօ առանց ամենեւին շփոթելու: Այն ատեն քառասունըմէկ տարեկան էի, բայց չեմ ըսեր թէ հիմակուան եղած մարդս էի:

— Օհօ՛, բայց կռապաշտութեան կ'երթայ ատիկայ, գոչեց սեպուհը: Յոյն փիլիսոփայ մը կայ եղեր — տա թշուառական փիլիսոփաներն ալ ամէն ատեն և ամէն տեղ կը գտնուին — յոյն փիլիսոփայ մը կայ եղեր որ ոչոռն չուտեր եղեր, որովհետեւ կը պնդէ եղեր թէ անոնք հոգի ունին, ինչպէս որ որդիս ալ կը պնդէ թէ սեւերը հոգի ունին. կեցիր նայիմ, ո՞վ էր այդ ցափուտուքը ճշմարտը: Բանն է... Ը՛ր՛ը... ի՞նչ էր տըւոր անուներ:

— Պիւթագոր, ըսաւ Անտրէ:

— Այո՛, Պիւթագոր, ճիզվիթները ատենօք սորվեցուցին զայն ինծի: Հայր Բօրէն լատիներէն ոտանաւորներ շարադրել տուաւ ինծի անոր վրայ, փոքրիկ Արոնէին հետ մրցելու համար: Կը յիշեմ նաեւ թէ իմ ոտանաւորներս անհամեմատ կերպով լաւագոյն գտաւ անորիններէն: Պիւթագոր, ճիշդ է:

— Է՛հ, ձեզի ո՞վ ըսաւ որ ես Պիւթագորը եղած չեմ, պատասխանեց Պալսամօ ամենապարզ կերպով:

— Ես չեմ պնդեր որ դուք Պիւթագորը եղած չըլլա՞ք, դիտել տուաւ սեպուհը, բայց մէկ խօսքով Պիւթագոր Փիլիպոպուրկի պաշարուովն մէջ չէր գտնուեր, գոնէ զայն հոն չտեսայ:

— Իրաւ է, ըսաւ Պալսամօ, բայց դուք հոն սեւ հրացանակիրներու գունդին մէջ չտեսա՞ք Ժան տէ Պառօ դերկոմսը:

— Այո՛, այո՛, զայն տեսայ, զայն... բայց փիլիսոփայ չէր ան, թէպէտ ոչոռն կը սոսկար և միայն ուրիշ բան չգտած ատենը կ'ուտէր անկէ:

— Լա՛ւ, ճի՛շդ է: Կը յիշէ՞ք թէ Պ. տը Ռիչլիէօի մենամարտին երկրորդ օրը Տէ Պառօ դերկոմսը պատնէշին վրան էր ձեզի հետ:

— Կատարելապէս կը յիշեմ:

— Կը յիշէք հարկաւ, որովհետեւ հրացանակիրները և թեթեւ հեծելազօրքերը ամէն եօթը օրը մէկտեղ կ'ելլէին պատնէշը պահպանելու:

— Ճիշդ է. վե՞րջը:

— Լա՛ւ, հտքը, գնդակները կարկուտի պէս կը տեղային այն օրը: Տէ Պառօ տխուր էր, ձեզի մօտեցաւ և քաշ մը քթախոտ խնդրեց, զոր իրեն տուիք քթախոտի ոսկիէ տփիկէ մը:

— Որո՞ւն վրայ կ'նոջ մը պատկերը կար, աւելցուց սեպուհը:

— Ճիշդ է. աչքիս առջեւն է, խարտեաչ էր, այնպէս չէ՞:

— Նզովի՛ց արմատ, ըսածիդ պէս է, ըսաւ սեպուհը բոլորովին սարսափահար: Վե՞րջը:

— Վերջը, շարայարեց Պալսամօ, երբ դերկոմսը քթախոտը կը քաշէր, ուռմբ մը հասնելով անոր գլուխը առաւ տարաւ, ինչպէս երբեմն Պ. Տը Պէրուիգինը:

— Աւա՛ղ, այո՛, ըսաւ սեպուհը, խեղճ Տէ Պառօն:

— Է՛հ, պարոն, կը տեսնէք ահա որ ես ձեզ Փիլիպոպուրկի մէջ տեսած և ճանչցած եմ, ըսաւ Պալսամօ, որովհետեւ Տէ Պառօն անձամբ ես էի:

Սեպուհը կռնակի վրայ ինկաւ ծայր ատիճան սոսկուումով մը կամ մանաւանդ ապշութեամբ մը. այսպէս օտարականը յողթանակը տարած կ'ըլլար:

— Բայց կախարդութիւն են ասոնք, գոչեց. հա՞ծօղ. Պալս., քիւ 3—8. Բ.հր.Ն.Ք.

ըլւեր տարի առաջ գուցէ ձեզ այրած են, սիրելի հիւրս: Աստուած իմ, կարծես ոգիի, կախուածի, խորովածի հոտ մը կայ հոս:

— Պարոն սեպուհ, ըսաւ Պալսամօ ժպտելով, ճըշմարիտ կախարդ մը ո՛չ կը կախուի և ոչ կ'այրուի, ասիկայ աղէկ միտքերնիդ դրէք. անմիտները միայն խարոյկին և պարանին հետ գործ կ'ունենան: Բայց եթէ կը հաճիք, այսչափը բաւական սեպենք այս իրիկուան համար, քանի որ կը տեսնէք թէ օրիորդ Թալէրնէյի քունը կ'ուզայ, կ'երեւի թէ շատ քիչ հետաքրքրութիւն ունի բնագանցական վիճարանութեանց և թաքուն գիտութիւններու մասին:

Արգարեւ, Անտրէ՛ անձանթ և անդիմադրելի զօրութենէ մը ընկճուելով՝ ճակատը թեթեւակի կը ծռէր ծաղկի մը պէս՝ որուն բաժակին մէջ ցօղի մեծ կաթիլ մը կ'իջնայ:

Բայց սեպուհին վերջին խօսքերուն վրայ ճիգ մը ըրաւ զինքը ճնշող հասանուտին տիրող յորգումը վանելու համար. գլուխը սաստկութեամբ ցնցեց, ոտքի ելաւ և նախ երերակալով, յետոյ Նիգօլին կռթնելով՝ սեղանատունէն դուրս ելաւ:

Անոր հետ մէկտեղ ապակիներուն փակած դէմքն ալ աներեւութացաւ, որ ժիլպէրին դէմքն ըլլալը արդէն շատոնցուրնէ հասկցած էր Պալսամօ:


Պահ մը վերջ Անտրէի դաշնակին ստեղունքին ուժով լի զարնուիլը լսուեցաւ:

Անտրէ՛ սեղանատունէն դողդոջուն քայլերով անցաց ատենը՝ Պալսամօ աչքովը անոր հետեւած էր:

— Հա՛, ըսաւ յազթանակով մը, երբ դեռատի աղջիկը աներեւութացաւ, ես ալ կրնամ ըսել Արքիմէտին պէս՝ Գսա՛լ:

— Ո՞վ է Արքիմէտ, հարցուց սեպուհը:

— Անուանի գիտուն մը՝ զոր երկու հազար հարիւր յիսուն տարի առաջ ճանչցայ, ըսաւ Պալսամօ:



է.

ԳՏԱՅ

Այս անգամ, համարէ թէ այս մեծարեւութիւնը խիստ չափազանց երեւալուն, կամ չլսելուն և կամ վերջապէս լսելուն՝ սեպուհին միակ մտածմունքը այս տարօրինակ մարդը տունէն հեռացնելը եղաւ: Անտրէին ետեւէն նայեցաւ մինչեւ որ ան աներեւութացաւ, յետոյ դաշնակին ձայնէն ապահովուելէ վերջ որ մերձակայ սենեակն է իր աղջիկը, Պալսամօին առաջարկեց մօտակայ քաղաքը առաջնորդել զինքը:

— Ես յուրի ձի մը ունիմ, ըսաւ, որ գուցէ պիտի ճաթի, բայց վերջապէս կը հասնիք, և զոնէ ապահով կ'ըլլաք պառկելու յարմար տեղ մը ունենալու: Թալէրնէյի տան մէջ սենեակ մը և անկողին մը կայ, բայց հիւրընկալութիւնը ես իմ կերպովս կը հասկնամ՝ լաւ կամ Բնաւ, այս իմ նշանաբանս է:

— Ուրեմն զիս կը ճամբէք, հարցուց Պալսամօ, զգացած հակառակութիւնը ժպիտով մը քողարկելով, զիս գլուխ ցաւցնողի մը տեղ կը դնէք:

— Իրաւ որ չէ, ձեզ բարեկամի տեղ կը դնեմ, սիրելի հիւրս: Ձեզ հոս վար դնելը ընդհակառակը ձեզ

անհանգիստ ընել ուզել է, շատ ցաւելով բայց խիղճս հանդարտեցնելու համար կ'ըսեմ ձեզ ասիկայ, որովհետեւ իրաւ որ դուք շատ հաճելի էք ինձի:

— Արդ, քանի որ ձեզի հաճելի եմ, զիս մի ստիպէք յոգնած դադրած ոտքի ելնել և ձիով արշանել երբ կրնամ անկողնի մը մէջ բազուկներս տարածել և ընդարմացած սրունքներուս շարժում տալ: Վերջապէս, ձեր չքաւորութեան չափազանց երեւոյթ մը մի տաք եթէ չէք ուզեր որ կարծեմ թէ դուք չարակամութիւն մը կը սնուցանէք իմ անձիս հանդէպ:

— Ո՛հ, ատանկ է նէ, ըսաւ սեպուհը, դղեակս պէտք պառկիք:

Յետոյ աչքովը Լա Պրին փնտաւելով և զայն անկիւն մը տեսնելով.

— Հո՛ս, առա՛ջ եկուր, ծե՛ր սճրագործ, գոչեց:

Լա Պրի երկչոտութեամբ քանի մը քայլ առաւ:

— Օ՛ն, առա՛ջ անցիր, նզովից արմատ. կը կարծե՞ս որ կարժիր սենեակը ներկայանալի ըլլայ:

— Այո՛, պարոն, պատասխանեց ձեր ծառան. Պ. Փիլիպին յատկացուած սենեանկն է ան:

— Այդ սենեակը՝ տարուոյն երեք ամիսը միայն իր կործանած հորը տունը անցընող խեղճ տեղակալի մը համար շատ աղէկ կրնայ ըլլալ, բայց շատ գէշ՝ ճոխ մեծատունի մը համար որ քառաձի սուրհանդակով մը կը ճամբորդէ:

— Ձեզ կ'ապահովեմ, պարոն սեպուհ, թէ այդ սենեակը շնձ համար ամենայարմարը պիտի ըլլայ, ըսաւ Պալսամօ:

Սեպուհին դէմքը այնպիսի կերպարանք մը առաւ որ կը նշանակէր՝ «Լա՛ւ, ես գիտեմ անոր ինչ ըլլալը»:

Յետոյ բարձր ձայնով շարայարեց.

— Ուրեմն կարժիր սենեակը պարոնին տուր, քա-

նի որ պարոնը վերստին թափէրնէյ գալու միտք չունի: Ուստի միտքերնիդ հո՞ս պառկիլ է:

— Այո՛:

— Սակայն, կեցէ՛ք, միջոց մը կայ:

— Ի՞նչ բանի:

— Ճամբան ձիով չեք թալու համար:

— Ո՞ր ճամբան:

— Հոսկէ Պար-Լը-Տիւզ տանող ճամբան:

Պալսամօ առաջարկութեան մեկնութեանը սպասեց:

— Սուրհանդակի ձիե՞ր ձեր կառքը հոս բերին:

— Անչո՛ւշտ:

— Լա՛ւ, ուրեմն ձեր կառքը կրնան վերստին տա-

նիլ:

— Ո՛չ, որովհետեւ չորս ձիէն երկուքը մնացին: Կառքը ծանր է և սուրհանդակին ձիերը քնանալու պէտք ունին:

— Ա՛ն քեզի պատճառաբանութիւն մըն ալ. իրօք մտքերնիդ դրեր էք հոս պառկիլ:

— Վաղը ձեզ վերստին տեսնելու և երախտագրութիւնս յայտնելու համար հոս մնալ կ'ուզեմ:

— Շատ պարզ միջոց մը կայ ատոր համար:

— Ո՞րն է:

— Քանի որ սատանային հետ այդչափ աղէկ էք, աղաչեցէք իրեն որ ինձ գտնալ տայ փիլիսոփայական քարը:

— Պարոն սեպուհ, շա՛տ կը փափաքիք ունենալ զայն:

— Փիլիսոփայական քա՞րը, նզովից արմատ, աս ալ խօ՞սք է:

— Այն ատեն պէտք էր դիմէիք անձի մը որ սատանան չէ:

— Ո՞վ է այդ անձը:

— Ես, ինչպէս կ'ըսէ Գօրնէյը չեմ յիշեր իր որ կա-

տակերգութեան մէջ, զոր Բարիզի մէջ Բօն-Նէօֆէն անցնելու առհննիս ինծի պատմեց ասկէ հարիւր տարի առաջ:

— Լա Պրի', ծե'ր անառակ, գոչեց սեպուհը, որ կը սկսէր այսպիսի խօսակցութիւն մը վտանգաւոր սեպել գիշերուան այս ժամուն, այս մարդուն հետ. Լա Պրի', ճրագ մը գտիր և պարոնին լոյս ցուցուր:

Լա Պրի անմիջապէս հնազանդելով ճրագ մը փնտռելու ելաւ. խուզարկութիւն մը որ գրեթէ փիլիսոփայական քարին պէս կասկածելէ էր: Նիգօլը կանչեց որպէս զի նախ ան վեր երթայ և կարմիր սենեակին պատուհանները բանալով օգ տայ:

Նիգօլ Անտրէն մինակ ձգեց, կամ աւելի ճիշդը, Անտրէ իր սենեկապանուհին քովէն հեռացնելու առիթը գտած ըլլալուն համար չափէն աւելի ուրախանալով, իր մտածումներուն հետ առանձին մնալու պէտքն զգաց:

Սեպուհը բարի գիշեր մաղթեց Պալսամօին և պառկելու գնաց:

Պալսամօ Ալթօթասի տուած խոստումը յիշելով ժամացոյցը նայեցաւ: Արդէն երկուքուկէս ժամէ ի վեր գիտնականը կը քնանար՝ փոխանակ երկու ժամի: Երեսուն վայրկեանի կորուստ մըն էր ասիկայ: Լա Պրիին հարցուց թէ կառքը միշտ միեւնոյն տեղն էր:

Լա Պրի պատասխանեց թէ եթէ կառքը ինքնիրենը քալած չէր՝ միշտ իր տեղը ըլլալու էր:

Պալսամօ հարցուց թէ ի՞նչ եղած էր ժիլպէր:

Լա Պրի պահովեց թէ ժիլպէր գործ մը չունենալով՝ գոնէ ժամէ մը ի վեր պառկած ըլլալու էր:

Պալսամօ կարմիր սենեակը երթալու տեղագրութիւնը սորվելէ ետքը՝ դուրս ելաւ Ալթօթասը արթընցնելու համար:

Պ. տը Թավէրնէյ ստած չէր այս սենեակին մի-

ջակութեանը վրայ խօսելով. կարասին դղեակին միւս կողմերուն կը համապատասխանէր:

Կաղնիէ մահճակալ մը՝ որուն ծաղկափիւռ օթոցներու նմանոց ծածկոցը՝ դեղնած կանաչ հին տափասկեան կերպասէ էր, ծռած օտքերով կաղնիէ սեղան մը, Լուի ԺԳ. ի ժամանակէն մնացած մեծ կրակարան մը՝ որուն տեսակ մը շքեղութիւն կրնար տալ կրակը ձմեռ ատեն, բայց ամառը կրակ չգտնուած միջոցին տգեղ երեւոյթ մը կը ստանար առանց փայտակալ երկաթի, հրագործիքներու և փայտին՝ որոնց տեղը հին լրագիրներ կային. ահա ասոնք էին ամէն կարասին որոնց երջանիկ տէրը պիտի ըլլար Պալսամօ մէկ գիշերուան համար:

Ասոնց վրայ պիտի աւելցնենք նաեւ երկու աթոռ և հնութենէն երեսները քերթուած փայտէ խարխուլ դարակ մը:

Մինչդեռ Լա Պրի՝ Նիգօլին օգ տուած սենեակը կը ջանար քիչ մը կարգի գնել, օրիորդ Անտրէի սենեկապանուհին նոյն գործողութիւնը կատարելէն ետքը իր սենեակը քաշուեր էր: Պալսամօ՝ Ալթօթասը արթընցնելէ վերջ տուն վերագարձաւ:

Անտրէի դրան դիմացը հասած ըլլալով՝ կանգ առաւ մտիկ ընելու համար: Անտրէ սեղանատունէն դուրս ելած ատենը տեսած էր որ օտարականին ներգործած խորհրդաւոր ազգեցութիւնը իր վրայէն աստիճանաբար կ'անհետանար: Այդ խորհուրդները բոլորովին միտքէն հանելու համար սկսեր էր իր դաշնակը ամհլ:

Ձախը դոց դռնէն անցնելով մինչեւ Պալսամօին կը հասնէր:

Պալսամօ, ինչպէս որ ըսինք, այս դրանը առջեւ կայնած էր:

Վայրկեան մը վերջ, Պալսամօ, կարգ մը բոլորակի

չարժուհիներ ըրաւ որ տեսակ մը դիւթութիւն կրնար կարծուիլ, և կասկած չիկայ որ այդպէս ըլլալու էր, որովհետեւ Անտրէ արդէն անգամ մը կրած զգայութեան նման նոր և ընդարմացուցիչ զգայութենէ մը շանթահարուելով՝ յամբօրէն դադրեցաւ իր դաշնակը զարնելէ, ձեռքերը երկու քովէն վար կախեց, անշարժ և յամբ ու պիտի շարժումով մը դրան կողմը դարձաւ՝ օտար ազգեցութեան հնազանդող և կամքէն դուրս բաներ ընող մարդու մը պէս:

Պալսամօ մութին մէջ ժպտեցաւ, գոգցես գոց գըրան ետեւէն ամէն բան տեսնելու կարողութիւնն ունենար:

Պալսամօի միակ փափաքը այս ըլլալու էր և իր փափաքին կատարուած ըլլալը գուշակած էր անշուշտ որ ձախ ձեռքը երկնցուց և սանդուխին բազրիքը բռնելով սեպ ու անհարթ սանդուխէն վեր ելաւ, ուրկէ կարմիր սենեակը կ'ելլուէր:

Ան քանի կը հեռանար, Անտրէ նոյն յամբ ու պիտի շարժումով դռնէն ասդին կը դարձնէր գլուխը և իր դաշնակին կը մօտենար:

Պալսամօ սանդուխին ատտիճաններուն հասած տանը ընդմիջուած եղանակին վերստին սկսող առաջին ձայները լսեց, սենեակ մտաւ և Լա Պրին ճամբեց:

Լա Պրի երեւութապէս բարի ծառայ մըն էր որ տրուած հրամանին հնազանդիլ գիտէ: Սակայն դէպի դուռը քայլ մը առնելէ ետքը, յանկարծ կանգ առաւ:

— Ի՞նչ կայ, հարցուց Պալսամօ:

Լա Պրի ձեռքը տափատին գրպանը խօթեց և, առանց ստասխան տալու, իր անձայն գրպաններուն մէջ բաներ մը շօշափեց:

— Ըսել կ'ուզեմ որ այս իրիկուն անշուշտ սխալած էք, պարոն, պատասխանեց ձեր սպասաւորը:

— Ե՛ս, ըսաւ Պալսամօ, և ի՞նչ բանի մէջ:

— Անոր մէջ որ՝ դուք կարծած էք քսանը չորս սունոց մը տալ ինձի, մինչդեռ ձեր տուածը քսանը չորս լիվրնոց մըն է:

Եւ ձեռքը բանալով նոր ու փայլուն լուի մը ցոյց տուաւ:

Պալսամօ ծառային նայեցաւ այնպիսի զարմանքով մը, որմէ կը յայտնուէր թէ մարդոց ուղղամտութեանը մասին ուշադրութիւն չէր ընել որովորաբար:

— Պարկե՛շտ ալ է, ըսաւ Պալսամօ Համլէթին պէս, և գրպանը խառնելով՝ լուի մըն ալ դրաւ Լա Պրիի ափին մէջ:

Այս անորակելի առատածեռնութիւնը Լա Պրին աներեւակայելի կերպով ուրախացուց: Առնուաղն քսան տարիէ ի վեր ոսկիին երեսը տեսած չէր խեղճ սպասաւորը:

Համազելու համար զայն թէ այսպիսի գանձի մը երջանիկ տէրը ինքն էր, պէտք եղաւ որ Պալսամօ առնէ այդ գանձն անոր ձեռքէն և իր ձեռքովը անոր գրպանին մէջ դնէ:

Մինչեւ գետինը խոնարհեցաւ և ետ ետ երթալով մեկնելու պատրաստուեցաւ, բայց Պալսամօ զայն կեցուց:

— Դղեակին սովորութիւնները ի՞նչպէս են առտուն, հարցուց:

— Պ. Տը Թավէրնէյ ուշ կ'արթննայ, պարոն, բայց օրիորդ Անտրէ-միշտ կանուխ կ'ելնէ:

— Ժամը քանի ի՞նչ:

— Վեցին ատենները:

— Այս սենեակին վրայ ո՞վ կը պառկի:

— Ե՛ս, պարոն:

— Է՛ տակը:

— Ո՛չ ոք: Այս սենեակին տակը գաւիթն է:

— Լաւ, շնորհակալ եմ, բարեկամս, ալ հիմայ
գացէք:

— Գիշեր բարի, պարոն:

— Գիշեր բարի: Աղէկ միտքս ինկաւ, նայեցէք որ
կառքս ապահով ըլլայ:

— Ո՛հ, պարոնը կրնայ հանգիստ ըլլալ:

— Եթէ կառքին մէջ ձայն մը լսէք կամ լոյս մը
տեսնէք, մի՛ վախնաք: Հետո ծերունի ծառայ մը ու-
նիմ որ կառքին մէջ կը բնակի. Պ. Ժիւլյէրին պատ-
ուիրեցէք որ զայն չվրդովէ, կ'աղաչեմ, ըսէք նաեւ
իրեն որ վաղը առտու զիս չտեսած ասկէ չմեկնի:
Միտքդ պիտի պահե՞ս այս ամէնը, բարեկամս:

— Ո՛հ, այո՛, հոգ մի՛ ընէք. բայց պարոնը այդ-
չափ շուտ կ'ուզէ թողուլ մեզ:

— Պարագաներէն կախում ունի, ըսաւ Պալսամո
Ժպիտով մը: Սակայն աւելի ճիշդը ըսելով՝ պէտք է
որ վաղը իրիկուն Պար-լը-Տիւզ գտնուիմ:

Լա Պրի համակերպութեան հառաչանք մը արձա-
կեց, վերջին ակնարկ մը նետեց անկողնին և ճրագը
կրակարանին մօտեցուց, բայց փայտ չգտնելով բոլոր
թուղթերը այրեց՝ այս ընդարձակ և խոնաւ սենեակը
քիչ մը տաքցնելու համար:

Բայց Պալսամո զայն կեցուց:

— Ո՛հ, այդ հին լրագիրները եղած տեղը ձգեցէք,
եթէ քունս չտանի՝ զանոնք կարդալով կը դքօսնում:

Լա Պրի խոնարհելով դուրս ելաւ:

Պալսամո սրտնը մօտեցաւ, ծեր ծառային քայլերը
մտիկ ըրաւ, որոնցմէ սանդուխը կը ճռնէր: Քիչ մը
հտքը իր գլխուն վրայէն ստքի ձայները դադրեցան:

Լա Պրի իր սենեակը մտած էր:

Պալսամո այս անգամ պատուհանին մօտեցաւ:

Իր պատուհանին դիմացը, շէնքին միւս կողմը,
կիսափակ վարագոյրներով փոքրիկ վերնայարկ մը լու-

սաւորուած էր: Լըկէյ հոն էր: Դեռատի աղջիկը ըզ-
գեստն ու գլխուն շղարշը կը հանէր յամբօրէն: Յա-
ճախ պատուհանը կը բանար և դուրս կը ծռէր բակը
դիտելու կամ աչքէ անցընելու համար:

Պալսամո ուշադրութեամբ զայն կը դիտէր. ան-
շուշտ ընթրիքի պահուն չէր ուզած մանրազննին կեր-
պով զայն դիտել:

— Տարօրինակ նմանութիւն, մըմնջեց:

Նոյն պահուն վերնայարկին լոյսը մարեցաւ, թէպէտ
հոն բնակողը պառկած չէր:

Պալսամո պատին կռթնած կեցաւ:

Դաշնակը միշտ կը գոռար:

Անպուհը ականջ գրաւ համոզուելու համար որ
նուագարանին հետ ուրիշ ձայն կա՞ր...: Յետոյ ստու-
գելէ վերջ որ ընդհանուր լռութեան մէջ միայն նուա-
գարանին ձայնը կը լսուէր, վերստին բացաւ դուռը,
զոր Լա Պրի գոցեր էր, զգուշութեամբ սանդուղէն ի-
ջաւ և թեթեւակի դահլիճին դուռը հրեց՝ որ իր մա-
շած ծխնիներուն վրայ դարձաւ առանց ձայն հանելու:

Անտրէ բան մը չլսեց:

Ձիւնասպիտակ ձեռքերը նուագարանին դեղնորակ
փղոսկրին վրայ կը պտըտցնէր. իր դէմը քանդակուած
չըջանակի մը մէջ ագուցուած հայելի մը կար, որուն
թափթփած ոսկեդրուագը մոխրագոյն խաւի մը ներքեւ
կ'անհետանար:

Դեռատի աղջկան նուագածը մելամաղձոտ եղանակ
մըն էր: Ներելի է ըսել թէ աւելի ներդաշնակութիւն-
ներ էին անոնք քան թէ եղանակ մը: Անշուշտ ինքը
կը հնարէր և իր յիշատակները կամ երեւակայութեան
երազները դաշնակին վրայէն կ'անցընէր: Գուցէ իր
հոգին թափէրնէյի բնակարանին մէջ չափազանց տըխ-
րելով՝ պահիկ մը դղեակը կը թողուր և կ'երթար թա-
փառելու Անտիսիատի և Նանսիի անհուն և անթիւ

պարտէզներուն մէջ, ուր կը խոնուէին զուարթերես աշակերտուհիները: Ինչ որ ալ եղած ըլլայ, նոյն վայրկեանին տարտամ ու անթարթափ նայուածքը իր առջեւը գտնուող անփայլ հայելիին կը սեւեռէր, ուր կ'երեւէին այս ընդարձակ սենեակին ազօտ խորշերը, զոր խաղատետրն ու նուագածուհին լուսաւորելու համար դաշնակին վրայ զետեղուած միակ ճրագը չէր կրցած կատարելապէս լուսաւորել:

Երբեմն, առջի իրիկուան տարօրինակ անցուդարձին և անկէ հետեւած անձանօթ տպաւորութիւններուն տակ ընկճուած, նուագելէ կը դադրէր:

Բոլոր տեսածներուն խելք չկրնալով հասցնել, Անտրէի սիրտը տրոփել և բոլոր անդամները սարսուռ սկսե՛ր էին: Թէպէտեւ սենեակին մէջ առանձին, բայց այնպէս մը կը դողար որ՝ կարծես թէ կենդանի էակ մը եկեր իրեն քսուէր և հպելու ատեն զինքը վրդովեր էր:

Յանկարծ, մինչդեռ կը ջանար այս սլանդակ տըպաւորութիւններուն պատճառը գտնել, նորէն զգաց զանոնք, վերստին անոնց մէջ ինկաւ: Բոլոր մարմինը ելեկտրական ցնցումով մը յուզուածի պէս սարսուռաց: Նայուածքը յտակութիւն մը ստացաւ, միտքը գոգցեա խտացաւ և հայելիին մէջ շարժումի պէս բան մը տեսաւ:

Դահլիճին դուռը անձայն կը բացուէր:

Դրան հետեւէն ստուեր մը տեսնուեցաւ:

Անտրէ սարսուռաց. մատները ստեղծներուն վրայ ուր կ'ոխելը սէ գիտեր:

Սակայն այս երեւոյթէն աւելի բնական բան չիկար:

Այս ստուերը, որ մութին մէջ ըլլալուն աակաւին անճանաչելի կը մնար, կարելի չէ՞ր որ Պ. Թավէրնէյ կամ Նիգօլ եղած ըլլար: Լա Պրի չպառկած, չէ՞ր կըրնար ըլլալ որ գործով մը տանը զանազան մասերէն

անցնելով դահլիճ մտած ըլլար: Յաճախ այս բանը կը պատահէր և այս տեսակ շրջագայութեանց մէջ խոհեմ ու հաւատարիմ ծառան բնաւ ազմուկ չէր հաներ:

Բայց դեռատի աղջիկը հոգւոյն աչքերովը կը տեսնէր որ ստուերը այդ երեք անձերէն և ոչ մին էր:

Ստուերը անձայն քայլով մը մօտեցաւ՝ մութին մէջ հետդհետէ որոշակի տեսնուելով: Եւ երբ լուսոյ շրջանակին մէջ մտաւ, Անտրէ տեսաւ օտարականը որ իր գունատ դէմքովը և սեւ թաւիչէ լօղիկովը սոսկալի երեւոյթ մը ունէր:

Անշուշտ գաղտնի պատրուակով մը հագած մետաքսեայ զգեստը հանած էր:

Անտրէ ուղեց հտին դառնալ և պոռալ:

Բայց Պալսամօ ձեռքերը դէպի առաջ երկնցուց, և Անտրէ այլեւս չկրցաւ շարժիլ իր տեղէն, եղած տեղը զամուածի պէս մնաց:

Ճիգ մը ըրաւ և աղերսարկու ձայնով մը ըսաւ.

— Պարո՛ն, պարո՛ն... , ի սէ՛ր Աստուծոյ, ինէ ի՞նչ կ'ուզէք:

Պալսամօ ժպտեցաւ, հայելիին մէջ կրկնուեցաւ իր դէմքին արտայայտութիւնը, և Անտրէ կուլ տուաւ զայն անյազարար:

Բայց Պալսամօ պատասխան չտուաւ:

Անտրէ ջանք մը եւս ըրաւ ոտքի ելնելու համար, բայց չկրցաւ. անյաղթելի զօրութիւն մը զայն իր թիկնաթոռին վրայ գամեց, մինչդեռ աչքերը՝ մոգական հայելիին վրայ յառած՝ անթարթ մնացին:

Այս նոր զգայութիւնը զինքը ահաբեկեց, որովհետեւ կը տեսնէր որ բոլորովին այդ մարդուն ձեռքն էր և այդ մարդն ալ անձանօթ մըն էր:

Օգնութիւն կանչելու գերմարդկային ճիգ մը ըրաւ, բերանը բացաւ, բայց Պալսամօ երկու ձեռքը դեռատի

աղջկան գլխուն վրայէն անցուց, որով անոր ձայնը կոկորդէն դուրս չելած՝ անլսելի դարձաւ:

Անտրէ ձայն չկրցաւ հանել: Կուրծը լեցուեցաւ թմրեցուցիչ տեսակ մը ջերմութեամբ որ տարածուն թանձր շոգիի մը պէս յամրաբար մինչեւ ուղեզը ելաւ:

Դեռատի աղջիկը ո՛չ զօրութիւն ունէր և ոչ ալ կամք. յամր հակումով մը գլուխը ուսին վրայ ինկաւ:

Նոյն պահուն Պալսամօ կարծեց թէ պատուհանին կողմէն թեթեւ ձայն մը կուգար. ուժգին կերպով ետին դառնալով պատուհանին ետեւէն մարդու մը հեռանալը տեսաւ:

Յօնքերը պուտեց, տարօրինակ բան, գոգցես նոյն-տպաւորութիւնը դեռատի աղջկան դէմքին վրայ ալ ցոլաց:

Յետոյ Անտրէի կողմը դառնալով՝ ձեռքը վար առաւ՝ զոր մինչեւ այն ատեն անոր գլխուն վրայ բըռնած էր, եռանդալիւր շարժումով մը նորէն վեր վերցուց, ետքը նորէն վար իջեցուց՝ այսպէսով քանի մը րոպէ դեռատի աղջկան վրայ մագնիսական խորտակիչ սիւներ կուտակելով:

— Քնացի՛ր, հրամայեց:

Յետոյ, և որովհետեւ ենթական տակաւին կը մաքրուէր:

— Քնացի՛ր, կրնեց հրամայական ձայնով մը: Քնացի՛ր, այնպէս կը կամիմ:

Այն ատեն տկար կամքը զինաթափ եղաւ զօրաւոր կամքին առջեւ: Անտրէ արմուկը դաշնակին կռթընցուց, գլուխը ձեռքին վրայ դրաւ և քնացաւ:

Յետոյ Պալսամօ դուրս ելաւ, դուռը ետեւէն գոցեց և փայտէ սանդուխէն ելնելով իր սենեակը մտաւ: Դահլիճին դրան գոցուելուն վրայ՝ Պալսամօի տես-

նել կարծած դէմքը նորէն ապակիներուն ետեւէն տեսնուեցաւ:

Ժիլպէրին դէմքն էր ան:



Ը.

ՁԳՈՂՈՒԹԻՒՆ

Ժիլպէր, Թավէրնէյի գղեակը ունեցած ստորին վիճակին պատճառաւ դահլիճէն դուրս մնացած ըլլալով՝ ուշադրութեամբ դիտած էր նոյն իրիկունը այն ամէն անձերը, որոնց աստիճանը կը ներէր ներսի կողմը գտնուել:

Ընթրիքի պահուն Պալսամօի ժպտիլը և ըրած շարժումները աչքէ փախցուցած չէր: Դիտած էր Անտրէի անոր հանդէպ սնուցած պատկառանքը, անոր նկատմամբ սեպուհին անլուր քաղցրութիւնը և լաՊրիին յարգանքն ու անոր ծառայութիւն մը մատուցանելու տենչը:

Պահ մը վերջ, սեղանէն ելնելէ յետոյ, թանձրախտ շեփորուկներու և ձիւնածաղիկներու մէջ պահուած էր, վախնալով որ Նիգօլ փեղկերը գսցելու կամ սենեակը մտնելու ատեն չտեսնէ և զինքը չզրկէ իր հետախուզութենէն կամ մանաւանդ լրտեսութենէն:

Նիգօլ իրօք իր սովորական շրջանը ըրած էր, բայց ստիպուէր էր բաց թողուլ դահլիճին փեղկերէն մին՝

որուն ծխնինները կիսովին կտարտած ըլլալուն չէր գոցուներ :

Ժիւլպէր զայս գիտէր : Ուստի ինչպէս որ տեսանք, իր կեցած տեղէն չէր հեռացեր, ապահով ըլլալով որ Նիգօլի մեկնելէն ետքը իր հետադատութիւնները պիտի կրնար շարունակել :

Իր հետադատութիւնները ըսինք, այս բառը գուցէ ճիշդ չթուի մեր ընթերցողներուն . ի՞նչ հետադատութիւն կրնար ընել ժիւլպէր, միթէ Թավէրնէյի դղեակին ամէն կողմը չէ՞ր գիտեր՝ քանի որ հոն մեծցած էր, հոն բնակող անձինքը ամէն կերպով չէ՞ր ձանչնար՝ քանի որ տասներեօթը կամ տասներեօթը տարիէ ի վեր զանոնք կը տեսնէր :

Բայց այն իրիկունը ժիւլպէր հետադատելէ տարբեր գիտաւորութիւններ ունէր, ոչ միայն կը լրտեսէր՝ այլև կը սպասէր :

Նիգօլ դահլիճէն գուրս ելնելով Անտրէն հոն ձգեց, յամբարար և անփութօրէն դուռներն ու փեղկերը գոցեց, ծաղկանոցին մէջ պտըտելու գնաց, գողունի ակնարկներ արձակեց ամէն կողմ, և վերջապէս առանձնանալու համար իր սենեակը քաշուեցաւ :

Ժիւլպէր ծառի մը կոճղին կռթնած անշարժ, կիսովին ծռած, հազիւ շնչելով՝ Նիգօլի շարժումներէն և ձեւերէն բան չէր կորսնցուցեր . յետոյ երբ սպասուհին աներեւութանալով վերնայարկի պատուհանէն լոյս երեւցաւ, ժիւլպէր այս միջոցին ոտքին ծայրերուն վրայ կոխելով անցաւ, մինչեւ պատուհանը հասաւ, մութին մէջ ժպտեցաւ, և գուցէ ինքն ալ չգիտնալով ինչ բանի սպասելը, եղած տեղը գամուած մնաց՝ աչքերը Անտրէի յառած՝ որ հեղգօրէն դաշնակին առջեւ նստած էր :

Ահա այս միջոցին Ժօզէֆ Պալսամօ դահլիճը մտած էր :
Ժիւլպէր զայն տեսնելով սարսուաց և իր հրացայտ

աչքերը մեր պատմած տեսարանին երկու գլխաւոր դերակատարներուն վրայ կեդրոնացուց :

Կարծեց թէ Պալսամօ գովեստներ կուտար Անտրէին տաղանդին, և այս վերջինը սովորական անտարբերութեամբ կը պատասխանէր անոր, թէ մին իր ըսածնէրը կը պնդէր և միւսը իր գասը կը գադրեցնէր պատասխանելու և հիւրը ձամբելու համար :

Ջարմացաւ այն շնորհալի ձեւին վրայ որով Պալսամօ կը մեկնէր : Այս տեսարանին մէջ լուռութիւն էր որ անթափանցելիօրէն կը խօսէր, որով ժիւլպէրի համար ամէն բան անհասկնալի կը մնար :

Ժիւլպէր չէր կրցեր բան մը լսել, միայն շրթունքներու երերտկալը և բազուկներու շարժիլը տեսեր էր : Որչափ լուռ զննող մըն ալ ըլլար, ի՞նչպէս պիտի կարենար գիտնալ թէ գաղտնիք մը կայ հոն՝ ուր ամէն բան, ըստ երեւոյթին, խիստբնա կան ընթացքով մը կը կատարուէր :

Պալսամօի երթալէն ետքը՝ ժիւլպէր կեցաւ ոչ թէ զննելու՝ այլ հոգեպիշ Անտրէին նայելու համար, որուն անփոյթ դիրքը աւելի փայլ մը կուտար անոր գեղեցկութեանը : Յետոյ զարմանքով նշմարեց որ կը քնանար ան :

Քանի մը վայրկեան եւս միեւնոյն դիրքին մէջ մնաց դրապէս ապահով ըլլալու համար թէ այս անշարժութիւնը իրօք քուն էր : Համոզուելէ վերջ ոտքի ելաւ գլուխը երկու ձեռքերուն մէջ բռնած՝ ուղեղին մէջ յորդող մտածութիւններու յորձանքէն գանկին պայթումը զգացող մարդու մը պէս . ապա վայրկեանապէս կամակորուրթեամբ մը, որ մոլեգին ճիգի մը կը նմանէր, հեկեկեց :

— Ո՛հ, ձեռքը, մէկ անգամ միայն շրթունքս ձեռքերուն դպցնեմ : Առաջ անցիր, ժիւլպէր, օ՛ն, այսպէս կ'ուզեմ :

Ժօզ. Պալս., բիւ 3—9. Բ.հր.Ն.Բ.

Այս բնելով ինքն իրեն հնազանդեցաւ, նախասենեակէն ներս խոյացաւ և դահլիճին դուռը հասաւ, որ ժիւլպէրի համար ալ առանց աղժուռի բացուեցաւ, ինչպէս որ բացուեր էր Պալամօի համար:

Բայց, երբոր դուռը բացուեցաւ, երբոր դեռատի աղջկան գէմը գտնուեցաւ, հասկցաւ իր կատարելիք գործողութեան ծանրութիւնը: Ինքը, ժիւլպէր, գաւառացի հոգաբորժի մը երկչոտ տղան, հազիւ իր նսեմութեան խորէն յանդգնած էր աչքը վերցնել այդ հըպարտ և արհամարհոտ դեռատի աղջկան վրայ, անաչրթունքը պիտի դպցրէր քնացած վեհափառութեան զգեստին եզերքին կամ մատներուն ծայրերուն, որ արթննալով կրնար զայն շանթահարել իր նայուածքովը: Այս խորհրդածութիւնները ընելով՝ բոլոր այս միտք մտորող և ուղեղ զգլխող սիրայեղձ ամպերը փարատեցան:

Դրան շրջանակին մէջ կեցաւ, սրովհետեւ սրունքները դողդողալ սկսան: Դեռեւել սկսաւ:

Բայց Անտրէ խորունկ քունով մը կը քնանար: Ժիւլպէր տակաւին վստահ չէր թէ դեռատի աղջիկը կը նիրհէ՞ր թէ կը մտածէր: Ժիւլպէրի սիրտը ուժգնակի կը արօփէր և սիրտտոչոր երիտասարդը ի զուր կը ջանար կուրծքին մէջ ճնշել զայն: Վայրկեան մը շնչասպառ ոտքի վրայ մնաց: Դեռատի աղջիկը ամենեւին չերերաց:

Ընկճորէն ձեռքին կոթնաց՝ պարանոցին և ուսերուն վրայ ցիրուցան երկայն անփոշի մազերովը այնչափ գեղեցիկ էր Անտրէ որ՝ ժիւլպէրին սրտին հրգեհը վախէ՞ ամխացած բայց մարած չըլլալով՝ վերստին արծարծեցաւ: Շլացուցիչ յիմարութեան մը պէս նոր գըլխապտուցով մը ամբողջ ուղեղը այրել սկսաւ: Անտրէի դպած բաներուն դպելու տոչորող պէտք մը կը զգար: Դէպի անոր քայլ մը առաւ ժիւլպէր:

Տախտակամածը ճանչեց իր դողդոջուն ոտքերուն տակ, այս ձայնէն մարդարտամման պաղ քրտինք մը երիտասարդին ճակատը պատեց, բայց Անտրէ գոգցես չլսեց:

— Կը քնանայ, մրմնջեց ժիւլպէր, ո՛հ, ի՛նչ երջանկութիւն, կը քնանայ:

Բայց ժիւլպէր երեք քայլ եւս առնելով նորէն կանգ առաւ. բան մը կարծես զայն կ'ահարեկէր. մարելու մօտ կանթեղին անսովոր լոյսը իր յետին ժայթքուն ճառագայթները կ'արձակէր:

Տան մէջ ոչ ձայն կար և ոչ ալչունչ. ձեր Լա Պրին պառկած և անշուշտ քնացած էր. Նիգօլի ճրագը մարած էր:

— Օ՛ն, ըսաւ:
Եւ նորէն յառաջացաւ:
Տարօրինակ բան, տախտակամածը նորէն ճանչեց և Անտրէ դարձեալ չչարժեցաւ:

Ժիւլպէր այս տարօրինակ քունին վրայ զարմացաւ, գրեթէ սոսկաց:

— Կը քնանայ, կրկնեց այն փոփոխութեամբ, որ մէկ վայրկեանի մէջ քսան անգամ կը տարուբերէ տարփաւորի մը կամ վատի մը որոշումը: Վա՛տ է այն մարդը որ իր սրտին տէրը չէ: Կը քնանայ, Աստուած իմ, Աստուած իմ:

Բայց վախի և յոյսի բոլոր այս շղաճգական տարուբերումներուն մէջ, ժիւլպէր միշտ յառաջանալով՝ Անտրէէն երկու քայլ անդին կանգ առաւ: Այն ատեն՝ կարծես գիւթութեան մը ենթարկուեցաւ: Փախչելը կարծես գիւթութեան մը գոգցես: Անգամ մը որ այն անկարելի դարձեր էր գոգցես: Անգամ մը որ այն ձգողութեան մէջ մտաւ որուն կեդրոնը դեռատի աղջիկն էր, ինքզինքը պրկուած և յաղթահարուած զգալով ծունկերուն վրայ կքեցաւ:

Անտրէ արձանի մը պէս անշարժ ու համր մնաց:

Ժիւլպէր անոր շրջագգեստին քղանցքը բռնեց և համբուրեց :

Յետոյ, շունչը բռնած, հաւասար շարժումով մը գլուխը վեր վերցուց յամբօրէն և աչքովը Անտրէի աչքերը փնտռեց :

Թէպէտեւ Անտրէ աչքերը խոշոր խոշոր բացած էր, բայց չէր տեսներ :

Ժիւլպէր ա՛լ ինչ ընելիքը չէր գիտեր. սքանչացուձէն և հիացուձէն խելքը գլխէն թռեր, ինքզինքէն ելեր էր : Պահ մը սոսկալի գաղափարով մը զայն մեռած կարծեց : Անոր ձեռքը բռնելու համարձակութիւն ստացաւ : Դեռատի աղջկան ձեռքը գաղջ էր և շնչերակը մեղմօրէն կը զարնէր : Անտրէի ձեռքը անշարժ մնաց Ժիւլպէրի ձեռքին մէջ : Այն ատեն Ժիւլպէր՝ անշուշտ այդ հեշտալի հպուձէն թմրելով՝ երեւակայեց թէ Անտրէ տեսնելով և զգալով՝ իր խօլ տուիքը գուշակած էր : Հէգ կուրացած սիրտ, կարծեց թէ Անտրէ իր այցելութեան կը սպասէր, թէ իր լուսթիւնը հաւանութիւն մըն էր և իր անշարժութիւնը շնորհ մը :

Անտրէի ձեռքը շրթունքին տարաւ և երկար ու ջղաձգային համբոյր մը քաղեց :

Յանկարծ Անտրէ սարսուաց, և Ժիւլպէր զգաց թէ զինքը ետ կը մղէր :

— Ո՛հ, կորսուեցայ, մրմնջեց երիտասարդը դեռատի աղջկան ձեռքը ձգելով և ճակատը գետին խոնարհեցնելով :

Անտրէ զսպանակէ մը մղուածի պէս՝ ոտքի ելաւ, աչքերը տախտակամածին վրայ իսկ չխոնարհեցուց, ուր Ժիւլպէր ամօթահար կը գալարուէր :

Ժիւլպէրի վրայ ներողութիւն խնդրելու ո՛չ զօրութիւն և ոչ ալ համարձակութիւն մնացեր էր :

Բայց Անտրէ՝ գլուխը բարձր բռնած և պարանոցը ձիգ՝ գաղտնի զօրութեան մը կողմէ գոգցես գէպի ան-

տեսանելի նպատակ մը քաշուելով, Ժիւլպէրին քուեցաւ անցնելու տանն և սկսաւ դէպի դուռը յառաջանալ բռնազրօսիկ և դժուարին քայլերով :

Ժիւլպէր անոր հեռանալը զգալով՝ մէկ ձեռքը գետնին կռթնցուց և ոտքի ելաւ, յամբօրէն դարձաւ և զարմացական նայուածքով մը անոր հետեւեցաւ :

Անտրէ իր ճամբան շարունակեց դէպի դուռը, բացաւ զայն, նախասննեակէն անցաւ և սանդուխին ստորոտը հասաւ :

Ժիւլպէր՝ գունատ և դողդոջուն՝ անոր կը հետեւէր քրեթէ գետնին վրայ սողալով :

— Ո՛հ, այնչա՛փ զայրացած է որ չուզեց զիս ամբաստանել. սեպուհը գտնելու և իմ ամօթալի խենթութիւնս անոր իմաց տալու կ'երթայ. զիս սպասուորի մը պէս պիտի վճռեն, ըսաւ Ժիւլպէր իւրովի :

Երիտասարդին գլուխը դարձաւ մտածելով թէ Թալէրնէյէն պիտի զատուէր, թէ ա՛լ չպիտի տեսնէր այն գեղուհին, այն պաշտելի էակը որ իր լոյսը, յոյսը, կեանքը և հոգին եղած էր. յուսահատութիւնը քաջութիւն տուաւ անոր. ոտքի ելաւ և անտրէին մօտեցաւ :

— Ո՛հ, ներեցէք, օրիորդ, ի սէր Աստուծոյ, ներեցէք, մրմնջեց :

Անտրէ կարծես թէ չլսեց և անցաւ գնաց առանց հօրը սենեակը մտնելու :

Ժիւլպէր շունչ առաւ :

Անտրէ՝ ոտքը սանդուխին առաջին աստիճանին դրաւ, յետոյ երկրորդին :

— Ո՛հ, Աստուած իմ, մրմնջեց Ժիւլպէր, ո՛ւր կրնայ երթալ այսպէս. այս սանդուխը օտարականին բնակած կարմիր սենեակը և Լա Պրիին վերնայարկը կ'առաջնորդէ միայն : Եթէ Լա Պրիին համար եղած ըլլար՝ զանգակը զարնելով զայն կրնար կանչել... Ար-

դեօք: . . . կ'երթայ: . . . բայց ո՞հ, անկարելի է, անկարելի է . . . :

Եւ ժիւպէր մօլեգին կատաղութեամբ մը բռունցքները սեղմեց՝ խորհելով որ Անտրէ կրնար Պալսամօի սենեակը երթալ:

Անտրէ օտարականին դրանը առջեւ կանգ առաւ: Ժիւպէրին ճակտէն պազ քրտինք մը կը հոսէր. սանդուխին բազրիքին պլլուեցաւ չիյնալու համար. Անտրէին ետեւէն վեր կ'ելլէր: Բոլոր տեսածները, բոլոր գուշակածները չափազանց այլանդակ կ'երեւէին իրեն:

Պալսամօի դուռը կիսափակ էր, Անտրէ դուռը հրեց առանց դարնելու: Հոնկէ ցայտոզ լոյսը անոր քնքոյշ և ամբիժ դէմքը լուսաւորեց և անոր աչքերէն ոսկեհուռ ճառագայթներ արձակուիլ սկսան:

Սենեակին մէջտեղը ժիւպէր նշմարեց օտարականը որ կանգուն, ակնկառոյց, ճակատը փոթ և ձեռքը հրմայելու շարժումով մը երկնցուցած կեցած էր:

Ապա դուռը վերստին գոցուեցաւ:

Ժիւպէր ուժաթափ զգաց ինքզինքը:

Մէկ ձեռքով թողուց սանդուխին բազրիքը և միւս ձեռքը հրաբորբոք ճակատին տարաւ, ինքն իր վրայ ինկաւ առանցքէն ելնող անիւի մը պէս, և առաջին աստիճանին ցուրտ քարին վրայ ապշած ինկաւ աչքը տակաւին այն անիժեալ դրան վրայ յառած՝ որով կ'անհետանար բոլոր անցեալ երազը, ներկայ երջանկութիւնը, ապագայ յոյսը:



Թ.

ՏԵՍՈՒՇԻՆ

Պալսամօ՝ հրամանատու արձանի մը պէս հաստատուն քայլերով առանց ուղիղ գիծէն շեղելու իր սենեակը մտնող գեռատի աղջկան ընդառաջ գնաց:

Պալսամօէն զատ ուրիշ ոեւ իցէ մէկու մը խիստ տարօրինակ պիտի երեւէր այս երեւոյթը, բայց ան ամենեւին չզարմացաւ:

— Ձեզի պատուիրեցի որ քնանաք, ըսաւ, կը քնանա՞ք:

Անտրէ հառաչտնք մը արձակեց բայց չպտտասխանեց:

Պալսամօ գեռատի աղջկան յօտեցաւ և աւելի մեծ քանակութեամբ մագնիսական հոսանուտ իջեցուց անոր վրայ:

— Կ'ուզեմ որ խօսիք, ըսաւ:

Դեռատի աղջիկը սարսուաց:

— Ըսածս լսեցի՞ք, հարցուց օտարականը:

Անտրէ գլխովը հաստատական նշան մը ըրաւ:

— Ուրեմն ինչո՞ւ չէք խօսիր:

Անտրէ ձեռքը կոկորդին տարաւ գոգցես ցուցնելու համար թէ խօսքերը չէին կրնար ճամբայ բանալ:

— Լա՛ւ, նստեցէ՛ք սըտեղը, ըսաւ Պալսամօ:

Առանց Անտրէի գիտութեան ժիւպէրին համբուրած ձեռքէն բռնեց. այս առաջին շօշափումը Անտրէի վրայ նոյն սարսուռը գործեց՝ զոր արդէն զգացած էր պահ մը առաջ հրբ մագնիսական գերագոյն հոսանուտը վերէն վար կ'իջնէր:

Նորատի աղջիկը Պալսամօէն առաջնորդուելով դէ-

պի ետեւ քայլ մը առաւ և թիկնաթռուի մը մէջ նստաւ :

— Հիմայ կը տենէ՞ք, հարցուց Պալսամօ :

Անտրէի աչքերը խոշոր խոշոր բացուեցան, կարծես կ'ուզէր ընդգրկել բոլոր այն լուսաւոր ճառագայթները, զորս երկու ճրագներուն բոցարձակ լեզուները սենեակին մէջ սփռած էին :

— Աչքով նայեցէք չեմ ըսեր, շարայարեց Պալսամօ, սրտով նայեցէք :

Եւ իր նկարակիրտուած բաձկոնակին տակէն պողպատէ ցոյիկ մը հանելով՝ դեռատի աղջկան հեւացող կուրծքին վրայ դրաւ անոր ծայրը :

Անտրէ այնպէս մը ցատկեց որ՝ կարծես թէ բոցեղէն ուլաք մը իր մարմինէն անցնելով մինչեւ սիրտը թափանցած ըլլար և աչքերը խկոյն գոցեց :

— Լա՛ւ, ըսաւ Պալսամօ, կը սկսիք տեսնել, այնպէս չէ՞ :

Անտրէ գլխովը հաստատական նշան մը ըրաւ :

— Եւ հիմայ պիտի խօսիք, այնպէս չէ՞ :

— Այո՛, պատասխանեց Անտրէ :

Բայց նոյն միջոցին ձեռքը ճակտին տարաւ, իբրեւ թէ անպատում ցաւ մը զգացած ըլլար :

— Ի՞նչ ունիք, հարցուց Պալսամօ :

— Ո՛հ, կը նեղուիմ :

— Ինչո՞ւ կը նեղուիք :

— Որովհետեւ տեսնելու և խօսելու կը հարկադրէք զիս :

Պալսամօ ձեռքերը երկու երեք անգամ Անտրէի ճակտին վրայէն անցուց դարձուց և անոր գանկը պայթեցնելու պատրաստ հոսանուտին մէկ մասը գոգցես ի բաց վանեց :

— Տակաւին կը նեղուի՞ք, հարցուց :

— Քիչ մը, պատասխանեց դեռատի աղջիկը :

— Լա՛ւ, նայեցէք ուրիմն թէ ո՞ւր էք :

Անտրէի աչքերը գոց մնացին, բայց դէմքը մթադնեցաւ և զարմացական երեւոյթ մը ստացաւ :

— Կարմիր սենեակին մէջ, մըմնջեց :

— Որո՞ւ հետ :

— Ձեզի հետ, շարայարեց դողդղալով :

— Ի՞նչ ունիք :

— Կը վախնամ, կ'ամչնամ :

— Ի՞նչ բանէ : Համակրութեամբ միացած չե՞նք միթէ :

— Ճիշդ է :

— Ձէ՞ք գիտեր որ գէշ դիտաւորութիւններով չեմ բերած ձեզ հոս :

— Ա՛հ, այո՛, ճշմարիտ է ըսաւ :

— Եւ ձեզ իբրեւ քոյր կը յարգեմ :

— Այո՛, գիտեմ :

Եւ իր դէմքը զուարթացաւ, յետոյ վերստին խռովեցաւ :

— Ամէնը չէք ըսեր ինձի, շարայարեց Պալսամօ : Լիովին չէք ներեր ինձ :

— Պատճառն այն է որ կը տեսնեմ թէ եթէ ինձ չարիք հասցնել չէք ուզեր՝ գուցէ ուրիշներուն կ'ուզէք :

— Կարելի է, մըմնջեց Պալսամօ : Բայց դուք ատոր մի՛ խառնուիք, աւելցուց հրամայական շեշտով մը :

Անտրէի դէմքը իր սովորական երեւոյթը ստացաւ :

— Տանը մէջ բոլորն ալ կը քնանա՞ն :

— Ձեմ գիտեր :

— Նայեցէք ուրիմն :

— Ո՞ր կողմը նայիմ :

— Տեսնենք : Նախ ձեր հօրը կողմը նայինք : Ո՞ւր է ան :

— Իր սենեակին մէջ :

— Ի՞նչ կ'ընէ :

— Պառկեր է :

— Կը քնանա՞յ :

- Ո՛չ, կը կարդայ:
- Ի՞նչ կը կարդայ:
- Այն գէշ գիրքերէն մին՝ զոր միշտ կ'ուզէ ինձ կարդացնել տալ:
- Եւ դուք չէ՞ք կարդար:
- Ո՛չ, ըսաւ:
- Լա՛ւ, ուրեմն այն կողմէն հանգիստ ենք: Նիգօլի կողմը նայեցէք, իր սենեակին մէջ
- Սենեակին մէջ լոյս չկայ:
- Տեսնելու համար լոյսի պէտք ունի՞ք:
- Եթէ հրաման ընէք՝ ո՛չ:
- Տեսէ՛ք, այնպէս կ'ուզեմ:
- Ա՛հ, կը տեսնեմ զայն:
- Լա՛ւ:
- Կիսովին հազուած է. մեղմօրէն դուռը կը հրէ, սանդուխէն վար կ'իջնէ:
- Լա՛ւ, ո՞ւր կ'երթայ:
- Բակին դրանը մէջ կանգ կ'առնէ, դրանը ետեւը կը պահուըտի. կը դիտէ, կը սպասէ:
- Պալսամօ ժպտեցաւ:
- Արդեօք ձե՞զ կը դիտէ կամ ձեզի՞ կը սպասէ:
- Ո՛չ:
- Լաւ, անհազար կէտը: Երբ դեռատի աղջիկ մը անկախ է իր հօրմէն և սենեկապան կ'նոջմէն, ա՛լ վախնալու բան չունի, միայն թէ...
- Ո՛չ, ըսաւ Անտրէ:
- Օհօ՛, միտքէս անցածի՞ն կը պատասխանէք:
- Ձեր միտքէն անցածը կը տեսնեմ:
- Ըսել է մէկը չէ՞ք սիրեր:
- Ե՞ս, ըսաւ դեռատի աղջիկը արհամարհոտ կերպով մը:
- Է՛հ, անշուշտ. մէկը կրնաք սիրել կարծեմ:

- Վանքէն չեն ելներ անշուշտ բանտին մէջ փակուելու համար. մարմնոյն հետ սրտին ալ աղատութիւն կուտան:
- Անտրէ գլուխը թօթվեց:
- Սիրտս անկախ է, ըսաւ տխրութեամբ:
- Եւ կուսական ամբօութեան և համեստութեան այնպիսի գեղածիծաղ արտայայտութիւն մը երեւցաւ իր դէմքին վրայ որ՝ Պալսամօ ուրախութեամբ մըմնջեց.
- Շուշան մը, բի՛բ մը, տեսուհի՛ մը:
- Եւ ձեռքերը իրար կցեց ի նշան ուրախութեան և շնորհակալութեան. յետոյ խօսքը Անտրէին ուղղելով շարայարեց.
- Բայց եթէ չէք սիրեր, անշուշտ կը սիրուիք:
- Ձեմ գիտեր, ըսաւ դեռատի աղջիկը քաղցրութեամբ:
- Ինչպէ՞ս, չէ՞ք գիտեր, յարեց Պալսամօ բաւական խտտութեամբ: Փնտռեցէ՛ք, երբ ձեզի հարցում մը կ'ուղղեմ, գիտցած եղէք որ պատասխան մը առնելու համար է:
- Եւ անգամ մըն ալ պողպատէ գաւազանին ծայրովը դեռատի աղջկան սրտին դպաւ:
- Դեռատի աղջիկը դարձեալ ստրտաց, բայց այս անգամուան զգացած ցաւը առաջինէն նուազ սաստիկ կ'երեւէր:
- Այո՛, այո՛, կը տեսնեմ, ըսաւ. խնայեցէք ինձ, որովհետեւ զիս պիտի սպաննէք:
- Ի՞նչ կը տեսնէք, հարցուց Պալսամօ:
- Ո՛հ, բայց անկարելի բան է, պատասխանեց Անտրէ:
- Ի՞նչ կը տեսնէք ուրեմն:
- Երիտարդ մը որ վանքէն դառնալէս ինչիւր ինձ կը հետեւի, զիս կը դիտէ, խանդաղատանօք ինձ կը նայի, բայց միշտ գաղտնի:
- Ո՞վ է այդ երիտասարդը:

— Երեսը չեմ տեսներ, բայց գրեթէ գործաւորի մը զգեստը հագած է:

— Ո՞ւր է:

— Սանդուխին ստորտան է: վիշա ունի, կուլայ:

— Ինչո՞ւ համար երեսը չէք տեսներ:

— Որովհետեւ երեսը ձեռքերուն մէջ ծածկեր է:

— Ձեռքերուն մէջէ՛ն նայեցէք:

Անտրէ գոգցես ճիգ մը ըրաւ:

— Ժիւլպէ՛ր, գոչեց. ո՛հ, ես կ'ըսէի թէ անկարելի է:

— Ինչո՞ւ համար անկարելի ըլլայ:

— Որովհետեւ չպիտի համարձակեր զիս սիրել, պատասխանեց դեռատի աղջիկը վեհագոյն արհամարհանք մը ցուցնելով:

Պալսամօ ժպտեցաւ այնպիսի մարդու մը պէս որ մարդը կը ճանչնայ և գիտէ թէ չկայ անջրպետ մը որմէ սիրտը չկարհնայ անցնիլ, մինչև ևս կ'եթէ այդ անջրպետը անդունդ մըն ալ ըլլայ:

— Է՛, ի՞նչ կ'ընէ սանդուխին ստորտուր:

— Կեցէք, ձեռքերը ճակտին վրայէն կը վերցնէ, սանդուխին բազրիքին կը պլլուի, ոտք կ'եղնէ, վեր կ'եղնէ:

— Ո՞ւր կ'եղնէ:

— Հոս... բայց ի զուր, չպիտի համարձակի ներս մտնել:

— Ինչո՞ւ չպիտի համարձակի ներս մտնել:

— Որովհետեւ կը վախնայ, ըսաւ Անտրէ տտելութեան ժպիտով մը:

— Բայց մտիկ պիտի ընէ:

— Անշո՛ւշտ, ականջը գրանը կը մօտեցնէ, մտիկ կ'ընէ:

— Ուրեմն ձեզ կը նեղէ՞:

— Այո՛, որովհետեւ ըսածս կրնայ իմանալ:

— Անխորհրդապա՞հ է: Հակառակ ձեզ սիրելուն՝ ձեզ նկատմամբ անզաղտնապահութիւն մը ընելու կարող է:

— Այո՛, բարկութեան կամ նախանձի ատեն. ո՛հ, այո՛, այն ատեն ամէն բանի կարող է:

— Ուրեմն հեռացնէք զայն մենէ, ըսաւ Պալսամօ: Եւ աղմուկ հանելով դրան կողմը յառաջացաւ:

Անշուշտ Ժիւլպէրի համար արիութեան ժամը տակաւին չէր հասեր, հետեւաբար Պալսամօի ոտքին ձայնը լսելուն պէս, վախնալով որ վրայ չհասնի՝ սանդուխին բազրիքին վրայ հեծաւ և սահելով մինչև գետին հասաւ:

Անտրէ սոսկումի ճիւղ մը արձակեց:

— Ա՛լ դադրեցէք այն կողմը նայելէ, ըսաւ Պալսամօ Անտրէին քով վերադառնալով: Գոհնիկ սիրահարութիւնները մեծ կարեւորութիւն մը չունին: Թաւէրնէյ սեպուհին վրայ կ'ուզէ՞ք խօսիլ:

— Դուք ի՞նչ որ ուզէք՝ ես ալ ան կ'ուզեմ, պատասխանեց Անտրէ հառաչելով:

— Ուրեմն շա՞տ աղքատ է սեպուհը:

— Չափազանց:

— Ձեր գրօսանքին համար բնաւ բան մը չի՞ կրնար ծախսել:

— Ամենեւին:

— Ուրեմն այս դղեակին մէջ կը ձանձրանա՞ք:

— Մահու չափ:

— Գուցէ փառասիրութիւն ունի՞ք:

— Ո՛չ:

— Հայրերնիդ կը սիրէ՞ք:

— Այո՛, ըսաւ դեռատի աղջիկը գրեթէ վարանելով:

— Սակայն երէկ իրիկուն, կարծեմ, ամպ մը կար այդ որդիական սիրոյն վրայ, կրկնեց Պալսամօ ժպտելով:

— Անոր դէմ նեղացած եմ մօրս ունեցածը շուայ-
տութեամբ վատնած ըլլալուն համար, այնպէս որ՝ հէգ
Մէգօն-Ռուժ՝ բանակին մէջ կը տառապի և մեր ըն-
տանիքին անուներ չկրնար արժանաւոր կերպով կրել:

— Ո՞վ է Մէգօն-Ռուժ:

— Իմ Փիլիպ եղբայրս է:

— Ինչո՞ւ Մէգօն-Ռուժ կը կոչէք զայն:

— Որովհետեւ այնպէս կը կոչուի, կամ մանաւանդ
այնպէս կը կոչուէր մեր դղեակներէն մին, և մեր ըն-
տանեաց անդրանիկները նոյն անունը կը կրէին մինչեւ
իրենց հօրը մահը, անկէ վերջը Թավէրնէյ կը կոչուին:

— Է՛ եղբայրնիդ կը սիրէ՞ք:

— Այո՛, այո՛, շատ, չափէ՛ն աւելի:

— Ամէ՛ն բանէ աւելի:

— Ամէ՛ն բանէ աւելի:

— Ինչո՞ւ ուրեմն զայն այնչափ շատ կը սիրէք,
իսկ ձեր հայրը չափաւոր կերպով:

— Որովհետեւ ազնիւ սիրտ մը ունի ան և իր
կեանքը ինծի համար կը նուիրէ:

— Մինչդեռ ձեր հայրը...

Անտրէ լռեց:

— Չէ՞ք պատասխաններ:

— Չեմ ուզեր պատասխանել:

Անշուշտ Պալսամօ յարմար չգատեց դեռատի աղջ-
կան կամքը բռնադատել: Հաւանական էր որ գիտէր
արդէն ինչ որ կ'ուզէր գիտնալ սեպուհին վրայ:

— Է՛, ո՞ւր է հիմայ Մէգօն-Ռուժ ասպետը:

— Փիլիպի ուր ըլլա՞լը կը հարցնէք:

— Այո՛:

— Սթրազպուրկի բանակին մէջ:

— Կը տեսնէ՞ք զայն հիմայ:

— Ո՞ւր:

— Սթրազպուրկի մէջ:

— Չեմ տեսներ:

— Կը ճանչնա՞ք այդ քաղաքը:

— Ո՛չ:

— Ես կը ճանչնամ. մէկտեղ փնտռենք, կ'ուզէ՞ք:

— Անշո՛ւշտ կ'ուզեմ:

— Թատրօ՞նն է:

— Ո՛չ:

— Միւս պաշտօնակալներուն հետ Բալասի սրճա-
րա՞նն է:

— Ո՛չ:

— Իր սենեակը վերադարձեր է: Կ'ուզեմ որ ձեր
եղբօր սենեակը նայիք:

— Բան մը չեմ տեսներ, կարծեմ թէ Սթրազպուրկէն
մեկնած է:

— Ճամբան գիտէ՞ք:

— Ո՛չ:

— Հոգ չէ, ես գիտեմ. ճամբայ ելնենք: Մավէրն
չըլլա՞յ:

— Ո՛չ:

— Սարպրո՞ւք:

— Ո՛չ:

— Նանսի՞:

— Կեցէ՛ք, կեցէ՛ք:

Դեռատի աղջիկը ինքզինքը ժողովեց, սիրտը՝ կուրծ-
քը պայթեցնելու աստիճան կը բարախէր:

— Կը տեսնե՞մ, կը տեսնե՞մ, ըսաւ մեծ ուստու-
թեամբ մը, ո՛հ, սիրելի Փիլիպ, ի՛նչ երջանկութիւն:

— Ի՛նչ կայ:

— Սիրելի Փիլիպ, շարայարեց Անտրէ, որուն աչ-
քերը ուրախութեան ցոլքեր կ'արձակէին:

— Ո՞ւր է:

— Ձիով քաղաքէ մը կ'անցնի զոր ես շատ աղէկ
կը ճանչնամ:

- Ո՞ր քաղաքէն :
- Նա՛նսիէն, Նա՛նսիէն, ուր վանքն էի :
- Ապահով էք որ ան է :
- Ո՛հ, այո՛, շուրջը գտնուած ջահերը անոր դէմ-
քը կը լուսաւորեն :
- Զահե՛ր, ըսաւ Պալսամօ զարմանքով : Ի՞նչ բա-
նի կը ծառայեն այդ ջահերը :
- Զիռ վրա՛յ է, ձիռ վրա՛յ է, գեղեցիկ սոկեզօծ
կառքի մը գրանը քով :
- Օհօ՛, ըսաւ Պալսամօ՝ որ կարծես կը հասկնար .
է՛, ի՞նչ կայ այդ կառքին մէջ :
- Դեռատի կին մը... ո՛հ, ի՛նչ մեծաշուք և
չնորհալի կին մըն է, որքա՛ն գեղեցիկ է : Ո՛հ, տա-
րօրինակ բան, կարծես թէ արդէն տեսած եմ զայն .
ո՛չ, ո՛չ, կը սխալիմ, Նիգօլն է որ անոր կը նմանի :
- Նիգօլ այդ խրոխտ, վեհաշուք և գեղանի դե-
ռատի կնկա՞ն կը նմանի :
- Այո՛, այո՛, բայց ինչպէս որ յասմիկը շուշանին
կը նմանի :
- Տեսնենք, ի՛նչ կ'անցնի այս միջոցին Նանսիի մէջ :
- Դեռատի կինը կառքին դուռնէն դուրս կը ծռի
և նշան կ'ընէ Փիլիպին որ մօտենայ, Փիլիպ կը հնա-
զանդի, կը մօտենայ և յարգանօք գլուխը կը բանայ :
- Խօսածնին կրնա՞ք լսել :
- Մտիկ պիտի ընեմ, ըսաւ Անտրէ՝ Պալսամօն կե-
ցընելով այնպիսի շարժումով մը որ՝ կարծես ըսել կ'ու-
զէր թէ ո եւ է շուռ կ'մը իր ուշադրութիւնը պէտք չէր
որ վերսկսեր :
- Կը լսեմ, կը լսեմ, մըմնջեց :
- Ի՞նչ կ'ըսէ դեռատի կինը :

- Բաղցր ժպտով մը Փիլիպին կը հրամայէ որ
ձիերուն ընթացքը շտապել տայ : Կ'ըսէ թէ պահնորդ
ուղեկիցները վաղը առտու ժամը վեցին պէտք է պատ-
րաստ ըլլան, որովհետեւ ցերեկը կ'ուզէ կանգ առնել :
- Ո՞ւր :
- Եղբայրս ալ ատիկայ կը հարցնէ... ո՛հ, Աստ-
ուած իմ, Թավէրնէյի գղեհակը իջեւանիլ կ'ուզէ : Հայրս
տեսնել կ'ուզէ : Ո՛հ, այդպիսի մեծափառ իշխանուհի
մը այսպիսի խեղճուկ տան մը մէջ իջեւանի՛ր : Ի՛նչ
պիտի ընենք առանց արծաթեղէնի, գրեթէ առանց
կտաւեղէնի :
- Անհո՛գ եղիր, հոգ կը տանինք ատոնց :
- Ո՛հ, շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ :
- Եւ գեռատի աղջիկը, որ գրեթէ ոտքի ելեր էր,
յագնարեկ թիկնաթուռին մէջ ինկաւ խորին հառաչանք
մը արձակելով :
- Պալսամօ իսկոյն Անտրէի մօտեցաւ, և, մագնիսա-
կան շարժումներով ելեկտրական հոսանքներուն ուղ-
ղութիւնը փոխելով քնոյ հանգարտութիւնը տուաւ
անոր գեղանի մարմնոյն՝ որ խորտակուած կը ծռէր և
ծանրացած գլխուն՝ որ շնչափառ կուրծքին վրայ
կ'իյնար :
- Անտրէ կարծես կատարեալ և նորոգիչ հանգիստ
մը վայելել սկսաւ :
- Ո՛յժ ու, հրամայեց Պալսամօ տխուր յափշտա-
կութեամբ մը անոր նայելով, քիչ մը վերջը դարձեալ
պէտք պիտի ունենամ քու ամբողջ լուսամտութեանդ :
Ո՛վ գիտութիւն, շարադրեց ջերմեռանդ խանդով մը
մենախօսելով, դո՛ւն միայն չես սխալիր, հետեւաբար
քեզի համար միայն մարդս ամէն բան զոհելու է : Այս
կինը խիստ գեղանի է, Աստուած իմ : Այս հրեշտակը
յոյժ ամբիժ է, և դուն զայս ազէկ գիտես, դուն որ
ժօզ. Պալս., քիւ 4—10. Բ.հր.Ն.Ք.

հրեշտակները և կիրները կը ստեղծես: Բայց ինձի համար գեղեցկութիւնն ու անմեղութիւնը ի՞նչ արժէք ունին այս միջոցիս: Պարզ տեղեկութիւն մը կ'ուզեմ՝ զոր գեղեցկութիւնն ու անմեղութիւնը միայն կրնան ինձ հայթայթել: Մեռնի՛ թող արարածը որչափ գեղանի, ամբիժ և անթերի ալ ըլլայ, միայն թէ բերանը խօսի: Թող մեռնի՛ն աշխարհիս բոլոր հրճուանքները՝ սէր, կիրք, հիացում, միայն թէ ես կարենամ միշտ ապահով և լուսաւորուած քալել: Ուստի, հիմայ, դեռ ահա՛ս պատանուհի, հիմայ որ իմ կամքիս զօրութեամբը քանի մը բոպէ քնանալով քսան տարի քնանալու չափ ոյժ առիր, արթնցի՛ր, կամ մանաւանդ քու յտակատես քո՛ւնդ քնացիր: Տակաւին պէտք ունիմ որ խօսիս, և այս անգամ միայն ինձ համար պիտի խօսիս:

Եւ Պալսամօ, նորէն ձեռքերը Անտրէին երկնցուց և աստուածային ամենազօր շունչ մը փչելով անոր վրայ, դեռատի աղջիկը ստիպեց ուղիղ նստիլ:

Յետոյ, երբ տեսաւ որ Անտրէ պատրաստ է և հլու, թղթակալէն քառածալ թուղթ մը հանեց՝ որուն մէջ ուստինագոյնի զարնող սեւ մագերու խոպոպիկ մը կար: Թուղթը թափանցկութիւն մը ստացեր էր մագերը պատող անուշահոտութենէն:

— Նայեցէ՛ք, հրամայեց:

— Ո՛հ, դա՛րձեալ, ըսաւ դեռատի աղջիկը անձկութեամբ. ո՛հ, ո՛չ. հանդա՛րտ թողէք զիս, շա՛տ կը նեղուիմ. Աստուած իմ, քիչ մը առաջ որքա՛ն աղէկ էի:

Նայեցէ՛ք, հրամայեց Պալսամօ անգթաբար պողպատէ գաւազանին ծայրը դեռատի աղջկան սրտին վրայ դնելով:

Անտրէ ձեռքերը գալարեց և փորձողին բարբարոսութենէն պրծիլ ջանաց: Փրփուրը շրթունքներուն

վրայ ելաւ, ինչպէս երբեմն նուիրական եռոտանիին վրայ նստող Պիւթիային եղած էր:

— Ո՛հ, կը տեսնեմ, կը տեսնեմ, գոչեց Անտրէ յաղթահարուած և կամակոր յուսահատութեամբ մը:

— Ի՞նչ կը տեսնէք:

— Կի՛ն մը:

— Ա՛հ, մրմնջեց Պալսամօ վայրենի ուրախութեամբ մը, ուրեմն գիտութիւնը առաքինութեան պէս սնտոի բառ մը չէ: Մէսմէր՝ Բրուտօսին յաղթեց: Օ՛ն, այդ կի՛նը նկարագրեցէք ինձ որպէս զի համոզուիմ թէ աղէկ տեսեր էք:

— Խարտեաչ, բարձրահասակ, կապոյտ աչքերով, սեւ մագերով, ջղուտ բազուկներով կի՛ն մըն է:

— Ի՞նչ կ'ընէ:

— Կը վագէ, կը թռչի. քրտնաթոր ձիու մը վրայ հեծած կ'արշաւէ:

— Ո՞ր կողմը կ'երթայ:

— Հոնկէ՛, հոնկէ՛, ըսաւ դեռատի աղջիկը արեւմուտքը ցուցնելով:

— Ճամբո՛ւն վրայէն:

— Այո՛:

— Շալոնէ՛ն:

— Այո՛:

— Լա՛ւ, ըսաւ Պալսամօ, իմ հետեւելիք ճամբէս կ'երթայ: Բարից կ'երթայ, ես ալ հոն պիտի երթամ. Լաւ, Բարիցի մէջ կը գտնեմ զայն: Հանգստացի՛ր հիմայ, ըսաւ Անտրէին՝ անոր ձեռքէն առնելով խոպոպիկը:

Անտրէի բազուկները ուղղածիգ կախուեցան անշարժ:

— Հիմայ դաշնակի՛դ վերագարձիր, հրամայեց

Պալսամօ:

Անտրէ քայլ մը առաւ դէպի դուռը՝ բայց սրունք-

ները անմեկնելի յոգնութենէ մը խոշտանգուած ըլլալով, չկրցաւ ոտքի վրայ կենալ և գողգող սկսաւ :

— Ո՛յժ առ և քալէ՛, կրկնեց Պալտամօ մագնիսական նոր հոսանուտով մը զայն պատելով :

Անտրէ նմանեցաւ այն վեհանձն երիվարին որ կը պրկուի իր տիրոջ կամքը կատարելու համար, թէպէտ այս բանը անիրաւ ալ ըլլայ :

Քալեց :

Պալտամօ նորէն դուռը բացաւ և Անտրէ՛ միշտ քունի մէջ՝ սանդուխէն վար իջաւ յամբօրէն :

Ժ.

ՆԻԳՕԼ ԼԸԿԷՅ

Պալտամօ Անտրէն հարցափորձած միջոցին ժիւլպէր անմեկնելի անձկութեան մէջ մնացեր էր :

Սանդուխին բազրիքին տակ կծկտած, որովհետեւ չէր համարձակեր մինչեւ դուռը ելնել և կարմիր սենեակին մէջ խօսուածը մտիկ ընել, յուսահատութեան մէջ ինկաւ՝ որուն վախճանը հարկաւ պոռթկում մը պիտի ըլլար, քանի որ ժիւլպէր բուռն բնաւորութիւն մը ունէր :

Իր տկարութիւնն ու ստորնութիւնը զգալով՝ յուսահատութիւնը աստիճանաբար կ'աւելնար : Պալտամօ պարզ արարած մըն էր իրեն համար, որովհետեւ ժիւլպէր կորովի միտք մը ունենալով և դուռատի փիլիսո-

փայ մը ըլլալով կախարդներու չէր հաւատար : Բայց այդ մարդը զօրաւոր էր՝ ժիւլպէր տկար . այդ մարդը քաջ էր՝ բան մը որ ժիւլպէր տակաւին չէր : ժիւլպէր քան անգամ ոտքի ելաւ սանդուխէն վեր ելնելու և պէտք եղած ատեն սեպուհին դէմ դնելու մտօք : Քսան անգամ իր սրունքները բուժերուն տակ կ'թոտեցան և ծունկերուն վրայ ինկաւ :

Միտքը բան մը ինկաւ, այսինքն երթալ առնել այն ելնարանը՝ որուն վրայ կ'ելէր Լա Պրի, որ միանգամայն խոհարար, սպասաւոր և պարտիզպան էր, պատին վրայի յասմիկները և այժտերեւուկները կապելու համար : Մտածեց նաեւ թէ զայն սանդուխին գլխի նրբանցքին կռթնցնելով և ելնարանին վրայ ելնելով սենեակին մէջ անցած դարձածը պիտի հասկնար ելած ձայներէն, որուն այնչափ կը բաղձար :

Արագ արագ նախասննակէն անցաւ, յետոյ բակէն և պատին մօտեցաւ որուն տակ կը գտնուէր ելնարանը : Բայց երբ կը ծռէր զայն գետնէն վերցնելու համար, տանը կողմէն խշրտուք մը լսելով ետին դարձաւ :

Ժիւլպէր՝ աչքը մութին մէջ յառած՝ բաց գրան սեւ շրջանակին մէջէն մարդկային կերպարանքի մը անցնիլը նշմարեց, բայց այս ստուերը այնչափ արագ, այնչափ անձայն կ'անցնէր որ՝ աւելի ուրուականի մը կը նմանէր քան կենդանի էակի մը :

Ելնարանը թողուց և գողգոջուն սրտով դէպի դըրեակ յառաջացաւ :

Երեւակայութիւններ կան որոնք ի բնէ անապաշտ են, և սովորաբար ամենէն ճիւղ և խանգավառ երեւակայութիւններն են ասոնք . աւելի առասպելայինը կ'ընդունին քան տրամաբանականը, այս վերջինը շատ անհաճոյ կը թուի անոնց որովհետեւ իրենց բնազգումներովը կը ձգտին դէպի գերմարդկայինը, կամ գոնէ դէպի մտացածինը :

Ուստի, մթին այ լգեղեցիկ անտառ մը խենթենալու չափ սիրելի կ'ըլլայ երբեմն, որովհետեւ խաւարին կամ մարնետուն վրայ ուրուականներ կամ ոգիներ խոնուած ըլլալը կ'ենթադրեն: Նախնիք՝ որոնք երեւելի բանաստեղծներ եղան՝ կէսօրին այսպիսի բաներու վրայ կ'երազէին, բայց մեր արեւը, հրաշէկ լուսոյ այս հնաւուրց վառարանը, որուն գրեթէ պայծառութիւնը միայն մնացած է այսօր, ոգիներու և ուրուականներու գաղափարը կը մերժէ և անոր մէջ գուարթուն գիցուհիներու ու թիթեւաշարժ հուրիներու երեւակայական խօս պարերը կը ցնդեցնէ:

Ժիլպէր, խաւար երկրի մը դաւակը ուր գաղափարները աւելի տխրալի և մակերեւութային են, կարծեց թէ ուրուական մը կ'անցնի: Այս անգամ, հակառակ իր գծուարահաւանութեանը, երեւակայական ուրուականին փախչած միջոցին՝ Պալսամօի ըսածները միտքը ինկաւ. միթէ կախարգը չէր կրնար ուրուական մը կանչած ըլլալ, ան որ կարողութիւնն ունէր նոյն իսկ ամբժուութեան հրեշտակը մտորեցնելու:

Սակայն ժիլպէր առաջինէն աւելի վատթար երկրորդ շարժում մը ունէր միշտ, այն էր խորհրդածութիւնը: Իր օգնութեանը կանչեց բոլոր կորովի միտքերուն ուրուականներու դէմ յառաջ բերած փաստերը, և Փիլիսոփայական Բառգիրքին Ոգի յօդուածը տեսակ մը քաջութիւն տուաւ անոր, միանգամայն մեծ բայց աւելի հաստատուն վախ մը տալով:

Եթէ իրօք մէկը տեսած էր, անշուշտ կենդանի էակ մը ի մանաւանդ լրտեսելու պէտք ունեցող մէկը ըլլալու էր:

Վախէն Պ. Թավէրնէյը կարծեց, բայց խիղճը ուրիշ անուն մը փոփոսաց անոր ականջն ի վար:

Շէնքին երկրորդ յարկը նայեցաւ: Ինչպէս որ ըսինք, Նիգօլին ճրագը մարած էր և ապակիներէն ամենեւին լոյս չէր երեւեր:

Ոչ շունչ մը, ոչ ձայն մը և ոչ ալ լոյս մը կար բոլոր տանը մէջ, բացի օտարականին սենեակէն: Նայեցաւ, մտիկ ըրաւ, յետոյ բան մը չտեսնելով և բան չլսելով՝ վերստին ելնարանը առաւ՝ լաւ համոզուած ըլլալով այս անգամ որ աչքը սխալ տեսած էր սիրտը արագ բարախող մարդու մը պէս, և այս երեւոյթը, արուեստական լեզուով խօսելով, տեսողական կարողութեան ընդհատումն էր, քան թէ իր կարողութեանց գործածութեան մէկ արդիւնքը:

Երբ ելնարանը պատին կռթնցուց և ոտքը առաջին աստիճանին վրայ դրաւ, Պալսամօի դուռը բացուեցաւ և գոցուեցաւ թողլով որ Անտրէ անցնի:

Անտրէ առանց ճրագի և անձայն վար իջաւ, գերմարդկային կարողութենէ մը առաջնորդուած և օգնուած կոյրի մը պէս:

Դեռատի աղջիկը սանդուխին վարի բակը հասաւ, ժիլպէրին մօտէն անցաւ, զգեստովը անոր քսուեցաւ մութին մէջ ուր ժիլպէր անտեսանելի դարձած էր, և ճամբան շարունակեց:

Պ. Թավէրնէյ քնացած, լա Պրի պառկած, Նիգօլ շէնքին միւս կողմը, իսկ Պալսամօի դուռը գոց ըլլալով՝ երիտասարդը վախ մը չունէր որ մէկը վրայ կը հասնի: Ճիգ մը ըրաւ և Անտրէին հետեւեցաւ, անոր ոտքերուն վերցուցած տեղը դնելով ոտքը:

Անտրէ նախասենեակէն անցաւ և դահլիճը մտաւ: Ժիլպէր անոր կը հետեւէր սիրտը խոցոտած: Թէպէտե դուռը բաց մնացեր էր, բայց ժիլպէր կանգ առաւ: Անտրէ դաշնակին մօտեցաւ և աթոռակի մը վրայ նստաւ. ճրագը միշտ կը վառէր:

Ժիլպէր կարկամած կողմններովը կուրծքը կը խոցէր. կէս ժամ առաջ նոյն տեղն էր ուր դեռատի աղջկան զգեստն ու ձեռքը համբուրեր և ան ալ համաաղջկան զգեստն ու ձեռքը համբուրեր և ան ալ համաաղջկան զգեստն ու ձեռքը համբուրեր և ան ալ համաաղջկան զգեստն ու ձեռքը համբուրեր:

դեր էր: Տարակոյս չի կայ որ դեռատի աղջկան ներդրամտութիւնը այն սաստիկ ապականութեան մէկ արդիւնքը կարծեց՝ զոր ժիւլպէր սեպուհին թանգարանին գիրքերուն մեծագոյն մասին մէջ գտած էր, կամ ըզգայարանաց այն մատնութենէն, որուն վերլուծումը դիմագիտական այլեւայլ ճառագրութեանց մէջ տեսած էր:

— Լա՛ւ ուրեմն, մրմնջեց այս գաղափարներէն տարուած, եթէ այսպէս է, ես ալ ուրիշներուն պէս իմ շահս պիտի հանեմ այդ ապականութենէն, կամ օգուտ մը պիտի քողեմ զգայարանքներու այս պատրանքէն: Եւ քանի որ հրեշտակը իր ամբուստեան հանգերձը հովին թողուցեր է, անոր ծուէններէն պէտք է առնեմ:

Ժիւլպէր որ այս անգամ որոշումը տուեր էր, դէպի դահլիճը խոյացաւ:

Քայց երբ դրանը սեմէն պիտի անցնէր, մութին մէջէն ձեռք մը անոր թեւը բռնեց:

Ժիւլպէր ետին գարձաւ ահաբեկ, և իրեն թուեցաւ թէ սիրտը կուրծքին մէջ կ'եղնէր ու կը նստէր:

— Ա՛հ, այս անգամ քեզի բռնեցի, անխոհեմ, փրսփրսած անոր ահանջն ի վար գայրալիւր ձայն մը, դարձեալ ջանա՛ ուրանալ որ անոր հետ ժամադրութիւններ չես տար; ջանա՛ ուրանալ որ գայն չես սիրեր...:

Ժիւլպէր թեւը ցնցելու ոյժն անգամ չունեցաւ գայն բռնող արգելքէն ազատելու համար:

Սակայն արգելքը անյողթելի չէր: Պարզապէս դեռահաս աղջկան մը ձեռքն էր ան: Վերջապէս Նիգօլ Լըկէյն էր որ ժիւլպէրը գերի կը բռնէր:

— Օ՛ն, ի՛նչ կ'ուզէք դարձեալ, հարցուց մեղմովին ժիւլպէր անհամբերութեամբ:

— Վա՛յ, կ'երեւի թէ բարձրաձայն խօսիլ կ'ուզես, պատասխանեց Նիգօլ իր լեցուն ձայնովը:

— Ո՛չ, ո՛չ, ընդհակառակը, կ'ուզեմ որ լռես, ըսաւ ժիւլպէր աղուաները սեղմելով և Նիգօլը նախառենեակ քաշքշելով:

— Է՛ ուրեմն ետեւէ՛ս եկուր: Ժիւլպէրին ուզածն ալ այս էր, որովհետեւ Նոգօլին ետեւէն երթալով Անտրէէն կը հեռանար:

— Լաւ, քեզի կը հետեւիմ, ըսաւ երիտասարդը: Եւ Նիգօլին ետեւէն գնաց, որ գայն ծաղկանոցը տարաւ և դուռը ետեւէն գոցեց:

— Քայց, ըսաւ ժիւլպէր, օրիորդը հիմայ իր սենեակը պիտի մտնէ ու քեզ պիտի կանչէ որ իրեն օգնես անկողին մտնելու, և դուն հոն չպիտի ըլլաս:

— Եթէ կը կարծես որ միտքս ատով կը զբաղէ այս պահուն, շատ կը սխալիս: Ի՛նչ փոյթ, թող երթայ կանչէ կամ ամենեւին չկանչէ. քեզի հետ խօսիլ կ'ուզեմ:

— Նիգօ՛լ, ըսելիքդ վաղուան կրնաս թողուլ, գիտես որ օրիորդը խիտտ է:

— Ա՛հ, ե՛ս անոր խորհուրդ տուած եմ խիտտ ըլլալ մինչեւ իսկ ինձ հետ:

— Նիգօ՛լ, վաղը, քեզի կը խոստանամ...:

— Քու խոստումներդ, քու խոստումներդ գեղեցիկ են և մարդ անոնց կրնայ վստահիլ: Գուն այսօր ինձի չխոստացա՞ր ժամը վեցին Մէզօն-Ռուժի կողմը գտնուիլ: Ո՞ւր էիր այդ ժամուն: Հակառակ կողմը, որովհետեւ ճամբորդը դուն բերիր: Քու խոստումներդ, ես անոնց այնքան յարգ կուտամ, որքան Անօնսիատի վանքին անօրէնուհիին խոստումներուն, որ երգուընցած էր խոստովանութիւնը գաղտնի պահել, և կ'երթար բոլոր մեր մեղքերը մեծաւորուհիին կը պատմէր:

— Նիգօլ, գիտցած ըլլաս որ քեզ կը ձամբեն եթէ տեսնեն...:

— Միթէ քեզ չե՞ն ճամբեր, քե՛զ, օրիորդի՛ն սի-
րահարը. ո՛չ, պարոն սեպուհը միայն պիտի նեղանայ
ատոր համար:

— Զի՞ս, ըսաւ ժիւլպէր ինքզինքը պաշտպանել
ջանալով, ճամբուելու բնաւ պատճառ մը չեմ տեսներ:

— Իրա՞ւ, արգեօք սեպուհը քեզի հրաման տուած
է որ իր աղջկանը հետ քծնիս, այդչափ փիլիսոփայ
չէի կարծեր զայն:

Ժիւլպէր մէկ բառով կրնար ապացուցանել թէ եթէ
ինքը յանցաւոր էր, Անտրէ իրեն յանցակիցը չէր, և
այս բանը ընելու համար՝ միայն տեսածը պատմելը կը
բաւէր. թէպէտ իրողութիւնը անհաւատալի կ'երեւէր,
բայց Նիգօլ պիտի հաւատար այն նպատաւոր կամ
աննպատակարծես պատճառաւ, զոր կ'ինները ունին
իրարու հանդէպ: Բայց աւելի խորախորհուրդ գաղա-
փար մը երիտասարդը ետ կեցուց այս մտքէն: Անտ-
րէի գաղտնիքը այնպիսի գաղտնիք մըն է որ մարդը
կը ճօխացնէ, մանաւանդ եթէ այդ մարդը սիրոյ գան-
ձեր, կամ ա՛լ աւելի, նիւթական և գրական գանձեր
գտնելու փափաք ունի:

Ժիւլպէրի փափաքած գանձերը սիրոյ գանձերն էին:
Նկատեց որ Նիգօլի բարկութիւնը շատ վտանգաւոր
չէր, բայց Անտրէի վայելքը խիստ ըղձալի էր: Իսկոյն
իր ընտրութիւնը ըրաւ և գիշերուան տարօրինակ մի-
ջողէպին վրայէն լուսթեամբ անցաւ:

— Օ՛ն, քանի որ անպատճառ կ'ուզես, բացատ-
րութիւն տանք իրարու, ըսաւ ժիւլպէր:

— Ո՛հ, անմիջապէս, գոչեց Նիգօլ, որ ժիւլպէրի
բնաւորութեան հակառակը ունենալով իր զգացումնե-
րուն և ոչ միոյն տէրը կրնար մնալ. բայց իրաւունք
ունիս, այս ծաղկանոցին մէջ ապահով տեղ մը չենք.
Իմ սենեակս երթանք:

— Քու սենեակդ, գոչեց ժիւլպէր ահաբեկած, ան-
կարելի է:

— Ինչո՞ւ համար:

— Մէկը վրայ կուգայ:

— Օ՛ն, դո՛ւն ալ, պատասխանեց Նիգօլ արհամար-
հական ժպիտով մը, ո՛վ վրայ պիտի գայ: Օրիորդը,
բայց իրաւ, այս գեղեցիկ պարոնին համար նախանձե-
լու է: Օրիորդին համար դժբաղդութիւն մըն է որ
գաղտնիքնին երեւան ելլող մարդիկը վախցուելիք
մադիկ ըլլալէ կը դադրին այլեւս: Ա՛խ, օրիորդ Անտ-
րէն Նիգօլէն նախանձի՛, երբէք չեմ կրնար հաւատալ
այս պատուին:

Եւ բռնազբօսիկ ժպիտով մը մըրիկի պէս գոռալով
յանդիմանութենէ մը կամ սպառնալիքէ մը աւելի ա-
հաբեկեց ժիւլպէրը:

— Օրիորդէն բնաւ վախ չունիմ, Նիգօլ, և եթէ
կը վախնամ՝ այն ալ քեզ համար է, դիտել տուաւ
ժիւլպէր:

— Ո՛հ, այո՛, ճշմարիտ է, դուն ինձ միշտ ըսած
ես թէ ուր որ գայթակղութիւն չկայ՝ հոն չարիք ալ
չկայ: Փիլիսոփաները ճիշդութիւն են երբեմն: Անօճսիա-
տի տնօրէնուէին ալ ասանկ կ'ըսէր. ատոր համար
գիշերային ժամադրութիւններ կ'ընես օրիորդին հետ:
Օ՛ն, օ՛ն, ալ կը բաւեն այդ անհիմն պատճառները...
սենեակս պիտի գամ...:

— Նիգօլ, ըսաւ ժիւլպէր ակռաները կճռտելով:

— Է ետքը... ըսաւ դեռատի օրիորդը:

— Զգուշացի՛ր:

Եւ սպառնալից շարժում մը ըրաւ:

— Ո՛հ, չեմ վախնար, արդէն անգամ մը զիս ծե-
ծեցիր, բայց նախանձելուդ համար էր: Այն ատեն
զիս կը սիրէիր: Մեր մեղրալուսնէն ութը օր ետքն
էր, և ես ալ թողուցի որ ծեծես: Բայց այսօր չպիտի
թողում: Ո՛չ, ո՛չ, ո՛չ, որովհետեւ ա՛լ զիս չես սիրեր
և ես եմ նախանձողը այս անգամ:

— Է՛ ի՞նչ պիտի ընես, ըսաւ ժիւլպէր դեռատի աղջկան ձեռքը բռնելով:

— Ո՛հ, այնչա՛փ պիտի պոռամ որ օրիորդը պիտի հարցնէ քեզի թէ ի՞նչ իրաւամբ Նիգօլին կուտաս ինչ որ միայն իրեն կը պարտիս այս պահուն: Ուրեմն թո՛գ տուր զիս:

Ժիւլպէր Նիգօլի ձեռքը թողուց:

Յետոյ ելնարանը առնելով և զգուշութեամբ վերցնելով, չէնքին դուրսի կողմը կռթնցուց կերպով մը՝ ուրկէ Նիգօլի պատուհանը ելնել կարելի կ'ըլլար:

— Տես ի՞նչ բան է ճակատագիրը, ըսաւ Նիգօլ. սա ելնարանը որ հաւանականօրէն օրիորդին սենեակը մագլցելու պիտի ծառայէր, պարզապէս Նիգօլ Լըկէյին վերնայարկէն իջնելու պիտի ծառայէ: Ասիկայ զուարճալի բան մըն է ինձ համար:

Նիքօլ աւելի զօրաւոր կարծելով ինքզինքը, կ'աճապարէր յաղթանակը տանիլ կնոջական շտապումով մը, որով միշտ սուղի կը նստի այս վաղահազակ յաղթութիւնը իրենց, բացի այն պարագայէն ուր կ'իններ ինքզինքնին իրենց դիմացինէն աւելի գերիվեր կը կարծեն բարութեան կամ չարութեան մէջ:

Ժիւլպէր իր դիրքին ինկածութիւնը զգացեր էր, հետեւաբար դեռատի աղջկան հետեւեցաւ, բոլոր իր կարողութիւնները ի մի հաւաքելով նախապատրաստուող վէճին համար:

Եւ նախ իբրեւ զգուշաւոր մէկը, երկու բանի մէջ ապահովել ուզեց ինքզինքը:

Առ շուն՝ պատուհանին առջեւէն անցնելու ատենը նայեցաւ թէ օրիորդ Անտրէ դահլիճն էր:

Երկրորդ՝ Նիգօլի սենեակը մտնելով աչքէ անցուց թէ կրնա՞ր ելնարանին առաջին ստքը հասնիլ և վար սահիլ առանց պարանոցը կտրելու:

Պարզութեան կողմէ Նիգօլի սենեակն ալ տան միւս մասերէն տարբերութիւն մը չունէր:

Շտեմարան մըն էր ան՝ որուն պատը կանաչագոյն նկարներու մոխրագոյն թուղթի մը ներքեւ անյայտացեր էր: Սենեակին կարասին կը բաղկանար կաշիէ անկողինէ մը և լուսամուտին մօտ դրուած խորդենիէ մը: Անտրէ՝ Նիգօլին փոխ տուած էր նաեւ մեծկակ խաւաքարտ մը, որ միանգամայն դարանի և սեղանի տեղ կը ծառայէր անոր:

Նիգօլ անկողինն եզերքը և ժիւլպէր ալ խաւաքարտին ծայրը նստեցան:

Նիգօլ սանդուխէն վեր ելնելու ատեն հանգարտեր էր: Ինքն իր անձին տէրն ըլլալով՝ ինքզինքը զօրաւոր կը գտնէր: Ժիւլպէր ընդհակառակը առաջուան ցնցումներէն տակաւին դողալով՝ չէր կրնար իր անտարբերութիւնը ձեռք անցընել, և բարկութիւնը հետզհետէ կը սասկանար՝ տեսնելով որ դեռատի աղջիկը իր կամքին զօրութեամբը իր բարկութիւնը կը զսպէր:

Վայրկեանի մը լուռութենէ վերջ Նիգօլ հրացայտ և զայրալից ակնարկով մը ժիւլպէրին նայեցաւ:

— Ըսել է օրիորդը կը սիրես և զիս կը խաբե՞ս:

— Ո՞վ ըսաւ քեզի որ օրիորդը կը սիրեմ, ըսաւ ժիւլպէր:

— Բա՛հ, ժամագրութիւններ կուտաս անոր:

— Ո՞վ ըսաւ քեզի որ ժամագրութիւն տուած եմ անոր:

— Ո՞վ տեսնել կ'ուզէիր հոն, կախա՞րդը:

— Թերեւս. գիտես թէ ես փառասէր մըն եմ:

— Նախանձո՞տ ըսէ:

— Միեւնոյն բառն է որ աղէկ կամ գէշ կը թարգմանուի:

— Բանակուիւը բառակուիւի չդարձնենք: Ա՛լ չես սիրեր զիս, այնպէս չէ՞:

— Ընդհակառակը, միշտ կը սիրեմ:

— Ուրեմն ինչո՞ւ կը հեռանաս ինձմէ:

— Որովհետեւ երբ զիս տեսնես, կուի կը փնտռես:

— Ճի՛շդ է, քեզի հետ կուի կը փնտռեմ որովհետեւ իրար տեսնելէ ուրիշ բան չենք ընել:

— Ես միշտ անընտել և առանձնասէր եղած եմ, աղէկ գիտես ասիկայ:

— Այո՛, և սա մինակուկ սենեակը ելնարանով մը կ'ընեն... հէ՛... կը ներես, ասիկայ չէի գիտեր:

Ժիւլպէր հոս յաղթուած էր:

— Օ՛ն, օ՛ն, համարձակ խօսէ՛, եթէ կարելի է, ժիւլպէր, և խոստովանէ որ ա՛լ չես սիրեր զիս, կամ մեզ երկուքս մէկտեղ կը սիրես:

— Է՛ ուրեմն, եթէ անանկ ըլլար, ի՞նչ պիտի ըսէիր, ըսաւ ժիւլպէր:

— Պիտի ըսէի թէ առտարոց բան մը կ'ըլլար:

— Ո՛չ, այլ սխալ մը:

— Սրտի՞դ համար:

— Ո՛չ, մեր ընկենութեան: Ինչպէս որ գիտես, երկիրներ կան ուր իւրաքանչիւր մարդ մինչեւ եօթը ութը կ'ին կ'առնէ:

— Անոնք քրիստոնեայ չեն, պատասխանեց Նիգօլ անհամբերութեամբ:

— Փիլիսոփայ են, պատասխանեց ժիւլպէր վէսորէն:

— Ո՛հ, պարոն փիլիսոփայ, լաւ պիտի երեւո՞ր քեզի եթէ ես ալ քեզի պէս ընելով երկրորդ տարփաւոր մը գտնէի:

— Գու վրագ անիրաւութիւն և բռնութիւն բանեցնել չեմ ուզեր, և ոչ ալ քու սրտիդ շարժումները ճնշել... Սուրբ ազատութիւնը կամքերու ազատութիւնը յարգելու վրայ կը կայանայ... Փոխէ քու

սէրդ Նիգօլ, ես չեմ կրնար քեզ ստիպել հաւատարմութեան մը, որ ըստ իս, բնութեան մէջ չկայ:

— Ա՛հ, գոչեց Նիգօլ, ահա՛ զիս չես սիրեր:

Վիճարանութիւնը ժիւլպէրին նպաստաւոր էր ոչ թէ տրամաբանօրէն՝ այլ նորանշան կերպով մտածելուն համար: Ասկէ զատ որչափ որ քիչ բան գիտնար, նորէն Նիգօլէն աւելի գիտէր... Նիգօլ՝ միայն զուարճալի երեւցածը կարդացեր էր. ժիւլպէր՝ ոչ միայն զուարճալի երեւցածը՝ այլև օգտակար երեւցածն ալ կարդացեր էր:

Ժիւլպէր վիճարանելու ատեն կը սկսէր վերստին ձեռք ձգել այն անտարբերութիւնը զոր Նիգօլ կը կորսնցնէր աստիճանաբար:

— Յիշողութիւնդ սո՞ւր է, պարոն փիլիսոփայ, հարցուց Նիգօլ հեզնական ժպիտով մը:

— Է՛հ, երբեմն, պատասխանեց ժիւլպէր:

— Կը յիշե՞ս ինձ ըսածդ երբ օրիորդին հետ Անօն-սիատէն հոս եկայ ասկէ հինգ ամիս առաջ:

— Ո՛չ, բայց յիշեցո՞ւր:

— Այն օրը որ մէկտեղ Թանգի կը կարթայինք, հի դղեակին փլփլած կամարներէն մէկուն տակ, ինծի ըսիր՝ «խեղճ եմ»:

— Լա՛ւ, շարունակէ:

— Շատ կը դողայիր այն օրը:

— Կարելի է. երկչոտ բնաւորութիւն մը ո՛ւնիմ, բայց ձեռքէս եկածը կ'ընեմ որ այս սխալս ուղղեմ, ինչպէս ուրիշ սխալներս ալ:

— Այնպէս որ երբ բոլոր սխալներդ ուղղես անթերի՝ պիտի ըլլաս, ըսաւ Նիգօլ խնդալով:

— Գոնէ զօրաւոր պիտի ըլլամ, որովհետեւ իմաստութեանէն զօրութիւն կը ծնի:

— Ո՞ւր կարդացեր ես ասիկայ, եթէ կը հաճիս:

— Քեզի՛ ինչ: Կամարին տակը քեզի ի՞նչ կ'ըսէի, անոր դառնանք:

Նիգօլ կը զգար որ հետզհետէ իր ազդեցութիւնը կը կորսնցնէր :

— Լա՛ւ ուրեմն, ինձ կ'ըսէիր՝ « Խեղճ եմ, Նիգօլ, ոչ ոք զիս կը սիրէ, չեն գիտեր թէ հոս բան մը ունիմ » և սրտիդ կը զարնէիր ձեռքդ :

— Կը սխալիս, Նիգօլ, այդ բանը քեզի ըսած ատենս չէ թէ սրտիս՝ այլ գլխուս պէտք էի զարնել : Սիրտը՝ արիւնը անդամներուն ծայրերը մղելու սահմանուած ճնշիչ ջրհան մըն է : Փիլիսոփայական բանփոխութիւն մէջ կարգայ Սիւս յօգուածը :

Եւ ժիւլպէր մեծամտութեամբ կանգնեցաւ : Պալատ մօտ առջեւ խոնահեր էր, բայց Նիգօլին առջեւ կը բարձրանար :

— Իրաւունք ունիս, ժիւլպէր, իրօք գլխիդ կը զարնէիր : Գլխուդ զարնելով կ'ըսէիր՝ « շան մը պէս կը վարուին ինձ հետ հոս, և դարձեալ Մահօնը ինձմէ երջանիկ է », այն ատեն քեզի պատասխանեցիր թէ իրաւունք չունէին քեզ չսիրելով և եթէ դուն իմ եղբայրս ըլլայիր՝ ես քեզ պիտի սիրէի : Կարծեմ թէ սրտովս և ոչ թէ գլխովս քեզի այսպէս պատասխանեցիր : Բայց գուցէ ես կը սխալիմ, ես Փիլիսոփայական Բառգիրէր կարդացած չեմ :

— Սխալեր էիր, Նիգօլ :

— Այն ատեն զիս գրկիդ մէջ առիր՝ « Նիգօլ, դուն և ես որք ենք, ըսիր, մեր թշուառութեան և մեր վիճակին ոտորնութեան պատճառաւ եղբայրներէ աւելի ենք. սիրենք ուրեմն զիրար, Նիգօլ, իբրև ճշմարիտ եղբայրներ : Ասկէ զատ եթէ իրօք եղբայր ըլլայինք, ընկերութիւնը պիտի արգիլէր որ մենք իրար սիրենք այն սիրով որով կ'ուզեմ որ զիս սիրես » : Այս ըսելով զիս գրկեցիր :

— Կարելի է :

— Ըսածիդ վրայ կը խորհէի՞ր :

— Անշուշտ. գրեթէ միշտ մարդ բան մը ըսած ատենը անոր վրայ կը խորհի :

— Ուստի այսօ՞ր :

— Այսօ՞ր, անկէ ի վեր հինգ ամիս աւելի ապրած եմ, չգիտցածներս սորվեցայ... կը գուշակեմ որ տակաւին շատ բաներ չեմ գիտեր : Այսօր ուրիշ կերպ կը խորհիմ :

— Ուրեմն դուն խաբեբայ, ստախօս և կեղծաւոր մէկն ես, գոչեց Նիգօլ սրտմտած :

— Ոչ աւելի այն ճամբորդէն որուն ձորի մը մէջ կը հարցնեն թէ ի՞նչ գաղափար ունի գաւառին վրայ, և նոյն հարցումը կը կրկնեն անոր լերանը գագաթը հասած ատենը, այն լերան գագաթը որ իր տեսողութիւնը կը քողարկէր պահ մը առաջ : Աւելի ընդարձակ գաւառ մը կը տեսնեմ առջիս, անա՛ եղելութիւնը :

— Ըսել է ինձ հետ չի՞ պիտի ամուսնանաս :

— Ես երբէք ըսած չեմ որ քեզի հետ պիտի ամուսնանամ, պատասխանեց ժիւլպէր արհամարհանօք :

— Լա՛ւ, լա՛ւ, գոչեց նորտառի աղջիկը համբերութիւնը հատնելով, կարծեմ թէ Նիգօլ լըկէյ՝ Սէրաստիէն ժիւլպէրի չափ արժէք ունի :

— Ամէն մարդ արժէք ունի, ըսաւ ժիւլպէր. միայն թէ բնութիւնը կամ դաստիարակութիւնը այլ և այլ արժէքներ և տարբեր կարողութիւններ տուած է անոնց : Այս արժէքներուն կամ կարողութիւններուն ընդարձակման կամ նուազման համեմատութեամբ մարդիկ իրարմէ կը հեռանան :

— Ըսել կ'ուզես որ դուն ինչ աւելի մեծ կարողութիւն և արժէք ունենալով, ինձմէ կը հեռանաս :

— Բնականաբար, Դուն տակաւին չես տրամաբաներ, Նիգօլ, բայց արդէն կը հասկնաս :

Ժօզ. Պալս., քիւ 4—11. Բ.հր.Ն.Ք.

— Այո՛, այո՛, գոչեց Նիգօլ համբերութիւնը հատ-
նելով, այո՛, կը հասկնամ:

— Ի՞նչ կը հասկնաս:

— Կը հասկնամ որ դուն անպատիւ մէկն ես:

— Կարելի է: Շատերը վատթար բնազդուններով
կը ծնին, բայց կամքը կրնայ զանոնք ուղղել: Պ. Ժան-
ժաք Ռուսօն ալ վատթար բնազդուններու մէջ ծնած
էր, սակայն ինքզինքը ուղղած է: Ես ալ Պ. Ժան-ժաք
Ռուսօին պէս պիտի ընեմ:

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչպէս ա-
սանկ մարդ մը կրցեր եմ սիրել:

— Զիս չսիրեցիր, Նիգօլ, կրկնեց ժիւլպէո՛ պաղու-
թեամբ, ես քեզի հաճելի եղայ, ահա աս է ամէնքը:
Նանսիէն ելած էիր. հոն կղերցու արեղաներէ գատ
մէկը չէիր տեսած՝ որոնք միայն քու խնդուքդ կը
չարժէին, կամ զօրականներ՝ որոնք քեզի երկիւղ
կ'ազգէին: Երկուքնիս ալ դեռատի և անսեղ էինք,
երկուքնիս ալ բաղձանքներ ունէինք ա՛լ բաղձանք
չունենալու համար: Բնութիւնը իր անդիմադրելի ձայ-
նովը մեր մէջ կը խօսէր: Բան մը կը բրնկի մեր երակ-
ներուն մէջ երբ կը բաղձանք, անհանգստութիւն մը,
որուն դարմանը այնպիսի դիրքերու մէջ կը փնտռենք
որ մեզ աւելի անհանգիստ կ'ընեն: Այն գիրքերէն մէ-
կը կարգացած տտեննիս, զոր գիտես թէ ուսկից գը-
տանք, ոչ ես քննէ բան մը կ'ուզէի և ոչ դուն ինձի
բան մը կը մերժէիր, այլ մենք անոնց մէջ գտանք
անձանօթ գաղտնիքի մը լուծումը: Մէկ երկու ամիս
այս գաղտնիքին լուծումը երջանկութիւնը եղաւ: Մէկ
երկու և ըս ապրեցանք փոխանակ անգործ մնալու:
Ասկէ կրնա՞նք հետեւցնել որ երկու ամիս իրարմով
երջանիկ ըլլալնու համար յաւիտեանս իրարմով գըժ-
բազդ ըլլալու ենք: Օ՛հ, Նիգօլ, եթէ մէկը այդպիսի
գրաւ մը բռնէր երջանկութիւնը տալու և առնելու ա-

տեն, իր ազատ կամքը հրաժեշտ տուած կ'ըլլար իրեն
և ատիկայ ալ անտեղի բան մը պիտի ըլլար:

— Այս ըսածներդ փիլիսոփայութիւն են, հարցուց
Նիգօլ:

— Կարծեմ, պատասխանեց ժիւլպէր:

— Ուրեմն նուիրական բան չիկա՞յ փիլիսոփանե-
րուն համար:

— Այո՛, կայ, և ան ալ բանաւորութիւնն է:

— Ուրեմն ես որ առաքինի և պարկեշտ աղջիկ
մնալ կ'ուզէի...

— Ներողութիւն, բայց շատ ուշ մնացեր ես արդէն:

Նիգօլ գունատեցաւ և կարմրեցաւ, այնպէս որ
կարծես թէ ճախարակ մը անոր արեան իւրաքանչիւր
կաթիլը մարմնոյն մէկ ծայրէն միւսը կը տանէր:

— Քու ըսածիդ համեմատ պարկեշտ մնալ կ'ուզէի,
աւելցուց Նիգօլ: Կին մը միշտ առաքինի է, քանի
հաւատարիմ մնայ իր սիրտին ընտրածին, ըսիր զիս
սփոփելու համար: Ամուսնութեան վրայ ըրած այս
վարդապետութիւնդ կը յիշե՞ս:

— Ես միութիւններու վրայ խօսեցայ, Նիգօլ, իսկ
գալով ինձի երբէք չպիտի ամուսնանամ:

— Երբէք չպիտի ամուսնանա՞ս:

— Ո՛հ, ես գիտուն և փիլիսոփայ մը ըլլալ կ'ու-
զեմ: Արդ, գիտութիւնը մտքի և փիլիսոփայութիւնը
մարմնոյ առանձնութիւնը կը պատուիրէ:

— Պարո՛ն ժիւլպէր, դուն թշուառական մըն ես և
կարծեմ թէ Նիգօլ Լըկէյ քննէ աւելի արժէք ունի:

— Կա՛րճ կապենք, ըսաւ ժիւլպէր ոտքի ելնելով,
որովհետեւ դուն զիս նախատելով և ես ալ քեզ մտիկ
ընելով պարապ տեղը ժամանակ կը կորսնցնենք:
Դուն զիս սիրեր ես քեզ այնպէս հաճոյ թուելուն հա-
մար, այնպէս չէ՞:

— Անշո՛ւշտ:

— Է՛ ուրեմն, ատիկայ պատճառ մը չէ որ ես գժրադդ ըլլամ դուն քեզ հաճոյ երեւցածը ըրած ըլլալուդ համար:

— Անմի՛տը, կը կարծէ թէ շփոթած եմ և ինձմէ չվախնալ կը ձեւացնէ, ըսաւ Նիգօլ:

— Քննէ վախնա՞լ, քննէ՞ Նիգօլ: Ինչե՛ր ալ կ'ըսես, ի՞նչ կրնաս ընել ինձի: Նախանձը գլուխդ կը տաքցնէ կարծեմ:

— Նախա՞նձը, ե՞ս նախանձիմ, բացագանչեց դեռատի աղջիկը տենդային խնդուքով մը: Հա՛հ, հա՛հ, չարաչար կը սխալիս եթէ կը կարծես որ կը նախանձիմ: Եւ ի՞նչ բանէ նախանձիմ, խնդրեմ, ըսէ: Ամբողջ թաղին մէջ ինձմէ աւելի գեղեցիկ աղջիկ մը կա՞յ: Եթէ ձեռքերս օրիորդին ձեռքերուն պէս ձերմակ ըլլային, — ատիկայ ալ պիտի ըլլայ երբ ալ չաշխատիմ — միթէ օրիորդին չափ արժէք չի՞պիտի ունենայի: Մազե՞րս, մազերո՞ւս նայէ անգամ մը, ըսելով դեռատի աղջիկը մազերը բռնող կապը քակեց, մազերս ոտքէս մինչեւ գլուխս վերարկուի մը պէս զիս կրնան ծածկել: Յաղթ ու վայելուչ կազմուածք մը ունիմ, ի՞նչս պակաս է, Նիգօլ այս ըսելով թեւերը կախեց և մարմինը անոնց մէջ սեղմեց: Ակռաներս մագարիտի կը նմանին, ըսաւ և անկողնին վրայէն կախուած փոքրիկ հայելիին մէջ իր ակռաները դիտել սկսաւ: Երբ մասնաւոր ձեւով մը մէկու մը նայիլ կամ խնդալ ուզեմ, կը տեսնեմ որ այդ անձը իմ նայուածքիս ներքեւ կը կարմրի, կը սարսուայ և կը գալարուի: Ծշմարիտ է որ դուն իմ առաջին սիրահարս եղած ես, բայց դուն առաջին մարդը չես՝ որուն հետ քծնած ըլլամ: Տե՛ս, Ժիլպէր, շարայարեց դեռատի աղջիկը որ իր կցկտուր խնդուքներովը աւելի սոսկալի կ'երեւար քան իր սպառնալիքներովը, տե՛ս, կը խնդաս: Հաւատա՛ ինձ, զիս մի՛ ստիպիր քեզի հետ կռուելու, զիս մի՛ հաներ բոլորո-

վին այն նեղ շաւղէն, ուր կը մնամ տակաւին մօրս ինձ տուած խրատներուն չեմ գիտեր ո՛ր ազօտ յիշատակին, աղայութեանս աղօթքներուն չեմ գիտեր ո՛ր տափակ պատուէրին հետեւելով: Զգուշացի՛ր, Ժիլպէ՛ր, անգամ մը որ պարկեշտութիւնս կորսնցնեմ, ոչ միայն քեզ՝ այլ ուրիշներուն համար ալ յառաջ գալիք չարիքներուն պատճառն ու պատասխանատուն դո՛ւն եղած պիտի ըլլաս:

— Լա՛ւ, անա՛ որոշեալ բարձրութեան մը հասար, Նիգօլ, և ես բանի մը վրայ համոզում գոյացուցի, ըսաւ Ժիլպէր:

— Ի՞նչ բանի վրայ:

— Այսինքն՝ եթէ ես հիմայ հաւանէի քեզի հետ ամուսնալ...

— Ե՞տքը:

— Դուն պիտի մերժէիր:

Նիգօլ մտածել սկսաւ. յետոյ ձեռքերը գալարելով և ակռաները սեղմելով ըսաւ.

— Կարծեմ թէ իրաւունք ունիս, Ժիլպէր, կարծեմ թէ ես ալ կը սկսիմ վեր ելնել այն լեռնէն՝ որուն վրայ ինձ խօսեցար, կարծեմ թէ ես ալ կը տեսնեմ իմ հորիզոնիս ընդարձակուիլը, կարծեմ թէ ես ալ բան մը ըլլալու սահմանուած եմ, և արգարեւ ոչինչ բան մըն է գիտունի մը կամ փիլիսոփայի մը կիներ ըլլալ: Հիմայ քու երնարանի՛դ գնտ, Ժիլպէր, և նայէ որ գլուխդ չկտորես, թէպէտեւ իրաւունք ունիմ կարծելու թէ ատիկայ մեծ երջանկութիւն մը արտի՞ ըլլար ուրիշներուն և մինչեւ խի՛ քեզի համար:

Եւ դեռատի աղջիկը կռնակը Ժիլպէրին դարձնելով՝ սկսաւ վրան հանուիլ, որպէս թէ սենեակին մէջ մինակը եղած ըլլար:

Ժիլպէր պահ մը անշարժ, անսրոշ ու տատամտոտ մնաց, որովհետեւ Նիգօլ բանաստեղծական գրգռով

և նախանձի բոցով վառուելով՝ յանկուցիչ էակ մը եղած էր: Բայց ժիւլպէր ա՛լ Նիգօլէն բաժնուելու որոշումը տուած էր: Նիգօլ կրնար իր տափական զգացումներուն իշխել և միանգամայն վնասարեք ըլլալ իր փառասիրական ցանկութիւններուն:

Ժիւլպէր գիմադրեց:

Քանի մը բոպէ ետքը Նիգօլ ա՛լ ձայն չառնելով՝ ետին գարձաւ:

Սենեակին մէջ իրմէ զատ մարդ չիկար:

— Գացեր է, մրմնջեց գեռատի աղջիկը, գացեր է:

Դէպի պատուհանը գնաց. ամէն կողմ մութ էր.

ճրագները մարած էին:

— Հապա օրի՞րդը, ըսաւ Նիգօլ:

Եւ գեռատի աղջիկը սանգուխէն վար իջաւ ոտքին ծայրերուն վրայ կոխելով, տիրուհիին սենեակին դրանը մօտեցաւ և մտիկ ըրաւ:

— Լա՛ւ, ըսաւ իւրովի, պառկեր է ու կը քնանայ:

Վա՛ղը: Ա՛խ, կ'ուզէի գիտնալ թէ կը սիրէ՞ զայն:



ԺԱ.

ՏԻՐՈՒՇԻ ԵՒ ՍԵՆԵԿԱՊԱՆՈՒՇԻ

Նիգօլ իր սենեակը մտած էր հանգարտութիւն կեղծելով, բայց ի ներքուստ բոլորովին յուզուած էր: Դեռատի աղջիկը բոլոր այս անառակութեան և կեղծուած խտութեան մէջ՝ միայն գոռոզ մեծխօսիկութեամբը վտանգաւոր ու դձուձ կ'երեւար: Նիգօլ ի բնէ խառնակ երեւակայութիւն մը ունէր և միտքը ապականած էր յուր ընթերցանութիւններով: Այս ապականած մտքին և խառնակ երեւակայութեան զուգաւորութիւնը իր հրաբորբոք զգայարանքները ոտքի հանած էր: Նիգօլ չոր ու ցամաք հոգի մը չէր կրեր. և եթէ իր վրայ մեծ ազդեցութիւն բանեցնող անձնասիրութեամբը երբեմն կը յաջողէր իր արցունքները աչքերուն մէջէն խկ հտ մղել, այդ արցունքը չէր չորնար, այլ ուժգին ու սարսափելի նահանջով մը սրտին վրայ կ'իյնար հալած կապարի կարմրած կաթիլներու պէս: Վշտին գետակը դէպի սիրտը կը հօսէր:

Անոր մէկ ցոյցը միայն նշանուէր և իրական եղած էր: Եւ ասիկայ այն արհամարհոտ ժպիտն էր, որով ժիւլպէրի առաջին նախատինքներուն պատասխանած էր. այդ ժպիտը իր սրտին վէրքերը կը մատնէր: Ինչքան որ Նիգօլ առաքիլնի և սկզբունք ունեցող աղջիկ մը չէր, բայց իր յաղթուելուն կարեւորութիւն տուած էր, և իր անձը ժիւլպէրի յանձնելով, անոր նուէր մը ըրած ըլլալ կարծած էր: Ժիւլպէր իր անտարբերու-

Թեամբն ու անհամութեամբը անարգ մէկը կ'երեւէր այժմ Նիգօլին: Այս վերջինը իր սխալովը պատժուեր և պատիժին կսկիծը անխնայ զգացեր էր: Սակայն խարազանին տակէն ելնելով՝ երգում ըրաւ ժիւլպէրին իրեն հասցուցած չարիքին փոխարէնը հատուցանել եթէ ոչ անոր չափ՝ գէթ մասամբ:

Մասաղատի, առոյգ և հուժկու Նիգօլ՝ ունէր նաև մոռնալու յատկութիւն մը՝ որ խիտ թանկագին է աւնոնց համար որոնք զիրենք սիրողներուն վրայ իշխել կ'ուզեն:

Գեղանի սենեկապանուհին քնացաւ իր վրէժխընդ-րութեան յատկագիծը կարգի դնելէն ետքը բոլոր այն սատանաներուն հետ, որոնք զինքը կը պատուէին իր տասնընթեքը տարեկան փոքրիկ սրտին մէջ բնակելով:

Ժիւլպէրին չափ և անկէ աւելի յանցաւոր կ'երեւար օրիորդ Թավէրնէյը իր աչքին:

Ազնուական, նախապաշարեալ, հպարտութեամբ փքացեալ աղջիկ մը որ նանսիի մենաստանին մէջ եր-րորդ դէմք կը դործածէր իշխանուհիներուն, դուք գբուհիներուն, դուն մարքիզուհիներուն և ոչինչ աւելի ստորիններուն: Երեւութապէս պաղ՝ այլ մար-մարեայ կեղեւին ներքեւէն զգայուն արձան մը կը նկատէր զայն. այս արձանը խիտ ծաղրաշարժ և գձուձ կ'երեւէր իրեն՝ անոր համար որ ժիւլպէրի պէս գեղ-ջուկ Բիգմալիսնի (*) մը կ'ինը պիտի ըլլար:

(*) Ըստ դիցաբանութեան, Կիպրոս կղզիին մէջ երեւելի քանդակագործ մըն էր Բիգմալիոն, որ ուխտած էր ամուրի մնալ, որմէ վրէժ լուծեց Ասղիկ բորբոսալի տիպի ը մասնելով զայն իր քանդակած փղոսկրե շէնդ արձաններէն միոյն: Բիգմալիոնի աղօթքներովը Ասղիկ կենդանութիւն շնորհեց այդ արձանին և Բիգմալիոն զայն իրեն կնութեան առաւ: Ծ.Ն.

Հարկ է ըսել թէ Նիգօլ այն պնիւ զգացումով զոր բնութիւնը տուած է կանանց, միայն խելքով ստորին կը գտնէր ինքզինքը ժիւլպէրէն, իսկ ուրիշ ամէն բանի մէջ անկէ վեր կը դասէր ինքզինքը: Եթէ այն մտքի առաւելութիւնը չըլլար, զոր իր սիրահարը հինգ վեց տարուան ընթերցանութեամբն ստացեր էր, ինքը՝ կործանեալ սեպուհի մը սենեկապանուհին, իր անձին անարժան գործ մը ըրած պիտի ըլլար գիւղացի մը ամուսին առնելով:

Ի՞նչ պիտի ընէր տիրուհին եթէ իրօք ժիւլպէրը առնէր:

Նիգօլ մտածեց թէ տեսնել կարծածը, զոր իրօք տեսած ըլլալ կ'ենթադրէր, Պ. Թավէրնէյին պատմելը ահագին սխալ մը պիտի ըլլար, նախ՝ Պ. Թավէրնէյի բնաւորութեան պատճառաւ, որ ժիւլպէրը ապտակելէն և վռնտելէն ետքը այս եղելութեան վրայ պիտի խընդար, ապա՝ ժիւլպէրին բնաւորութեան պատճառաւ, որ այս վրիժառութիւնը գձուձ և անարգ պիտի գտնէր:

Բայց Անտրէի սրտին մէջ ժիւլպէրը տառապեցնելը, երկուքին վրայ ալ իրաւունք մը ստանալ, սենեկապանուհիի նայուածքին ներքեւ անոնց տփզուներն ու կարմրիլը տեսնել, բացարձակ տիրուհի մը ըլլալ և գուցէ ժիւլպէրին վնասել տալ այն համբոյրը որ իր ձեռքին վրայ դրոշմուած էր: Ահա այս մտածութիւնը իր երեւակայութիւնը զրգուեց, իր հպարտութիւնը դրգուեց, և այս որոշումը իրեն աւելի նպոտտաւոր կ'երեցաւ:

Ապա քնացաւ:

Արեւը ելեր էր երբ արթնցաւ, կայտառ, թեթեւ և կորվալիւր. զարգարանքը սովորականին չափ տեսեց, այսինքն ժամ մը, որովհետեւ իր երկայն մազերը իրարմէ զատելու համար միայն իր ձեռքէն նուազ ճար-

տար կամ աւելի զգուշաւոր ձեռք մը կրկին ժամանակը պիտի վատնէր :

Նիգօլ այն անազազօծ եռանկիւն ապակիին մէջ նայեցաւ , որուն վրայ քիչ մը առաջ խօսեցանք , որ հայելիի տեղ կը ծառայէր : Իր աչքերը ամէն ատենէ աւելի գեղանի երեւցան իրեն : Այս քննութիւնը շարունակեց և աչքերէն բերանին անցաւ . շրթունքները բնաւ տժգունած չէին և նրբածեւ ու թեթեւակի քիթի մը ստուերին ներքեւ կեռասի նման բոլորակ ձեւ մը ունէին . իր պարանոցը , որուն մեծ խնամք կը տանէր արեւին համըրյններէն զերծ պահելու համար , շուշանի մը սպիտակութիւնը ունէր , կուրծքը հրաշագեղ , իսկ հասակը սքանչելի ձեւով կորածեւ էր :

Նիգօլ ինքզինքը չափազանց գեղեցիկ գտնելով՝ մտածեց թէ պիտի կրնար դիւրաւ Անտրէի նախանձը գրգռել : Ինչպէս որ կը տեսնուի , Նիգօլ բոլորովին անբարոյացած չէր , որովհետեւ հաճոյք մը կամ յօժարութիւն մը միտքէն չէր անցեր տակաւին , և այս խորհուրդը միտքը ինկեր էր կարծելով որ օրիորդ Թավէրնէյ կրնար թիւլպէրը սիրել :

Նիգօլ այսպէս Ֆիզիքսպէս և բարոյապէս զինուելով՝ Անտրէի սենեակին դուռը բացաւ : Սենեկապանուհին իր տիրուհիէն հրաման ստացած էր արթնցնել զինքը եթէ մինչեւ ժամը եօթը անկողինէն չելնէր :

Նիգօլ սենեակէն ներս մտնելուն պէս կանգ առաւ : Անտրէ , տժգոյն և ճակատը քրտինքով ծածկուած , որուն մէջ իր ծփուն մազերը կը լողային , անկողին վրայ տարածուած էր , դժուարաւ շունչ կ'առնէր և իր ծանր քուրն մէջ թախծալի վիշտ մը ցուցնելով կը գալարուէր :

Անկողին սաւանները իր կիսամերկ բուժերուն տակ ոլոր ոլոր հանգրիծած , ճմրթկուած էին : Այդ անկարգ դիրքին մէջ , որ իր յուզմունքը երեւան կը հանէր ,

մէկ այտը բազուկին կռթնցուցած և միւս ձեռքը մարմարեայ կուրծքին վրայ սեղմած կը քնանար :

Երբեմն շնչառութիւնը դադարելով ցաւազին խորգիւն մը կը հանէր և անկապակից հեծեծանք մը կ'արձակէր :

Նիգօլ լուութեամբ զայն վայրկեան մը դիտեց և գլուխը թօթվեց : Ինքնիրեն իրաւունք կուտար և կը հասկնար թէ չկար գեղեցկութիւն մը որ կարենար Անտրէի գեղեցկութեան հետ մրցիլ :

Յետոյ դէպի պատուհանը գնաց և փայտէ փեղկը բացաւ :

Իսկոյն լոյսի հեղեղ մը սենեակէն ներս խուժեց և օրիորդ Թավէնէյի մանիչակագոյն արտեւանունքը դուրս ցուցաւ :

Անտրէ արթնցաւ և ոտքի ելնելով այնպիսի սաստիկ յոգնութիւն մը և միանգամայն սուր ցաւ մը ըզգաց որ վերստին բարձին վրայ ինկաւ ձիչ մը արձակելով :

— Ո՛հ , Աստուած իմ , ըսաւ Նիգօլ , ի՞նչ ունիք օրիորդ :

— Ժամանակը ս՛ւշ է , հարցուց Անտրէ աչքերը չփեղկով :

— Շա՛տ ուշ . օրիորդը սովորականէն ժամ մը աւելի մնաց անկողին մէջ :

— Չեմ գիտեր թէ ինչ ունիմ , Նիգօլ , ըսաւ Անտրէ ուր ըլլալը հասկնալու համար բոլորտիքը նայելով : Կարծես թէ թմրեր եմ , կուրծքս խորտակուեր է :

Նիգօլ պատասխան տալէ առաջ աչքերը Անտրէի վրայ սեւեռեց :

— Հարբուի սկզբնաւորութիւն մը վատտկած ըլլալու է օրիորդը այս գիշեր , ըսաւ :

— Այո գիշեր , պատասխանեց Անտրէ զարմանօք :

Ո՛հ, ըսաւ իր հագուստին անկարգ վիճակը նկատելով, չե՞մ հանուեր: Ա՛ս ի՞նչ է:

— Է՛հ, թող օրիորդը միտքը բերէ:

— Միտքս բան մը չի գար, ըսաւ Անտրէ երկու ձեռքովը ճակատը բռնելով: Ի՞նչ եկած է գլխուս, տարօրինակ բան:

Իր նստած տեղը կանգնեցաւ ու անգամ մըն ալ գրեթէ ապշուածեամբ իր շուրջը դիտեց:

Յետոյ ձիգ մը ընելով աւելցուց.

— Ա՛հ, այո՛, կը յիշեմ, երէկ շատ յոգնեցայ... անշուշտ փոթորիկին պատճառաւ, յետոյ...

Նիգօլ մատովը անկողինը ցուցուց, որ կոխկոտուած էր, բայց հակառակ անկարգ վիճակին, վերմակը գոց էր:

Անտրէ ձայն չհանեց, այն օտարականին վրայ կը խորհէր որ առջի գիշեր այնպիսի տարօրինակ կերպով իրեն նայեր էր:

— Յետոյ... հարցուց Նիգօլ, շահագրգռուած: Կ'երեւի թէ օրիորդին միտքը բաներ մը կ'իյնայ:

— Յետոյ, կրկնեց Անտրէ, դաշնակիւս աթոռակին վրայ քնացայ: Այդ վայրկեանէն ետքը ա՛լ բան մը չեմ յիշեր: Կ'երեւայ թէ կէս մը քնացած սենեակս ելած եւ անկողնիս մէջ նետուած ըլլալու եմ առանց հանուելու կարողութիւն ունենալու:

— Զիս կանչելու էիք, օրիորդ, ըսաւ Նիգօլ քաղցր ձայնով մը, միթէ օրիորդին սենեկապանուհին չե՞մ:

— Կ'երեւի թէ միտքս չէ եկեր կամ ուժ չեմ ունեցեր քեզ կանչելու, ըսաւ Անտրէ անկեղծ ուղղամբ տուածեամբ մը:

— Կեղծաւո՛ր, մըմնջեց Նիգօլ իւրովի:

Յետոյ յարեց բարձրաձայն.

— Ըսել է օրիորդը դաշնակին քով շատ կեցեր է,

որովհետեւ օրիորդը դեռ սենեակ չմտած վարէն ձայն առնելով իջայ:

Հոս Նիգօլ կանգ առաւ յուսալով որ Անտրէի մէկ շարժումը, նշանը կամ կարմրութիւնը կը բռնէ. բայց Անտրէ անխռով մնաց, իր դէմքին յստակ հայելիէն հոգիին խորը կարելի էր տեսնել:

— Վար իջայ... կրկնեց Նիգօլ:

— Ե՛տքը, հարցուց Անտրէ:

— Օրիորդը դաշնակին քովը չէր:

Անտրէ գլուխը վեր առաւ, բայց իր գեղանի աչքերուն մէջ զարմանքէն ուրիշ բան մը կարդալ կարելի չեղաւ:

— Ի՞նչ տարօրինակ բան, ըսաւ:

— Այնպէս է:

— Կ'ըսես որ դահլիճը չէի, մինչդեռ հոնկէ դուրս չեկայ:

— Օրիորդը թող ինձի ներէ, յարեց Նիգօլ:

— Ուրեմն ո՛ւր էի:

— Օրիորդը ինչ աղէկ պիտնալու է ատիկայ, աւելցուց Նիգօլ գլուխը թօթվելով:

— Կարծեմ թէ կը սխալիս, Նիգօլ, ըսաւ Անտրէ ծայր աստիճան քաղցրութեամբ: Ես աթոռակէս չբաժնուեցայ: Միայն սա կը յիշեմ որ մտեցայ, ծանրութիւն եւ քալելու մեծ դժուարութիւն զգացի:

— Ո՛հ, ըսաւ Նիգօլ հեղնական ժպիտով մը, օրիորդը տեսած ատենս շատ աղէկ կը քալէր:

— Դուն զիս տեսա՞ր:

— Այո՛, անշուշտ:

— Սակայն քիչ մը առաջ կ'ըսէիր թէ դահլիճը չէի:

— Որովհետեւ օրիորդը դահլիճին մէջ չտեսայ:

— Հապա ո՛ւր տեսար:

- Գաւիթը, սանդուխին մօտ :
- Զի՞ս, ըսաւ Անտրէ սպշահար :
- Նոյն ինքն օրիորդը, կարծեմ օրիորդը աղէկ կը ճանչնամ, ըսաւ Նիգօլ միամտական կեղծ ժպիտով մը :
- Սակայն ես վստահ եմ որ դահլիճէն դուրս չելայ, կրկնեց Անտրէ պարզամտութեամբ և յիշողութիւնը քրքրելով :
- Իսկ ես ապահով եմ օրիորդը գաւիթը տեսնելուս վրայ, պնդեց Նիգօլ : Մտածեցի նաեւ թէ օրիորդը պարտէզը չըջագայելէ կը վերադառնար, աւելցուց ուշադրութիւնը կրկնապատկելով : Երէկ գիշեր փոթորիկէն վերջ օդը շատ գեղեցիկ էր : Գիշեր ատեն շրջագայելը խիստ զուարճալի բան է, օդը աւելի զով կ'ըլլայ, ծաղիկները աւելի անուշ կը հոտին, այնպէս չէ՞, օրիորդ :
- Բայց դուն գիտես որ գիշերը կը վախնամ միշտակա շրջագայիլ :
- Բայց մարդ մէկու մը հետ կրնայ շրջագայիլ, և այն ատեն ա'լ վախնալու բան չմնար, դիտել տուաւ Նիգօլ :
- Եւ որո՞ւ հետ կրնամ շրջագայած ըլլալ, ըսաւ Անտրէ առանց իր սենեկապանուհիին հարցումներուն մէջ հարցափորձ մը տեսնելու :
- Նիգօլ յարմար չգտաւ հարցափորձը աւելի առաջ տանիլ : Անտրէի անտարբերութիւնը, որ կեղծաւորութեան լրումն ըլլալ կը թուէր իրեն, վախ կուտար անոր :
- Ուստի խոհեմութիւն սեպեց խօսակցութեան ուրիշ դարձուածք մը ալ :
- Օրիորդը քիչ մը առաջ ըսաւ որ կը նեղուի :
- Այո՛, իրաւ շատ կը նեղուիմ, պատասխանեց Անտրէ շատ յոգնած եմ և ինքզինքս տկար կը զգամ, բայց պատճառը չեմ գիտեր : Երէկ իրիկուն սովորա-

- կանէն դուրս գործ մը չտեսայ : Արդեօք պիտի հիւանդանա՞մ :
- Ո՛հ, օրիորդ, մարդ երբեմն վիշտեր կ'ունենայ, ըսաւ Նիգօլ :
- Լաւ, ե՞տքը :
- Լաւ ուրեմն, վիշտերն ալ յոգնութեան յառաջ բերած արդիւնքը կ'արտադրեն : Ես փորձով համոզուած եմ :
- Լաւ, ըսել է վիշտը ունիս, դո՞ւն, Նիգօլ :
- Անտրէ այս խօսքերը այնպիսի անփոյթ արհամարհանքով մը ըսաւ որ՝ Նիգօլ սիրտ առնելով իր խոհականութեան մէկ մասը ջնջել փորձեց :
- Անշուշտ, օրիորդ, պատասխանեց Նիգօլ աչքերը խոնարհեցնելով, այս, վիշտ ունիմ :
- Անտրէ անկողնէն վար իջաւ անփութօրէն և վերստին հագուելու համար հանուած միջոցին ըսաւ .
- Պատմէ՛ տեսնենք :
- Ես ալ օրիորդին քով կուգայի իրեն պատմելու համար . . .
- Հոս կանգ առաւ :
- Ի՞նչ պիտի ըսէիր ինձ : Տարօրինա՞կ բան, որքան խռովեր ես, Նիգօլ :
- Իմ դէմքս խռոված է ինչպէս որ օրիորդինը գունատած, կասկած չիկայ որ երկուքնիս ալ վիշտեր, կսկիծներ ունինք :
- Այս « երկուքնիս » ը Անտրէի հաճոյ չթուեցաւ, յօնքերը պոստեց և բացագանչեց .
- Վա՛յ :
- Բայց Նիգօլ չզարմացաւ այս բացագանչութեան վրայ :
- Քանի որ օրիորդը կը փափաքի մտիկ ընել, պատմել կը սկսիմ :
- Օ՛ն, պատասխանեց, Անտրէ :

— Ամուսնանալ կը փափաքիմ, օրիորդ, շարայա-
րեց Նիգօլ:

— Բա՛, ըսաւ Անտրէ... ամուսնանալու վրայ կը
խորհիս, բայց տակաւին տասնըեթը տարու չկաս:

— Օրիորդն ալ տասնըվեց տարեկան է:

— Լա՛ւ, կ'տքը:

— Լաւ ուրեմն, թէպէտ օրիորդը տասնըվեց տա-
րեկան է, ամուսնանալու վրայ չի՞ խորհիր երբեմն:

— Ինչէ՞ն կը հետեւցնես ատիկայ, հարցուց Անտրէ
խստիւ:

Նիգօլ բերանը բացաւ անպատշաճ բառ մը ըսելու
համար բայց Անտրէն կը ճանչնար, կը հասկնար թէ
ատով կէս ճամբան թողած պիտի ըլլար բացատրութիւն
մը զոր տակաւին չէր ամբողջացուցած, ուստի միտքը
փոխեց:

— Արդարեւ օրիորդին խորհածը չեմ կրնար գիտ-
նալ, ես գեղջկուհի մըն եմ ու բնութեան օրէնքին կը
կը հետեւիմ:

— Ահա տարօրինակ խօսք մը:

— Ի՞նչ, միթէ բնական բան չէ՞ մէկը սիրել և ան-
կէ սիրուիլ:

— Թերեւս, կ'տքը:

— Լաւ ուրեմն, ես ալ մէկը կը սիրեմ:

— Եւ այդ մէկը քեզ կը սիրէ՞:

— Կարծեմ այո՛, օրիորդ:

Նիգօլ հասկցաւ որ կասկածելի պատասխան մը աղ-
դու չպիտի ըլլար, և թէ այսպիսի պարագայի մը մէջ
հաստատական պատասխան մը պէտք էր տալ:

— Ա՛յնքն ապահով եմ, շարայարեց:

— Շատ աղէկ, կարծեմ թավէրնէյէն զտառուիլ է
նպատակդ:

— Պէտք է ապագային վրայ խորհիլ, Դուք որ օրիորդ
մըն էք, անչուշտ հարուստ ազգականնէ մը ստացուածք

մը պիտի ժառանգէք. ես որ ազգական չունիմ միայն
գտածս պիտի ժառանգեմ:

Եւ որովհետեւ Անտրէ այս բոլորին մէջ տարօրինակ
բան մը չէր գտած, անպատշաճ կերպով արտասան-
ուած խօսքերը մոռցաւ և ընդոծին բարութեամբ մը
ըսաւ:

— Իրա՞ւ, որո՞ւ հետ պիտի ամուսնանաս:

— Ո՛հ, այնպիսի մէկու մը հետ որ օրիորդը լաւ
կը ճանչնայ, պատասխանեց Նիգօլ, իր գեղանի աչ-
քերը Անտրէին աչքերուն վրայ սեւեռելով:

— Ես կը ճանչնամ:

— Կատարելապէս:

— Ո՞վ է ան, օ՛հ, ըսէ, զիս բաւական յոգնեցու-
ցիր:

— Կը վախնամ որ ընտրութիւնս օրիորդին հաճելի
չթուի:

— Ի՞նչ:

— Այո՛:

— Ըսել է դուն անգամ անյարմար կը դատես ա-
տիկայ:

— Ատ ըսել չեմ ուզեր:

— Լաւ ուրեմն, այն ատեն առանց վախի ըսէ թէ
ո՞վ է. ատէրերու պարտքն է հոգ տանիլ իրենց լաւ
ծառայողներուն վրայ, և ես գոհ եմ քեռէ:

— Օրիորդը շատ բարեսիրտ է:

— Ըսէ ուրեմն և վերջացուր:

Նիգօլ իր բոլոր զօրութիւնը և ուշադրութիւնը ի
մի հաւաքելով ըսաւ:

— Լաւ ուրեմն, ժիւլպէրն է ան...:

Ի մեծ զարմացում Նիգօլի՝ Անտրէ անտարբեր մնաց:

— Ժիւլպէ՞ր, պզտի՞կ ժիւլպէրը, սանտուխ որդի՞ն:

— Նոյն ինքն, օրիորդ:

Ժօզ. Պալս., քիւ 4—12. Բ.հր.Ն.Ք.

- Ի՞նչ, այն տղուն հե՞տ պիտի ամուսնանաս :
- Այո՛, օրիորդ, անո՛ր հետ :
- Է՛ ան քեզ կը սիրէ՞ :
- Նիգօլ կարծեց թէ որոշիչ վայրկեանին հասած է :
- Ատիկայ քսան անգամ կրկնած է ինձ, պատասխանեց :
- Լաւ ուրեմն, ամուսնացիր հետը, ըսաւ Անտրէ հանդարտութեամբ. ես արգելք մը չեմ տեսներ ատոր մէջ : Դուն ազգական չունիս, ան ալ որբ է, իւրաքանչիւրդ ձեր ճակատագրին տէրն էք :
- Անչո՛ւշտ, թոթովեց Նիգօլ բոլորովին ապշած, տեսնելով որ իր կանխատեսութիւնները հիմնովին ներհակ էին իրողութեան : Ի՞նչ, օրիորդը հրաման կուտայ :
- Կատարելագէս. միայն թէ երկուքնիդ ալ տակաւին շատ դեռատի էք :
- Ժամանակէ մը վերջը մէկտեղ ապրուստնիս պիտի ճարենք :
- Երկուքնիդ ալ հարուստ չէք :
- Պիտի աշխատինք :
- Ժիւլէր ի՞նչ գործ պիտի ընէ, ան ոչ մէկ բանի յարմարութիւն ունի :
- Յլ այս անգամ Նիգօլ չկրցաւ ինքզինքը զսպել. այսչափ կեղծաւորութիւն զինքը զայրացուցած էր :
- Օրիորդը թող ներէ ինձ իրեն ըսելու որ շատ գէշ կը վարուի տա խեղճ Ժիւլէրին հետ, պատասխանեց :
- Է՛հ, ըսաւ Անտրէ, բը արժանիքին համեմատ կը վարուիմ հետը, ծոյլ մըն է ան :
- Ո՞հ, օրիորդ, միշտ կը կարգայ և ուսանելէ զատ բան չուզեր ան :
- Չարասիրտ մէկն է, շարայարեց Անտրէ :
- Բայց օրիորդին համար այնպէս չէ միշտ, պատասխանեց Նիգօլ :

- Ի՞նչպէս :
- Օրիորդը ինչ աղէկ գիտէ, ինք որ անոր որս կ'ապսպրէ կերակուրին համար :
- Ե՞ս :
- Եւ որուն համար երբեմն տասը փարոսիս կը քալէ խեղճ տղան առանց որս մը գտնելու :
- Կը խոստովանիմ որ ամենափոքր ուշադրութիւն մը իսկ չեմ ըրած :
- Որսի՞ն... , ըսաւ Նիգօլ ծաղրական ժպիտով մը : Անտրէ գուցէ այս կատակին վրայ խնդար և իր սենեկապանուհիին հեգնութեանց մէջ եղած լեղին չի գուշակէր, եթէ իր մտքին սովորական տրամադրութեան մէջ գտնուէր :
- Բայց իր ջիղերը չափէն աւելի զարնուած նուագարանի մը լարերուն պէս կը դողային : Զղային ցնցումներ կ'ունենար ամէն անգամ որ կամք մը յայտնել կամ շարժում մը ընել կ'ուզէր : Մտքի ամենափոքր յուզմունք մը դժուարութիւն մըն էր, զոր հարկ կ'ըլլար յաղթել : Մեր օրերուն ոճովը խօսելով, պիտի ըսէինք թէ Անտրէ ջղային եղած էր :
- Ի՞նչ ըսել կ'ուզէ սա հանճարեղ օրիորդը, հարցուց Անտրէ յանկարծ գրգռուելով և անհարբութեան հետ ստանալով նաեւ այն սրամտութիւնը զոր իր թուլութեանը պատճառաւ չէր կրցեր ունենալ տեսարանին սկիզբէն :
- Ես հանճարեղ չեմ, օրիորդ, ըսաւ Նիգօլ՝ չանճարը մեծ տիկիներուն համար կարեւորութիւն ունի : Ես հէզ աղջիկ մըն եմ և եղածը անկեղծութեամբ կը պատմեմ :
- Ի՞նչ է եղածը, տեսնե՛նք :
- Օրիորդը կը զրպարտէ Ժիւլէրը, մինչդեռ այս տղան անոր հրամանները հաճոյքով կը կատարէ : Ահա այս է եղածը :

— Իբրև ծառայ իր պարտականութիւնը կը կատարէ, ե՞տքը :

— Բայց ժիւլէր ծառայ չէ, օրիորդ. անոր բան մը չվճարուիր :

— Մեր վաղեմի ազարակապաններուն որդին է. հոս անոր մտունդ և բնակութիւն կը տրուի. ան բան մը չընէր ատոնց փոխարէն. աւելի գէշ անոր համար, որովհետեւ գողցած կ'ըլլայ զանոնք: Բայց խօսքդ ո՞ւր կ'ուզես բերել և ի՞նչ հարկ կայ այդքան եռանդով պաշտպանել այդ տղան քանի որ անոր վրայ յարձակող մը չկայ :

— Ո՛հ, ես լաւ գիտեմ որ օրիորդը չյարձակիր անոր վրայ, ըսաւ Նիգօլ փշալից ժպիտով մը, այլ քնդհակառակը :

— Ահա այս խօսքերն ալ չեմ հասկնար :

— Որովհետեւ օրիորդը հասկնալ չուզեր անշուշտ :

— Կը բաւէ՛, օրիորդ, ըսաւ Անտրէ խօսիւ. հիմայ պէտք է բացատրես ինչ ըսել ուզելդ :

— Ճշմարիտ կ'ըսեմ որ օրիորդը ինձմէ աղէկ գիտե ինչ ըսել ուզելս :

— Ո՛չ, բան մըն ալ չեմ գիտեր, և մտնաւանդ բան մը չեմ կուտեր, քու ըսած հանելուկներդ գուշակելու ժամանակ չունիմ: Ինձ կը հարցնես թէ ամուսնութեանդ հաւանութիւն կուտամ, այնպէս չէ՞ :

— Այո՛, օրիորդ, և կ'աղաչեմ որ ժիւլէրը զիս սիրելուն համար օրիորդը ռիս չկապէ ինձի գէմ :

— Ժիւլէրին քեզ սիրելը կամ չսիրելը ինձի ի՞նչ փնաս կրնայ տալ: Իրա՛ւ որ զիս անհանգիստ կ'ընես, օրիորդ Նիգօլ :

Նիգօլ՝ իր բեռերուն վրայ կանգնող պզտիկ աքաղաղի մը պէս՝ փոքրիկ ոտքերուն վրայ բարձրացաւ. երկար ատեն զսպուած բարկութիւնը վերջապէս երեւան ելաւ :

— Գուցէ օրիորդը ժիւլէրին ալ միեւնոյն բանն ըսած ըլլայ :

— Ես քու ժիւլէրիդ հետ կը խօսի՛մ. հանգա՛րա թող զիս, օրիորդ, խե՛նթ ես, ի՞նչ ես :

— Եթէ օրիորդը այժմ չխօսիր անոր հետ, չեմ կարծեր որ շատոնց ի վեր անոր երեսը տեսած չըլլայ :

Անտրէ գէպի Նիգօլը յառաջացաւ և արհամարհական վէս նայուածքով մը անոր նայեցաւ :

— Ժամէ մը ի վեր թշնամալից խօսք մը կը պտտի բերնիդ մէջ: Վերջացո՛ւր ալ :

— Բայց... ըսաւ Նիգօլ յուզուած :

— Ժիւլէրի հետ խօսե՛ր եմ, ըսիր :

— Այո՛, օրիորդ :

Անտրէի միտքը խորհուրդ մը ինկաւ զօր մինչեւ այն ատեն անկարելի նկատած էր :

— Բայց այս թշուառականը կը նախանձի, գոչեց վերջապէս Անտրէ քրքիջ մը արձակելով: Ապահով եղիր, իմ խեղճ Լըկէյս, ես քու ժիւլէրիդ նայած չունիմ, և մինչեւ անգամ չեմ գիտեր թէ ի՞նչ գոյն են անոր աչքերը :

Եւ Անտրէ ներելու պատրաստակամութիւն կը ցուցընէր: Նիգօլը ըրածը ամօթապարտ արարք մը չէր նկատած գեռատի աղջիկը՝ այլ յիմարութիւն մը :

Բայց Նիգօլ ասանկ չէր մտածեր. ինքզինքը իրաւագորկեալ մը կը նկատէր և ո՛չ թէ ներողութեան արժանի յանցաւոր մը :

— Միայն գիշերը նայելով բնական է որ օրիորդը չպիտի կրնար գիտնալ այդ բանը, գիտել տուաւ Նիգօլ :

— Ի՞նչ ըսիր, ըսաւ Անտրէ կամաց կամաց հասկընալ սկսելով՝ բայց չկարենալով հաւատալ :

— Կ'ըսեմ թէ օրիորդը երէկ գիշերուան ըրածին պէս ժիւլէրին հետ միայն մութին մէջ խօսելով չի

կրնար անոր դէմքին մանրամասն նկարագրութիւնը ճշդիւ գիտնալ:

— Անմիջապէս ըստձդ պէտք է որ բացատրես, ըսաւ Անտրէ չափազանց տժգունելով:

— Ո՛հ, ատիկայ դժուար չպիտի ըլլայ, օրիորդ, պատասխանեց Նիգօլ խոհեմութեան ծրագիրը մէկդի ձգելով: Այս գիշեր ձեզ տեսայ...

— Լռէ՛, վարէն զիս կը կանչեն կարծեմ:

Իրօք ծաղկանոցէն ձայն մը կը գոչէր:

— Անտրէ՛, Անտրէ՛:

— Ձեր պարօն հայրն է ձեզ կանչողը, օրիորդ: գիշերը հոս անցընող օտարականին հետ վարը ձեզի կը սպասէ:

— Վար իջիր և ըսէ որ պատասխան տալու ժամանակ չունիմ, տկար եմ, ծունկերս ըռնուած են, և վերադարձիր որ այս տարօրինակ վիճարանութեան վայել վերջ մը տամ:

— Անտրէ՛, գոչեց սեպուհը երկրորդ անգամ, Պ. Պալսամօն բարի լոյս ըսել կ'ուզէ քեզ:

— Գնա՛, կ'ըսեմ քեզի, կրկնեց Անտրէ թագուհիի մը շարժումով դուռը ցոյց տալով Նիգօլին:

Նիգօլ հնազանդեցաւ առանց պատասխանելու և առանց դէմքը թթուեցնելու՝ ինչպէս որ սովորաբար կը հնազանդէին Անտրէի բան մը հրամայած ատենը:

Բայց երբ Նիգօլ մեկնեցաւ իր տիրուհիին հրամանը կատարելու համար, Անտրէ տարօրինակ բան մը ըզգաց. չառակ նոյն առաւօտ մարդու երեւալ չուզելուն, զգաց որ աներեւոյթ, գերագոյն և անդիմադրելի զօրութենէ մը դէպի Նիգօլին կիսաբաց թողած պատուհանը կը քաշուէր:

Պատուհանին մօտենալով Պալսամօն տեսաւ որ աչքերը իր վրայ սեւեռած՝ յարգանք կ'ողջունէր զինքը:

Անտրէ սարսուաց և փեղկերուն կռթնեցաւ հաւասարակշռութիւնը չկորսնցնելու համար:

— Բարի լոյս, պարօն, պատասխանեց դեռատի աղջիկը գողաջուրն ձայնով մը:

Անտրէ այս խօսքերը արտասանած միջոցին, Նիգօլ, որ կուգար սեպուհին խնաց տալու թէ իր աղջիկը տկարութեան պատճառաւ չպիտի կրնար անձամբ պատասխանել, իր տիրուհիին այս քմածին և հակասական ընթացքէն բան մը չհասկնալով, ապշեցաւ մնաց, բերանը բացած պատուհանն ի վեր նայելով:

Անտրէ խկոյն իր բոլոր ուժը կորսնցնելով քովի թիկնաթոռին վրայ ինկաւ:

Պալսամօ միշտ անոր կը նայէր:



ԺԲ.

ԱՌԱԻՕՏՈՒՆ

Ճամբորդը կանուխէն կլեր էր կառքը անգամ մը աչքէ անցընելու և Ալթօթասի առողջութեան վրայ տեղեկութիւն ատնելու համար :

Դղեակին մէջ ամէն մարդ տակաւին կը քնանար բացի Ժիւլպէրէն՝ որ մուտքի դրան մէջ գտնուող իր սենեակին վանդակապատներուն ետեւը պահուելու տած՝ հետաքրքրութեամբ Պալսամօի ըրածները կը լրտեսէր և անոր բոլոր ընթացքին վրայ ինքնիրեն հետազօտութիւններ կը կատարէր :

Բայց Պալսամօ Ալթօթասի բնակարանին դուռը գոցելով մեկներ և Ժիւլպէր տակաւին ծառուղին ստք չկօխած՝ Թավէրնէյի խորհրդաւոր հիւրը դղեակէն հեռացեր էր :

Արդարեւ Պալսամօ դէպի թաւուտները ելնելով զարմացեր մնացեր էր այն փոփոխութեան առջև զոր լոյսը բերած էր առջի օրը իրեն չափազանց անշուք երեւցող տեսարանին վրայ :

Քարէ և աղիւսէ շինուած փոքրիկ կարմիր դղեակը մուլաթղենիներու և բարձրաբերձ երեսածառերու անտառի մը մէջ կառուցուած էր, որոնց հոտաւէտ ողկոյզները դղեակին տանիքին վրայ կը տարածուէին և ոսկիէ պսակներու պէս դղեակին տաղաւարները կը ծածկէին :

Մաղկանոցին վերօքը, դէպի առաջ, երեսուն քառակուսի ոտնաչափ տարածութեամբ աւազան մը կար

որ շրջապատուած էր մարգագետնի լայն շրջանակով մը և թանթրուենիներու ծաղկալից ամուով մը, որոնց տեսքը հեշտալի հանգիստ մը կը նուիրէին հակայ շագանակենիներուն և ծառուղիին բարձրաբերձ բարտիներուն սրածայր կամ բոլորչի գագաթներէն վար գահավիժող մարդկային խոնջած տեսողութեան :

Տաղաւարներուն իւրաքանչիւրին քովէն հացիններով, սօսիներով և թմբիներով եղերուած նեղ շաւիղ մը կը սկսէր և կը հասնէր մինչև սաղարթախիտ անուակ մը, ուր կ'ապաստանէին բազմաթիւ թաչուններ, որոնց առաւօտեան աններգաշնակ ազօթքը դղեակէն ներդաշնակօրէն կ'իմացուէր :

Պալսամօ ձախ կողմի շաւիղը մտաւ և քսան քայլի չափ յառաջանալէ ետքը թանձրախիտ դալարավայր մը մտաւ, ուր վարդերն ու վայրի յասմիկները նախընթաց օրուան մրրկայտղ անձրեւէն թրջուելով՝ համեստութեան պէս գլխահակ՝ մեղանոյշ բոյր մը կ'արտադրէին : Շրջանակաձեւ նարօտիներու ներքեւէն այժտերեւուկներ ու յասմիկներ կ'երեւէին, և հիրիկներու երկայն շղթայ մը որոնց, մէջ տեղ տեղ ելակի թփիկներ ալ կային, կ'երթար կը կորսուէր ծաղկալից մօրենիներով և վարդագոյն դժնիկներով լեցուն անտառի մը կանաչագոյն ծածկոցին տակ :

Պալսամօ այսպէս գետնին մինչև ցցուած մասը հասաւ : Հօն տեսաւ կայծքարէ շինուած դղեակի մը աւերակը : Քարերու ահագին կոյտի մը մէջ միայն կիսաւեր աշարակ մը մնացեր էր, որուն վրայ օձաձեւ բաղեղներն ու վայրի բոյսերը սողոսկուն պսակներ հիւսած էին : Աւերումի այս վայրի զաւակները բնութիւնը աւերակներուն վրայ գետեղած է ցոյց տալու համար մարդուն թէ նոյն իսկ աւերակները արգասաւոր են :

Այսպէս գիտուելով՝ Թավէրնէյի կալուածը, որ եօ-

թը կամ ութը արտաւարէն աւելի չէր, արժէք մը ու գեղեցկուծիւն մը կը ստանար: Տունը կը նմանէր այն քարայրներուն որոնց շուրջը բնութիւնը կը զարգարէ ծաղիկներով, բաղեղներով և շնորհալի ճաշակով մը զետեղուած ժայռերու կոյտերով, բայց անոնց ներքին մերկութիւնը ճամբորդը կ'ահաբեկէ և ի բաց կը վանէ. ճամբորդը՝ որ մուրաւ կ'երթայ գիշերուան համար ապաստանարան մը գտնել գողաւոր ժայռերու մէջ:

Պալատն ինչպէս զրոյստեղծ էր, աւերակներէն դէպի բնակարանը վերագարծած միջոցին սեպուհը տեսաւ, որ իր ծաղկեայ գիշերանոցին մէջ փաթթուած, սանդուխին վրայ բացուող կողմնակի դռնէ մը դուրս կ'երևէր և պարտէզը կը շրջէր վարդերը մաքրելով և խղունջները ճզմելով:

Պալատն անպարանօք անոր դիմացը ելաւ:

— Պարոն, ըսաւ շինծու քաղաքավարութեամբ մը, ներեցէք որ ինքզինքս արգարացնեմ ու յարգանքս ձեզ ներկայացնեմ: Պէտք էր որ ձեր արթննալուն ըսպասէի վար իջնելու համար, բայց պատուհանէն նայելով թափէրնէյի տեսարանէն յափշտակուեցայ և ուղեցի մօտէն տեսնել այս գեղեցիկ պարտէզն ու պատկառելի աւերակները:

— Ծշմարիտը, պարոն, հոստեղի աւերակները խիստ գեղեցիկ են, պատասխանեց սեպուհը, ինքն ալ պէտք եղած քաղաքավարական ձեւերը ընելով: Ատոնցմէ զատ ուրիշ գեղեցիկ բան մը չունինք հոս:

— Դղեա՞կ մըն էր ան, հարցուց ճամբորդը:

— Այո՛, իմ դղեակս էր, կամ աւելի ճիշդը իմ պապերուս դղիկը: Մէզօն-Ռուժ կը կոչէին զայն, և երկայն ատեն այս անունը թափէրնէյի հետ կրեցինք: Սեպուհութիւնն ալ Մէզօն-Ռուժէն մնացած է: Բայց, սիրելի հիւրս, ա՛լ չխօսինք չկային վրայ:

Պալատն ինչպէս հաւանութեան խոնարհեցաւ:

— Ես ալ իմ կողմանէ կ'ուզէի ինքզինքս արգարացնել, պարոն, շարայարեց սեպուհը: Տունս աղքատիկ է և այդ բանը ձեզ կանխաւ իմացուցի:

— Ես կատարեալ հանգստութիւն կը վայելեմ հոս, պարոն:

— Շնորհ մըն է, սիրելի հիւրս, շնորհ մը, ըսաւ սեպուհը. բոյն մը զոր մուկերը կը սկսին սիրել այն ատենէն ի վեր որ աղուէսները, մողէսները և օձերը զիրենք միւս դղեակէն վանեցին: Ա՛հ, պարոն, շարայարեց սեպուհը, դուք որ կախարդ մըն էք կամ անոր մօտ բան մը, հարկաւ կրնայիք գաւազանի հարուածով մը Մէզօն-Ռուժի վարդմի դղեակը կանգնել և մանաւանդ չմոռնալ իր շուրջը գտնուող երկու հազար արտավար մարգագետինն ու անտառը: Բայց գրաւ կը դնեմ որ փոխանակ այս ըսածս ընելու, գարշելի անկողնի մը մէջ պառկելու քաղաքավարութիւնը ունեցաք:

— Ո՛հ, պարոն:

— Ինքզինքնիդ մի պաշտանէք, սիրելի հիւրս, անկողինը գարշելի է, գիտեմ, տղուս անկողինն է ան:

— Կ'երգնում: պարոն սեպուհ, թէ ինչ որ ալ ըլլայ, անկողինը ինձ խիստ պատուական երեւցաւ: Ծշմարիտը սա է որ ձեր ինձ ցոյց տուած բարեսիրութիւններէն շփոթած մնացած եմ և ի բոլոր սրտէ կը փափաքեմ զգացածիս ապացոյցը տալ որ եւ իցէ ծառայութիւն մը ընելով ձեզ:

Ծերունին որ միշտ կը ծաղրաբանէր, խօսոյն պատասխանեց:

— Լա՛ւ, ըսաւ Լա Պրին ցուցնելով որ Սաքսի շքեղ պնակի մը վրայ դրուած գաւաթ մը մաքուր ջուր կը բերէր, անա՛ առիթը, պարոն սեպուհ, դուք եւս ըրէք ինձ համար նոյնը ինչ որ մեր Տէրը կանախ հարսանիքին մէջ ըրաւ, այս ջուրը գինիի փոխեցէք, բայց Պուրկօնի գինիի, հէ՛, օրինակի համար Շամպէրդէնի,

այս միջոցին ասկէ աւելի մեծ ծառայութիւն մը չէք կրնար ըրած ըլլալ ինձ:

Պալատն ժպտեցաւ: ձերը այս ժպիտը ժխտում մը համարեց. գաւաթը սուաւ և կուլ տուաւ:

— Սքանչելի դեղ մը, ըսաւ Պալատն: Ձուրը տարրերուն ամենէն ազնիւն է, սեպուհ, սրովհետեւ Աստուծոյ հոգին ջուրին վրայ շրջեցաւ աշխարհիս ըստեղծութիւնն առաջ: Բան չիկայ որ կարենայ դէմ դնել անոր գործողութեանը. ջուրը քարը կը ծակէ, և գուցէ օր մը պիտի գիտցուի թէ ադամանգը կը լուծէ:

— Լա՛ւ ուրին, ջուրը զիս պիտի լուծէ, ըսաւ սեպուհը: Ինձի հետ խմել կ'ուզէ՞ք, սիրելի հիւրս: Այս ջուրը գինիիս վրայ սա առաւելութիւնն ունի որ պատուական արտէ մըն է: Ո՛հ, այս ըմպելիքէն շատ ունիմ, Բալօղիիս չնմանիր:

— Եթէ ձեր գաւաթին վրայ ուրիշ մըն ալ ինձ համար աւելցնէիք, սիրելի ասպնջականս, գուցէ այդ քաղաքավարութիւնէն ձեզի օգտակար ըլլալու միջոց մը կը գտնէի:

— Լա՛ւ, բացատրեցէք ինձ ատիկայ: Տակաւին ժամանակ կայ:

— Հրաման ըրէք տա բարի մարդուն որ երթայ գաւաթ մը մաքուր ջուր բերէ ինձի:

— Լա Պրի՛, կը լսե՞ս, ըսաւ սեպուհը:

Լա Պրի մեկնեցաւ իր սովորական գործունէութեամբը:

— Ամէն առտուան խմած գաւաթ մը ջուրս ի՞նչ պէս այնպիսի յատկութիւններ կամ գաղտնիքներ կըրնայ պարունակել, որոնք մտքէս անգամ չէին անցներ, ըսաւ սեպուհը հիւրին դառնալով: Ըսել է տասը տարիէ ի վեր քիմիագիտութեամբ կը պարապիմ եզեր Պ. Ժուրաէնին պէս, որ արձակ բանաստեղծութիւններ կը շարագրէ առանց գրածը հասկնալու:

— Ձեր ըրածէն լուր չունիմ, բայց ես իմ ըրածս գիտեմ, ըսաւ Պալատն ծանրութեամբ:

Յետոյ Լա Պրիին դառնալով՝ որ հրաշալի արագութեամբ յանձնարարութիւնը կատարեր էր՝ ըսաւ:

— Շնորհակալ եմ, բարի ծառայ:

Եւ գաւաթը անոր ձեռքէն առնելով՝ մինչեւ աչքը բարձրացուց և բիւրեղին մէջիւր քննեց, որուն մակերեւոյթին վրայ լուսափթիթ մարգարիտներ կը լողային և մանիշակագոյն ու ադամանդափայլ երանգներ կը ցուցային:

— Չա՛ր սատանայ, ըսել է շատ գեղեցիկ բան մըն է գաւաթ մը ջուրին մէջ երեւցածը, ըսաւ սեպուհը:

— Այո, պարոն սեպուհ, զոնէ այսօրուան համար շատ գեղեցիկ է:

Եւ Պալատն կարծես սկսաւ ուշադրութիւնը կըրկնապատկել, մինչդեռ սեպուհը ակամայ անոր շարժումները կը դիտէր, իսկ Լա Պրի՝ արձանացած՝ տակաւին պնակը երկնցուցած կեցեր էր:

— Ի՞նչ կը տեսնէք մէջը, սիրելի հիւրս, ըսաւ սեպուհը իր հեղուութիւնը շարունակելով: Իրաւ որ անհամբերութենէս ինքզինքս կ'ուտեմ, արդեօք ժառանգութիւն մը կայ ինձ համար, թէ նոր Մէկօն-Ռուժ մը՝ իմ փոքրիկ գործերս քիչ մը կարգի դնելու համար:

— Հիւրեր կը տեսնեմ հոն, պատասխանեց Պալատն ըրջօրէն:

— Իրա՞ւ, վրա՞ս պիտի յարձակին նորէն:

— Ո՛չ, այլ այս առաւօտ իսկ այցելութիւն մը պիտի ընդունիք:

— Ըսել է մէկու մը ժամադրութիւն տուած էք իմ տանս մէջ: Գէշ ըրած էք, պարոն, շատ գէշ: Թերեւս այս առաւօտ կաքաւիկներ չպիտի ունենանք:

— Ինչ որ պատիւ ունիմ ձեզ ըսելու շատ լուրջ է

և մեծ կարեւորութիւն ունի ձեզի համար, սիրելի՛ աստնջականս կրկնեց Պալսամօ: Մէկը այս վայրկեանիս դէպի Թավէրնէյ կուգայ:

— Ի՞նչ դժպատեն դիպուածով, Աստուած իմ, և ի՞նչ տեսակ այցելութիւն է ատիկայ: Ինծի իմացուցէք, սիրելի հիւրս, կ'աղաչեմ, որովհետեւ կը խոստովանիմ թէ ու ե է այցելու մը բացարձակապէս տաղտուկ կը պատճառէ ինծի: Զի՛չդը գտէք, սիրելի կախարդս, ճի՛շդը գտէք եթէ կարելի է:

— Ոչ միայն կարելին, այլեւ աւելին պիտի ըսեմ որպէս զի ինձ շնորհապարտ չմնաք, բան մը որ շատ դիւրին է ինձ համար:

Եւ Պալսամօ իր խորաթափանց աչքերը գաւաթին վրայ ծփացող արեւակնազոյն խաւին վրայ դարձուց:

— Լա՛ւ ուրեմն, բան մը կը տեսնէ՞ք, հարցուց սեպուհը:

— Կատարելապէս:

— Ուրեմն խօսեցէք, ի՞նչ կը տեսնէք:

— Բարձրաստիճան անձնաւորութեան մը գալը կը տեսնեմ:

— Բա՛, իրա՞ւ, և այդ անձը այդպէս առանց ոչ ոքէ հրաւիրուելու կուգայ:

— Ինքզինքը հրաւիրեր է: Ձեր պարոն որդիէն առաջնորդուած է:

— Փիլիպէ՛ն:

— Այո, անորմէ:

Հոս սեպուհը տարապայման ցնծութեամբ մը լըցուեցաւ:

— Ա՛, տղէ՞ս առաջնորդուած... ըսել կ'ուզէք թէ այդ բարձրաստիճան անձը տղէ՞ս առաջնորդուած է:

— Այո՛, սեպուհ:

— Ուրեմն տղաս կը ճանչնա՞ք:

— Ամենեւին:

— Եւ տղաս այս վայրկեանի՞ս...

— Կէս փարսախ, գուցէ քառորդ փարսախ հեռու է հոսկէ:

— Հոսկէ՞, իրա՞ւ կ'ըսէք:

— Այո՛:

— Սիրելի պարոնս, որդիս Սթրազպուրկ է, ուր պահպանութիւն կ'ընէ, և առանց փախստական սեպուելու վտանգին ենթարկուելու, զոր երբէք չպիտի ընէր, կ'երգնում ձեզ որ տղաս ոչ ոք կրնայ բերել ինձ:

— Սակայն իր հետը մէկը կը բերէ ձեզի, ըսաւ Պալսամօ իր գաւաթի ջուրին քննութիւնը շարունակելով:

— Եւ այդ մէկը մա՞րդ է թէ կին, հարցուց սեպուհը:

— Կին մըն է, սեպուհ, մանաւանդ շատ մեծ կին մը: Ա՛հ, ահա եզական և տարօրինակ բան մը:

— Նաեւ կարեւոր, հէ՞, աւելցուց սեպուհը:

— Այո՛:

— Ուրեմն աւարտեցէք:

— Աղէկ կ'ընէք եթէ ձեր փոքրիկ սպասուհին հեռացնէք հոսկէ, տա փոքրիկ ստահակը, ինչպէս դուք կ'ըսէք որ մատնեւուն ծայրը եղջիւր ունի:

— Եւ ի՞նչ պատճառաւ զայն հեռացնել պէտք է:

— Որովհետեւ նիզօլ Լըկէյի դէմքը հոս գալիք անձին դէմքին հետ քանի մը նմանութիւններ ունի:

— Եւ դուք կ'ըսէք թէ մեծ կին մըն է... մեծ կին մը նիզօլի՞ն կը նմանի: Կը տեսնէք որ հակասութեան մէջ կ'իյնաք:

— Ինչո՞ւ չէ: Ատենօք ես գերի մը գնեցի, այնչափ կը նմանէր կղէօպատրա թագուհիին որ խօսք ըրինք զայն Հոռովմ դրկել Օգդավի յաղթանակին մէջ անոր նկարը հանել տալու համար:

— Լա՛ւ, ահա դարձեալ կը սկսիք, ըսաւ սեպուհը:

— Վերջապէս, սիրելի ասպնջականս, ես կ'ըսեմ, դուք ինչ որ կ'ուզէք այն ըրէք. կը հասկնա՞ք, ինձ վերաբերեալ բան մը չկայ, օգուտը ձերն է:

— Բայց Նիգօլին նմանութիւնը ի՞նչ պատճառաւ կրնայ այդ անձը վիրաւորել:

— Երեւակայեցէք թէ Գաղիոյ թագաւորը կամ արքայորդին ըլլաք, բան մը որ բնաւ չեմ մաղթեր ձեզ համար, արդեօք այդ պարագային գոհ պիտի ըլլայի՞ք, երբ տունէ մը ներս մտնելով ծառաներուն մէջ տեսնէիք ձեր օգոստափառ դէմքին մէկ շինծու նմանութիւնը:

— Վա՛յ չար սատանայ, ահա ամենազօրաւոր երկսայրաբանութիւն մը, ձեր ըսածներէն կը հեռելի...

— Թէ հոս գալիք բարձրաստիճան և մեծազօր կէնը գուցէ դժգոհ կ'ըլլայ իր կենդանի պատկերը կարճ շրջագիտտով և կտաւէ վզնոցով տեսնելով:

— Լաւ ուրեմն, ըսաւ սեպուհը միշտ խնդալով, պէտք եղած ատեն կը խորհինք ատոր վրայ: Բայց կը տեսնէք, սիրելի սեպուհ, բոլոր ասոնց մէջ ամենէն աւելի զիս ուրախացնողը որդիս է: Սիրելի Փիլիպը որ երջանիկ զիպուածով մը հիմայ պիտի գայ:

Եւ սեպուհը սկսաւ աւելի բարձրածայն խնդալ:

— Ուրեմն իմ կանխասացութիւնս ձեզի զուարճութիւն կը պատճառէ, ըսաւ Պալսամօ ծանրութեամբ: Իրաւ որ աւելի աղէկ, բայց եթէ ես ձեր տեղն ըլլայի, սեպուհ...

— Եթէ իմ տեղս ըլլայիք, ի՞նչ կ'ընէիք:

— Քանի մը հրամաններ կուտայի, քանի մը պատրաստութիւններ կը տեսնէի...:

— Իրա՞ւ:

— Այո՛:

— Պիտի խորհիմ, սիրելի հիւրս, պիտի խորհիմ:

— Ժամանակն է:

— Ուրեմն լրջօրէ՛ն կը խօսիք:

— Կատարեալ լրջութեամբ, սեպուհ, հետեւաբար եթէ կ'ուզէք արժանաւոր կերպով ընդունիլ այդ անձը, որ ձեզի այցելութիւն տալու շնորհը կ'ընէ, վայրկեան մը իսկ կորսնցնելու չէք:

Սեպուհը գլուխը թօթվեց:

— Կարծեմ երկմտիլ կը սկսիք, ըսաւ Պալսամօ:

— Իրաւ որ, սիրելի հիւրս, կը խոստովանիմ թէ պինդգլուխի մը հետ է ձեր գործը:

Ահա այս միջոցին էր որ սեպուհը աղջկան վրանաձեւ բնակարանին կողմը գնաց, հիւրին կանխասացութիւնը անոր հաղորդելու համար, և զայն կանչեց.

— Անտրէ՛, Անտրէ՛:

Գիտենք թէ դեռատի աղջիկը ինչպէս պատասխանեց իր հօրը հրաւերին և թէ ինչպէս Պալսամօի կախարհիչ նայուածքը զայն պատուհանին առջեւ բերաւ:

Նիգօլ հոն կեցեր զարմանքով Լա Պրին կը դիտէր: Այս վերջինը դեռատի սպասուհիին նշաններ կ'ընէր:

— Բայց ասիկայ հաւատալիք բան չէ, կը կըրկնէր սեպուհը, մինչեւ որ աչքովս չտեսնեմ չեմ հաւատար...:

— Քանի որ անպատճառ տեսնել կ'ուզէք, դարձէք ուրեմն, ըսաւ Պալսամօ ձեռքը դէպի ծառուղին երկնցնելով, որուն ծայրէն ձիաւոր մը սանձարձակ կ'արշաւէր և գետինը ձիուն ոտքերուն տակ կը թնդար:

— Օհօ՛, գոչեց սեպուհը, իրա՞ւ...:

— Պ. Փիլիպը, բացազանչեց Նիգօլ ոտքին մատներուն վրայ բարձրանալով:

— Մեր երիտասարդ տէրը, ըսաւ Լա Պրի ուրախութեան քրթմնջիւնով մը:

ժօզ. Պալս., քիւ 5—13. Բ.հր.Ն.Ք.

— Եղբայրս, եղբայրս, բացագանչեց Անտրէ բազուկները պատուհանէն անոր երկնցներով:

— Արդեօք դիպուածով ձեր պարոն որդի՞ն է, սիրելի սեպուհ, հարցուց Պալսամօ անփութօրէն:

— Այո՛, իրաւ որ այո՛, նոյն ինքն է, պատասխանեց սեպուհը ապշած:

— Ասիկայ սկզբնաւորութիւնն է, ըսաւ Պալսամօ:

— Իրա՛ւ կախարդ էք դուք, ըսաւ սեպուհը:

Յաղթութեան ժպիտ մը նկարուեցաւ օտարականին շրթունքին վրայ:

Ձին զգալի կերպով կը մեծնար: Ամիջապէս վերջը, ծառերուն վերջին շարքերուն տակէն, քրտնաթոր և խոնաւ շոգիով պատած ձիու մը սրարշաւ վազքը տեսնուեցաւ, որ վրան գլուխը ձեխտ և արշաւանքէն դէմքը կարմրած միջահասակ այլ դեռատի պաշտօնատար մը բերելով իր հօրը գրկին մէջ նետեց:

— Ո՛հ, տարօրինակ բան, կ'ըսէր սեպուհը դժուարահաւանութեամբ: Տարօրինակ բան:

— Այո՛, հայր իմ, կ'ըսէր Փիլիպ, որ իր հօրը դէմքին վրայ տատամտութեան մնացորդ մը կը նշմարէր, ե՛ս եմ, ե՛ս ինքս եմ:

— Կը տեսնեմ որ դուն ես, պատասխանեց սեպուհը, ահա աղէկ մը կը տեսնեմ: Բայց ի՞նչ դիպուածով եկար:

— Հայր իմ, մեծ պատիւ մը վերապահուած է մեր տանը:

Մերունին գլուխը վեր վերցուց:

— Մեծանուն այցելու մը դէպի Թավէրնէյ կուգայ՝ ժամէ մը Մարի-Անթուանէթ-Փօզէֆ, Աւստրիոյ տան արքիդքսուհին և Գաղիոյ արքայորդւոյն կինը հոս պիտի ըլլայ:

Սեպուհը ձեռքերը վար ձգեց խոնարհութեամբ և Պալսամօին դառնալով ըսաւ.

— Ներեցէք:

— Պարոն, ըսաւ Պալսամօ Թավէրնէյին առջեւ խոնարհելով, ձեզ ձեր պարոն որդւոյն հետ կը թողու՞մ, շատոնց է իրար տեսած չէք, անշուշտ շատ ըսելիքներ ունիք իրարու:

Եւ Պալսամօ Անտրէն ողջունելէ ետքը՝ որ եղբօրը գալստեամբը ցնծութեամբ լցուած ընդառաջ կը վազէր, մեկնեցաւ նշան մը ընելով Նիգօլին և Լա Պրիին՝ որոնք անշուշտ այս նշանը հասկնալով Պալսամօի հետեւեցան և ծառուղիին ծառերուն մէջ անյայտ եղան:



ԺԳ.

ՓԻԼԻՊ ՏԸ ԹԱՎԷՐՆԷՅ

Փիլիպ տը Թավէրնէյ, Մէզօն-Ռուժի ասպետը բնաւ իր քրօջը չէր նմաներ, թէպէտ անոր չափ գեղեցիկ էր իբրեւ այր, ինչպէս քոյրն ալ իբրեւ կին: Արդարեւ, քաղցր ու վէս նայուածք մը, անթերի դէմք մը, սքանչելի ձեռքեր, կանացի ոտքեր և բարեձեւ կերպարանք մը սիրուն ասպետ մը կ'ընծայէին զայն:

Փիլիպ տրտում էր առանց տխրադէմ ըլլալու, ինչպէս նշանաւոր հանճարները որոնք աշխարհիս մէջ իրենց գծած կենցաղավարութեամբը կը նեղուին: Գուցէ այս տխրութեան կը պարտէր իր քաղցրութիւնը, որովհետեւ առանց այս դիպուածային զգացման՝ սէգ, խորիս և անընտել պիտի ըլլար: Իրաւամբ իրեն հաւասարող ազգատներուն, և միայն ծննդեամբ իր հաւասարակիցն եղող հարուստներուն հետ ապրելու պէտքը իր մէջ յեղաշրջած էր այնպիսի բնաւորութիւն մը զոր երկինք խրոխտ, իշխող և կասկածոտ ստեղծած էր: Առիւծին հեղութեան մէջ վեհ արհամարհանք մը կայ:

Փիլիպ հաղիւ իր հայրը գրկած, Անտրէ այս երջանիկ դիպուածէն յուզուած՝ իր մագնիսական թմբուած թենէն ելնելով՝ եկաւ երիտասարդին ճիւղը փաթթուեցաւ:

Այս յուզիչ տեսարանին հեծկտուքներ ալ խառնուեցան, սրմէ կը յայտնուէր թէ գրեթէ մենակեաց

աղջկան համար մեծ կարեւորութիւն ունէր այս միացումը:

Փիլիպ՝ Անտրէի և հօրը ձեռքերէն բռնելով ու քաշելով զանլիճը տարաւ զանոնք, ուր երեքը մինակ մնացին:

— Գուք տակաւին վարանման մէջ էք, հայր իմ, իսկ դուն զարմացեր մնացեր ես, քոյր իմ, ըսաւ Փիլիպ երկուքն ալ քովը նստեցնելէ ետքը: Բայց ասկէ աւելի ճշմարիտ բան չկրնար ըլլալ, քանի մը վայրկեանէն անա տիկին արքայադուստրը մեր աղքատիկ բնակարանին մէջ պիտի ըլլայ:

— Նզովի'ց արմատ, պէտք է անպատճառ անոր միաքը փոխել, գոչեց սեպուհը: Եթէ այդպիսի բան մը պատահի, գիտցած ըլլաս որ յաւիտեանս յաւիտենից անպատուուած պիտի ըլլանք: Եթէ տիկին արքայադուստրը հոս կուգայ Գաղիոյ ազնուականներուն մէկ տիպարը տեսնելու, կը ցաւիմ իր վրայ: Բայց ի՞նչ դիպուածով զնաց եկաւ և իմ տունս ընտրեց:

— Ո՛հ, ատիկայ երկայն պատմութիւն մըն է, հայր իմ:

— Պատմութիւն մը, կրկնեց Անտրէ զարմանօք, բայց պտտմէ մեզ, եղբայր իմ:

— Այո՛, պատմութիւն մը որուն համար թերահաւատներն անգամ կ'օրհնեն զԱստուած:

Սեպուհը շրթունքները կարկամեց այնպիսի ճարգու մը պէս որ կը տարակուսի թէ մարդոց և արարածոց տէրը հաճած ըլլայ աչքերը իր կողմը դարձնել և իր գործերուն խառնուիլ:

Փիլիպի ուրախութիւնը տեսնելով Անտրէի տարակուսանքը փարատեցաւ և անոր բերած լուրին վրայ իր զգացած երջանկութիւնը յայտնելու և շնորհակալ ըլլալու համար մըմնջեց:

— Եղբայր իմ, սիրելի՛ եղբայր իմ:

— Եղբայր իմ, սիրելի եղբայր իմ, կրկնեց սեպուհը զարմանօք, իրաւ որ սա աղջիկը մեր գլխուն եկածէն գոհ է կարծես :

— Բայց լաւ կը տեսնէք որ Փիլիպ երջանիկ է, հայր իմ :

— Որովհետեւ Պ. Փիլիպ եռանդոտ է, բայց ես որ բարեբաղդաբար կամ դժբաղդաբար իրերը կը կշռեմ, բոլոր ասոնց մէջ նոր բան մը չեմ տեսներ, ըսաւ Թավէրնէյ : Երբեք ահնարիկ մը նետելով իր դահլիճին կասիններուն վրայ :

— Քիչ մը ետքը երբ գլխուս եկածը պատմեմ, ուրիշ կերպ պիտի դատէք, հայր իմ, ըսաւ երիտասարդը :

— Պատմէ ուրեմն, մոռաց ծերուկը :

— Այո՛, այո՛, պատմէ Փիլիպ, կրկնեց Անտրէ :

— Լաւ ուրեմն, ինչպէս որ գիտէք, Սթրազպուրկի մէջ պահպանութիւն կ'ընէի : Արդ, գիտէք նաեւ թէ արքայորդիին կիներ Սթրազպուրկէն Գաղիա մտաւ :

— Այս որջին մէջ մարդ բան մը կ'ընայ իմանալ, զիտել տուաւ Թավէրնէյ :

— Սիրելի եղբայր, կ'ըսէիք թէ արքայորդիին կիներ Սթրազպուրկի կողմէն . . .

— Այո՛, առտուրնէ ի վեր զառիվայրին վրայ կը սպասէինք, տեղատարափ անձրեւ կուգար, խիստ մկտրեր էինք : Ստոյգ տեղեկութիւն չունէինք թէ ճիշդ ո՞ր ժամուն պիտի գար իշխանուհին : Հրամանատարը զի՞նք անդիստախումբին առաջ զրկեց իրեն տեղեկութիւն բերելու համար : Գրեթէ փարսախ մը ճամբայ առի : Յանկարծ ճամբու մը անկիւնը, հանդիսախումբին առաջին ձիաւորներուն գէմը գտնուեցայ : Անոնց հետ քանի մը խօսք փոխանակեցի, որոնք նորին արքայական Բարձրութեան առջևէն կ'երթային : Նորին Բարձրութիւնը գլուխը կառքին դռնէն դուրս հանեց և ո՛վ ըլլալ

հարցուց : Կ'երեւի թէ զիս կանչեցին, բայց զիս զրկողին հաստատական պատասխան մը տանելու աճապարելով՝ արդէն արշաւասոյր վերադարձած էի : Վեց ժամ պահպանութեամբ զգացած յոգնութիւնս կարծես թէ հրաշքով մը աներեւոյթ եղած էր :

— Իսկ տիկին արքայագո՞ւտորը, հարցուց Անտրէ :

— Քեզ նման դեռատի է և բոլոր հրեշտակներուն նման ալ գեղանի, ըսաւ ասպետը :

— Ըսէ Փիլիպ . . ., ըսաւ սեպուհը վարանելով :

— Ի՞նչ, հայր իմ :

— Տիկին արքայագուտորը քու ծանօթներէդ մէկուն կը նմանի :

— Իմ ծանօթներէս մէկո՞ւն :

— Այո՛ :

— Ո՛չ ոք կ'ընայ նմանիլ տիկին արքայագուտորին, գոչեց երիտասարդը աշխուժիւ :

— Փնտռէ տեսնենք :

— Ո՛չ, ըսաւ :

— Տեսնենք, օրինակի համար Նիգօլին չի՞ նմանիր :

— Ո՛հ, տարօրինակ բան, գոչեց Փիլիպ զարմացած : Այո՛, Նիգօլ այդ մեծանուն ուղեւորուհիին նմանող քանի մը կէտեր ունի :

— Ո՛հ, բայց շատ հեռու է անորմէ, շատ վար է անորմէ : Բայց ո՞ւր կէ կրցաք զիտնալ ատիկայ, հայր իմ :

— Իրաւ որ կախարդ մը ըսաւ :

— Կախարդ մը, յարեց Փիլիպ զարմացած :

— Այո՛, միանգամայն քու գալուստդ ալ գուշակեց :

— Օտարակա՞նք, հարցուց Անտրէ երկչոտութեամբ :

— Այն մարդը որ եկած ատենս ձեր քօ՞վն էր, պարոն, և որ իմ մօտեցած ատենս քաղաքավարութեամբ մեկնեցա՞ւ :

— Այո՛, անիկայ, բայց պատմութիւնդ լմնցուր, Փիլիպ, պատմութիւնդ :

— Գուցէ աւելի աղէկ պիտի ըլլայ եթէ պատրաստութիւններ տեսնենք, յարեց Անտրէ:

Բայց սեպուհը անոր թեւէն բռնեց:

— Որչա՛փ պատրաստուինք, ա՛յնչափ ծաղրելի պիտի ըլլանք: Շարունակէ, Փիլիպ, շարունակէ:

— Կը սկսիմ, հայր իմ. Սթրազպուրկ վերագարձայ, լուրը տեղը հասցուցի, իմաց տունն կառավարիչ Գ. տը Սթէնվիլի որ իսկոյն վազեց: Երբ կառավարիչը սուրհանդակէ մը լուռ առնելով զառիվայրը կուգար, զաշտերուն մէջ նուագարան կը զարնէին, հանդիսախումբը սկսաւ երեւիլ և մենք Քէհլի դուռը վազեցինք: Ես կառավարիչին քովն էի:

— Դ. տը Սթէնվիլ, ըսաւ սեպուհը, բայց կեցիր՝ կը ճանչնամ...:

— Դ. տը Շօաղէօլին քեռայրը:

— Ան է, շարունակէ, շարունակէ, յարեց սեպուհը:

— Տիկին արքայադուստրը որ դեռատի կին մըն է՝ անշուշտ թարմ դէմքերը կը սիրէ, հետեւաբար միտքը զբաղած և աչքերը ինծի դարձուցած մտիկ ըրաւ Գ. կառավարիչին շնորհաւորութիւնները: Ես քիչ մը անդին յարգանօք կեցեր էի:

« — Պարոնը չէ՞, հարցուց զիս ցուցնելով:

« — Այո՛, տիկին, պատասխանեց Գ. տը Սթէնվիլ:

« — Մօ՛տ եկէք, պարոն, ըսաւ:

« Մօտեցայ:

« — Ի՞նչ է ձեր անունը, հարցուց տիկին արքայադուստրը յանկուցիչ ձայնով մը:

« — Թավէրնէյ Մէզօն-Ռուժ ասպետ, պատասխանեցի թոթովագին:

« — Այս անունը յուշատետրիդ մէջ արձանագրէ, սիրելիս, ըսաւ տիկին արքայադուստրը պառաւ տիկնոջ մը դառնալով, որ իր դայեակը Լանկէրսհաուզի կոմսուհին էր:

« Յետոյ ինձ դառնալով ըսաւ.

« — Ո՛հ, պարոն, ի՛նչ վիճակի մէջ ձգեր է ձեզ այս սոսկալի օդը: Արդարեւ ինքզինքս կը մեղադրեմ խորհելով որ ինծի համար այդչափ նեղութիւն կրած էք:

— Որքա՛ն ազնուական ձեւեր, որքա՛ն գրաւիչ խօսքեր, գոչեց Անտրէ ձեռքերը իրար միացնելով:

— Ատոր համար ես ալ բառ առ բառ միտքս պահեցի զանոնք, ըսաւ Փիլիպ միեւնոյն շեշտով:

— Շա՛տ աղէկ, շա՛տ աղէկ, մրմնջեց սեպուհը շրթունքներուն առտարոց ժպիտ մը տալով, ուր կը նկարագրուէր թէ՛ հայրական անհեթեթութիւնը թէ՛ այն գէշ գաղափարը զոր ունէր կիներուն, մինչեւ իսկ թագուհիներուն հանդէպ: Լա՛ւ, շարունակէ, Փիլիպ:

— Ի՞նչ պատասխանեցիր, հարցուց Անտրէ:

— Ոչինչ, մինչեւ գետին խոնարհեցայ, և տիկին արքայադուստրը անցաւ գնաց:

— Ի՛նչ, բան մը չպատասխանեցիր, գոչեց սեպուհը:

— Չայնս չէր ելներ, սիրելի հայրիկս: Բոլոր անձս ուժգին կերպով բարախող սրտիս մէջ կեդրոնացեր էր:

— Սատանա՛ն տանի զիս, քու տարիքդ եղած ատենս ես ալ երբ Լէքզէնսքա իշխանուհիին ներկայացայ, բերանս չկրցայ բանալ, պապանձեցայ մնացի:

— Այսու հանդերձ դուք ինէ ալ խելացի էք, պատասխանեց Փիլիպ խոնարհելով:

Անտրէ կըզօրը ձեռքը սեղմեց:

« — Նորին Բարձրութեան մեկնելէն սգուտ քաղելով քնակարանս դարձայ նորէն զարդարուելու համար, որովհետեւ վրաս գլուխս ա՛յնքան թրջած և ցիխոտած էր որ տեսնողին դուրժը կը շարժէի, շարունակեց Փիլիպ:

— Խե՛ղճ աղբարիկս, մրմնջեց Անտրէ:

« — Սակայն, շարայարեց Փիլիպ, տիկին արքայադուստրը քաղաքապետարան հասեր էր և բնակչութեան շնորհաւորութիւնները կ'ընդունէր: Երբ շնորհաւորութիւնները վերջացան՝ եկան իմաց տալու որ ճաշը պատրաստ էր, ու սեղան նստաւ:

« Բարեկամներէս մէկը, գնդապետը, այսինքն այն մարդը որ զիս նորին Բարձրութիւնը գլխավորելու գրկեց, հաւատեց թէ իշխանուհին իր շուրջը կը նայէր յաճախ, կարծես ճաշին ներկայ եղող պաշտօնակաշներուն շարքին մէջ մէկը փնտռել կ'ուզէր:

« Նորին բարձրութիւնը ի զուր երկու երեք անգամ յարեւնման խուզարկութիւն մը կատարելէ վերջ՝ ըսեր է.

« — Այս առտու զիս գլխավորող պաշտօնակալը չեմ տեսներ հոս: Զըսին իրեն թէ կ'ուզէի անձամբ շնորհակալութիւն յայտնել:

« Գնդապետը առաջ անցնելով պատասխաներ է.

« — Տիկին, տեղակալ Պ. Թավէրնէյ իր սենեակը քաշուած ըլլալու է զգեստները փոխելու և պատշաճ կերպարանքով Զեր արքայական Բարձրութեան ներկայանալու համար:

« Պահ մը վերջը ներս մտայ:

« Սրան մտնելու հինգ վայրկեան չէր եղեր երբ տիկին արքայադուստրը զիս նշմարեց:

« Նշան ըրաւ ինձ որպէս զի իրեն մօտեանամ: Բովը գացի:

« — Պարո՛ն, կը հաւանի՞ք ինձի հետ Բարիզ գալ:

« — Ո՛հ, տիկին, գոչեցի, ատիկայ ինձի համար մեծ երջանկութիւն մը պիտի ըլլար, բայց ես պաշտօնեայ մըն եմ, Սթրազպուրկի մէջ պահպանութիւն կ'ընեմ, և...

« — Եւ... ի՞նչ:

« — Տիկին, ըսել կ'ուզեմ թէ միայն փափաքիս տէրն եմ:

« — Որով՞ կախում ունիք:

« — Զինուորական կառավարչէն:

« — Լաւ...: Ես ամէն բան կը կարգադրեմ:

« Զեռքովը նշան մը ըրաւ և մեկնեցաւ:

« Իրիկուան կառավարչին տունը գնաց:

« — Պարոն, հաճոյք մը ունիմ զոր կատարել կ'ուզեմ, ըսաւ անոր:

« — Այդ հաճոյքը ինձ համար հրաման մը պիտի ըլլայ, տիկին:

« — Սխալեցայ հաճոյք մը ըսելով, ուխտ մը պիտի ըսէի:

« — Ատիկայ աւելի նուիրական պիտի ըլլայ ինձի: Ըսէք, տիկին:

« — Լաւ ուրեմն, ուխտեցի ոտքս Գաղիոյ հողին վրայ դրած տտենս դէմս ելլող առաջին Ֆրանսացին իմ ծառայութեանս առնել և անոր ընտանիքը երջանիկ ընել, եթէ անշուշտ իշխանները կարողութիւն ունին մէկը երջանկացնելու:

« — Իշխանները երկրիս վրայ Աստուծոյ փոխանորդներն են: Ո՞վ է այն բաղդաւոր անձը որ առաջին անգամ Զեր Բարձրութեան հանդիպելու երջանկութիւնը ունեցաւ:

« — Պ. տը Թավէրնէյ Մէլզօն-Ռուժը, այն երիտասարդ տեղակալը որ իմ գալուստս ձեզ իմաց տուաւ:

« — Ամենքնիս ալ Պ. տը Թավէրնէյն պիտի նախանձինք, տիկին, յարեց կառավարիչը, բայց իրեն վերապահուած երջանկութիւնը չպիտի խոսովենք. հոս մնալ հրամայուած է անոր, բայց այդ հրամանը մենք կը վերցնենք. զինուոր մնալ խոստացած է, մենք այդ կապը կը ջախջախենք: Զեր արքայական Բարձրութեան հետ ճամբայ պիտի ելլայ Թավէրնէյ ասպետը:

« Արդարեւ, Նորին Բարձրութեան կառքը Սթրազ-
պուրկէն մեկնած օրն իսկ հրաման ստացայ ձիով անոր
հետեւիլ: Իր կառքին դռնէն չզատուեցայ:

— Օհօ, տարօրինակ բան, բայց անկարելի չէ,
ընդմիջեց սեպուհը նենգամիտ ժպիտով մը:

— Ի՞նչ, հայր իմ, հարցուց երիտասարդը պարզա-
մտութեամբ:

— Կը հասկնամ, կը հասկնամ, պատասխանեց սե-
պուհը:

— Բայց, սիրելի եղբայր, ընդմիջեց Անտրէ, բո-
լոր ըսածներուդ մէջ տիկին արքայադուստրին թա-
վէրնէյ գալուն պատճառը բացատրող բան մը չեմ
գտներ տակաւին:

— Սպասէ, երէկ գիշեր, ժամը տասնըմէկին մօտ
Նանսի հասանք և ջահերով քաղաքէն անցանք:

« Տիկին Արքայադուստրը զիս կանչեց:

« — Պարոն թավէրնէյ, ուղեկիցներուն ըսէք որ
չուտ քալեն, ըսաւ:

« Արքայադստեր հրամանը նշանով մը իմացուցի
անոնց:

« — Վաղը առտու կանուխէն ճամբայ ելնել կ'ու-
զեմ, աւելցուց տիկին արքայադուստրը:

« — Ձեր Բարձրութիւնը հանգիստ առնելու համար
վաղը չի՞ փափաքիր իջեւանիլ, հարցուցի:

« — Ո՛չ, բայց կ'ուզեմ ճամբան տեղ մը հանդիպիլ:

« Այս խօսքին վրայ սիրտս գոգցես նախազգացումէ
մը յուզուի:

« — Ճամբա՞ն, բացագանչեցի:

« — Այո՛, պատասխանեց Նորին արքայական Բար-
ձրութիւնը:

« Լռեցի:

« — Ձգուշակեցի՞ք թէ ուր կ'ուզեմ կանգ առնել,
հարցուց ժպտելով:

« — Ո՛չ, տիկին:

« — Թավէրնէյի դղեակը:

« — Ինչո՞ւ արդեօք, Աստուած իմ:

« — Ձեր հայրն ու քոյրը տեսնելու համար:

« — Հայրս, քոյրս... Ձեր արքայական Բարձ-
րութիւնը ինչէ՞ն գիտէ թէ...:

« — Տեղեկութիւն առնելով իմացայ որ անոնք մեր
հետեւած ճամբէն երկու հարիւր քայլ հեռի են: Պատ-
ուիրեցէք որ Թավէրնէյի դղեակին առջեւ կանգ առ-
նեն:

« Բրտինքը ճակատս ելաւ: Փութացի պատասխա-
նել Նորին արքայական Բարձրութեան այնպիսի դողով
մը զոր կրնաք հասկնալ:

« — Տիկին, հօրս տունը արժանի չէ ձեզ նման
իշխանուհի մը ընդունելու:

« — Ինչո՞ւ համար, հարցուց Նորին արքայական
Բարձրութիւնը:

« — Աղքատ ենք, տիկին:

« — Աւելի աղէկ, վստահ եմ որ ընդունելութիւնը
աւելի սիրալիր և պարզ պիտի ըլլայ: Որչափ աղքատ
ալ ըլլայ թավէրնէյ, հարկաւ գաւաթ մը կաթ պիտի
գտնուի հոն բարեկամուհիի մը համար, որ Աւստրիոյ
տան արքիդքսուհի և Գաղիոյ գահաժառանգին տի-
կինն ըլլալը պահ մը մոռնալ կը բաղձայ:

« — Ո՛հ, տիկին, պատասխանեցի խոնարհելով:

« Այսչափ միայն: Ակնածութենէս ա՛լ բերանս չի
կրցայ բանալ:

« Կը յուսայի թէ Նորին արքայական Բարձրութիւ-
նը կը մոռնար այս դիտաւորութիւնը, կամ իր քմա-
ծին հաճոյքը այս առտուան սաստիկ հովէն կը փարա-
տէր, բայց այնպէս չեղաւ: Երբ Բօնդամուսօնի կայա-
րանը հասանք, Նորին Բարձրութիւնը ինձ հարցուց
թէ Թավէրնէյին կը մօտենա՞նք, և ես ալ ստիպուե-

ցայ պատասխանել թէ միայն երեք փարսախ հեռու ենք:

— Անպիտան, գոչեց սեպուհը:

— Աւա՛ղ, կարծես թէ տիկին արքայադուստրը իմ վրդովիւս կը գուշակէր:

« — Բանէ մը մի՛ վախնաք, ըսաւ ինձ, ձեր տունը շատ չպիտ իկենամ. քանի որ կը կարծէք թէ ձեր ընդունելութիւնը զիս պիտի նեղէ, ըսեմ ձեզ թէ առնելիք տալիք չմնար մեր մէջ, որովհետեւ ես ալ Սթրազպուրկ մտնելու ատենս ձեզի ներութիւն տուի: »

— Ինչպէս կարելի էր դէմ դնել ասանկ գմայլելի խօսքերու, ըսէ՛ք, հայր իմ:

— Ո՛հ, անկարելի է, ըսաւ Անտրէ. քանի որ Նորին արքայական Բարձրութիւնը այնչափ բարեսիրտ է, անշուշտ իմ ծաղիկներովս և գաւաթ մը կաթովս պիտի գոհանայ, ինչպէս որ ըսեր է արդէն:

— Այո՛, ըսաւ սեպուհը, բայց չպիտի գոհանայ տեսնելով իմ թիկնաթոռներս որոնք իր ոսկորները պիտի ջախջախեն, իմ տախտակամածներս որոնք տխուր տեսարան մը պիտի պարզեն: Սառնանքս բերանն երթան քմածին հաճոյքները: Լա՛ւ, Գաղիա դարձեալ լաւ կառավարութիւն մը պիտի ունենայ այդպիսի կնկան մը ներքեւ որ այսպիսի ցնորքներ կը յղանայ: Վա՛յ մեզ. ահաւասի՛կ աննման թագաւորութեան մը արշալոյսը:

— Ո՛հ, հայր իմ, ի՛նչպէս բերանդ առաջ կ'երթայ այդպիսի բաներ ըսել այնպիսի իշխանուհիի մը մասին որ մեզ պատուով կը շնու:

— Լաւ է մը ըրած պիտի ըլլայի՛ր՝ զիս յաւէտ կ'անպատուէ ըսելով, գոչեց ծերը: Ո՞վ կը մտածէ այս պահուս թավէրնէյներուն վրայ: Ոչ ոք: Ընտանիքիս անունը Մէզոն-Ռուժի փլատակներուն տակ կը ննջէ, և ես կը կարծէի թէ մասնաւոր եղանակաւ մը և ժամա-

նակը եկած ատենը միայն հոնկէ դուրս պիտի ելնէր. բայց ոչ, սխալեր եմ, մանկուհիի մը քմածին հաճոյքը զայն պիտի նսեմացնէ, ցեխտէ, մրտէ եղեր: Իսկ լրագիրները, որոնք միշտ ծիծաղաշարժ դաներ կը փնտուեն, անոնցմով աղմուկ հանելու համար՝ որմէ կ'ապրուին, իրենց պիղծ յօդուածներուն մէջ պիտի նշանակեն մեծ իշխանուհիի մը Թավէրնիյի խրճիթին տուած այցելութիւնը: Տէ՛ր Աստուած, գաղափար մը յղացայ:

Սեպուհը այս խօսքերը այնպիսի եղանակաւ մը արտասանեց որ երկու երիտասարդները սարսռեցան:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, հայր իմ, հարցուց Փիլիպ:

— Կ'ըսեմ թէ այս պատմութիւնը ամէն մարդ գիտէ, և թէ, ինչպէս որ Մէտինայի կոմսը իր պալատը այրեց թագուհի մը գրկելու համար, ես ալ կրնամ խրճիթ մը վառել արքայադուստր մը հիւրասիրելէ ազատելու համար: Թո՛յլ տուէք թագուհիին որ գայ:

Երկու երիտասարդները միայն այս վերջին խօսքերը լսած ըլլալով անհանգիստ սրտով իրարու երեսնալիցան:

— Թո՛յլ տուէք որ գայ, կրկնեց Թավէրնէյ:

— Հիմայ ուր որ է կուգայ, պարոն, շարայարեց Փիլիպ: Ուղեկիցներէն քանի մը վայրկեան առաջ հասնելու համար Բիէրֆիթի ճամբովեկայ ես, բայց անոնք ալ հեռուն ըլլալու չեն:

— Ուրեմն կորսնցնելու ժամանակ չունինք, ըսաւ սեպուհը:

Եւ քսան տարեկան երիտասարդի մը դիւրաշարժութեամբ դահլիճէն դուրս ելաւ, խոհանոց վազեց, կրկարանէն բոցակէզ ածուխ մը առաւ և դէպի յարդով, առուոյտով և լուբիայի չոր կեղեւներով լեցուն շտեմարանները վազեց. արդէն ածուխը խոտերու

խուրձին մօտեցուցած էր, երբ յանկարծ Պալսամօ երեւան ելնելով անոր թեւէն բռնեց:

— Ի՞նչ կ'ընէք, պարոն, ըստ յարդէ շահը ձերունիին ձեռքէն խլելով, Աւատրիոյ տան արքիպօսուհին Պուրպօնեան սպարապետ մը չէ որ իր ներկայութեամբը տուն մը պղծէ:

Ծերունին կանգ առաւ ատգոյն, դողդոջուն և կծու ժպիտով մը շրթունքները պրկելով: Յօգուտ իր պատուոյն, ունեցած ոյժը ի մի հաւաքել ստիպուեցաւ ընդունելու համար այնպիսի որոշում որ՝ իր մէջի հանդուրժելի փոքրոգութիւնը կատարեալ թշուառականութեան կը փոխէր:

— Գացէ՛ք, պարոն, գացէ՛ք, շարայարեց Պալսամօ, միայն գիշերազգեստնիդ հանելու և պատշաճօրէն հագուելու ժամանակը մնաց ձեզի: Երբ ես Թավէրնէյ սեպուհը Փիլիպոսպուրկի պաշարման մէջ ճանչցայ, Սէն-Լուիի մեծ խաչը կը կրէր: Ըստ իս չկայ զգեստ մը որ ճոխ և շքեղ չերեւայ այդպիսի պատուանշանի մը ներքեւ:

— Բայց, պարոն, շարայարեց Թավէրնէյ սեպուհը, տիկին արքայադուստրը պիտի տեսնայ բան մը որ ձեզի անգամ չէի ուզեր ցուցնել, այսինքն թշուառութիւնս:

— Ապահով եղէք, սեպուհ, անոր միտքը հոս այնպիսի բանով մը զբաղած պիտի ըլլայ որ՝ մինչեւ անգամ չպիտի նշմարէ ձեր տան նոր թէ հին, աղքատիկ թէ ճոխ ըլլալը: Հիւրասէր եղէք, պարոն, իբրեւ աշնուական այդ է ձեր պարտականութիւնը: Ի նչ ընելուն նորին արքայական Բարձրութեան բազմաթիւ թըշնամիները, ըբ անոր բարեկամները իրենց գղեակները կ'այրեն իրենց հարկին ներքեւ չընդունելու համար զայն: Ապագայ բարկութիւնները չկանխենք, պարոն, ամէն բան իր ատենն ունի:

Պ. տը Թավէրնէյ հնազանդեցաւ այն համակերպութեամբ որուն փորձը անգամ մը ցուցուցեր էր արդէն, և դնաց իր տղաքը դատաւ, որոնք իրենց հօրը բացակայութենէն վրդոված՝ զայն կը փնտռէին:

Իսկ Պալսամօ լռելեայն մեկնեցաւ գողցնո սկսուած գործ մը աւարտելու համար:

ԺԴ.

ՄԱՐԻ-ԱՆԹՈՒԱՆԷ-ԺՕԶԷՅ ԱՐՔԻԴԲՍՈՒՀԻ ՏԱՆՆ ԱԻՍՏՐԻՈՅ

Արդարեւ, Պալսամօի ըսածին համեմատ, կորսնցնելու ժամանակ չկար. կառքերու և ձիերու դղրդիւն մը կը դուար սովորաբար խաղաղ եղող ճամբուն վրայ, որ ուղղակի սեպուհին դղեակը կը տանէր:

Նոյն միջոցին երեք կառքեր տեսնուեցան, որոնց մին դիցարանական նրբին քանդակներով և ոսկեճամուկ դրուագներով զարդարուած էր, և, հակառակ իր շքեղութեանը, միւսներէն նուազ փոշոտած և ցեխոտած չէր: Այս վերջինը եկաւ կեցաւ այն դրան քով, զոր բաց բռնած էր ժիւլպէր: Երիտասարդը այսքան փառապանծ մեծութիւններ տեսնելով տենդաբեր սարսուռ մը կը զգար:

Բսան ձիաւորներ, բոլորն ալ կտրիճ ու փայլուն, ժօզ. Պալս., քիւ 5—14. Բ.հր.Ն.Բ.

գլխաւոր կառքին քով եկան շարուեցան։ Իր զգեստին ներքեւ ասպետական մեծ ժապաւէնը կրող սեւազգեստ մարդու մը օգնութեամբ տասնըհինգէն տասնըվեց տարեկան զեռատի աղջիկ մը վար իջաւ կառքէն, որուն անփոշի բայց պարզօրէն յարզարուած մազերը ճակտէն դիզ մը բարձր կը կենային։

Մարի-Անթուանէթ Գաղիա կը հասնէր գեղեցկութեան այնպիսի համբաւով մը, զոր չեն ունեցած այն իշխանուհիները որոնք մեր թագաւորներուն գահակից ըլլալու սահմանուած են։ Գոթուարին էր զաղափար մը ունենալ անոր աչքերուն վրայ, որոնք թէպէտեւ իրօք գեղեցիկ չէին, բայց իր ուզած բոլոր արտայայտութիւնները կրնային առնել, մինչեւ իսկ իրերու չափազանց հակընդդէմ եղող քաղցրութեան և քամահրանաց արտայայտութիւնները։ Քիթը բարեձեւ էր, վերին շրթունքը գեղեցիկ, բայց ստորին շրթունքը իբրեւ տասնըեօթը կեսարներու ազնուապետական ժառանգութիւն՝ շատ թանձր, դուրս ցցուած և երբեմն կախ ըլլալուն, կարծես աղէկ չէր յարմարեր իր աղուոր դէմքին, բայց միայն այն ատեն երբ այդ դէմքը բարկութիւն կամ զայրոյթ յայտնել ուզէր։ Մարի-նոյն գոյնը սքանչելի էր, որուն փափուկ մորթին ներքեւէն արեան շրջանը կը տեսնուէր։ Կուրծքը, պարանոցը, ուսերը անման գեղեցկութիւն մը ունէին։ Ձեռքերը արքայական էին։

Երկու խիստ որոշ քալուածք ունէր, մին կամովին քալուածքը՝ որ հաստատուն, ազնուական և քիչ մը շուտափոյթ էր։ միւսը՝ ուր ինքզինքը կը թողուր թոյլ, հակուն և գրեթէ փայփայուն էր։ Երբէք կին մը յարգական ձեւեր կատարած չէ անորմէ աւելի շնորհալի կերպով, երբէք թագուհի մը անորմէ աւելի հմտութեամբ բարեւած չէ։

Այն օրը Մարի-Անթուանէթ կնոջ մը նայուածքն ու

ժպիտը ունէր, մանաւանդ երջանիկ կնոջ մը։ Որոշած էր նոյն օրը արքայորդիին կինը չնկատել ինքզինքը։

Սմեռաքաղցր հանդարտութիւն մը կը տիրէր դէմքին վրայ և յանկուցիչ բարեսիրութիւն մը աչքերուն կենդանութիւն կուտար։ Ճերմակ մետաքսէ զգեստ մը հագած էր և իր գեղեցիկ մերկ թեւերը խիտ ժանեակէ մեկոցակ մը կը կրէին։

Հազիւ թէ սոքը գետինը դրած՝ դարձաւ օգնելու իր պատուոյ տիկիներէն տարիքոտ կնոջ մը որ կառքէն կ'իջնէր։ յետոյ սեւազգեստ և կապոյտ ժապաւէնով մարդուն թեւը մերժեց և սկսաւ յառաջանալ ազատ օգը ծծելով և իր շուրջը նայելով, գոգցես ինքնիրեն տուած այս աղատութեան հիւլէներէն օգուտ քաղել ուզէր։

— Ո՛հ, ի՛նչ գեղեցիկ տեսարան, ի՛նչ աղուոր ծառեր, ի՛նչ վայելուչ տնակ։ Արդեօք որքա՛ն երջանիկ են այս մաքու օդին մէջ և այս շքասփիւռ ծառերուն տակ ապրողները։

Նոյն պահուն Փիլիպ տը Թավէրնէյ հասաւ։ Անտրէ թեւը հօրը տուած՝ եղբօրը կը հետեւէր հերարձակ և մոխրագոյն մետաքսէ զգեստ մը հագած։ Սեպուհը արքայական կապուտակ թաւչէ շքեղ զգեստ մը հագեր էր, որ նախնի պայծառութեան մէկ մնացորդն էր։ Անտարակոյս Պալսամօի պատուէրին հետեւելով՝ սեպուհը չէր մոռցած Սէն-Լուիսի մեծ ժապաւէնը կախել։ Տիկին արքայագուստը դէպի իրեն եկող երկու անձերը տեսնելուն պէս կանգ առաւ։

Դեռատի իշխանուհիին շուրջը գումարուեցաւ իր արքունիքը. պաշտօնակալները ձիերուն սանձէն բռնած, դրանիկները գլխարկնին ձեռքերնին, քովէ քով շարուած մեղմիւ կը փոփոային։

Փիլիպ տը Թավէրնէյ յուզմունքէն տփզուռնած՝ ար-

քայադատեր մօտեցաւ և մեղամաղձոտ ազնուութեամբ մը ըսաւ .

— Տիկին, եթէ Ձեր արքայական Բարձրութիւնը հաճի, պատիւը պիտի ունենամ իրեն ներկայացնելու հայրս՝ Պ. սեպուհ թավէրնէյ Մէզօն-Ռուժը և քոյրս՝ օրիորդ Գլէր-Անտրէ տը Թավէրնէյը :

Սեպուհը յարգանք խոնարհեցաւ թագուհիները ողջունել գիտցող մէկու մը պէս, Անտրէ վայելուչ երկ-չոտութեան բոլոր շնորհքն ու անկեղծ յարգանաց ամենաքնքոյշ քաղաքավարութիւնը ցոյց տուաւ :

Մարի-Անթուանէթ երկու երիտասարդներուն նայելով Փիլիպի իր հօրը աղքատութեանը մասին ըսածը միտքը եկաւ, անոնց նեղութիւնը գուշակեց :

— Տիկին, ըսաւ սեպուհը ամենավայելուչ ձայնով մը, Ձեր արքայական Բարձրութիւնը չափազանց պատիւ կ'ընէ Թավէրնէյի գլխակին, այսպիսի անշուք բնակարան մը արժանի չէ ընդունելու այսչափ ազնուութիւն և գեղեցկութիւն :

— Գիտեմ որ գաղիացի ծեր զօրականի մը տունը կը գտնուիմ, պատասխանեց տիկին արքայադուստրը, և իմ մայրս՝ Մարի-Թէրէզ պատերազմասէր կայսրուհին ըսած է ինձ թէ ձեր երկրին մէջ փառքի հարըստութիւն փնտռողները ստակի մասին գրեթէ միշտ ամենէն աղքատները եղած են :

Եւ անպատու մայելութեամբ իր գեղեցիկ ձեռքը Անտրէի երկնցուց : Դեռատի աղջիկը ծուներ դնելով համբուրեց զայն :

Սակայն սեպուհը իր վրայ իշխող գաղափարին ներքեւ կը սոսկար տեսնելով այս բազմութիւնը որուն աթոռ պիտի պակսէր :

Տիկին արքայադուստրը յանկարծ զայն սթափեցուց այս մտատանջութենէն :

— Պարոններ, ըսաւ իր ուղեկիցներուն դառնալով :

հարկ չիկայ որ գահաժառանգին տիկնոջը առանձնաշնորհները վայելէք : Դուք հոս ինձ սպասեցէք, կ'աղաչեմ, կէս ժամէն կը վերագառնամ : Հե՛տո եկուր, բարեսիրտ Լանկէրսհաուզն, ըսաւ գերմաներէն այն պառաւ կնոջ՝ որուն օգնած էր կառքէն իջնելու ատենը : Մե՛զ հետեւեցէք, պարոն, ըսաւ սեւազգեստ մարդուն :

Այս մարդը որ իր պարզ և անպաճոյճ զգեստին մէջ ականաւոր ազնուական մը ըլլալ կը թուէր, հազիւ երեսուն տարեկան էր. դէմքը գեղեցիկ և շարժուձեւերը շնորհալի էին : Իշխանուհիին ճամբայ բանալու համար մէկ կողմ քաշուեցաւ :

Մարի Անթուանէթ Անտրէն քովը տուաւ և նշան ըրաւ Փիլիպի որ իրեն մօտենայ :

Իսկ սեպուհը այն երեւելի անձին քով գտնուեցաւ որուն տիկին արքայադուստրը իրեն ընկերանալու պատիւը շնորհած էր :

— Դուք Թավէրնէյ Մէզօն-Ռուժն էք, հարցուց սեւազգեստ ազնուականը սեպուհին՝ բոլորովին ազնուապետական անպատեհութեամբ մը միջնամատով իր զգեստին ծալքերը հանգրիճելով :

— Պարոն թէ վսեմափայլ տէր կոչեմ ձեզ, հարցուց սեպուհը այնպիսի անպատշաճ կերպով մը որ սեւազգեստ ազնուականին ըրածէն վար չէր մնար :

— Պարզապէս իշխան ըսէք, պատասխանեց այս վերջինը, կամ բարձրապատիւ տէր, ինչպէս որ յարմար կը տեսնէք :

— Լաւ ուրեմն, բարձրապատիւ տէր, ես Թավէրնէյ Մէզօն-Ռուժ մըն եմ, ճշմարիտ Թավէրնէյ մը, ըսաւ սեպուհը առանց բոլորովին թողելու իր հեգնող ոճը՝ զոր երբեմն կը կորսնցնէր :

Բարձրապատիւ տէրը՝ որ մեծ իշխաններու յատու

ուշիմ դատողութիւն մը ունէր, անմիջապէս հասկցաւ թէ գեղջուկ ազնուականի մը հետ չէր իր գործը:

— Ամառը այս տո՞ւնը կը բնակի՞ք, շարայարեց:

— Ամառ ձմեռ, պատասխանեց սեպուհը որ կ'ուզէր վերջ տալ այս անհաճոյ հարցափորձերուն, բայց իւրաքանչիւր պատասխանին յարգական խոնարհութիւն մը կը միացնէր:

Փիլիպ երբեմն հօրը կը դառնար անձկութեամբ:

Արդարեւ, կարծես տունը սպառնական ու հեղինութեամբ կը մօտենար իր չքաւորութիւնը անգթաբար ցոյց տալու համար:

Սեպուհը ամէն բան աչք առած՝ ձեռքովը գրան սեմը կը ցուցնէր, ուր այցելուները ոտք չէին դրեր տակաւին, երբ իշխանուհին անոր դառնալով ըսաւ.

— Ներեցէք տունէն ներս չմտնելուս համար, պարոն, այս հովանին այնչափ սիրեցի որ ամբողջ կեանքս հոս կ'ուզէի անցընել: Սինեակներէ ձանձրացած եմ քիչ մը: Սինեակներու մէջ պիտի ընդունին զիս տասնըհինգ օրէն, ես որ բաց օդը, ծառերուն շուքն ու ծաղիկներուն հատը կը սիրեմ:

Յետոյ Անտրէի դառնալով աւելցուց.

— Օրիորդ, այս գեղեցիկ ծառերուն տակ գաւաթ մը կաթ բերել կուտաք ինձ, այնպէս չէ՞:

— Մեծափառ տիկին, ըսաւ սեպուհը տփուռնելով, ի՞նչպէս համարձակինք այդպիսի դոյզն նախաճաշիկ մը մատուցանել ձեզ:

— Իմ ամենէն աւելի սիրածս այդ է, պարոն: Թարմ հաւկիթ և կաթնեղէն, ահա ասոնք էին իմ նախաճաշ Շէօնպրունի մէջ:

Լա Պրի չքեղ միազգեստի մը մէջ փայլուն և փքացեալ, ձեռքը անձեռոց մը բռնած, յանկարծ յատմիկներու կամարի մը տակէն երեւան ելաւ, որուն հովա-

նիին կը նախանձէր տիկին արքայադուստրը պահէ մը ի վեր:

— Նորին արքայական Բարձրութեան համար ճաշը պատրաստ է, ըսաւ Լա Պրի աննկարագրելի պարզութեամբ և յարգանքով:

— Ո՞հ, կախարդի մը տանը մէջ կը գտնուիմ, գուցէ իշխանուհին:

Եւ դէպի բուրումնաւէտ կամարը վազեց:

Սեպուհը անձկութենէն չփոթութեան մատնուելով արքունական ձեւակերպութիւնները մոռցաւ և սեւազգեստ ազնուականէն հեռացաւ, տիկին արքայադուստր մօտենալու համար:

Փիլիպ և Անտրէ իրարու կը նայէին զարմանօք և տակն ու վրայ եղած, զարմանքէ աւելի անձկութիւն ունենալնին ակնյայտի կ'երեւէր:

Տիկին արքայադուստրը դալարազարդ կամարնեւուն տակ հասած ատենը հիացման ճիչ մը արձակեց:

Սեպուհը որ անոր կը հետեւէր, գոհունակութեան հառաչք մը արձակեց:

Անտրէի բազուկները վար ինկան և այնպիսի դէմք մը ստացաւ որ կը նշանակէր.

«Այս ի՞նչ նշանակութիւն ունի, Աստուած իմ»:

Դեռատի իշխանուհին աչքին պոչովը տեսաւ բոլոր այս մնջկատակը:

Կլէմագիդներու, յասմիկներու և ծաղկալից այծտերեւուկներու ներքեւ, որոնց օձապտոյտ ճիւղերը շարաւոր թանձրախիտ տերեւներ կը ցցէին, ձուածեւ զարաւոր թանձրախիտ տերեւներ կը ցցէին, ձուածեւ սեղան մը դրուած էր որ թէ՛ վրան ծածկուած դամակեան փայլուն սփռոցէն, թէ՛ ոսկեղէն և արծաթեղէն սպասներէն ակնախտիդ տեսարան մը կը պարզէր:

Տասը սկաւառակ տասը կոջնականներու կը սպասէին:

Առաջին նայուածքով տիկին արքայադստեր ուշադրութիւնը գրաւող բանն եղաւ հաղուագիւտ այլ տարօրինակ բաղադրութեամբ նախաձայ մը :

Շաքարով եփած տարաշխարհիկ պտուղներ կային սեղանին վրայ , ամէն երկրի անուշեղէններ , Հալէպի պաքսիմատ , Մալթայի նարինջ , անլուր մեծութեամբ լեմոններ և մանտարիններ , ամէնքն ալ ձուածեւ մեծկակ ամաններու մէջ դրուած : Վերջապէս ամենէն հին և ազնիւ գինիները կարկեհանի և տպագիտոնի պէս կը վառլտկէին չորս գեղասքանչ յուրաններու մէջ՝ որոնք պարսկական ոճով շինուած և քանդակուած էին :

Տիկին արքայադստեր կաթը ոսկեզօծ արծաթէ ամանի մը մէջ լեցուած էր :

Տիկին արքայադուստրը շուրջը նայելով՝ տփփոյն և ահաբեկած դէմքեր միայն տեսաւ զինքը չըջապատողներուն մէջ :

Իշխանուհիին ուղեկիցները կը զարմանային և կը հրճուէին առանց բան մը հասկնալու :

— Ուրեմն ի՞նձ կը սպասէիք , պարոն , հարցոց տիկին արքայադուստրը Թալէրնէյ սեպուհին դառնալով :

— Ե՞ս , տիկին , թոթովեց սեպուհը :

— Անշուշտ : Այսպիսի պատրաստութիւններ տասը վայրկեանի մէջ չեն կրնար կատարուիլ , բայց ես հազիւ տասը վայրկեանէ ի վեր ձեր տունը եկած եմ :

Եւ խոսքը աւարտեց Լա Պրիին նայելով այնպիսի դէմքով մը որ կը նշանակէր՝ « Մանաւանդ երբ մէկ ծառայ միայն կայ » :

— Տիկին , պատասխանեց սեպուհը , իրօք Ձեր արքայական Բարձրութեան կը սպասէի , կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ Նորին Բարձրութեան գալուստը գիտէի :

Տիկին արքայադուստրը փիլիպին դարձաւ :

— Ուրեմն պարոնը ձեզի գրեց :

— Ո՛չ , տիկին :

— Ոչ ոք գիտէր թէ ես ձեր տան մէջ կանգ պիտի առնէի , պարոն , մինչեւ իսկ կրնամ ըսել թէ ես ալ չէի գիտեր : Ձէի ուզեր ձեզ շփոթութիւն պատճառել : Տակաւին այս գիշեր միայն խօսեցայ այս մասին ձեր պարոն որդւոյն որ դեռ ժամ մը առաջ իմ քովս էր , և ինձմէ քանի մը վայրկեան առաջ միայն հասած ըլլալու է հոս :

— Արդարեւ , տիկին , հազիւ քառորդ մը եղաւ դալը :

— Ուրեմն ո՞վ լուր բերաւ ձեզի , գուցէ պարիկ մը որ օրիորդին կնքամայրն է անշուշտ , յարեց իշխանուհին ժպտելով և Անտրէի նայելով :

— Տիկին , ըսաւ սեպուհը աթոռ մը մատուցանելով իշխանուհիին , պարիկ մը չէ այս բարեբաստիկ լուրը ինձ բերողը , այլ . . .

— Հապա ո՞վ է , հարցուց իշխանուհին տեսնելով որ սեպուհը կը վարանէր :

— Կախարդ մը , ճշմարիտ կախարդ մը :

— Կախարդ մը , միթէ կարելի՞ է :

— Ես ալ չեմ գիտեր , բայց վերջապէս Ձեր արքայական Բարձրութիւնը քիչ մը պատշաճօրէն կարենալ ընդունիլս անոր կը պարտիմ , ըսաւ սեպուհը :

— Ուրեմն ասոնց և ոչ մէկին կրնանք ձեռք դըպցընել , ըսաւ իշխանուհին սեղանը ցուցնելով , որովհետեւ այս պատրաստուած նախաձայը կախարդի գործ է : Ահա իշխանն ալ կուգայ , յարեց իշխանուհին իշխանին դառնալով և Սթրազպուրկի կարկանդակը ցուցնելով , անշուշտ ասիկայ ալ չպիտի ուտենք : Իսկ դուք , սիրելի բարեկամուհիս , ըսաւ իր դայեակին , մի՛ հաւատաք այս կիպոսի գինիին և իմ օրինակիս հետեւեցէք :

Այս ըսելով իշխանուհին կտր և նրբափող յուրանէ մը մեծ գաւաթի մը չափ ջուր լեցուց ոսկիէ բաժակի մը մէջ :

— Արդարեւ, թերեւս իրաւունք ունի Նորին Բարձրութիւնը, ըսաւ Անտրէ տեսակ մը սոսկումով :

Փիլիպ զարմանքէն կը դողար : Առջի օրուան եղածին վրայ ամենեւին տեղեկութիւն չունենալով փոխն ի փոխ հօրը և քրոջը կը նայէր և անոնց նայուածքէն միտքերնուն անցածը գուշակել կը ջանար :

— Կրօնական վարդապետութեան հակառակ բան մըն է ասիկայ, ըսաւ իշխանուհին, Պ. կարգինալը պիտի սկսի քարոզ տալ այս մասին :

— Տիկին, ըսաւ սեւազգեստ առաջնորդը, մենք՝ եկեղեցական իշխաններս չափազանց աշխարհասէր ըլլալով դիւրութեամբ չենք կրնար հաւատ ընծայել երկնից բարկութեան՝ ուտելեաց մասին և բաւական ալ մարդասէր ըլլալով՝ չենք կրնար այրել այնպիսի բարեսիրտ կախարգ մը որ այս տեսակ ընտիր՝ բաներով մեզ կը անուցանէ :

— Մի՛ ծաղրէք, բարձրապատիւ տէր, ըսաւ սեւազգեստը : Կ'երգնում որ բոլոր ասոնց հեղինակը կախարգ մըն է, կատարեալ կախարգ մը, որ գրեթէ ժամ մը առաջ ինձ իմացուց Նորին Բարձրութեան և որդւոյս գալուստը :

— Ժամ մը առաջ, ըսաւ իշխանուհին զարմացած :

— Այո՛, առաւաւելն ժամ մը եղաւ գալը :

— Եւ ժամուան մը մէջ դուք կարող եղաք այս սեղանը կո՛ւչնել, աշխարհիս չորս մասերէն այս պըտուղները հո՞ս հաւաքել : Թօքիօյէն, Կօնտտանսէն, Կիպրուէն, Մալակայէն գինինն՝ր բերել : Եթէ իրականութիւնն է ձեր ըսածը, պարոն, դուք ձեր կախարգէն աւելի վարպետ կախարգ մըն էք :

— Ո՛չ, տիկին, միշտ ան է գործողը, ամէն բան ընողը ան է :

— Ի՞նչ, միշտ ա՞ն է :

— Այո՛, ան որ գետնէն հանեց այս պատրաստ սեղանը, վերջապէս բոլոր ձեր տեսածները :

— Լրջօրէն կը խօսիք, այնպէս չէ՞, պարոն, հարցուց իշխանուհին :

— Ազնուականութեանս վրայ կ'երգնում, պատասխանեց սեւազգեստը :

— Բա՛, գոչեց կարտինալը լրջօրէն և սկաւառակը ձեռքէն ձգելով, ևս կարծեցի թէ կատակ կ'ընէք :

— Ո՛չ, գերապայծառ տէր :

— Տուններնիդ կախարգ մը, ճշմարիտ կախարգ մը ունիք :

— Ծճմարիտ կախարգ մը : Եթէ լսեմ որ այս սեղանին սպասներուն ոսկին ալ ան շինած է, դարձեալ չեմ զարմանար :

— Ի՞նչ, արդեօք փիլիսոփայական քա՞րը գտած է, գոչեց կարտինալը, որուն աչքերը ցանկութեամբ փայլատակիլ սկսան :

— Ո՛հ, Պ. կարգինալը բաղդաւոր է, ըսաւ իշխանուհին, ան որ բոլոր կենացը մէջ փիլիսոփայական քարը փնտռած ու չէ գտած :

— Կ'ուզէի ըսել նաեւ Ձեր Բարձրութեան թէ գերբնական բաներէն աւելի՛ օգտակար և անկարելի բաներէն աւելի՛ հետաքրքրաշարժ բան չեմ գտած, պատասխանեց աշխարհասէր իշխանը :

— Կարծեմ մօտս վէրքին գրի, ըսաւ իշխանուհին : Մեծ մարդիկը իրենց գաղնիքներն ունին մանաւանդ երբ դիւանագէտ են : Ես ալ կ'իմացնեմ ձեզի, պարոն կարտինալ թէ կախարգութեան մէջ շատ յառաջ գացած եմ և երբեմն եթէ ոչ անկարելին, եթէ ոչ գերբնականը՝ գոնէ անհաւատալին կը մարդարէանամ :

Անշուշտ այս խօսքը հանելուկ մըն էր զոր կարգինալը միայն կրնար հասկնալ : Ծճմարիտ խօսած պիտի

ըլլանք ըսելով թէ իշխանուհիին քաղցրահայնաց աչքը կարտինալին հետ խօսած միջոցին վառուեր էր այն կայծակներով որոնք ներքին մրրիկ մը կը կանխեն:

Սակայն փայլակը միայն երեւցաւ, չգոռաց: Իշխանուհին ինքզինքը զսպեց և կրկնեց.

— Օ՛ն, պարոն տը թալէրնէյ, հանդէսը կատարեալ ընելու համար կախարդը մեզի ցուցուր տեսնենք: Ո՞ւր է, սօր տուփին մէջ դրիր զայն:

— Տիկին, պատասխանեց սեպուհը, աւելի անիկայ զիս ու տունս կրնայ տուփի մը մէջ դնել:

— Արդարեւ հետաքրքրութիւնս կը գրգռէք, ըսաւ Մարի Անթուանէթ. ստուգիւ, պարոն, զայն տեսնել կ'ուզեմ:

Այս խօսքերը այնպիսի եզանակաւ մը արտատանուած էին որ կարելի չէր պատասխան մը գտնել անոնց, բաց աստի այնպիսի հրապոյր մը դրուած էր անոնց մէջ՝ որով միայն Մարի Անթուանէթ գիտէր համեմել իր խօսքերը ի հարկին: Սեպուհը՝ որ իր տղուն և աղջկան հետ ոտքի կեցած էր իշխանուհիին սպասարկելու դիտաւորութեամբ, ամբողջութեամբ իմացաւ անոր ըսածը: Նշան ըրաւ լա Պրիին՝ որ փոխանակ սպասարկելու այս ականաւոր կոչնականները կը դիտէր և իր աչքերուն առջեւ պարզուող տեսարանը դիտելով՝ կարծես իր յետնեալ տարեթուակներէն քսան տարուանը կը գանձէր:

Սեպուհը գլուխը վերցուց և սպասաւորին ըսաւ.

— Գնա իմաց տուր Պ. Ժօզէֆ Պալսամօ սեպուհին որ արին արքայական Բարձրութիւն տիկին իշխանին կը փափաքի զինքը տեսնել:

Լա Պրի մեկնեցաւ:

— Ժօզէֆ Պալսամօ, ըսաւ իշխանուհին, ի՞նչ տարօրինակ անուն է ատիկայ:

— Ժօզէֆ Պալսամօ, կրկնեց կարդինալը մտախօհելով, կարծեմ ես այդ անունը լսած եմ:

Հինգ վայրկեան անցաւ, բայց ոչ ոք լուսթիւնը խզելու վրայ խորհեցաւ:

Յանկարծ Անտրէ սարսուաց. մանկամարդուհին սաղարթախիտ տերեւներուն մէջէն մօտեցող քայլերու ձայներ առեր էր, աւելի ճիշդը՝ զօրութեան մը մօտենալը զգացեր էր, ձայն մը որ միւսներուն համար անլսելի կը մնար տակաւին:

Ոստերը բացուեցան և Ժօզէֆ Պալսամօ ճիշդ Մարի Անթուանէթի դէմը գտնուեցաւ:



ԺԵ.

ՄՈԳՈՒԹԻՒՆ

Պալսամօ պատկառանօք խոնարհեցաւ, բայց գրեթէ անմիջապէս բարձրացուց իր բաղմաբեղուն գլուխը և հրացայտ ակնարկը իշխանուհիին վրայ սեւեռելով՝ լռելեայն անոր հարցաքննութեան սպասեց:

— Եթէ Պ. տը Թավէրնէյի պատմած անձը դուք էք, ըսաւ Մարի Անթուանէթ, մօտ եկէք, պարոն, որպէս զի տեսնենք թէ ինչ բան է կախարդ մը:

Պալսամօ քայլ մը եւս առնելով անգամ մըն ալ խոնարհեցաւ:

— Ձեր արհեստը գուշակութիւնն է, պարոն, հարցուց իշխանուհին աւելի հետաքրքրութեամբ նայելով Պալսամօի և մէկ կողմէն ալ կաթը խմելով:

— Արհեստս չէ, տիկին, պատասխանեց Պալսամօ, բայց կրնամ գուշակել:

— Լուսաւոր կրօնքի մը մէջ մեծցած ենք, դիտել տուաւ իշխանուհին, և միայն կաթորիկ կրօնքին խորհուրդներուն կը հաւատանք:

— Այդ խորհուրդները յարգելի են անշուշտ, պատասխանեց Պալսամօ միտքը ամփոփելով: Բայց ահա Պ. տը Ռօհան կարտինալը որ եկեղեցական մը ըլլալով հանդերձ Ձեր Բարձրութեան պիտի ըսէ թէ միայն այդ խորհուրդները չեն որ յարգանքի արժանի են:

Կարտինալը սարսուռաց. անունը մէկու մը ըսած չէր, ոչ ոք արտասանած էր զայն, բայց օտարականը քօղամերկած էր զինքը:

Մարի Անթուանէթ այս պարագան չնշմարել ձեւացնելով շարայարեց:

— Գոնէ կը խոստովանիք, պարոն, թէ միայն անոնք չեն վիճարանութեան ենթարկուածները:

— Տիկին, պատասխանեց Պալսամօ միեւնոյն յարգանքով՝ այլ նաեւ նոյն հաստատամտութեամբ, հաւատքին քով ստուգութիւնը կայ:

— Քիչ մը մութ կը խօսիք, պարոն կախարդ, ես կատարեալ Գաղիացի եմ սրտով, բայց միտքով տակաւին ոչ, հետեւաբար լեզուին նրբութիւնները տակաւին շատ աղէկ չեմ հասկնար. թէպէտ ինձ ըսին որ Պ. տը Պիէվրը զանոնք պիտի սորվեցնէ ինձ, բայց այժմ ստիպողաբար ձեզմէ կ'ազաչեմ որ քիչ մը նուազ հանելուկ խառնէք ձեր խօսքերուն մէջ եթէ կ'ուզէք որ ձեր ըսածը հասկնամ:

— Իսկ ես, ըսաւ Պալսամօ մեղամազձոտ ժպիտով մը գլուխը թօթվելով, Ձեր Բարձրութենէն մութին մէջ մնալու հրամանը պիտի խնդրէի: Մեծ ցաւ պիտի զգայի ձեզի պէս մեծ իշխանուհիի մը այնպիսի ապագայ մը գուշակելով որ գուցէ իր ակնկալածին չհամապատասխանէ:

— Օ՛հ, օ՛հ, ատիկայ աւելի ծանրակշիռ է, ըսաւ Մարի-Անթուանէթ, և պարոնը կ'ուզէ հետաքրքրութիւնս գրգռել, յուսալով որ իրմէ ապագայիս գուշակութիւնը կը պահանջեմ:

— Ընդհակառակը, տիկին, Աստուած պահէ զիս ձեր ապագան գուշակելու դրուելէ:

— Այո՛, միթէ այնպէս չէ՞, կրկնեց իշխանուհին խնդալով, որովհետեւ մէջէն չպիտի կրնայիք ելնել, հէ՞:

Բայց իշխանուհիին ծիծաղը մարեցաւ առանց արձագանք մը ունենալու պալատականներէն: Բոլոր ներկաները այս տարօրինակ անձին ազդեցութիւնը կը

կրէին. Պալտամօ ընդհանուրին ուշադրութեան կեդրոնը եղած էր նոյն պահուն:

— Օ՛ն, բացարձակապէս խոստովանեցէք, ըսաւ իշխանուհին:

Պալտամօ խոնարհեցաւ առանց պատասխանելու:

— Իմ գալուստս դ՞ուք գուշակեցիք Պ. տը Թափերնէյի, կրկնեց Մարի Անթուանէթ անհամբերութեան թեթեւ շարժումով մը:

— Այո՛, տիկին:

— Եւ ի՞նչպէս, սեպուհ, ըսաւ իշխանուհին՝ որ այս տարօրինակ խօսակցութեան մէջ ուրիշ ձայն մըն ալ լսելու պէտքը կը սկսէր զգալ. խօսակցութիւն մը զոր գուցէ կը ցաւէր սկսած ըլլալուն, սակայն վերջացնել չէր ուզեր:

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ սեպուհը, ամենապարզ կերպով, գաւաթ մը ջուրի մէջ նայելով:

— Զջմարի՛տ է, հարցուց իշխանուհին Պալտամօի դառնալով:

— Այո՛, տիկին, պատասխանեց այս վերջինը:

— Ա՛յդ է ձեր դիւթական մատեանը. Գոնէ անմեղ է. երանի՛ր թէ ձեր խօսքերն ալ անոր նման փայլուն ըլլային:

Կարդինալը ժպտեցաւ:

— Տիկին իշխանուհին Պ. տը Պիէվրէն դաս առնելու պէտք չունի, ըսաւ սեպուհը մօտենալով:

— Ո՛հ, սիրելի ասպնջականս, ըսաւ իշխանուհին զուարթութեամբ, զիս մի շողօքորդէք, կամ աւելի լաւագոյն կերպով շողօքորդեցէք: Կարծեմ խիստ սովորական խօսք մըն է ըրածս: Գանք պարոնին:

Ի, Մարի Անթուանէթ Պալտամօի կողմը դարձաւ, ուր գոգցես անդիմադրելի զօրութենէ մը ակամայօրէն կը քաշուէր, ինչպէս որ կը քաշուի մարդ դէպի աղէտք մը սպառնացող վայր մը:

— Քանի որ պարոնին ապագան գաւաթ մը ջուրին մէջ կարդացիք, իմա ալ յուրանի մը մէջ չէ՞ք կրնար կարդալ:

— Կատարելապէս, տիկին, ըսաւ Պալտամօ:

— Ուրեմն ինչ՞ու կը մերժէիք քիչ մը առաջ:

— Որովհետեւ ապագան անստոյգ է, տիկին, և եթէ ամպ մը տեսնէի հոն...

Պալտամօ խօսքը կտրեց:

— Յետո՞յ, հարցուց իշխանուհին:

— Ինչպէս որ պատիւ ունեցայ ձեզ ըսելու, Ձեր արքայական Բարձրութիւնը տրտմեցնելու ցաւը պիտի ունենայի:

— Ձիս կը ճանչնա՞ք արդէն, առաջին անգամ ո՞ւր տեսաք զիս:

— Պատիւ ունեցայ Ձեր Բարձրութիւնը տակաւին մանուկ տեսնել հայրենի երկրին մէջ իր օգոստափառ մօրը քով:

— Մայրս տեսա՞ք:

— Այդ պատիւը ունեցայ. օգոստափառ և մեծազօր թագուհի մըն է:

— Կայսրուհի, պարոն:

— Սրտով և մտքով թագուհի ըսել ուզեցի, և սակայն...

— Պարոն, մօրս մասին լռութիւններ կը պահէք, ըսաւ իշխանուհին արհամարհանօք:

— Ամենէն մեծանձն սիրտերն իսկ իրենց տկարութիւնները ունին, տիկին, մանաւանդ երբ կը կարծեն թէ խնդիրը իրենց զաւակներուն երջակութեան վրայ է:

— Կը յուսամ թէ պատմութիւնը Մարի Թէրէզի վրայ ոչ մէկ տկարութիւն պիտի կրնայ հաստատել, զիտե՛լ տուաւ Մարի Անթուանէթ:

Ժօզ. Պալս., քիւ 5—15. Բ.հր.Ն.Ք.

— Որովհետեւ պատմութիւնը չպիտի գիտնայ ինչ որ Մարի Թէրէզ կայսրուհին, Ձեր արքայական Բարձրութիւնն ու ես միայն գիտենք:

— Երեքնուս համար գաղտնիք մը ունիք, պարոն, ըսաւ իշխանուհին արհամարհանօք ժպտելով:

— Երեքնո՛ւս համար, տիկին, պատասխանեց Պալասամօ հանգարտութեամբ, այո՛, երեքնո՛ւս համար:

— Տեսնենք ի՞նչ է այդ գաղտնիքը, պարոն:

— Առաջին գաղտնիքը վերջինին դուռը պիտի բանայ, տիկին:

— Հոգ չէ, ըսէք:

— Ձեր Բարձրութիւնը կը փափաքի՞...

— Այնպէս կ'ուզեմ:

— Շօնաբունի պալատին մէջ խուց մը կայ զոր Սաքսոնեան խուց կ'անուանեն. հոն գտնուող յախճապակիէ թանկագին անօթներուն պատճառաւ, սկսաւ Պալասամօ խոնարհութիւն մը ընելէ վերջ:

— Այո՛, ըսաւ իշխանուհին, ե՞տքը:

— Այդ խուցը Նորին Վեհափառութիւն Մարի Թէրէզ կայսրուհիին յատկացուած բնակարանին մէկ մասը կը կազմէ:

— Այո՛, ըսաւ իշխանուհին, ե՞տքը:

— Կայսրուհին այդ խուցին մէջ կը կատարէ սովորաբար իր մտերմական թղթակցութիւնը:

— Այո՛:

— Պուրի թանկագին գրասեղանի մը վրայ՝ զոր Լուի Ժե. Թագաւորը տուաւ Ֆրանսուա առաջին կայսեր:

— Մինչեւ հոս ըսածնիդ ճշմարիտ է, պարոն, բայց ձեր ըսածը ամէն մարդ ալ կրնայ գիտնալ:

— Թող Ձեր արքայական Բարձրութիւնը հաճի համբերել: Օր մը, առաւօտեան ժամը եօթին ատենները, կայսրուհին տակաւին անկողնէն չելած, Ձեր Բարձ-

րութիւնը նայն խուցը մտաւ մասնաւոր դռնէ մը որ Ձեր Բարձրութեան յատկացուած էր, որովհետեւ Նորին Վեհափառութիւն կայսրուհիին աղջկանց մէջ Ձեր Բարձրութիւնը ամենէն աւելի սիրելի էր:

— Վե՞րջը, պարոն:

— Ձեր Բարձրութիւնը գրասեղանին մօտեցաւ: Ձեր Բարձրութիւնը հարկաւ կը յիշէ, անկէ ի վեր հինգ տարի անցած է:

— Շարունակեցէք:

— Գրասեղանին վրայ բաց նամակ մը կար զոր կայսրուհին նախընթաց օրը գրած էր:

— Ե՞տքը:

— Ձեր Բարձրութիւնը այդ նամակը կարդաց, իշխանուհին թեթեւօրէն կարմրեցաւ:

— Եւ զայն կարդալէ ետքը, անշուշտ Ձեր Բարձրութիւնը գոհօն ըլլալով կարգ մը բացատրութիւններէ, գրիչը առաւ և իր ձեռքովը...

Իշխանուհին անձկութեամբ կը սպասէր: Պալասամօ շարունակեց.

— Երկու բառ աւրեց:

— Եւ այդ երկու բառերը որո՞նք էին, գոչեց իշխանուհին աշխուժիւ:

— Նամակին առաջին բառերն էին:

— Ես ձեզի անոնց տեղը չեմ հարցնե՞ր՝ այլ անոնց նշանակութիւնը:

— Սիրոյ չափազանց հաւաստիք մը, անշուշտ նամակին տիրոջն ուղղուած. ասկէ առաջ եկած է այն տկարութիւնը որուն համար կ'ըսէի թէ գո՞տ նման պարագայի մը մէջ ձեր օգոստափառ մայրը կրցած էր ամբաստանուիլ:

— Ուրեմն կը յիշէ՞ք այդ երկու բառերը:

— Կը յիշեմ:

— Կրնա՞ք ինձ կրկնել զանոնք:

— Կատարելապէս :

— Ըսէք :

— Բացէ՞ ի բաց :

— Ա, յո՛ ,

— « Սիրելի բարեկամուհիս » :

Մարի Անթուանէթ շրթունքները խածաւ և գունատեցաւ :

— Ա, յո՛մ, ըսաւ Պալսամօ, Ձեր արքայական Բարձրութիւնը կ'ուզէ՞ որ իրեն ըսեմ թէ որո՛ւ ուզողուած էր այդ նամակը :

— Ո՛չ, բայց կ'ուզեմ որ գրէք զայն :

Պալսամօ գրպանէն ոսկի ճարմանդով տեսակ մը յուշատետր հանեց, թղթերէն մէկուն վրայ նոյն մետաղէ մատիտով քանի մը բառ գրեց, թուղթը պատռեց և իշխանուհիին ներկայացուց խոնարհելով :

Մարի Անթուանէթ թուղթը առաւ և կարգաց.

« Նամակը ուզողուած էր Լուի Ժե. Թագաւորին տարփուհիին, սիկից սը Բուրբուր մարքիզուհիին » :

Իշխանուհին զարմանալով այս մարդուն նայեցաւ, որուն խօսքերը այնչափ մեկին, ձայնը յստակ և անդողդոջ էր, և որ խոնարհելով հանդերձ կ'իշխէր իր վրայ :

— Ասոնց բոլորն ալ ճշմարիտ է, պարոն, ըսաւ իշխանուհին, թէպէտ չեմ գիտեր թէ ի՞նչ միջոցով ձեռք ձգած էք այս մանրամասնութիւնները. ստեղծեմ գիտեր, ամէնուն առջեւ կը կրկնեմ, ճշմարիտ է :

— Ուրեմն, ըսաւ Պալսամօ, թող Ձեր Բարձրութիւնը թոյլ տայ ինձ մեկնիլ և թող բաւականանայ իմ ստույգեանս այս անմեղ փորձովը :

— Ո՛չ, պարոն, կրկնեց իշխանուհին գրգռուած, դուք քանի գիտուն ըլլաք՝ ես ալ պիտի պնդեմ որ իմ ապագաս գուշակէք : Դուք ինձ միայն անցեալին վրայ խօսեցաք, ձեռնէ ուղածս ապագան է :

Իշխանուհին այս քանի մը խօսքը տենդային յուզմամբ մը արտասանեց, զգացում մը զոր պարապ տեղը իր ունկնդիրներէն ծածկել կը ջանար :

— Պատրաստ եմ, ըսաւ Պալսամօ, և սակայն, Ձեր արքայական Բարձրութիւնէն պիտի խնդրեմ որ զիս նեղը չդնէ :

— Երբէք երկու անգամ կ'ուզեմ կրկնած չեմ, և կը յիշէք, պարոն, որ արդէն անգամ մը ըսի :

— Գոնէ թոյլ տուէք պատգամին խորհուրդ հարցնել, տիկին, ըսաւ Պալսամօ, աղերսարկու եղանակաւ մը : Յետոյ պիտի գիտնամ թէ կրնամ ապագան յայնել Ձեր արքայական Բարձրութեան :

— Լաւ կամ յոռի՝ գիտնալ կ'ուզեմ, կը հասկնա՞ք, պարոն, կրկնեց Մարի Անթուանէթ յարածուն զայրոյթով մը : Եթէ լաւ ըլլայ՝ շողքորդութիւն մը համաթելով չպիտի հաւտամ, իսկ եթէ յոռի ըլլայ՝ ազգարարութիւն մը պիտի նկատեմ զայն, բայց ի՞նչ որ ալ ըլլայ՝ կը խոստանամ շնորհակալ ըլլալ ձեռնէ : Սկսեցէք ուրեմն :

Իշխանուհին այս վերջին խօսքերը այնպիսի եղանակաւ մը արտասանեց որ՝ ո՛չ գիտողութիւն և ո՛չ յապագում կ'ընդունէր :

Պալսամօ կարճ և նեղ փողով կ'ըսէր յուրանը առաւ, որուն վրայ արդէն խօսեցանք, և զայն ոսկի բաժակի մը վրայ դրաւ :

Ջուրը այսպէս լուսաւորուելով շէկ ճառագայթներ արձակեց : Ճառագայթները գաղտակուրին և կեդրոնի ազամանդին խոռոնուելով՝ կարծես նշանակութիւն մը ստացան գուշակին մանրախոյզ աչքերուն առջեւ :

Ներկաները լուեցին :

Պալսամօ բիւրեղեայ յուրանը ձեռքերուն մէջ բարձրացուց և պահ մը զայն ուշադրութեամբ քննելէ վերջը, կրկին սեղանին վրայ դրաւ գլուխը շարժելով :

— Ի՞նչպէս, հարցուց իշխանուհին :

— Չեմ կրնար խօսիլ, ըսաւ Պալսամօ :

Իշխանուհին դէմքը այնպիսի կերպարանք սը ստացաւ որ յայտնապէս կը նշանակէր « Հոգ մի՛ ընէք, ես գիտեմ թէ ինչպէս կը խօսեցնեն լսել ուզող մը : »

— Որովհետեւ ըսելիք մը չունիք, ըսաւ :

— Կան այնպիսի բաներ որոնք չեն կրնար ըսուիլ իշխաններու, տիկին, պատասխանեց Պալսամօ այնպիսի եղանակաւ մը՝ որմէ կը յայտնուէր թէ որոշած էր մինչեւ իսկ իշխանուհին հրամաններուն դէմ գնել :

— Մանուանդ երբ այդ բաները ոչինչ բառով կը թարգմանուին, ըսաւ իշխանուհին :

— Ատիկայ չէ գիտ լռեցնողը, տիկին, այլ ընդհանրապէս :

Իշխանուհին արհամարհանօք ժպտեցաւ :

Պալսամօ շփոթած կ'երեւէր, կարգինալը սկսաւ գինքը ծաղրել, իսկ սեպուհը մօմռալով անոր մօտեցաւ :

— Օ՛ն, կախարդս ա՛լ մաշեցաւ, շատ չդիմացաւ : Հիմայ կը մնայ տեսնել այս ոսկեզէն անօթներուն որթի տերեւներու փոխուիլը՝ ինչպէս արեւելեան վէպերուն մէջ, ըսաւ սեպուհը հեզնելով :

— Աւելի նախընտրելի էր ունենալ որթի պարզ տերեւներ՝ քան այս չնչին զարդերը զորս պարօնը պատրաստեր է ամէն ճիգով ինձ ներկայանալու համար, ըսաւ Մարի Անթուանէթ :

— Տիկին, հաճեցէք յիշելու թէ ես չխնդրեցի այդ պատիւը, պատասխանեց Պալսամօ չափազանց տփուհեղով :

— Է՛հ, պարօն, դժուարին չէր գուշակել թէ ձեզ տեսնել պիտի ուզէի :

— Ներեցէք անոր, տիկին, ըսաւ Անտրէ ցած ձայնով, կարծէր է թէ ըրածը աղէկ բան մըն է :

— Բայց ես կ'ըսեմ թէ անիրաւ է, պատասխանեց

Իշխանուհին Պալսամօէն և Անտրէէն միայն լսուելու ձայնով մը : Մերունի մը խոնարհեցնելով չբարձրանար մարդ, և երբ Գաղիոյ գահաժառանգին կողակիցը ազնուականի մը անագեայ գաւաթէն կրնայ խմել՝ զայն չեն ստիպեր զրաբանի մը ոսկիէ գաւաթէն խմելու :

Պալսամօ գլուխը վեր առաւ իժէ մը խայթուածի պէս սարսուալով :

— Տիկին, ըսաւ գողգոջուն ձայնով մը, պատրաստ եմ ձեր ճակատագիրը ձեզ գիտցնելու քանի որ ձեր կուրուծիւնը ձեզ հոն կը մղէ :

Պալսամօ այնպիսի խիստ և միանգամայն սպառնալից եղանակաւ մը արտասանեց այս քանի մը բառերը որ ներկայ եղողները իրենց երակներուն սառիլն զգալով զողացին :

Դեռատի արքիզքսուհին յայտնապէս տփուհեցաւ :

— Ականջ մի՛ կախեր տըւոր խօսքերուն, ըսաւ պառաւը Մարի Անթուանէթին գերմաներէն լեզուաւ :

— Թոյլ տուէք որ լսէ, գիտնալ ուզեց և պիտի գիտնայ, պատասխանեց Պալսամօ նոյն լեզուով :

Օտար լեզուով արտասանուած այս խօսքերը, զոր քանի մը անձինք միայն հասկցան, սոյն միջադէպին աւելի խորհրդաւոր կերպարանք մը տուին :

— Օ՛ն, ըսաւ իշխանուհին իր պառաւ դայեակին շանքերուն դէմ գնելով. օ՛ն, թող խօսի : Եթէ հիմայ լռէ ըսեմ անոր, պիտի կարծէ թէ կը վախնամ :

Պալսամօ լսեց այս խօսքերը և տխրագին այլ գողունի ժպիտ մը նկարուեցաւ իր շրթունքին վրայ :

— Շատ աղէկ ըսեր էի, մըմնչեց իւրովի, սնապարծ արիութիւն մը :

— Խօսեցէ՛ք, ըսաւ իշխանուհին, խօսեցէ՛ք, պարօն :

— Չեր արքայական Բարձրութիւնը միշտ կը պնդէ որ խօսի՛մ :

— Ես որոշումս բնաւ չեմ փոխեր :

- Ուրեմն առանձին ձեզի, տիկին, ըսաւ Պալտամօ:
- Լա՛ւ, ըսաւ իշխանուհին, խուսափողական բնաւ պատճառ մը չպիտի թողում անոր: Հեռացէ՛ք:
- Եւ նշանի մը վրայ, որմէ կը յայտնուէր թէ հրամանը ընդհանուրին էր, ամէն մարդ քաշուեցաւ:
- Այս ալ ուրիշ միջոց մըն է, ըսաւ իշխանուհին Պալտամօի գառնալով, մասնաւոր ունկնդրութիւն մը ընդունիլ, այնպէս չէ՞, պարոն:
- Մի՛ ջանաք զիս գրգռել, տիկին, կրկնեց օտարականը, ես գործիք մըն եմ զօր Աստուած կը գործածէ ձեզ լուսաւորելու համար: Արհամարեցէ՛ք բաղդը, նոյնը ձեզի պիտի հատուցանէ ան, որովհետեւ վրէժ առնելը շատ աղէկ գիտէ: Ես միայն բաղդին խաղերը կը թարգմանեմ: Իմ յապաղումովս ձեր զգացած բարկութեան պատճառը զիս մի՛ բռնէք, ինչպէս որ զիս պատճառ մը չպիտի համարիք այն աղէտներուն որոնց բօթազրոյց մունեատիկն եմ միայն:
- Ուրեմն ձեր ըսելիքները աղէտներ են, ըսաւ իշխանուհին Պալտամօի յարգական խօսքերէն մեղմանալով և անոր ոյժին առջեւ զինաթափ ըլլալով:
- Այո՛, տիկին, և շատ մեծ աղէտներ:
- Աձէ՛նքն ալ ըսէք:
- Պիտի ջանամ:
- Ուրեմն:
- Հարցուցէք ինձ:
- Նախ՛ ընտանիքս երջանիկ պիտի ըլլայ:
- Ո՞րը, ձեր թողած թէ ձեզի սպասող ընտանիքը՛:
- Ո՛հ, իմ հարազատ ընտանիքս, Մարի-Թէրէֆ մայրս, Ժօզէֆ եղբայրս, Գարօլին քոյրս:
- Ձեր աղէտները անոնց չպիտի հասնին:
- Այդ աղէտները միայն իմ անձի՞ս կը վերաբերին:
- Ձեզի և ձեր նոր ընտանիքին:

- Կրնա՞ք յայտնել ինձ այդ աղէտները:
- Կրնա՛մ:
- Արքայական ընտանիքը երեք իշխաններէ կը բաղկանայ:
- Այո՛:
- Պէրի դուքսը, Բրովանս կոմսը և Արթուս կոմսը:
- Ճիշդ է:
- Ի՞նչ պիտի ըլլայ այս իշխաններուն ճակատագիրը:
- Երեքն ալ պիտի թագաւորեն:
- Ես գաւազ պիտի ունենամ:
- Պիտի ունենաք:
- Մա՞նչ պիտի ըլլայ:
- Ձեր ունենալիք գաւազներուն մէջ մանչ ալ պիտի ըլլայ:
- Անոնց մահը տեսնելու ցաւը պիտի ունենամ:
- Ձեր մէկ գաւազին մեռնելուն և միւս գաւազին սղջ ըլլալուն վրայ պիտի ցաւիք:
- Ամուսինս զիս պիտի սիրէ՞:
- Պիտի սիրէ՛:
- Շա՞տ:
- Չափէն աւելի:
- Բայց կը հարցնեմ ձեզ, ի՞նչ աղէտ կրնայ հասնիլ ինձ երբ ամուսինս զիս սիրէ և ընտանիքս շրջապատէ:
- Այս երկուքն ալ չպիտի ըլլայ:
- Այդ պարագային գոնէ ժողովուրդին սէրն ու նեցուկը պիտի մնայ ինձ:
- Ժողովուրդին սէրն ու նեցուկը... խաղաղութեան ատեն ովկէանոսն է...: Փոթորկի ատեն ովկէանոսը տեսած էք, տիկին...:
- Բարեգործութիւններով փոթորիկը պիտի ար-

գիւղեմ, կամ, եթէ փոթորիկ ելնէ՝ ես ալ անոր պիտի խառնուիմ:

— Ալիքը որչափ ամենի ըլլայ, ակօսած անդունդը անչափ խոր կ'ըլլայ:

— Աստուած իմ:

— Աստուած չպաշտպաներ այն գլուխները զոր ինքն իսկ դատապարտած է:

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն, միթէ թագուհի չի՞ պիտի ըլլամ:

— Պիտի ըլլաք: Երկին, բայց երանի՜ թէ չըլլա- յիք:

Դեռատի կինը արհամարհանօք ժպտեցաւ:

— Մտիկ ըրէք և յիշեցէք, տիկին, շարայարեց Պալսամօ:

— Ձեզ մտիկ կ'ընեմ:

— Դիտեցի՞ք այն սենեակին օթոցը՝ ուր առաջին անգամ Գաղիա մտած ատեննիզ պառկեցաք, շարու- նակեց մարգարէն:

— Այո՛, պարոն, պատասխանեց իշխանուհին սար- սուալով:

— Ի՞նչ կը ներկայացնէր այդ օթոցը:

— Անմեղներու ջարդը:

— Խոստովանեցէք որ ջարդարարներուն չարաշուք դէմքերը Ձեր արքայական Բարձրութեան միտքէն ե- լած չեն տակաւին:

— Կը խոստովանիմ:

— Լա՛ւ. փոթորիկ միջոցին բան մը չգիտեցի՞ք:

— Կայծակը իմ ձախ կողմս ծառ մը խորտակեց՝ որ ապալելու ատեն քիչ մնաց կառքս պիտի ջախ- ջախէր:

— Ասոնք նշաններ են, ըսաւ Պալսամօ տխրագին ձայնով մը:

— Աղետալի՞ նշաններ:

— Կարծեմ դժուարին պիտի ըլլար ուրիշ կերպով թարգմանել զանոնք:

Իշխանուհին գլուխը կուրծքին վրայ ծռեց, յետոյ պահ մը լռելէ և միտքը ամփոփելէ վերջ ըսաւ.

— Ի՞նչպէս պիտի մեռնի ամուսինս:

— Առանց գլուխի:

— Ի՞նչպէս պիտի մեռնի տը Բրովանս կոմսը:

— Առանց սրունքի:

— Ի՞նչպէս պիտի մեռնի տ'Արթուա կոմսը:

— Գահագուրկ:

— Ե՞ս:

Պալսամօ պատասխանելու տեղ գլուխը թօթվեց:

— Խօսեցէ՛ք... ըսաւ իշխանուհին, խօսեցէ՛ք:

— Ա՛լ ըսելիք չունիմ:

— Բայց կ'ուզեմ որ խօսիք, գոչեց Մարի Անթուա- նէթ գողալով:

— Գթացէ՛ք, տիկին:

— Ո՛հ, խօսեցէ՛ք... պնդեց իշխանուհին գրեթէ աղերսագին:

— Երբէ՛ք, տիկին, երբէ՛ք:

— Խօսեցէ՛ք, պարոն, կրկնեց Մարի Անթուանէթ սպառնալից եղանակաւ մը, խօսեցէ՛ք, եթէ ոչ պիտի ըսեմ թէ բոլոր ասոնք ծիծաղաշարժ խեղկատակու- թիւններ են: Զգուշացէ՛ք, այսպէս չեն ծաղրեր Մարի Թէրէզի աղջիկը, կին մը... որուն ձեռքին մէջն է ե- րեսուն միլիոննոց ժողովուրդի մը կեանքը:

Պալսամօ պատասխան չտուաւ:

— Կը նշանակէ թէ ասկէ աւելին չէք գիտեր, ը- սաւ իշխանուհին արհամարհանօք ուսերը թօթվելով. աւելի ճիշդը ըսելով՝ ձեր երեւակայութիւնը իր վախ- ճանին հասած է:

— Ես ամէն բան գիտեմ, կ'ըսեմ ձեզի, տիկին, կրկնեց Պալսամօ, և որովհետեւ անպատճառ կ'ուզէք...

— Այո՛ , կ'ուզեմ :

Պալատն օսկի բաժակին մէջէն յուրանը առաւ և կամարին մթին մէկ խորշը դրաւ՝ ուր քանի մը արուեստական ժայռեր քարայր մը կը ձեւացնէին , յետոյ արքիդքսուհիին ձեռքէն բռնելով կամարին մութ ստուերին մէջ տարաւ զայն :

— Պատրաստ էք , ըսաւ իշխանուհիին որ գրեթէ ահաբեկած էր այս ազգու գործողութենէն :

— Այո՛ :

— Ուրեմն ծո՛ւնը դրէք , տիկին , ծո՛ւնը դրէք և Աստուծոյ ազօթեցէք որպէս զի խնայէ ձեզ այն սարսափելի վախճանը զոր այժմ պիտի տեսնէք :

Իշխանուհին մեքենաբար հնազանդեցաւ և ծունկերուն վրայ ինկաւ :

Պալատն իր գաւազանովը բիւրեղէ գունդին դպաւ , այս մոզական շարժումէն անշուշտ մթին և սոսկալի կերպարանք մը ծրագրուեցաւ ջուրին մէջ :

Իշխանուհին ջանաց օտքի ելնել , պահ մը դեղեւեց , երերակաց , դողդոջեց և վերջապէս վար ինկաւ , սոսկալի աղաղակ մը արձակեց և մարեցաւ :

Սեպուհը վազեց , իշխանուհին ինքզինքը կորսնցուցեր էր :

Քանի մը ըսպէէն խելքը գլուխը եկաւ :

Ձեռքերը ճակտին վրայ դրաւ այնպիսի մէկու մը պէս որ մութին մէջ թխագոյն ամպ մը կը փնտռէ :

Յետոյ , յանկարծ , սարսափահար , խեղդուկ ձայնով մը գոչեց .

— Յուրանը , յուրանը :

Սեպուհը յուրանը երկարեց : Ջուրը յտակ ու ամբիժ էր :

Պալատն անյայտացեր էր :

ՏԸ ԹԱՎԷՐՆԷՅ ՍԵՊՈՒՇԸ ՎԵՐՋԱՊԷՍ ԱՊԱԳԱՅԻՆ ՓՈՔՐԻԿ ՍԷԿ ԾԱՅՐԸ ՆՇՄԱՐԵԼ ԿԸ ԿԱՐՄԷ

Ինչպէս որ ըսինք , իշխանուհիին մարիլը առաջին անգամ տեսնողը աը թավէրնէյ սեպուհը եղած էր , որ մէկ կողմ քաշուած , ուրիշներէ աւելի անհանգիստ , իշխանուհիին և կախարգին միջեւ տեղի ունեցածը տեսնել կը բաղձար , Նորին արքայական բարձրութեան ճիշը լսեր Պալատնօի թաւուտներէն դուրս ելնելը տեսեր ու վազեր եկեր էր :

Իշխանուհիին առաջին խօսքը յուրանը — ուզելը եղաւ , երկրորդը՝ կախարգին բան մը չընելնին պատուերելը : Ճիշդ ժամանակին տուած էր այս պատուէրը : Փիլիպ աը թավէրնէյ կատղած առիւծի մը պէս արդէն անոր ետեւէն խոյացած էր երբ իշխանուհիին ձայնը զինքը կեցուց :

Իշխանուհիին պատուոյ տիկինը մօտեցաւ իրեն և դերմաններէն հարցումներ ուզեց , բայց իշխանուհին իրեն եղած բոլոր հարցումներուն պատասխանեց թէ Պալատն միշտ յարգանք վարուեր էր իրեն հետ , թէ ինքը հաւանականաբար ճամբուն երկարութենէն և առջի օրուան մրրիկէն խոնջած՝ ջրային սաստիկ տեսդէ մը բռնուած էր :

Այս պատասխանները Պ. աը Ռօհանի հաղորդուեցան՝ որ բացատրութիւններու կը սպասէր առանց խնդրել կամարձակելու :

Արքունիքին մէջ կէս պատասխանով մը կը գոհանան. իշխանուհիին պատասխանէն զոհ չեղան՝ բայց գոհ ըլլալ ձեւացուցին ամէնքն ալ: Ուստի Փիլիպ իշխանուհիին մօտեցաւ և ըսաւ.

— Տիկին, Նորին արքայական Բարձրութեան հրամաններուն հնազանդելու համար ցաւով կուգամ յիշեցընել թէ այն կէս ժամը որ հոս անցընելու սահմանուած էր, լրացած է և ձիերը պատրաստ են:

— Լաւ, պարոն, ըսաւ իշխանուհին. հիւանդի մը անհոգութեան յանկուցիչ շարժումովը, բայց առջի դիտաւորութեանս կը դառնամ: Անմիջապէս ճամբայ ելնելու անկարող կը զգամ ինքզինքս...: Եթէ քանի մը ժամ քնանամ, կ'երեւի թէ ինքզինքս պիտի գտնեմ:

Ապուհը տժգունեցաւ: Անտրէ մտայուզութեամբ իր հօրը նայեցաւ:

— Ձեր Բարձրութիւնը գիտէ թէ այս որջը որչափ անարժան է իրեն, թոթովեց տը թափէնէյ սեպուհը:

— Ո՛հ, կ'աղաչեմ, պարոն, պատասխանեց իշխանուհին նուազուն կնոջ մը պէս, բան մը աչքիս չերեւար, միայն թէ քիչ մը հանգչիմ:

Անտրէ անյայտ եղաւ իր սենեակը պատրաստել տալու համար:

Այս սենեակը ոչ ամենէն մեծն էր և ոչ ալ ամենէն զարդարուածը, բայց Անտրէի պէս աշխուական աղջկան մը սենեակը ինչ որ ալ ըլլայ, միշտ քնքոյշ բան մը կայ անոր մէջ զոր ուրիշ կին մը տեսնելով կը հրճուի:

Նոյն միջոցին ամէնքն ալ իշխանուհիին քով փութացին, բայց այս վերջինը մեղամաղձոտ ժպիտով մը ձի քովը նշան մը ընելով հասկցուց թէ առանձին մնալ կ'ուզէր:

Ամէնքը մէկանց ետ քաշուեցան: Մարի Անթուանէթ ամենուն ալ ետեւէն նայեցաւ մինչեւ որ զգեստ-

ներու վերջին քղանցքը, շրջագրեստներու վերջին ծայրը անյայտացաւ. յետոյ տժգոյն այտերը գեղեցիկ ձեւքերուն մէջ առնելով մտախոհութեան մէջ թաղուեցաւ:

Արդեօք սոսկալի նշաններ չէին այն նշանները որոնք իրեն կ'ուղեկցէին դէպի Գաղիա: Այն սենեակը ուր Սթրազպուրկի մէջ կանգ առած էր, այն առաջին սենեակը ուր ոտքը կը դնէր այն երկրին վրայ՝ որուն թագուհին պիտի ըլլար, և որուն ծածկոցը Անմեղնութեան կոտորածը ներկայացնող գորգ մըն էր, մըրիկը որ նախընթաց օրը կառքին մօտ ծառ մը ջախջախեր էր, և վերջապէս այսպիսի տարօրինակ մարդէ մը ըսուած կանխասացութիւնները, կանխասացութիւններ՝ որոնց յաջորդած էր այն խորհրդաւոր տեսիլքը որուն գագառնիքը կ'երեւի թէ իշխանուհին որոշած էր մէկու մը չյայտնել:

Անտրէ գրեթէ տասը րոպէէն վերադարձաւ: Եկած էր իմաց տալու թէ սենեակը պատրաստ էր: Իշխանուհիին դրած արգելքը Անտրէի համար չըլլալով Անտրէ կրցաւ սաղարթախիտ կամարին տակը մտնել:

Գեռատի աղջիկը պահ մը խօսիլ չհամարձակելով իշխանուհիին առջեւ կեցաւ: Նորին արքայական Բարձրութիւնը խորին մտախոհութեան մէջ թաղուած ըլլալով զայն չէր տեսներ:

Վերջապէս Մարի Անթուանէթ գլուխը վերցուց և ժպտելով ձեռքի շարժում մը ըրաւ:

— Նորին Բարձրութեան սենեակը պատրաստ է, ըսաւ Անտրէ, միայն կ'աղերսենք...

Իշխանուհին թոյլ չտուաւ որ գեռահաս աղջիկը աւարտէ իր խօսքը:

— Մեծապէս շնորհակալ եմ, օրիորդ: Կ'աղաչեմ, Լանկէրսհուզըն կոմսուհին կանչեցէք և մեզի առաջնորդ եղէք:

Անտրէ հնազանդեցաւ . պատուոյ տիկինը շուտա-
փոյթ քայլերով առաջ անցաւ :

— Թեւդ ինծի՛ տուր, բարեսիրտ Պրիժիգս, ըսաւ
իշխանուհին գերմաներէն, որովհետեւ կը զգամ թէ
առանձին քայլելու ոյժ չունիմ :

Կոմսուհին հնազանդեցաւ : Անտրէ շարժում մը
ըրաւ իշխանուհիին օգնելու համար :

— Գերմաներէն կը հասկնամք, օրիորդ, հարցուց
Մարի Անթուանէթ :

— Այո՛, տիկին, պատասխանեց Անտրէ գերմանե-
րէն, քիչ մըն ալ կը խօսիմ :

— Շատ լաւ, գոչեց իշխանուհին ուրախութեամբ :
Ո՛հ, յարմար է, յարմար է :

Անտրէ, հակառակ իր փափաքին, չհամարձակեցաւ
օգոստափառ հիւրին հարցնել թէ ի՞նչ էր յարմար
եղածը :

Իշխանուհին տիկին տը Հանկէրտհաուզընին թեւի
կռթնելով քայլ առ քայլ առաջացաւ : Ծունկերը կը
կթոտէին :

Թանձրախիտ կամարէն դուրս ելնելու ատեն
Պ. Տը Ռօհանի ձայնը լսեց որ կ'ըսէր .

— Ի՞նչ, պարոն տը Սթէնվիլ, հակառակ տրուած
հրամանին Նորին արքայական Բարձրութեան հետ խօ-
սի՛լ կ'ուզէք անպատճառ :

— Կարեւոր է, պատասխանեց կառավարիչը հաս-
տատուն ձայնով մը, ապահով եմ որ ինծի պիտի ներէ :

— Պարոն, չեմ գիտեր թէ...

— Թոյլ տուէ՛ք կառավարիչին որ հոս գայ, պարոն
տը Ռօհան, ըսաւ իշխանուհին սաղարթախիտ կամա-
րէն տակէն դուրս հանելով գլուխը . եկէ՛ք, պարոն
տը Սթէնվիլ :

ՀՐԱՅԱՐԱԿԻՑ ՍՈՎՐԱՏ ՍԱՐԲՑԵԱՆ, ԳԱՀԻՐԷ

Ամէնքն ալ Մարի Անթուանէթի հրամանին առջեւ
խոնարհելով մէկդի քաշուեցան՝ որպէս զի Գաղիան կա-
ռավարող ամենակարող պաշտօնատարին քեռայրը անցնի :

Պ. տը Սթէնվիլ իր շուրջը նայեցաւ զազանի խօսիլ
ուզող մէկու մը պէս : Մարի Անթուանէթ հասկցաւ որ
կառավարիչը իրեն մամառուր ըսելիք մը ունէր : Եւ իշ-
խանուհին տակաւին բերանը չբացած ամէնքն ալ հեռա-
ցան անոր քովէն :

— Վէրասայէն լուր կը բերեմ, տիկին, ըսաւ Պ. տը
Սթէնվիլ ցած ձայնով մը և իշխանուհիին նամակ մը
ներկայացուց զոր մինչեւ այն ատեն իր նկարակիտուած
զլխարիկին տակը պահած էր :

Իշխանուհին նամակը առաւ և պահարանին վրայի
հասցէն կարդաց :

« Ս. Պ. տը Սթէնվիլ, կառավարիչ Սթրազպուրկի » :

— Նամակը չէ թէ ինձ՝ այլ ձեզ ուղղուած է, պա-
րոն, բացէ՛ք, և եթէ ինձ համար կարեւոր բան մը կայ,
կարդացէ՛ք զայն ինձ :

— Նամակը թէպէտեւ իմ հասցէիս ուղղուած է, տի-
կին, բայց սա ծայրը տեսէ՛ք, եղբորս Պ. տը Շօաղէօլին
հետ կանխաւ որոշած նշանը կը կրէ, որմէ կը հետեւցնեմ
թէ նամակը Ձեր Բարձրութեան կը պատկանի :

— Ո՛հ, ատուղիս, խա՛չ մը կայ, չտեսայ տուէ՛ք :

Իշխանուհին նամակը բացաւ և հետեւեալ տողերը
կարդաց .

« Եթէ կնքամայր մը գտնուի, տիկին Տիւպարիի
ներկայացումը որոշուած է : Կը յուսանք որ չգտնուի :
Բայց այս ներկայացման առաջին առնելու ամենէն ա-
պահով միջոցը Նորին արքայական Բարձրութեան ժամ
առաջ ժամանելը կրնայ ըլլալ : Անգամ մը որ Նորին
արքայական Բարձրութիւնը վէրասայ հասնի, ոչ ոք պի-
տի համարձակի այլպիսի այլանդակութիւն մը առաջար-
կել » :

Ժօզ. Պալս., թիւ 6—16, Բ.հր.Ն.Ք.

— Շա՛տ բաւ, ըստ իշխանութիւն առանց ամենախորք յուզմունք մը ցուցնելու և նամակին սրբունակութեան առանց գոյգն կարեւորութիւն մը իսկ ընծայել ձեւադրնելու :

— Ձեր արքայական Բարձրութիւնը պիտի հանգչի՞, հարցուց Անտրէ կրկնտութեամբ :

— Ո՛չ, շնորհակալ եմ, օրիորդ, ըստ արքայքաւնէին, առողջ օդը զիս կազդուրեց, տեսէք ինչպէս ինքզինքս գտայ :

Մարի Անթուանէթ այս ըսելով կոմսուհիին թեւը թողուց և քանի մը արագ և հաստատուն քայլերով յառաջացաւ, կարծես թէ բան մը պատահած չըլլար :

— Ձերս պատրաստեցէք, պիտի մեկնիմ, հրամայեց :

Պ. աբ Ռօհան՝ ապուշ կրթամ՝ Պ. աբ Սթէնվիլի նալեցաւ, գոզցեալ այս յանկարծական փոփոխութեան քասարութիւնը պահանջելու համար անկէ :

— Արքայորդին համբերութիւնը կը կորսնցնէ, ըստ կտաւարիչը կարախնալին ականջն ի վար :

Սուտը այնպիսի ճարտարութեամբ գործածուած էր որ Պ. աբ Ռօհան անխորհրդապահութիւն մը կարծեց և գոհ եղաւ :

Իսկ Անտրէ իր հօրմէն ստրկած էր թագակիր գլուխներու բոլոր կամայականութեանց դէմ խոնարհիլ, ուստի Մարի Անթուանէթի այս հակասական ընթացքին վրայ շատ չգարմացաւ. իսկ այս վերջինը՝ անոր դատնալով և անոր դէմքին վրայ անրացատրելի քողցրութեան մը արտայայտութեանէն ուրիշ բան մը չտեսնելով ըսաւ .

— Շնորհակալ եմ, օրիորդ, ձեր հիւրընկալութեանէն շատ գոհ մնացի :

Ապա սեպուհին գտնալով աւելցուց .

— Պարոն, պէտք է գիտնաք որ վիճնայէն մեկհնելու առեւտ ուխտեցի Պապիոյ սահմանները մտած մի-

ջոցիս առաջին անգամ դէմս ելլող Փրանսայի զաւակը երջանկացնել : Եւ այդ Փրանսացին ձեր սրբին է . . . : Բայց չկարծէք թէ այսչափով պիտի բաւականանամ և օրիորդը պիտի մոռնամ . . . : Ի՞նչ է ձեր աղջկան անունը, պարոն :

— Անտրէ, օգոտափառ տիկին :

— Ձկարծէք որ օրիորդ Անտրէն պիտի մոռնամ :

— Ո՛հ, վեհափառ տիկին, մրմնջեց ծագկանաս աղջիկը :

— Այո՛, զայն պատուոյ օրիորդ մը պիտի ընեմ՝ մենք կարող ենք մեր աղնուականութիւնը սպացուցանել, այնպէս չէ՞, պարոն, շարայարեց իշխանուհին թաւվէրնէյի դատնալով :

— Ո՛հ, օգոտափառ տիկին, գոչեց սեպուհը, որ իր երազներուն իրականացումը կը տեսնէր Մարի Անթուանէթի այս խօսքերուն մէջ, այդ կողմէն հոգ չունինք, որովհետեւ հարուստ ըլլալէ աւելի աղնուական ենք . . . սակայն . . . սակայն այսպիսի մեծ բաղդ մը . . .

— Ձեր իրաւունքն է : Եղբայրը թագաւորը պիտի պաշտպանէ բանակին մէջ, քոյրը իշխանուհիին պիտի ծառայէ անոր քով . հայրը սրբուցն հաւատարմութեան, իսկ աղջկան առաքինութեան խրատներ պիտի տայ . . . : Որքա՛ն արժանաւոր ծառաներ պիտի ըլլան ինձ անոնք, այնպէս չէ՞, պարոն, շարայարեց Մարի Անթուանէթ երիտասարդին գտնալով՝ որ ծուներ դրաւ և յուզմունքէն բառ մը իսկ չկրցաւ արտասանել :

— Բայց . . . , մրմնջեց սեպուհը որ առաջին անգամ ինքը եղած էր խորհելու կարողութիւն ունեցողը :

— Այո՛, կը համկնամ, ըստ իշխանուհիին, պատրաստութիւններ պիտի տեսնէք, այնպէս չէ՞ :

— Անչո՛ւշտ, տիկին, պատախաճեց թաւվէրնէյ :

— Կ'ընդունիմ, սակայն այդ պատրաստութիւնները շատ երկար տեսելու չին :

Տխուր ժպտո մը Անտրէի և Փիլիպի շրթունքներէն սանելով սեպուէին սոճոյն շրթներուն վրայ կանգ առաւ իշխանուէին լոնց, լուսթիւն մը որ թափէրնէյնեքու անձնասիրութեան տրուած մահացու հարուած մըն էր :

— Ձեր ինծի հաճոյ երեւալու փախաքը նկատելով կ'ըսեմ թէ աւելորդ պատրաստութիւններու հարկ չիկայ, յարեց իշխանուէին : Կրնամ նաեւ իմ կառքերէս մին ձեզի թողուլ, իմ ետեւէս ձեզ պիտի բերէ ան : Օ՛ն, պարոն կառավարիչ, օգնեցէք ինձ :

Կառավարիչը մօտեցաւ :

— Կառք մը կը յատկացնեմ Պ. ար թափէրնէյի որ պէս զի օրիորդ Անտրէն իմ հետ Բարիլ բերէ, ըստ իշխանուէին : Այդ կառքին ուղեկից մը անուանեցէք որպէս զի իմ կառքերէս մին ըլլալը յայտնի ըլլայ :

— Անմիջապէս, տիկին, պատասխանեց Սթէնվիլ սեպուէն : Առաջ անցէք, պարոն ար Պօլէր :

Հատատուն քալուածքով, վառվրուն և մտացի աչքերով քսանըչորէն քսանընիւկ սարեկան երխտասարդ մը ուղեկիցներու շարքէն դուրս ելաւ և գլխարկը ձեռքը յառաջացաւ :

— Պ. ար թափէրնէյի համար կառք մը պիտի պահէք և անոր պիտի ուղեկցիք, ըստ կառավարիչը :

— Ձանացէք որ շուտով մեզի հասնին, հրամայեց իշխանուէին, եթէ պէտք ըլլայ ուղեհանգոյցները կրկնապատկեցէք :

Սեպուէն և իր դաւակները հազարումէկ չնորհակալութիւններ մատուցին :

— Այս յանկարծական մեկնումը կը յուսամ թէ ձեզ չվշտացներ, այնպէս չէ՞, պարոն, հարցուց իշխանուէին :

— Ձեր Բարձրութեան հրամաններուն կը հպատակինք, պատասխանեց սեպուէն :

— Մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ, մրմնջեց իշխանուէին ժպտելով : Պարոններ, կառքն'ը մտէք : Պարոն Փիլիպ, ձի' հեծէք :

Փիլիպ հօրը ձեռքը համբուրելէ և քոյրը ողջագուրելէ վերջ թամբին վրայ դատկեց :

Քառորդ մը ետքը՝ նախընթաց օրուան ամպին պէս պտրտկող բոլոր այս հեծեալներէն ոչ ոք մնաց թափէրնէյի ծառուղիին մէջ, բացի պատանիէ մը որ դրան սեմին վրայ նստած՝ սոճոյն ու տխուր, հետուէն, ճամբուն վրայէն սուրացող երիւարներուն ոտքերէն արտագրուած փոշիի յետին շամանդաղը կը դիտէր անյազ աչքերով :

Այս պատանին ժիլպէրն էր :

Այս միջոցին սեպուէն Անտրէի հետ մինակ մնացած ինչ ըսելիքը չէր գիտեր :

Թափէրնէյի դահլիճին այս միջոցին ներկայացուցած տեսարանը բաւական հետաքրքրաշարժ էր :

Անտրէ ձեռնամած կը խորհէր այս խել մը անորի նակ, անակնկալ և անլուր իրողութեանց վրայ՝ որոնք իր խիտ հանդարտ կեանքին մէջէն կ'անցնէին և երազի մը, անհաւատալի տեսիլքի մը երեւոյթը կը ստանային :

Սեպուէն իր ձեռմէ կ'ոտնէր կը պատէր, որոնց մէջտեղէն երկար ու ուրբուն մագեր դուրս կը ցցուէին, և շապիկին ծոպերը կը փեթոտէր :

Նիգօլ դրանը կոթնած իր տէրերը կը դիտէր :

Լա Պրի՛ բազուկները կախ, բերանարաց Նիգօլին կը նայէր :

Նախ սեպուէն սթափեցաւ :

— Ոճրագո՛րժ, դոչեց Լա Պրիին, հող փայտի պէս կեցեր, ես մինչ այն ազնուականը՝ թագաւորին պաշտօնակալը դուրսը կը սպասէ :

Լա Պրի կողմնակի ոտուած մը ըրաւ, ձախ ոտքը աչին կառչեցաւ և թաւաղաղոր մեկնեցաւ :

Պահէ մը վերադառնալով ըսաւ :

- Պարոն, ազնուականը վարն է :
- Ի՞նչ կ'ընէ :
- Չիուն խոս կը կերցնէ :
- Լաւ, կա՞ռքը :
- Կառքը ծառուղիին մէջն է :
- Լծուած է :
- Չորս ձիերէ : Ո՞ն, ի՞նչ գեղեցիկ կենդանիներ, պարոն, ծաղկանոցին նոնենիները կ'ուտեն :
- Թագաւորին ձիերը իրաւունք ունին ուզածնին ուտելու : Աղէկ միտքս ինկու, կախա՞րդը ինչ եղաւ :
- Կախարդը անյայտացաւ, պարոն :
- Սեղանը այնպէս զարդարուած ձգելով, ըսաւ սեպուհը զարմանահար, ատիկայ հուսալիք բան չէ, հարկաւ պիտի վերագոննայ, կամ իրեն տեղը մէկը պիտի դրկէ զանոնք սոնելու համար :
- Չեմ կարծեր, ըսաւ Լա Պրի : Ժիլլէր անոր մեկնիլը տեսեր է իր մեծ կառքովը :
- Ժիլլէր անոր մեկնիլը տես՞ր է, շարայարեց սեպուհը մտախոհ :
- Այո՛, պարոն :
- Տա դատարկապորտ ժիլլէրն ալ բան չլիտցնէր աչքէն, քիթը ամէն բանի մէջ կը խոթէ : Գնա ճամբորդութեան պատրաստութիւն տեսիր :
- Ամէն բան պատրաստ է, պարոն :
- Ի՞նչ, պատրաստ է :
- Այո՛, տիկին արքայազուստրին հրամանը ընելու պէս Պ. սեպուհին տեսնակը մտայ և անոր զգեստներն ու ձեւակեղէնները ծրարեցի :
- Ինչո՞ւ այդպիսի բաներու կը խառնուիս, ստա՛հակ :
- Է՛հ, պարոն, ձեր փախաքները կանխաւ կտտարելով կարծեցի թէ լաւ բան մը ըրած պիտի ըլլամ :
- Անմիտ : Օ՞ն, աղջկանս օգնէ :

- Շնորհակալ եմ, հայր իմ, Նիգօլ ինձ կ'օգնէ :
- Սեպուհը պահ մը մտածելէ վերջ Լա Պրիի գառնալով ըսաւ .
- Բայց շա՛ն ծնունդ, անկարելի բան մը կայ :
- Ո՞րն է, պարոն :
- Որուն վրայ բնաւ չես խորհած, որովհետեւ ուղեղը ջուր կտրած է :
- Ըսէք, պարոն :
- Այսինքն թէ Նորին արքայական Բարձրութիւնը առանց Պ. ալ Պօղէրին բան մը տալու մեկնած է, կամ թէ կախարդը առանց ժիլլէրին բան մը ընելու անյայտացած է :
- Այս միջոցին գաւիթին մէջ տկար սուլում մը լսուեցաւ :
- Պարոն, ըսաւ Լա Պրի :
- Ի՞նչ կայ :
- Կը կանչէ :
- Ո՞վ :
- Այն պարոնը :
- Թագաւորին պաշտօնակալը :
- Այո՛, և անա՛ ժիլլէրն ալ որ ըսելիք մը ունեցող մարդու մը պէս կը շրջի :
- Ուրեմն գնա՛, անասո՛ւն :
- Լա Պրի հնազանդեցաւ և իր սովորական փութկոտութեամբը հեռացաւ :
- Հայր իմ, ըսաւ Անորէ սեպուհին մօտհարով, ձեր մտատանջութեան պատճառը գիտեմ : Ես երեսուն տակիի չափ դրամ խունիմ և սա գոհարագորդ գեղեցիկ ժամացոյցը զոր Մարի Լէյլինաքս սուած է մօրս :
- Այո՛, աղջկիս, այո՛, լաւ է, ըսաւ սեպուհը, բայց պահէ, պահէ, ներկայացուելու համար գեղեցիկ զգեստի մը պէտք ունիս : Իսկ այժմ ինձ կը մնայ հնարք մը գտնել : Լուէ՛, Լա Պրին եկաւ :

— Պարոն, գոչեց լա Պրի մէկ ձևօքը նամակ մը և միւս ձևօքին մէջ քանի մը սակի բռնած ներս մտնելով, տեսէք իշխանուհին ինչ տուեր է ինձի, տասը լուի, պարոն, տասը լուի :

— Իսկ նամակը, տոս'նակ :

— Ո՛հ, նամակը ձերինն է պարոն, կախարդէն է :

— Կախարդէն է, ս՞վ տուա :

— Ժիւղէր :

— Քեզի չըսի՞, շա՛ն գաւակ, ինձի տուր արեւիկայ :

Սեպուհը լա Պրիին ձևօքէն նամակը խլեց, աճապարանօք բացաւ և ցած ձայնով կարդաց .

« Պարոն սեպուհ, այն ժամէն իսկ երբ օգոտախառ ձևօք մը ձեր սեղանին սպասներուն դպաւ, ձերն եղան անոնք, խնամով պահեցէք զանոնք և յիշեցէք երբեմն ձեր երախտագէտ հիւրը

ԺՕԶԷՅ ՊԱՆՍՍՄՈ » :

— Լա Պրի՛, գոչեց սեպուհը պահ մը մտածելէ վերջ :

— Հրամմեցէք, պարոն :

— Պարը-Տիւղի մէջ լաւ սակերիչ մը կա՞յ :

— Ո՛հ, այո՛, պարոն, օրիորդ Անտրէի սկահակ

փակցնողը :

— Լա՛ւ : Անտրէ՛, դատ դիր այն գաւաթը որմ'՞ Նորին արքայական Բարձրութիւնը խմեց, և սպասներուն մնացորդը կառքին մէջ դնել տուր : Իսկ դուն դատա՛րկապորտ, մատանը վաղէ և հոն մնացած աղնիւ գինին այդ աղնուականին հրամցուր :

— Շի՛ւ մը միայն կայ, պարոն, ըսաւ լա Պրի խորին մեկամաղձոտութեամբ մը :

— Պէտք եղածն ալ ատ է արդէն :

Լա Պրի դուրս ելաւ :

— Օ՛ն, Անտրէ, շարայարեց սեպուհը աղջկանը երկու ձևօքերէն բռնելով, օ՛ն, սիրտ առ աղջիկս : Արքունիք

կ'երթանք, հոն շատ մը թափուր մնացած տխուրներ կան, շատ մըն ալ տրուելիք արքայութիւններ, բաւական թուով գունդեր ստանց գնդապետի, խել մը հաւաքելիք ոտճիկներ : Գեղեցիկ աշխարհ մըն է արքունիքը ուր արեւը փայլուն ճառագայթներ կ'արձակէ : Միշտ արեգակին ճառագայթին մէջ զետեղուէ, աղջիկս, գեղանի է քու տեսքդ : Գնա՛, աղջիկս, գնա՛ :

Անտրէ եւս մեկնեցաւ ճակատը իր հօրը ներկայացնէ յետոյ :

Նիւզու անոր հետեւեցաւ :

— Է՛, ճիւա՛ղ լա Պրի, գոչեց թավէրնէյ ամենէն հոքը ինք դուրս ելնելով, լաւ խնամք տար պարոն կառավարչին, կը լսե՞ս :

— Այո՛, պարոն, պատասխանեց լա Պրի մատանին խորէն :

— Ես թղթերս կարգի պիտի դնեմ, շարայարեց սեպուհը զէպի իր սենեակը խոյանալով : Ժամէ մը այս հիւղէն դուրս ելլանք, Անտրէ, կը լսե՞ս : Վերջապէս սա թավէրնէյէն դուրս պիտի ելնեմ, և այն ալ նպատաւոր պայմաններու մէջ : Որչտի երեւելի մարդ է եղեր սա կախարդը : Այդարեւ, ստոանի մը պէս սնապաշտ ըլլալու կուգայ : Բայց չաճապարե՞ս, թշուառական լա Պրի :

— Պարոն, ստիպուեցաւ խարխափելով երթալ : Դեղակին մէջ աշտանակ չէր մնացեր :

— Կ'երեւայ թէ ա՛լ ժամանակը հասեր է, ըսաւ սեպուհը :

ժի:

ՆԻԳՕՒԻ ՔԱՆՆՈՂԻՆԳ ԼՈՒԻՆ

Սովորյն, Անորէ իր սենեակը վերտրամանարով ճամբու պատրաստութիւնները կը փութացնէր: Նիգօլ այս պատրաստութիւնները այնպիսի եռանդով մը կատարեց որ չուտով տարողնեցաւ առաւօտեան փոթորկին առթիւ իր և արուեստին միջեւ կուտակուած ամպը:

Անորէ աչքին պոչովը դայն կը դիտէր և կը ժպտէր սեաներով որ ներելու հարկ չէր մնացեր:

— Անձնուէր և երախտագէտ աղջիկ մըն է, կ'ըսէր Անորէ ինքնիրեն: Բնական է որ ամէն մարդու պէս ան ալ իր ակարութիւններն ունենայ: Մոռնա՛նք ուրեմն:

Նիգօլ ալ իր կարգին իր արուեստին գէմքը աչքէ չէր հեռացներ, և անոր չքնաղ ու խաղաղ գէմքին վրայ աստիճանարար աճող բարետիրութեան ծառալիւր կը դիտէր:

— Եյն՞նթ եմ ի՛նչ եմ որ տա դատարկապօրտ ժիւ պէրին համար ելլեմ աւրուիմ օրիորդին հետ, կը մտածէր Նիգօլ: Տիրուհիս յանձն կ'առնէ զիս Բարիկ տանիլ՝ ուր արդ գրեթէ միշտ գրամ կը շահի:

Դիտարին էր որ միեւնոյն սահուն զառիթափին վրայէն դէպի իրար թաւալող այս երկու համակրութիւնները իրարու չհանդիպէին և իրար չչօչափէին:

Անորէ եղաւ առաջին նշանը տուողը:

— Ժանեակնեքա տուիի մը մէջ դիր, խօսք առաւ Անորէ:

— Ո՞ր տուիին մէջ, օրիորդ, հարցուց սենեկապանուհին:

— Ես ի՛նչ գիտնամ, բնաւ տուի չունի՞նք:

— Այո՛, օրիորդին ինձի առածը ունիմ որ սենեակս է:

Եւ Նիգօլ վաղեց տուիը փնտռելու այնպիսի մեծաբանքով մը որ Անորէ արիպուեցաւ անցեալը բարբովին մոռնալու սրտչումը տալ:

— Բայց այդ տուիը քուկդ է և կրնաս անոր պէտք ունենալ, խեղճ աղջիկ, ըսաւ Անորէ Նիգօլի վերադառնալը նշմարելով:

— Ի՛նչ կ'ըսէք, օրիորդ, ինձմէ աւելի պէտք ունիք անոր: Արդէն ձերն է:

— Երբ մարդ տուն տեղ ըլլալ կ'ուզէ, կրկնեց Անորէ, միշտ կարասիի պէտք կ'ունենայ: Ուտաի այժմ դուն ինչ աւելի պէտք ունիս անոր:

Նիգօլ կարմրեցաւ:

— Հարսանեկան զարդեղէններդ մէջը դնելու համար շատ մը տուիերու պէտք ունիս, շարայարեց Անորէ:

— Ո՛հ, օրիորդ, իմ հարսանեկան զարդեղէններս դիւրին տեղ մը կը դրուին և շատ տեղ չեն բռներ, ըսաւ Նիգօլ զուտը թօթիկով:

— Ինչո՞ւ Նիգօլ: Եթէ ամուսնանաս, կ'ուզեմ որ երջանիկ և հարուստ ըլլաս:

— Հարո՞ւստ:

— Այո՛, հարուստ, անշուշտ համեմատաբար:

— Արդեօք օրիորդը ինձի կալուածատէր ամուսին մը գտած է:

— Ո՛չ, բայց քեզի օժիտ մը գտայ:

— Իրա՞ւ, օրիորդ :

— Գիտե՞ս քսակիր մէջ ինչ կայ :

— Այո՛, օրիորդ, քսանընթաց հաստ փայլուն լուիններ :

— Լառ ուրեմն, այդ քսանընթաց լուինները քուկը են, Նիգօլ :

— Քսանընթաց լուին : Բայց ասիկայ մեծ հարստութիւն մըն է, գոչեց Նիգօլ խելայեղ :

— Գէ՛շ է, խեղճ աղջիկ :

— Եւ օրիորդը ի՞նչ կ'ուտայ այդ քսանընթաց լուին :

— Քեզի կ'ուտամ :

Նիգօլ նախ դարմացաւ, յետոյ յուղուեցաւ, ասպա աչքերը արցունքով լեցուեցան և Անտրէի ձեռքերուն փարեցով գանոնք համբուրել սկսաւ :

— Ամուսինդ գո՞ւ պիտի մնայ, այնպէս չէ՞, Նիգօլ :

— Անշուշտ շատ գո՞ւ պիտի ըլլայ, պատասխանեց սենեկապանուհին :

Ահա Անտրէի մէջ ճշմարիտ վեհանձնութիւնը գոր Նիգօլ տակաւ առ տակաւ կ'ըմբռնէր :

Այժմ Նիգօլի մտախոհութիւնը յոռի մեկնող մէկը գուցէ հպարտութեան ըողրով մը տեսնէր անոր մէջ և կամ զինքը խոնարհեցնող մը խոնարհեցնելու ակամայ պէտքը :

Բայց, ինչ որ ալ ըլլայ, իսկոյն պէտք է աւելցնենք այդ յոռետեսին պատասխանելու համար թէ Անտրէի այդ վեհանձնական ընթացքը Նիգօլի վրայ յոռի տարուորութիւն մը թողնելէ հետի մնաց :

Փոթորիկը Նիգօլի գանկը տակն ու վրայ կ'ընէր :

Անտրէ կը տեսնէր անոր մտածելը :

— Հէ՛զ աղջիկ, ան որ ընտրութեան մէջ թոյլ և անտոյթ է, չլրար երջանիկ ըլլալ :

Նիգօլ լսեց այս խօսքը և սարուաց : Այս խօսքերէն

տարուելով յողորմ աղջիկը մետաքսայ և աղամանդեայ ժանեակներով զարդարուած և սիրով աուցուած էլքօրատօ մը երեւակայեց, որուն վրայ Անտրէ չէր խորհած իսկ, Անտրէ՛ որուն համար երջանկութիւնը կը կայանար հանդարտ կեանք մը վարելուն մէջ :

Եւ սակայն Նիգօլ աչքերը մէկզի զարծուց հորիզոնէն անցնող այս ոսկեգոյն և ծիրանի ամպին վրայէն :

Նիգօլ դիմազրուեց :

— Վերջապէս, օրիորդ, գուցէ հոս երջանիկ ըլլամ, ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ :

— Լա՛ւ խորհէ աղջիկս :

— Այո՛, օրիորդ, պիտի խորհիմ :

— Խոհեմութեամբ պէտք է վարուիս . ուզած կերպովդ երջանիկ եղիր, բայց նայէ որ անմտութիւն մը չգործես :

— Ճշմարիտ է, որիորդ, և քանի որ առիթը կը ներկայանայ այժմ, յարմար կը դատեմ օրիորդին ըսել թէ իրաւ կարգ մը անմտութիւններ գործեցի, և մինչեւ իսկ յանցաւոր մըն հմ այսօր, բայց թող օրիորդը ինձ ներէ, երբ մարդ կը սիրէ . . .

— Ուրեմն լրջօրէ՞ն կը սիրես ժիւլպէրը :

— Այո՛, օրիորդ, կը . . . կը սիրէի զայն, ըսաւ Նիգօլ կմկմալով :

— Անհաւատալի է, ըսաւ Անտրէ ժպտելով . այդ տղուն վրայ քեզ հաճելի երեւցող ի՞նչ գտար . առաջին անգամ զայն տեսնելու լաւ մը պիտի դիտեմ տա սիրտեր աւերող Պ. ժիւլպէրդ :

Նիգօլ վերջին կատկածով մը Անտրէին նայեցաւ : Անտրէ այս խօսքերով նուրբ կեղծաւորութիւն մը ի գործ կը գնէր արդեօք, թէ կատարեալ անկեղծութեամբ կ'արտայայտուէր :

— Գուցէ Անտրէ ժիւղէրին նայած չէր, կ'ըսէր Նի-
գօլ իւրովի, սակայն տարակրօյ չիկայ որ ժիւղէր Անտ-
րէին նայած էր, կ'աւելցնէր միշտ մտովի :

Նիգօլ միաքէն անցածը երեւան հանելէ առաջ ուղեց
ամէն բան գիտնալ :

— Ժիւղէր մեզի հետ Բարիլ չի՞ պիտի գայ, օրիորդ,
հարցուց Նիգօլ :

— Ի՞նչ ընելու համար, պատասխանեց Անտրէ :

— Բայց . . .

— Ժիւղէր սպասաւոր չէ, ան չկրնար Բարիլզեան
տան մը տեսուչն ըլլալ . թափէրնէյի անգործները, սի-
րիլի Նիգօլ, կը նմանին այն թուչուններուն որոնք
պարտէզիս և ծառուղիին ցանկապատներուն մէջ կը ճըւ-
ռուղեն : Հոս հողը սրբան ալ բարեբեր չըլլայ, զանոնք
կրնայ անուցանել : Բայց Բարիլզի մէջ անգործ մը սուղի
կը նստի, և հոն չենք կրնար թույլ տալ որ անգործ
կիսանք վարէ ան :

— Սակայն . . . եթէ անոր հետ ամուսնամ, թոթո-
վեց Նիգօլ :

— Լա՛ւ ուրեմն, Նիգօլ, եթէ անոր հետ ամուսնա-
նաս, միտին թափէրնէյ կը մնաք և մօրս այս սիրական
տունը երկուքդ մեկ համար կը պահպանէք, ըստ Անտրէ
հատաստուն եղանակաւ մը :

Նիգօլ ազուշ կը թեցաւ այս հարուածէն . Անտրէի
խօսքերուն մէջ ամենափոքր զաղտնիք մը գտնել անկա-
րելի էր . Անտրէ ամէն բանէ կը հրաժարէր ստանց թա-
քուն նպատակի մը, ստանց ամենափոքր ցաւ մը իսկ
զգալու . ուրիշի մը կը յանձնէր այն երիտասարդը զոր
տակաւին առջի օր մեծարած, պատուած և իր սենեակին
մէջ ընդունած էր . անհատկեալի բան մը կար ստոր մէջ :

— Անշուշտ ազնուական աղջիկները այսպէս են, ը-

տաւ Նիգօլ ինքնիրեն . այս պատճառաւ Անտրէի մե-
նաստանին մէջ մեծ վիշտ ունեցողներ դրիթէ չտեսայ .
տակայի սրբան կեղծիք ու խարդաւանանք :

Անտրէ անշուշտ Նիգօլի վարանումը գուշակեց . կ'ե-
րևի թէ Նիգօլի միտքէն անցածը համկնարով, որ Բա-
րիլզի փատասիրական զուարճութեանց և թափէրնէյի
քողցր ու խողաղ ժուժկարութեան մէջ կը ծփար, քողցր
բայց հաստատուն ձայնով մը ըստ .

— Նի՛գօլ, տալիք որոշումդ կենտական է, գուցէ բու-
լոր կեանքդ, սպազաղ խորտակեա կամ վերականգնեա
այդ որոշումով . մտածէ, աղջիկս, ժամ մը միայն ու-
նիս որոշում տալու համար : Գիտեմ թէ մէկ ժամը քիչ
է, բայց դուն որոշումներդ շուտ կուտաս . կամ ինձ
պէտք է սպասուորես և կամ ամուսնոյց ետեւէն երթաւ,
ես կամ ժիւղէր : Ես չեմ ուզեր որ ամուսնազուլ կին
մը ինձ սպասուորէ, ընտանեկան գաղտնիքներէ չեմ ա-
խորժիր :

— Ժամ մը, օրիորդ, ժամ մը, կրկնեց Նիգօլ :

— Ժամ մը :

— Լա՛ւ ուրեմն, օրիորդը իրատունք ունի, ինձի ալ
ստիկ սակին պէտք չէ :

— Օ՛ն, բոլոր զգեսաներս հաւաքէ, մօրս զգեսաներն
ալ մէկտեղ դիր և ապա եկուր որոշումդ ինձ յայտնելու :
Ի՛նչ որ ալ ըլլայ քու որոշումդ, պէտք է առնես այս
քսանըհինգ շուրիս : Եթէ ամուսնանամ՝ օճիտդ պիտի
ըլլայ, եթէ ինձ հետեւիս՝ թոշակիդ վրայ երկու տար-
ուան կանխավճար մը :

Նիգօլ Անտրէի ձեռքը համբուրելով քսակը առաւ :

Դեռստի աղջիկը իր տիրուհոյն շնորհած մէկ ժամէն
բողբէ մը իսկ չկորսնցնելու համար իսկոյն զուրս խոյա-
ցաւ, աբազօրէն վար իջաւ սանդուխէն, բակէն անցաւ

և ծառուղիին մէջ մ'անելով աներեւութացաւ :

Անտրէ անոր հեռանալը տեսնելով մ'րմնջեց :

— Խն՛դճ անմ'խտ, գուցէ կրնար երջանիկ ըլլալ : Ուրեմն այդչափ քաղցր բա՞ն մ'ըն է սէրը :

Նիգօլ ժամանակ չկորսնցնելու համար հինգ վայրկեան ետքը ժիլպէրի բնակած գեանալարկին պատուհանին ապակիներուն կը զարնէր, այն ժիլպէրին՝ զոր Անտրէ վեհանձնութեամբ անգործ՝ իսկ սեպունը դառնութեամբ դատարկապորտ կը կոչէր :

Ժիլպէր կոնակը ծառուղիին վրայ բացուող պատուհանին դարձուցած կը մտածէր : Դուրսէն նայողը չէր կրնար հասկնալ թէ սենեակին մէջ ի՞նչ կը գտնար :

Ժիլպէր՝ ապակին հարուածող Նիգօլին մատներուն ձայնէն՝ յանցանքը գործած աստեղը բռնուող գողի մը պէս զբաղմունքը թողուց և երկաթէ զսպանակէ մը մղուածէ աւելի արագ շարժումով մը ետին դարձաւ :

— Վա՛յ, զո՞ւն ես, Նիգօլ :

— Այո՛, դարձեալ եկայ, պատասխանեց գեռատի աղջիկը ապակիին ետեւէն ցակոտ այլ ժպտուն դէմքով մը :

— Ուրեմն բարի եկար, ըսաւ ժիլպէր և զնաց պատուհանը բացաւ :

Նիգօլ ժիլպէրի այս սկզբնական բարի արամադրութիւնէն զգածուելով՝ ձեռքը անոր երկնցուց, ժիլպէր գայն սեղմեց :

— Ահա գործը կարգին է, ըսաւ Նիգօլ ինքնիրէն, մնաս բարո՛վ՝ Բարիկի ճամբորդութիւն :

Եւ հարկ է անկեղծօրէն գովել Նիգօլը՝ այս խորհրդածութեան վրայ միայն հառաչանք մը արձակած ըլլալուն համար :

— Գիտե՞ս, ժիլպէր, թավէրնէյէն կը մեկնին, ըսաւ գեռատի աղջիկը արմուկը պատուհանին կռթնցնելով :

— Գիտեմ, պատասխանեց ժիլպէր :

— Գիտե՞ս ուր կ'երթան :

— Բարիկ կ'երթան :

— Գիտե՞ս նաեւ որ ես ալ միասին կ'երթամ :

— Ո՛չ, առիկայ չէի զիտեր :

— Ուրե՞մն :

— Ուրեմն կը շնորհաւորեմ՝ եթէ այդ ճամբորդու-

թիւնը հաճելի կը թուի քեզ :

— Ի՞նչ լախր, հարցուց Նիգօլ :

— Եթէ այդ ճամբորդութիւնը քեզի հաճելի կը թուի, ըսի, բացառապէս կը խօսիմ կարծեմ :

— Հաճելի՞ թուի . . . պարագաներէն կախում ունի առիկայ, կրկնեց Նիգօլ :

— Բայց այդ խօսքով զո՞ւն ի՞նչ ըսել կ'ուզես :

— Ըսել կ'ուզեմ թէ այդ ճամբորդութեան հաճելի ըլլալն ու չըլլալը քեանէ կախում ունի :

— Ըսածդ չեմ հասկնար, ըսաւ ժիլպէր պատուհանին մէջ նստելով այնպիսի ձեւով մը որ՝ ծունկերը Նիգօլի բազուկներուն կը դպէին և երկուքն ալ կրնային իրենց խօսակցութիւնը շարունակել առանց մէկէ մը տեսնուելու վախն ունենալու, որովհետեւ վրանածաղիկներու և բաղեղներու թանձրախառ տերեւներուն մէջ անտեսուելի դարձած էին զրեթէ :

Նիգօլ գորովանօք ժիլպէրին նայեցաւ :

Բայց ժիլպէր պարանոցովն ու ուսովը այնպիսի շարժում մը ըրաւ, որով ըսել կ'ուզէր թէ ո՛չ անոր նայուածքէն և ոչ ալ խօսքերէն բան մը կը հասկնար :

— Լաւ, ուրեմն պէտք է ամէն բան լսել քեզ, գիտարիկ ըրէ, շարալարեց Նիգօլ :

— Ականջս քեզի է, ըսաւ ժիլպէր ցրտօրէն :

— Օրիորդը ինձ կ'ատաջարկէ իրեն հետ Բարիկ երթալ :

— Լաւ :

ժող. Պալս., թիւ 6—17, Բ. հր. Ն. Ք.

- Սա կայ որ . . .
- Ի՞նչ կայ, հարցուց երիտասարդը :
- Սա կայ որ երբ հոս կարգուեկու համար մէկը չգտնեմ՝ այն ատեն միայն պիտի երթամ :
- Ուրեմն վերջնականապէս միտքդ դրած ես կարգուել, ըստ ժիւլպէր անտարբերութեամբ :
- Այո՛, մանտանդ հարստանալէս ի վեր, պատասխանեց Նիգօլ :
- Վա՛յ, ըսել է հարո՞ւտ ես, հարցուց ժիւլպէր՝ Նիգօլի կամպօնները փարատելու ստիճան անտարբերութեամբ մը :
- Շատ հարուտ, ժիւլպէր :
- Իրա՞ւ :
- Այո՛ :
- Եւ ի՞նչպէս կատարուեցաւ այդ հրաշքը :
- Օրիորդը ինծի օժիտ տուաւ :
- Մեծ երջանկութիւն մըն է ատիկայ, կը շնորհաւորեմ քեզ, Նիգօլ :
- Տե՛ս, ըստ դեռատի աղջիկը քսանընթաց լուին մէկ ձեռքէն միւսը սահեցնելով :
- Եւ այս ընելով ժիւլպէրին նայեցաւ, անոր աչքերուն մէջ ուրախութեան կամ գոնէ ցանկութեան նշոյլ մը տեսնելու յոյսով :
- Ժիւլպէրի դէմքը անխփփի մնաց :
- Իրա՞ւ որ կլորիկ գումար մըն է, շարայարեց երիտասարդը :
- Ամէնը առ չէ, Պ. սեպուհն ալ պիտի հարստանայ, շարայարեց Նիգօլ. կը խորհին Մէգօն-Տուժը վերականգնել եւ թաղէրնէ՛քը նորոգել ու գեղեցկացնել :
- Հաւանական է :
- Եւ այն ատեն պէտք պիտի ըլլայ գրեական պահպանութեան ներքեւ դնել :
- Անշուշտ :

- Լաւ ուրեմն, օրիորդը պահպանի պաշտօնը կը յանձնէ . . .
- Նիգօլի երջանին ամուսինն, ամբողջացուց ժիւլպէր այնպիսի հեղեղութեամբ մը որ այս անգամ այնչափ ծածուկ չմտալով Նիգօլի ականջը կարմրեցուց :
- Անորէի սննկապանուհին ինքզինքը գտակց :
- Նիգօլի երջանիկ ամուսինը չե՞ս ճանչնար, ժիւլպէր :
- Չո՞վ կ'ակնարկես, Նիգօլ :
- Օ՛ն, արդեօք ապուշութիւն կը ձեւացնես թէ խոսածս գողիերէն չէ, գոչեց գեռատի աղջիկը՝ այս խաղին մէջ տակաւ առ տակաւ համբերութիւնը կորսնցնելով :
- Սքանչելի կերպով կը հակնամ ըսածդ, ըստ ժիւլպէր. ինձ կ'առաջարկես ամուսինդ ըլլալ, այնպէս չէ՞, օրիորդ Լըկէյ :
- Այո՛, պարօն ժիւլպէր :
- Եւ հարստանալէ վերջ ինձ համար այդպիսի դեռատութիւններ կը վերապահես. արդարեւ, չտիպանց երախտապարտ եմ քեզի, ըստ ժիւլպէր անպարանօք :
- Ստուգի՛ւ :
- Անշուշտ :
- Լա՛ւ ուրեմն, ընդունէ՛ ատաջարկս, ըստ Նիգօլ համարձակութեամբ :
- Ե՞ս :
- Կը հաւանիս, այնպէս չէ՞ :
- Կը մերժեմ :
- Նիգօլ քայլ մը դէպի ետ քաշուելով ըստ . . .
- Կամ չարախրտ ու անխիղճ մըն ես և կամ անմիտ մը, ժիւլպէր. հաւատո՞ւ ինձ որ ըրածդ երջանկութիւն չպիտի բերէ քեզի : Կ'երգնում որ այս վայրկեանին պատուռոյ և բարեախրտութիւն մը ընելէ ուրիշ բանի վրայ չեմ մտածեր, չկարծես որ սիրելուս համար քեզ

գլխած եմ : Փա՛ւք Աստուծոյ, ես ջանացի որ չբաւի թէ Նիգօլ հարստանալէ վերջ ժիւլկէրը կ'անարգէր և նախասինքի մը փոխարէն վիշտ մը կը հասուցանէր անոր : Իսկ այժմ, ժիւլկէր, ամէն բան վերջացած է մեր մէջ :

Ժիւլկէր անտարբերութեան շարժում մը ըրաւ :

— Կրնաս վտտահ ըլլալ որ քու վրայ կը խղճամ, շարայարեց Նիգօլ, դուն գիտես որ իմ բնաւորութիւնս ալ քուկինիդ չտի ազատ և անկախ է : մինչ Բարիդ ինձ կը սպասէ՝ ես հոս թաղուիլ որոշե՛մ : Բարի՛դ, որ իմ թատրոնս պիտի ըլլայ, կ'իմանա՞ս : Բոլոր օրը, բոլոր տարին և բոլոր կեանքիս մէջ այդ ցուրտ ու անթափանց գէմքը տեսնել որոշե՛մ, այն ճակատը տեսնել յաւիտեանս՝ որուն ետին ա՛յնքան դարչնլի խորհուրդներ ծածկուած են : Զոնսդութիւն մըն էր ասիկայ, բայց դուն չհասկցար, վնասը պիտի կրես : Չեմ բնար որ զիս լքելուդ վրայ պիտի ցաւիս, ժիւլկէր, այլ կ'ըսեմ թէ ինչ պիտի վախնաս և պիտի կարմրիս զիս տեսնելով անտեղուանքը ուր պիտի առաջնորդուիմ քու այտորուան արհամարհանքովդ : Ես կրնայի սպարկեշտ ըլլալ, բարեկամ ձեռք մը կը պակսէր զիս կ'եցնելու համար այն անդունդին եզերքը՝ ուր կը հակիմ, ուր կը սահիմ, ուր պիտի գահավիժիմ : Օգնէ՛ ինձ, գոչեցի, դուն զիս հրեցիր, ժիւլկէր : Անա՛ կը գրտորի՛մ, կ'իշխե՛մ, կը կորսուի՛մ : Աստուած հաշիւ պիտի պահանջէ քե՛նէ այս յանցանքիդ համար : Մ'նստ բարո՛վ, ժիւլկէր, մնաս բարո՛վ :

Եւ վէս աղջիկը անդին գարձաւ ստանց բարկանալու, առանց անամբերութիւն ցոյց տալու, և ազնիւ բնաւորութեան տէր անձանց նման վերջապէս հոգւոյն վեհ անձն յատակը երեսը հանելով :

Ժիւլկէր պատուհանը դոցեց հանդարտօրէն և իր խըրճիթը քաշուելով վերստին ձեռք ստաւ այն խորհրդաւոր գրադմունքը որ Նիգօլի վրայ գալովը ընդմիջուած էր :

ԺԲ.

ԹԱՎԻՐՆԵՅԷ ԿԸ ՄԵԿՆԻՆ

Նիգօլ իր տիրուհիին քով երթալէ առաջ անդուխին վրայ կեցաւ՝ սրտին խորը որոտացող բարկութեան վերջին հառաչանքները խեղդելու համար :

Սեպուհը Նիգօլին հանդիպեցաւ . այս վերջինը անշարժ ու խոհուն, կզակը ձեռքին մէջ, յոնքերը պատած կեցեր էր . սեպուհը՝ հակառակ զբաղած ըլլալուն՝ զայն շատ գեղեցիկ գտնելով՝ գնաց անոր փարեցաւ : Մուրթիւն մը որ երեսնամեայ Ռիչլիթօն կը յիշեցնէր :

Նիգօլ սեպուհին անձամ կատակովը մտախոհութեան սթախելով՝ յախուռն կերպով Անտրէի սենեակը կրաւ : Անտրէ արկղիկ մը պոցելու վրայ էր :

— Լաւ ուրեմն, ըստ օրիորդ Անտրէ, խորհեցա՞ր :

— Այո՛, օրիորդ, պատասխանեց Նիգօլ հաստատուն եղանակու մը :

— Պիտի ամուսնանա՞ս :

— Ո՛չ, ընդհակառակը :

— Վա՛յ, բայց այն մեծ ա՛հ բը :

— Երբէք չկրնար հաւատարիլ այն բարութեան՝ որով միշտ կը զեզու զիս օրիորդը : Ես օրիորդի՛նն եմ և կ'ուզեմ միշտ անորը մնալ : Իմ ընտրած տիրուհիս ես բաւ կը ճանչնամ, ընտրելիք տէրս կրնա՞մ անոր չտի մօտէն ճանչնալ :

Անտրէ չախաղանց զգամուկցաւ անկեղծօրէն արտա-

սանուած այս խօսքերէն : Անդգամ Նիգօլի մէջ աշխարհի
ազնիւ գզացում մը գտնել բնաւ չէր յուսար մանկաւ
մարդունին : Անշուտ Անտրէ չէր գիտեր թէ Նիգօլ իբրև
երկու չարեաց փոքրագոյնը ընտրած էր զինքը :

Անտրէ ժպտեցաւ մարդկային արարածի մը մէջ իր
յուսացածէն աւելին գտնող բարեբաղդ կնոջ մը թրթուռն
ժպտովը :

— Ինձմէ չգատուելով ազէկ կ'ընես, Նիգօլ, ըստ
Անտրէ, ասիկայ չպիտի մտնամ : Ինձ յանձնէ քու
բազրդ, աղջիկը, և եթէ ես երջանիկ ըլլամ, կը խոստա
նամ որ դուն ալ քու երջանկութեան բաժինդ պիտի
ունենաս անոր մէջ :

— Ո՛հ, օրիորդ, ձեզի հետեւիլ որոշած եմ :

— Առանց ցաւելու :

— Կուրպար :

— Ատիկայ լաւ պատասխան մը չէ, գիտե՛լ տուա
Անտրէ : Ես չեմ ուզեր որ օր մը կարենաս զիս մեղա
զրել կուրպար ինձ հետեւելուդ համար :

— Ինքզինքէս ուրիշ մէկը չպիտի մեղազրեմ :

— Ուրեմն այս մտտին խօսքը կտրեցի՞ր քուկինիդ
հետ :

Նիգօլ կարմրելով ըստ .

— Ե՞ս :

— Այո՛, դուն . անոր հետ խօսիլդ սուսայ :

Նիգօլ չրթունքները խածաւ :

Անտրէի պատուհանին ճիշդ գիմացը պատուհան մը
ունէր Նիգօլ, և լաւ գիտէր թէ այդ պատուհանէն ժիւ
պէրին պատուհանը կը տեսնուէր :

— Ստոյգ է, օրիորդ, ըստ Նիգօլ :

— Եւ ի՞նչ ըսիր անոր :

— Անոր ըսի թէ ա՛լ գործ չունիմ իրեն հետ, պա
տասխանեց Նիգօլ՝ կարծելով որ իր ախոյեանը զինքը
կը հարցախորձէր :

Այս երկու կիները՝ մին աղամանդի նման ամբոու
թեամբը, միւսն ալ գէպի մոլորթիւն ունեցած բնական
հակամովը երբէք համախոս չպիտի ըլլային : Այսպէս
սահմանուած էր :

Անտրէ Նիգօլի կծու խօսքերը փաղաքշանք կարծեց :

Այս միջոցին սեպուհը իր բնօր կը պատրաստէր . հին
սուր մը զոր Ֆօնթընուայի մէջ կը կրէր, Նոբին վե
հախառութեան կտրքերը հեծնելու իրաւունքը հաստատող
արածնագիրներ, լրագիրներու գէղ մը և զանազան թղթ
թանկութիւններէ կը բաղկանային անոր գոյքերուն մե
ծագոյն մասը :

Բխտին նման թեւին տակը կը կրէր այս ամէնքը :

Լա Պրի գրեթէ պարսպ արկղիկ մը չալկած՝ կորա
քամակ քաշելու ասոն կ'երեւի թէ կը քրտնէր :

Ծառուղիին մէջ Պ. պաշտօնակալը գտան, որ այ՛
պատրաստութեանց միջոցին զինիին շիշը պարպեր էր :

Պ. աը Պօզէր Նիգօլի նուրը հասակն ու բոլորչի գիւ
տերը տեսած ըլլալուն՝ չէր գողերը աւազանէն գէպի շա
զանակինինները երթեւեկել չքնաղ սենեկապանունին տես
նելու համար, որ թաւուտներուն ներքուէն մերթ ընդ
մերթ կ'երեւէր ու կ'աներեւութանար :

Պաշտօնակալը՝ կտրքը մօտեցնելու համար սեպունին
ըրած հրաւերը լսելով սթափեցաւ իր իզատիրական խոր
հրգածութենէն : Յանկարծ վեր ցատկեց, Պ. աը թալէր
նէյը ողջունեց և բարձր ձայնով մը հրամայեց կտա
պանին կտրքը ծառուղիին մէջ մտցնել :

Կտրքը ներս մտաւ, Լա Պրի արկղիկը զսպանակն
բուն վրայ դրաւ ու բախտութեան և հպարտութեան ան
մեկնելի խառնուրդով մը :

— Ուրեմն թագաւորին կա՞քը պիտի հեծնեմ, մըր
մընջեց Լա Պրի յուզմունքէն խեղայեղած՝ ինքզինքը
առանձին կարծելով :

— Ետե՛ւը, սիրուն բարեկամիկա, պատասխանեց Պօ

գէր հեղինական ժպխտով մը :

— Ի՞նչ, Լա Պրին միտտի՞ն կը տանիք, ըստ Անտրէ սեպուճին գաճնալով, բայց թափէրնէյը ո՞վ պիտի սրահպանէ :

— Է՛հ, տա դատարկագորտ փիլիսոփան :

— Ժիլպէ՛րը :

— Անչո՛շտ . միթէ հրացան մը չունի՞ :

— Բայց ինչո՞վ պիտի սնանի :

— Է՛հ, հրացանովը առատ սնունդ պիտի գտնէ, ապահով եղիք . սարիկներն ու կեռնեխները պակաս չեն թափէրնէյի մէջ :

Անարէ Նիգոլի նայեցաւ . այս վերջինը սկսաւ խընդալ :

— Տես ի՛նչպէս դաշն կը մեղքնաս, չարասի՛րտ, ըստ Անարէ :

— Ո՛հ, շատ հնարամիտ է, օրիորդ, պտտտախանեց Նիգոլ . հանդիստ եղէք, անթի չմեռնիր :

— Պէտք է մէկ երկու լուր թողուլ անոր, պարոն, ըստ Անարէ սեպուճին :

— Երե՞ս հանելու համար դաշն : Լա՛ւ, արդէն բաւական յոռաջ գացած է :

— Ո՛չ, սպրուտախն համար :

— Երբոր ուզէ, հարկաւ բան մը կը զրկուի իրեն :

— Բա՛հ, ապահով եղէք որ բան մըն ալ չպիտի ուզէ, օրիորդ, ըստ Նիգոլ :

— Հոգ չէ, երեք չորս գահեկան ձգեցէք իրեն, ըստ Անարէ :

— Չպիտի ընդունի, օրիորդ :

— Չի՞ պիտի ընդունի : Ուրեմն շատ հպարտ է քու Պ. Ժիլպէրդ :

— Պ. Ժիլպէրդ :

— Ո՛հ, օրիորդ, փա՛ռք Ատուծոյ, ա՛լ լիմ չէ :

— Օ՛ն, օ՛ն, ըստ թափէրնէյ վերջ տալու համար իր արժանապատուութիւնը վիրաւորող խօսակցութեան մը, օ՛ն, ստտանին բերանը երթայ Պ. Ժիլպէրդ, կտոր մեզի կը սպասէ, կտոր հեծնենք, աղջիկս :

Անարէ չպտտախանեց, աչքովը փոքրիկ դղեակը ողջունեց ու մեծ կտոր մտաւ :

Պ. տը թափէրնէյ Անարէի քով նստաւ, Լա Պրի իր չքեղ միազգեստը հագած և Նիգոլ՝ որ կարծես ամենեւին չէջ ճանչցած ժիլպէրդ, նստարանին վրայ տեղաւորուեցան :

Կտապանը ձիերէն մէկուն վրայ ցտակեց :

— Բայց պարոն պաշտօնակալը ո՞ւր պիտի նստի, հարցուց թափէրնէյ :

— Ձիու վրայ, պարոն սեպուճ, ձիու վրայ, պտտտախանեց Պօզէր աչքին պոչովը Նիգոլին նայելով, իսկ այս վերջինը շինականի մը տեղ անմիջապէս փառաւոր տակաւ մը գտնելով ու բախտութենէն կը կարմրէր :

Իսկոյն կտորը համբայ ելաւ չորս ուժեղ ձիերու ջանքովը, և ծառուղիին ծառերը՝ հարաւային հովէն տըջանքովը, և ծառուղիին ծառերը՝ կտորին երկու քովէն խուր տեսքով մը խոնարհելով՝ կտորին երկու քովէն սկսան սահիլ ու մէկիկ մէկիկ անհետանալ : Գողցեա վերջին մնաց բարովի բնական ու խորթաւոր խոնարհութիւնն էր այս :

Մեծ դրան քով նստան :

Ժիլպէր ուղիղ ու անշարժ կեցեր էր այս դրան մէջ, Գլխարկը ձեռքը՝ ստանց Անարէին նայելու՝ կը տեսնէր դաշն :

Անարէ՛ կատարան միւս կողմէն ծոած՝ կը ջանար կարելի եղածին չափ երկար ատեն տեսնել իր սիրելի բնակարանը :

— Կեցո՛ւր քիչ մը, գոչեց Պ. ար թափէրնէյ կատա-
պանին ուղղելով խօսքը :

Կատապանը ձիերը կեցուց :

— Է՛ն, սբարոն գատարկապարտ, ըստ սեպուհը ժիւ-
պէրին ուղղելով խօսքը, ա՛լ ասկէ ետքը շատ երջանիկ
պիտի ըլլաս . ճշմարիտ փիլիսոսփայի մը պէս ա՛լ առան-
ձին պիտի մնաս . բնելիք մը չունիս, խօսք լսելիք ալ
չունիս : Գոնէ հոգ տար որ կրակ չըլլայ քնացած ասունոյ
և խնամք տար Մահօնին :

Ժիւպէր խոնարհեցաւ առանց պատասխանելու : Նիգօլի
նայուածքին անտանելի թափով մը իր վրայ ծանրանալը
կը զգար . կը վախնար գետտի աղջկան յաղթող և հեզ-
նական զէմքը տեսնելու, կարմբած երկաթէ մը աչքուե-
լէ վախնալու պէս կը վախնար :

— Օ՛ն, յառա՛ջ, կատապան, գոչեց Պ. ար թափէրնէյ,
Նիգօլ ժիւպէրին վախ ազդելու աստիճան չէր խնդա-
ցած, բաց աստի իր սովորական զօրութենէն, իր անձ-
նական արիութենէն աւելիին պէտք ունեցած էր, ամէ-
նուն առջեւ չկարեկցելու համար այս խեղճ աղուն վրայ
զոր առանց հոցի, առանց ազագայի և առանց մխիթա-
րութեան կը լքէին : Նիգօլ՝ ձիուն վրայ հոս ու հոն ու-
ստատող չքնադադէմ Պ. ար Պօղէրին նայելու պէտքը
զգաց :

Եւ որովհետեւ Նիգօլ Պ. ար Պօղէրին կը նայէր՝ չի
կրցաւ տեսնել որ ժիւպէր աչքերովը Անտրէն կը լափէր
Իսկ Անտրէն արտասուածոր աչքերով ուրիշ բանի չէր
նայէր այլ այն տան՝ ուր ինքը ծնած և իր մայրը մե-
ռած էր .

Կատքը աներեւութացաւ :

Ժիւպէր՝ որ չնչին բան մըն էր համբորդներուն աչ-

քին առջեւ քիչ մը առաջ, ա՛լ կը սկսէր ամենեւին նշա-
նակութիւն չունենալ անոնց համար :

Թափէրնէյ, Անտրէ, Նիգօլ և Լա Պրի գրեական գունէն
զուրս ելնելով նոր աշխարհ մը մտան :

Խւրաքանչիւրը իր մտածմունքն ունէր :

Սեպուհը կը հաշուէր թէ Պարլը-Տիւզ հասնելուն
պէս՝ Պալատօֆի սեղանին ոսկեղէն սպասնեբուն փոխարէն
հինգ վեց հազար ոսկի պիտի կրնար առանց գժուարու-
թեան ձեռք անցընել :

Անտրէ հպարտութեան և փառասիրութեան աստանան-
վանելու համար իր մօրմէն ուսած համառօտ ազօթքը
կը մըմնջէր :

Նիգօլ՝ ի հաճոյս Պ. ար Պօղէրի մերթ ընդ մերթ
հովէն բացուող քողը կը գոցէր :

Լա Պրի գրպանին խորը թաղուհիին տուած տար
և Պալատօֆի տուած երկու լուին կը համբէր :

Մինչդեռ Պ. ար Պօղէր ձին սրարշաւ կը մղէր :

Իսկ ժիւպէր՝ թափէրնէյի մեծ գուռը կը գոցէր, ու-
րուն թեւերը ըստ սովորականին կը ձենչէին առանց
խլի ձգուած ըլլալուն համար :

Այս դործը ըննցնել անմիջապէս վերջ՝ իր փոքրիկ
սենեակը վաղեց ժիւպէր և կապնիէ դարանը մէկդի քա-
չեց որուն ետեւը սրտաբաստ ծրար մը կար :

Անձեռոցի մը մէջ գրուած այս ծրարին կապերը
ծառի մը ճիւղէն իր ձեռքովը շինած գաւազանին ծայրն
անցուց : Յետոյ, կաշիէ անկողնին վրայի իր յարգալից
խշտեակը աչքին զարնելով, անոր մէջէն յարգերը զուրս
հանեց : Հոնկէ ծալուած թուղթ մը քաշեց : Այս թուղ-
թին մէջ վեց լիւրնոց յղուէն և փայլուն սկուտ մը
կար : Այս գրամը գուցէ ժիւպէրին երեք չորս տարուան
խնայողութիւնն էր :

Թուղթը բացաւ, սկուտը աչքէ անցուց ապահով ըլ-
լալու համար որ փոխուած չէր, և զայն տափաստին գրպանը

գրաւ միշտ թուղթին կրկնակի ապահովութեանը մէջ :

Մահօն իր շղթային բոլոր երկայնութեամբը ստատմաներ ընելով կ'ոտնար . խեղճ կենդանին կը հեծէր այսպէս յաջորդաբար իր բարեկամներէն զրկուելը տեսնելով, որ բովեանե զարմանալի բնազդումով մը կը գուշակէր որ ժիւլպէր եւս պիտի լքէր զինքը :

Խեղճ կենդանին ստակլի վայնասուններ կը փրցնէր, որուն հետզհետէ բարձրացող մոռունչն ու ունտցը կ'երթար տխուր կերպով արձագանքուել վայրի շագանակենիներու ու բարձրարեւծ շոճիներու թանձրախիտ զանգուածներուն մէջ :

— Լուէ՛, գոչեց ժիւլպէր, լուէ՛, Մահօն :

Յետոյ, մտքին ներկայացող ներհակ խորհուրդի մը վրայ ժպտելով ըսաւ .

— Միթէ՛ զիս ալ շան մը պէս չլքեցի՞ն, ինչո՞ւ ուրեմն քեզ ալ մարդու մը նման չլքինք :

Յետոյ վերստին խորհրդածելով աւելցուց .

— Բայց գոնէ զիս ազատ թողուցին ուզած կերպովս ապրուստս ճարելու համար : Լաւ ուրեմն, Մահօն, այն պէս թող ըլլայ, ինչ որ ըրին ինձի՛ հա ալ քեզի նոյնը պիտի ընեմ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս :

Եւ, գէպի չնորջը յառաջանալով Մահօնի շղթան քուկեց եւ ըսաւ .

— Անա ազատ եւ Մահօն . դուն ալ քո՛ւ ուզած կերպովդ ճարէ՛ սպրուստդ :

Մահօն գէպի տունը ստատմ մը ըրաւ, բայց դռները դոց գտնելով գէպի աւերակները խոյացաւ եւ թաւուտնայուն մէջ աներեւութացաւ :

Ժիւլպէր, մտախոհ, շղթայակերծ կենդանին կը գիտէր .

— Լա՛ւ, այժմ տեսնենք թէ ո՞վ աւելի զօրաւոր

բնազդ մը ունի, չո՞ւնը թէ մարդը :


Այս ըսելով բանալին կրկնակի դարձնելէ վերջ փոքրիկ գոնէն դուրս ելաւ եւ զիւղացուց յատուկ ճարպիկութեամբ մը բանալին պատին վրայէն աւազանին մօտը նետեց :

Եւ որովհետեւ բնութիւնը որ միակերպ է ծննդեան տուն եւ արտայայտութեան միջոցին միայն կը փոխուի, ժիւլպէր եւս թափէրնէյէ մեկնած միջոցին Անտրէի զգացածին նման բան մը զգացած էր : Միայն թէ Անտրէինը անցեալին վերյուշումն էր, իսկ ժիւլպէրինը լաւագոյն ապագայի մը յոյսը :

— Մնաս բարո՛վ, ըսաւ ժիւլպէր, եւ ետին դարձաւ վերջին անգամ մըն ալ տեսնելու համար այն զգեակը որուն տանիքը մտաթզեցնելու եւ երեսածաղիկներու մէջէն հաղխ կը նշմարուէր : Մնաս բարո՛վ, ո՛վ տուն, ուր այնչափ վիշտ կրեցի, ուր ամէն ոք զիս արձամարհեց, ուր հացը երեսիս նետեցին ըսելով թէ գայն կը գողնամ, մնաս բարո՛վ, անիծեալ ըլլաւ : Սիրտս ուրախութեամբ կը խոյացայ եւ ազատ ըլլալը կը զգայ այն ատենէն ի վեր որ ա՛լ քու պատերդ զիս չեն բանտարկեր, մնաս բարո՛վ բանա, մնաս բարո՛վ զժո՛խք, ո՛րջ բրնձուորաց, մնաս բարո՛վ, առ յաւէտ մնա՛ս բարո՛վ :

Ժիւլպէր այս նուազ բանաստեղծակալ լայց բառակոն նշանակալից անէծքն ընելէ վերջ սկսաւ կռուքին հետէն վազել, որուն հետաւոր չախնդը օդին մէջ արձագանք կուտար տակաւին :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԻ



- 4480

ՀՀ Ազգային գրադարան



NL0792315

11

7823